ՎԱԽՏԱՆԳ
ԱՆԱՆՅԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ

891.99 | 11636
Ա-55 | Ավանեսյան Վ.
Պատերազմից հետո
10ռ.

XXX

Հոկտեմբերյան
Սոցիալիստական
մեծ ռևոլյուցիայի
30 ամյակին

Վախթանգ Անանյան

891.99
Ա-55

Ստուգված է 1961 թ.

Պատերազմից հետո

ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիա
Ֆունդամենտալ գրադարան

Ա 11/26827

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ
ԵՐԵՎԱՆ 1947

В. АНАНЯН
ПОСЛЕ ВОЙНЫ
(На армянском языке)
Советский Писатель
Ереван, 1947 г.

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ԳԱՐՈՒՆԸ

1

Այս հովտի երկու կողմերից խստադեմ ու խոժոռահայացք լեռներ են վեր ելնում՝ բարձունքներին ամպ ու մշուշ,—գուցե դրանի՞ց է այս դաշտն այսքան մեղմ ու գրավիչ։ Թե՞ հովտի երկարությամբ արծաթե գոտի կապած ուրախ գետն է հմայք տալիս այս երկրին։ Կամ գո՞ւցե գեղանի դեղձենիներն են այս հովտի զարդը, բարակիրան բարդիները, ծառաստաններն ու պտղաբեր այգիները, որոնց միջից հանդարտ ու խաղաղ հայկական գյուղերն են ծխում։ Թե՞ այս հովտի զվարթությունը գարնան համբավաբեր թռչունների երամներն են իրենց հետ բերում հեռավոր ափերից։

...Չորս տարի շարունակ Նարգիզ նանը սպասում էր որդուն։ Չորս գարուններ այցի եկան Արարատյան դաշտին և չորսն էլ որդուց լուր չբերին։ Ամեն գարուն արագիլները գալիս էին հեռավոր հարավից, վերանորոգում էին իրենց հին բույնը Նարգիզ նանի տան առաջի հինավուրց բարդենու կատարին։ Եվ ամեն անգամ Նարգիզ նանը նրանց տեսնելիս մրմնջում էր մորմոքված.

— Բա իմ բալեն ե՞րբ պիտի գա, ա՜յ թառլան ղշեր...

Հարսը՝ Արևհատը ծածուկ աչքերը սրբում էր գոգնոցով՝ և մի պահ ընդհատվում էր երեխաների անհոգ կանչը։

2

Այս տարվա փետրվարի վերջին, երբ դրսում խավար գիշեր էր ու ձյունախառն անձրև էր տեղում, Նարգիզ նանի տան դուռը բախեցին։

Այդ ո՞ր մայրը կքնի փոթորկոտ գիշերին—չոլում որդի ունեցող մայրը... Նարգիզ նանը վրա նստեց անկողնում: Դուռը նորից բախեցին՝ կամաց ու անվստահ:

— Ո՞վ է,—հարցրեց նա ահով:

— Ղարիբ մարդ եմ, գիշերելու տեղ ունե՞ք,—լսվեց դրսից մի ցրտահար ձայն:

— Տանը տղամարդ չկա, հարևանի դուռը ծեծեցեք,—պատասխանեց Նարգիզ նանը:

— Դողում եմ... խի՛ղճ ունեցեք,—լսվեց օտարականի ձայնը:

Նարգիզ նանը թախտից իջավ, բայց հարսի հանդիմանանքով լի հայացքին հանդիպելով՝ կարկամեց:

— Տանը ջահել կա... բացել չենք կարող, ղուրբան ճամփիդ, չնեղանաս...

Այն ժամանակ անծանոթը ասաց ողբաձայն.

— Բա դու ղարիբ չունե՞ս, մայրիկ... Գուցե հիմի նա էլ մի ուրիշի դուռն է ծեծում... Թող գոնե գոմում քնեմ...

Նարգիզ նանի սիրտը արյունոտվեց: Նա արագ հագավ սոլերը և դուռը բացեց: Հենակը թևի տակ մի զինվոր ներս մտավ և իր վրայից թափահարեց ջրոտ ձյունը: Նրա սև բեղերի տակ ծանոթ մի ժպիտ խաղաց, թուխ աչքերը քնքշանքով առկայծեցին և ցրնցվեց աջ այտի ծանոթ խալը:

— Բալա ջան, տներիդ մեռնեմ,—միայն այսքան կարողացավ ասել խեղճ պառավը և անծանոթի ծնկները գրկելով, երեսը հպեց նրա թաց ոտքերին:

— Նանի, ուշքի արի, նա՛նի,—իր հենակի վրա կռթնած մորը վեր էր քաշում ու թափահարում զինվորը:

Նարգիզ նանը ուշքի եկավ, որդու երեսը ծածկեց համբույրներով, ապա հերթով համբուրեց նրա շինելի թաց լանջը, ուսադիրները, թևքերը, կոճակները...

Արևհատը թախտի մոտ կանգնած լուռ լալիս էր, իսկ վերմակի տակից երեխաները կենգուրուի ձագերի նման գլուխները հանել էին ու անիմաստ, պլշած աչքերով նայում ու ջանում էին որոշել, թե ինչ է կատարվում:

Արթնացավ զինվորի մեծ որդին—Գագիկը, ճչաց, ոստնեց մահճակալից ու կախվեց հոր վզից:

Իսկ Արևհատը հեռվում կանգնած հանդարտ լալիս էր:

— Վախենում եմ նորից երազ լինի... մրմնջում էր նա՝ իր երազները հիշելով ու լուռ արտասվում...

3

Այս անգամ արդեն երազ չէր։ Բացվեց Արարատյան դաշտի առավոտը, արևի խուրձերը լուսամուտից ներս ընկան և Արևհատը շոշափելի տեսավ ծանոթ խալը, տեսավ իրար վրա դարսված երկար թարթիչները, զգաց իր սիրած մարդու բույրը և միանգամից լցվեց նրա դատարկված էությունն ու կյանքը միանգամից նոր բովանդակություն ստացավ։

Զորացրված սերժանտ Պետրոս Վարդանյանին սանատորիա ուղարկեցին։ Օրերս նա վերադարձավ առանց հենակի, զվարթ դեմքով,—տանջանքի նախկին հետքերն այլևս չկային։

Նա հայրենի գյուղ մտավ գարնան հետ միասին և կրկնապատկվեց գարնան հետ կապված բերկրանքը Նարգիզ նանի օջախում։

— Կա՛փ, կա՛փ, կա՛փ, մազարիչն եք ուզո՞ւմ, հասկանում եմ,—տարե՛ք, հալալ ձեզ,—դիմեց Նարգիզ նանը նոր եկած և իրենց բունը նորոգող արագիլներին՝ ծառի տակ նրանց համար առատ ուտելիք շաղ տալով։ Ինչպե՜ս միանգամից աշխարհը փոխվեց, ի՜նչ գեղեցիկ է այս տարվա գարունը Արարատյան դաշտում։

Պետրոսը մոր հետ այգի գնաց։ Արևհատի բրիգադը փորում էր ծառերի տակը, ձևավորում նրանց գանգուրները, չորուկները կտրում։

Ահա և իր նախկին ընկերները,—քամուց ու արևից բրոնզի գույն ստացած, ոմանք մեծացած—հասունացած, ոմանց քունքերի մազերը ձերմակած։

Ռազմաճակատ մեկնելուց հետո Արևհատը փոխարինել էր բրիգադիր՝ ամուսնուն։

— Արի բրիգադ հանձնեմ քեզ,—ձայնեց Արևհատը՝ ամուսնուն տեսնելուն պես՝ խիստ կարմրելով։

— Հա՛, Արևհատ ջան, շատ տանջվեցիր, հերթն իմն է...

Երջանկությունն արագ վարակելու ուժ ունի։ Ես այսօր եղա Պետրոս Վարդանյանի բրիգադում և մոտիկից զգացի հողագործ

մարդու ուրախ աշխատանքի հմայքը, նրա հրճվանքը՝ վերահաս գարնան համար, իր խաղաղ աշխատանքի համար, իր կորած ընկերոջ գտնվելու համար։

Ինչ էր զգում ինքը՝ Պետրոսը՝ չիմացա։ Միայն նկատեցի, որ ամեն անգամ, երբ վազի մատը կտրում է ու տեսնում նրանից դուրս ցայտող հստակ հյութը, մի պահ դադարում է գործելուց, ուշադիր ու մտախոհ նայում է վազից գլորվող արցունքներին— հավանաբար մտածում է՝ ուրախության արցունքներ չե՞ն արդյոք։

Մեկ անգամ էլ բռնեց Արևհատի ձեռքը, շոշափեց նրա ափի կոշտերը, ցավագին գլուխը տարուբերեց և աչքերը խոնավացան։ Կինը ձեռքը խլեց, շիկնեց։ Քիչ անց նա մեղմությամբ ասաց.

— Գնա տուն, հերիք է աշխատես,—խամով կընկնես...

Հարևանուհիները գլխի ընկան ու սկսեցին ձեռ առնել Արևհատին.

— Թաքուն սիրաբանում ես, հա՞...

4

Ես այգուց շուտ դարձա գյուղ։ Ասում են, որ այդ օրը Պետրոսը շրջել է գյուղի ողջ հանդը և ամեն ինչից առել է տարիներ շարունակ իր ներսում կուտակված կարոտը։ Վար է արել ու բավականությամբ ներս ծծել խոնավ, հղի հողի հոտը, սերմ է ցրել ու թափվող ցորենի շրշյունը լսել, բացել է առվի թումբն ու նայել է պղտոր ջրերի վազքին, ապա գնացել է հովիվների մոտ՝ գառների հետ խաղալու...

Իսկ երբ երեկոյան դեմ տուն դարձավ, դիմեց կնոջը հրճվանքից փայլող դեմքով.

— Ի՞նչ սիրուն երկրում ենք ապրելիս եղել, Արևհա՛տ... Ու ո՞նց մինչև հիմա չենք իմացել...

Միայն մահը մոտիկից տեսնող մարդը խորապես կզգա կյանքի ողջ քաղցրությունը։

Արևը պռունգը դրեց Բինգյոլի ձյունապատ կատարներին և Արարատյան դաշտը ողողվեց ծիրանագույն ցոլքերով։ Հարավից նոր եկած թռչունները երամ առ երամ գնացին Արաքսի շամբուտներում թառելու։

Նարգիզ նանի պարտեզում տարված նայում ենք Արարատյան

դաշտի չքնաղ արևմուտը, իսկ մեր կողքին Պետրոսի ավագ որդին՝ Գագիկը՝ հոր նման թուխ, կրակոտ աչքերով տասնհինգամյա մի պատանի, փորում է մատղաշ դեղձենու տակը։ Խորը փորեց, արմատները բացեց և դրանից մենք սթափվեցինք։

— Ափսոս է ծառը, ի՞նչ ես անում,— հանդիմանեց նրան հայրը։

Պատանին շարունակում էր զգուշությամբ փորել և արմատները ետ-ետ տանել։ Ու գաղտնիքը բացվեց մեզ համար,— ծառի դալար արմատները փաթաթվել և իրենց գիրկն էին առել մի խոշոր կուժ, որ տարիներ առաջ թաղված է եղել այդ շիվի տակ։

Դեպքի վայրը հասավ և Նարգիզ նանը, և կուժը տեսնելով ճչաց.

— Ես էլ ասում եմ ուր կորավ մեր կուժը...

Հայրը շոքեց, զգուշությամբ դուրս հանեց կուժը, բերանը բացեց։ Հին կարմիր գինու արբեցուցիչ գազը խփեց նրա երեսին և բույրը տարածվեց շրջակայքում։

— Հինգ տարի առաջ քեզ համար եմ թաղել, հայրիկ,— կարմրելով ու կակազելով ասաց տղան։

Հայրը կգացված համբուրեց որդու ճակատը և գոչեց.

— Արևհա՛տ, սեղան պատրաստիր, անմահական գինին եկավ։

Բակում ուրախ աղմուկ բարձրացավ, գտնված կժի շուրջը շատ մարդ հավաքվեց և մենք սրտանց խմեցինք Արարատյան դաշտի գարնան կենացը, և կենացը զինվոր Պետրոսի, որ գնաց կռվելու Արարատյան դաշտի փառահեղ գարնան համար։

5

Հաջորդ առավոտյան, արևածագից առաջ մենք բարձրացանք այն բլուրը, ուր երկու և կես հազար տարի առաջ վեր էր ելնում Արմավիր մայրաքաղաքի միջնաբերդը։ Այժմ պարըսպի մնացորդներն են, ցաք ու ցրիվ քարեր նախկին պալատներից, մեկ էլ՝ դեղնավուն-կարմրավուն փոշի—մանր, ալյուրի նման։ Ջարմանալի ուժ ունի այդ փոշին։ Հինգ տարի առաջ Պետրոսը սայլերով կրել է այդ փոշին դաշտ, լցրել է նորատունկ դեղձենիների տակ և նրանք բոյ են քաշել ապշեցուցիչ արագությամբ։

Ծագեց գարնանային արևը և ոսկեգույն հալոցք թափեց ծեր Մասիսի հավերժական սառցադաշտերի վրա: Ձմռան մղձավանջից ազատված հովիտը շնչեց թեթևությամբ, ցողը հուրհրաց նորածիլ արտերում, բողբոջները փթթեցին ծառերի վրա և կարծես աներևույթ մի ոգի խնդություն տվեց բոլոր շնչավոր արարածներին ու կյանք ներարկեց անշունչ առարկաներին:

Թռչունները իրենց զվարթ ճռվողյունով ավետեցին գարնան գալուստը, և սիրահարված էին նրանք իրար վրա ու աշխարհի վրա: Ընդարձակ, կանաչող հարթության վրա սկսեցին ծխալ գյուղերը, և նախիրն ու հոտը հանդ գնացին, պողպատե երիվարները հնգոցով սևացնում էին դաշտը, իսկ պարտեզներում մանուկների հետ, մանուկների պես թռչկոտում էին նորածին գառները:

Սևանի փրփրաբաշ ջրերի ուժով Այղր լճի ջուրը ելնում էր գորշ բլրի գագաթը և այնտեղից ցեմենտյա ջրանցքներով գնում ճյուղավորվում երբեմնի անապատում:

Հալվում է ձյունը Բինգյոլում ու գլգլոցով ցած գալիս: Արաքսը հորդացել է ու դուրս եկել ափերից, հեղեղվել են շամբուտները,—Արարատյան դաշտն է մտել նոր, խաղաղ շրջանի առաջին գարունը...

Արմավիր, մարտի 27, 1946 թ.

ԿԵՌԱՍԵՆԻՆԵՐ

1

Զանգեզուրի Մաղանջուղ գյուղից վեր մերկ ու քարքարոտ բլուրներ են ընկնում և անջրդի տխուր մի թեք դաշտ: Անկենդան, ամայի այդ վայրում, Գորիս տանող ճանապարհի եզերքով մատղաշ ծառերի մի շարք է ձգված երեք կիլոմետր երկարությամբ: Հեռվից նայողին թվում է, թե այդ գորշ բարձրավանդակն իր լանջով մեկ կանաչ ժապավեն է կապել: Անզարդ այդ վայրերի միակ զարդն է դա, խանձված բարձրավանդակի անհրապույր դեմքի միակ պայծառ ու ժպտուն գիծը: Այդ կեռասենիները տարիներ առաջ կոլխոզի նախագահ Լալազար Խաչյանն է տնկել: Այն ժամանակ կոլխոզնիկները տարակուսանքով նայում էին քրտնաթոր աշխատող Լալազարին ու զարմանում, թե ինչ դատարկ բաներով է զբաղված իրենց խելոք նախագահը:

— Կչորանան, անջուր բան չի դառնա,— ասում էին նրանք:

Միայն կոլխոզնիկներից մեկը՝ Ղևոն միացավ Լալազարին, օգնեց նրան, ծառատունկը վերջացրին:

Այնուհետև Ղևոն ռազմաճակատ մեկնեց, ընկավ պատերազմի բոցերի մեջ և խրամատներում, կրակը դադարելու պահին կարոտով հիշում էր քարանձավների տակ կուչ եկած Հայրենի գյուղը, իր մանուկների այտերին սառած արցունքները և երկարաձիգ շարք կանգնած մատղաշ կեռասենիները, որ հավանաբար պիտի չորանային երաշտից...

2

Ղևոնից նամակ չեկավ և նրա ընտանիքի համար կարծես միանգամից ցամաքեցին ուրախության բոլոր աղբյուրները։ Կինը ծանր վիշտը աչքերում գնում էր դաշտ, հունձ անում ու հայացքը չէր կարում կանաչ կեռասենիների գողտրիկ շարքից։ Այնքա՜ն հարազատ էին այդ ոստերը նրա խոցոտված հոգուն...

Այնուհետև նա պահանջ զգաց, բուռն պահանջ, մոտ լինել այդ ոստերին ու խնամել նրանց, ամե՛ն օր խնամել։

Նա կոլխոզի նախագահից խնդրեց տունկերի խնամքն իրեն հանձնել և համաձայնություն ստանալով՝ սկսեց փորել նրանց տակը և ջրել երաշտ եղանակներին։ Կարծես նրա երեխաները միանգամից բազմացան-լցրին նրա ողջ էությունը։ Այնպե՜ս հրճվանքով ու ագահությամբ էին խմում ջուրը ամառվա տապին այդ նիհար շիվերը, իր զինվոր ամուսնու անշունչ որբուկները...

Եվ երբ նրանք ամրացան իրենց նոր միջավայրում ու հաջորդ տարին փարթամ տերևներ արձակեցին, զինվոր Ղևոնի կինն այնպիսի գորովանք զգաց իր կրծքի տակ, որպիսին կզգար իր աճեցրած երեխաների զվարթ դեմքերը տեսնելով։

Նրա ամուսինը և որդին պատերազմի արհավիրքների մեջ էին։ Բայց նայելով այդ անկենդան վայրերում զվարթ շարքի կանգնած մանուկ ծառերին, նա մի տեսակ հույսով ու լավատեսությամբ էր լցվում,—չէ՞ որ իր աչքի առաջ մահվան գորշության մեջ փթթող կյանքն էր, որ փարթամորեն աճում ու վանում էր մահ ու ամայություն։

Եվ երբ նրա փոքրիկ աղջիկը բռնում էր կեռասենու բարակ բունն ու հարցնում. «Մա՛մ, բա ե՞րբ կգա հայրիկը»,—նա պատասխանում էր տխրագին.

— Երբ ծառերը մեծանան, կեռաս տան, կգա։

Ու այդ ակամա պատասխանից, այլ և բոյ քաշող կեռասենիների զվարթ տեսքից մի գաղտնի լավատեսություն էր սողոսկում նրա սիրտը, ամրանում այնտեղ։ Ամեն օր նույն սուտ պատասխանը տալով երեխային, վերջապես այդ կոլտնտեսուհին ինքն էլ հավատաց, որ իր ամուսինը և իր որդին ճակատից կվերադառնան այն ժամանակ, երբ առաջին անգամ պտուղ կտան մատաղ կեռասենիները։

Եվ նա տարիներ շարունակ փայփայեց այդ պատրանքն իր հոգում, և խնամեց ու փայփայեց իր ամուսնու տնկած շիվերը։

Իրենց փոքրիկ սրտիկներով, իրենց անդավաճան բնազդո՛վ այդ տունկերին էին կապված նաև Ղևոնի երեխաները։ Նրանք իրենց փոքրիկ ձեռքերով փխրացնում էին տունկերի տակը, ջրում, բուժում, չորուկները կտրատում այն գաղտնի հույսով, որ նրանք կմեծանան, պտուղ կտան և այն ժամանակ կգա հայրիկը իր տընկած ծառերի առաջին պտուղն ուտելու ու նրա հետևից էլ իրենց զինվոր եղբայրը կգա։

3

Եկավ գարունը և ալ ու ալվան զգեստներ հագցրեց Սյունյաց չքնաղ աշխարհին։ Եկավ մայիսը ճոխացրեց այդ զգեստները և պտղավորեց բուսական աշխարհը։

Եվ երբ զինվոր Ղևոնը մոտեցավ իրենց գյուղին, մի պահ կանգ առավ և նրա սիրտը թնդաց բերկրանքից, — իր առաջ, դեպի իրենց գյուղը, դեպի հայրենի օջախը տանող ճանապարհի եզերքով շարված էին անթիվ-անհամար կեռասենիներ՝ ծանրաբեռնված ժպտուն պտուղներով։ Կարծես Սյունյաց երկրի բոլոր գեղատի հարսերը իրենց առաջին պտուղը—իրենց սիրասուն մանուկներին գրկած եկել շարվել էին ճանապարհի եզերքին, ողջունելու համար հայրենի գյուղը դարձող իրենց հերոս ամուսիններին։

Շարվել էին նրանք բոլորն իրար հավասար, մի հասակի, խնամքով խուզած—ձևավորած խոպոպիկներով, շարվել էին մայիսյան զեփյուռի առաջ սոսափելով իրենց վարսերը, ու թվում էր զինվոր Ղևոնին, ճանաչել են նրանք իրեն՝ իրենց կյանք տվողին ու գանգրահեր գլուխների մեղմիկ խոնարհումներով ողջունում են նրա վերադարձը պատերազմից։

Մուգ կանաչ սաղարթների միջից, կարմիր ու շողշողուն կեռասները ցնծում էին կարծես նրա անակնկալ հայտնվելուց և լեզու էին խնդրում բնությունից ավետելու նրան, ճչալու նրան, թե իր կինը և իր մանուկները ողջ են, թող չհուզվի ու չանհանգստանա, և որ նրա՛նք են իրենց խնամակալները։

Հուզմունքից ալեկոծ սրտով, արցունքը հազիվ զսպելով առաջ

էր գնում զինվոր Ղևոնը և կեռասենինե՜ր, կեռասենինե՜ր, անվերջ ու անծայր, բոլորն իրար նման՝ կարծես մեկ մոր գեղանի դուստրեր, ծանրաբեռնված իրենց առաջին բերքով։

Ահա և ժայռերի տակ ծվարած հայրենի գյուղը։ Նույն հարազատ, նույն ցածլիկ, բայց անչափ սիրելի տները սարի լանջին, իսկ նրանց առաջ, ձորում՝ փարթամ պարտեզների մուգ-կանաչագույն պանորաման։ Ահա ժայռի այն խոռոչը, որ քառասուն տարի առաջ ծնվել է ինքը։ Այն այրը, հարազատ քարանձավը, որ փորել է նրա պապը տարիներ շարունակ ու շինել իր քարե բույնը։ Այնտեղ այժմ ոչ ոք չի ապրում, բայց ի՞նչ կա ավելի քաղցր բան աշխարհում, քան հայրենի բույնը, թեկուզ փորված ապառաժի մեջ, իր մրոտ բուխարիով, նեղ երդիկով, աթարի կույտը առաջին...

Եվ պնդասիրտ այդ մարդը, որ «օֆ» չէր արել արկի բեկորից ստացած հարվածից, նստեց ճանապարհի եզրին ու արցունքները գլորվեցին նրա արևախաշ այտերով։

Ապա թևքով սրբեց աչքերը և հոգնած քայլերով առաջ գնաց։ Ժպտում էին նրան կեռասենիների նորանոր շարքերը, ժպտում էին արդեն հասու դարձած աղջկա ամոթխած ժպիտով և ջերմությամբ լցնում նրա զինվորի սիրտը։

Այդ նույն պահին, այնտեղ, ուր վերջանում է կեռասենիների շարքը, մի կին բռնել էր վերջին տունկի բնից ու մրմնջում էր տնքացող հոգով.

— Մեծացար, պտուղ տվիր, իսկ նա չկա... Ի՞նչ ասեմ հիմի իմ որբերին... էլ ինչով խաբեմ—պտուղներդ հասան արդեն...

Զինվորը վրանը ծալած մեջքին կապած, պայուսակը կողքից կախ, ոտքերին երկար ճանապարհի փոշին, հոգնած քայլերով մոտեցավ կնոջը և աչքն առավ նրա ծանոթ, հարազատ հայացքին։

Կինը վշտից ու հոգսից մաշված իր երեսը հպել էր ամուսնու կրծքին ու հեկեկում էր։ Ջրից վերադարձող երեխաները տարակուսանքի մեջ հեռու կանգնած նայում էին, իսկ զինվորի շորեր հագած մարդը ձեռքերը պարզել էր դեպի Սյունյաց աշխարհի փառահեղ ձորերն ու մրմնջում էր.

— Փառք քեզ, ով իմ աշխարհի բնություն, ես էլ արժանացա իմ պապենական օջախին...

4

Եկան և այդ գյուղի մյուս զավակները, եկան՝ ո՛րն առողջ ու կայտառ, ո՛րը տանջված ու հոգնած, ո՛րը վիրավոր ու հաշմանդամ։ Ու բոլորն էլ քայլեցին Լալազար Խաչյանի ծառուղիով, քայլեցին դեռատի կեռասենիների շարքերի առաջով և այդ շարքերը զվարթ ողջույններով ուղեկցեցին նրանց մինչև գյուղ։

Ես նույնպես երեկ դուրս եկա այդ խանձված վայրերը և փոշոտ ճամփաբաժանում կանգ առա,—սրանցից ո՞րը կտանի ինձ Լալազար Խաչյանի գյուղը։ Ապա նայելով կանաչ ու գողտրիկ կեռասենիների հավասար շարքին ինքս ինձ խնդացի,—նրանք, այդ ջահել ծառերը զուսպ հրճվանքով, բայց լռելյայն ինձ ցույց էին տալիս Մաղանջուղ գյուղի ճանապարհը։ Ճանապարհին ինձ փոքրիկ զով ծածկեր էին պատահում, ուր նստում, շունչ էի առնում տոթից, պատահեց և նորակառույց զուլալ աղբյուր, ուր լվացվեցի և մտքումս փառաբանեցի այն եռանդուն նովատորին, որ հենց միայն ճանապարհորդի համար այսքան անակնկալներ է ստեղծել։

Ապա՛ երբ շրջեցի գյուղի հանդերում և բարձրաբերձ ժայռերի գլխից դիտեցի շրջակայքը, տեսա, որ այդ գյուղի գորշ ու անհրապույր հանդերում կանաչ գանգրահեր ծառեր կան ցրված, որ հով են անում աշխատավորին և իրենց հյութեղ պտուղներով հյուրասիրում նրանց։ Այնպես որ մաղանջուղցին ո՛ր հանդն էլ գնալու լինի, հով շվաքից բացի կգտնի հասուն մրգեր—կեռաս, ընկույզ, տանձ, խնձոր, ու չի զարմանա, որ այդ վայրենի ծառերը ձևավորված են խնամքով և նրանց տակերը փորված է ու ազատված խճից ու ավելորդ մացառներից։ Չի զարմանա, որովհետև ինքն է այդ մատղաշ տունկերի մշակողը,— Լալազարի ու Ղևոնի օրինակը վարակել է բոլորին, հանդերում ծառ աճեցնելը դառել է պահանջ մաղանջուղցու համար։

Շրջելով Մաղանջուղի հանդերում, նայելով արտերում ցրված ծառերին ու ասածս կեռասենիների հիասքանչ շարքը ողջ ճանապարհի երկայնքով, մտածում ես, թե ինչքա՜ն լավ կլիներ, եթե մեր ճանապարհները գյուղից գյուղ ձգվեին պտղատու ծառերի շարքերի միջով և հոգնած ճամփորդը ոչ միայն հանգիստ առներ նրանց ստվերում, այլև ճաշակեր նրանց քաղցրահամ պտուղները։

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

1

Խառատ Ստեփան Մարկոսյանը՝ Երևանի գործարաններից մեկի շարքային վարպետներից մեկը՝ կիրակի օրը ճաշի էր նստել։ Դեռ չճաշած նա արդեն երկրորդ բաժակը կոնծել էր և այժմ թաքուն մե՛կ օղու շշի պարունակությանն էր նայում, մեկ՝ իր «պառավի» դեմքին,—կարծես այնտեղ թույլտվության նշաններ էր որոնում։

— Ասում եմ էդ զահրումարը վնաս է քեզ...—նեղացավ կինը,—հո քեզանից չեն խնայում, այ մարդ։

— Ախր պետք է ջխտե՞նք, թե չէ... կենտ ո՞նց կլի, այ կնիկ, մտի՞կ, մարդիս աչքերն էլ են ջուխտ, ականջներն էլ, մինչև անգամ քթի ծակերն էլ։ Բնությունը ամեն բան ջուխտ է բերում, ջուխտ բանը սիրում է...

Վարպետ Ստեփանի խոսքը կիսատ մնաց։ Իր թավ, առնական ու մարգարեական հանդարտ ձայնով սկսեց խոսել Առաջնորդը։ Տնեցիք երեսները դարձրին դեպի ռադիո-բարձրախոսը և ակնածությամբ սկսեցին ունկնդրել։

— Ճապոնիան իրեն ճանաչեց պարտված ու զենքը ցած դրեց,—ասում էր Առաջնորդը միշտ հաղթելու սովոր մարդու հանգիստ տոնով։

— Վերջացավ երկրորդ համաշխարհային պատերազմը...

Ծեր տոկարի աչքերում ուրախության արցունքներ երևացին, նա մի ձեռքով գրկեց իր թոռնիկին ու շարունակեց ունկնդրել։

Հարևանները՝ ում ռադիո չուներ, հավաքվել էին բաց դռների

մոտ, կանգնել շեմքին, պատուհաններից ներս էին թեքվել ու կռթնած լսում էին և նկատվում էր, թե ինչպես հուզմունքը ալիք է տալիս նրանց ներսում, և դա երևում էր նրանց բարձրացող ու իջնող կուրծքերից։

Երբ Առաջնորդն ասաց, թե՝ «... 1904 թվին ռուս-ճապոնական պատերազմի շրջանում ռուսական զորքերի կրած պարտությունը ծանր հիշողություններ էր թողել ժողովրդի գիտակցության մեջ, այդ հիշողությունը սև բծի նման ընկել էր մեր երկրի վրա։ Մեր ժողովուրդը հավատում և սպասում էր, որ կհասնի այն օրը, երբ Ճապոնիան կջախջախվի և բիծն էլ կվերացվի։ Մենք, հին սերնդի մարդիկս, քառասուն տարի սպասում էինք այդ օրվան։ Եվ ահա այդ օրը հասավ...»։—Բոլորը նկատեցին, թե ինչպես վարպետ Ստեփանը ալեկոծված վեր կացավ տեղից, ուզեց մի բան գոչել իր «պառավին», ապա իրեն զսպեց՝ մինչև վերջ լսելու համար։ Երբ ավարտվեց Առաջնորդի խոսքը, ծեր տոկարը գոչեց.

— Նարգիզ, լսեցի՞ր ինչ ասեց... Ախր էդ իմ ու Ոսմանի սրտիցն է խոսում։ Ախր գիտես որ, քառասուն տարի սրտիս վրա արճիճ կար, թե բա Յապոնը Ոսին հաղթի՞։ Բա դեղնած շլդիկ Յում-Յանը Մարկոսանց ասլան Ստեփանին ու Բաղալանց արջի պես Ոսմանին հաղթի՞... Ախր ես քառասուն տարի վառվեցի էդ մտքից... է՜է՜, յարաբ ինչ եմ ասում, դու ինձ հասկանալ չես, մենակ Ոսմանը կհասկանա, նրա՛ հետ ենք Յապոնի դեմ թոփ ու թվանք քցել ու նրա հետ էլ քառասուն տարի էս օրվան սպասել։ Կնի՛կ,—ձայնը բարձրացրեց խառատը,—մի սնդուկից մեղալս հանի, մի շիշ էլ արաղ տուր, գնում եմ Ոսմանին աչքալուսանք։—Հա՛, կնի՛կ, մի չլխտե՞մ, հետո գնամ,—իր կոկորդը ցուցամատով կըտկըտացնելով ու քաղցր աչքով անելով հարցրեց խառատը։

Երեխաները ծիծաղեցին։

— Չխտի՛, չխտի՛, այ պակսես ոչ դու,—ամուսնու վրա «չանչ» անելով՝ թույլ տվեց Նարգիզը։

Տոկար Ստեփանը կնոջ «չանչը» որպես գուրգուրանք էր ընդունում, ուստի սրտալի կոնծեց, ռուս-ճապոնական պատերազմում ստացած Գեորգևսկի 1-ին աստիճանի մեդալը կպցրեց լանջին, բեղերը սղալեց ինքնաբավականությամբ և օղու շիշը գրպանը մտցնելով՝ քայլեց դեպի դուռը։ Ապա շեմքին կանգ առավ և կարճ միրուքը բռնելով կեղծ խեղճացած ասաց.

— Նարգիզ ջան, բա էս տխուր օրը մարդի բան կխնայե՞ն...

— Դե չխանեցիր, ա՛յ սևասիրտ, էլ ի՞նչ ես ուզում։

— Ջխտեցինք, խաբար արինք, Նարգիզ ջան, հիմի ամեն կողմից երկուսն են, մի կռիվ է սկսել փորումս, մի կռիվ, որ էլ անունը տալու չի։ Ոչ մեկը չի զոռում, որ կռիվը վերջանա, քանի որ ուժերը երկու կողմից էլ հավասար են։ Հիմի մի ելք է մնացել, քեզ բան եմ ասում, որպես հին սալդաթ ես էդ բանը հաստատ գիտեմ, եթե մի հատ էլ ուղարկենք—մի կողմը երեք կդառնա, մյուս կողմին կզոռի ու դրանով էլ կռիվը կվերջանա... Հը՞, ինչ խորհրդի ես, Նարգիզ ջան...

Հարևանները, որ առանց այդ էլ ցնծության մեջ էին Առաջնորդի ճառից, պատերազմի վերջանալուց իրենց ուրախությունը արտահայտեցին նրանով, որ ներս թափվեցին, բաժակները բարձրացրին մեր հաղթանակի առթիվ և տոկարի փորը հինգերորդ բաժակ օղին ուղարկելով՝ վերջ տվին այնտեղ մղվող կռվին։ Ողջ բակը աղմուկով ճանապարհ դրեց տոկար Ստեփանին դեպի ռուս-ճապոնական պատերազմի օրերի իր զինվոր ընկեր Ոնանի բնակարանը։

Ճանապարհին վարպետ Ստեփանը տեսավ, որ միայն ինքը չէ ուրախ, ուրախ են բոլորը։ Խմած մարդու քայլվածքով նա մոտեցավ Լենինի հրապարակում խռնված մարդկանց։ Ծանոթ, թե անծանոթ, զվարթ դեմքերով մոտենում էին, իրար ձեռք սեղմում ու շնորհավորում։

— Ստեփան քեռի, տեսա՞ր էս ինչ արինք,—ամբոխը ճեղքելով խառատին մոտեցավ իր աշկերտ Հայկը։

— Տո դո՞ւք արիք, փսլնքոտներ, էդ Մարկոսանց տղա Ստեփանի աղան բալեն արավ... բա՞... կապիտան Արմենակ Ստեփանովիչ Մարկոսյանը,—ագլորացած վրա բերեց վարպետը՝ լանջի մեդալը ծանր ու թեթև անելով։

Աշկերտը ծիծաղեց։ Նա գիտեր, որ խառատի որդի Արմենակը ճապոնական ճակատում գումարտակի հրամանատար է, ուստի հասկանալի է հոր հպարտությունը։

Ոնանի տան ճանապարհին խառատ Ստեփանը կատակներ էր անում անցորդների հետ, շնորհավորում էր ամեն պատահողի ու երբեմն էլ հարբած մարդու անկեղծությամբ համբուրում էր

անցորդներին, միայն տղամարդկանց...: Նա այդպես էլ ասաց իր «բաջանաղ» Ակոփին.

— Նարգիզին կասես, որ էսօր Ստեփանդ հարյուր մարդու պաչել է, համա ոչ մի կնիկ դեռ չի արժանացել նրա պաչին... Թող իմանա, ուրախանա պառավս,—ավելացրեց նա խորամանկ աչքով անելով:

Կողքից անցնող մի խումբ երիտասարդներ զուռնա-դհոլ ունեին իրենց հետ և այնպիսի մի ուրախ «լեզգինկա» էին նվագում, որ ծեր խառատի արյունը եռում էր երակներում:

Երիտասարդներից մեկը դա նկատեց և խառատին շրջանի մեջ քաշելով՝ սկսեց պարել ու նրան պարի հրավիրել:

— Պապաշա՛, տաշի՛. պապաշա, մի քե՛զ տեսնեմ:

Վարպետ Ստեփանն ինքն էլ չիմացավ թե ինչպես արդեն թևերը բարձրացրել ու առույգ ցատկոտում է, իսկ տղերքը շըրջապատած ծափ են տալիս ու ծիծաղը դեմքերին խրախուսում.

— Ջա՛ն պապաշա, տա՜շի՜...

Բայց երբ դեռատի կանացից մեկը հրապարակ մտավ և սկսեց «խումչիկ-մումչիկ» անելով պարել նրա հետ, ծեր խառատն անմիջապես զգաստացավ, դուրս եկավ շրջանից ու չորս կողմը նայեց:

— Խաբարը Նարգիզին կհասնի, լավ չի...—փնթփնթաց նա:

Ումանի տան առաջից մի բաց ավտոմեքենա անցավ՝ մեջը լիքը մանուկներ, որոնք ծաղիկներ էին ցրում անցորդների վրա ու ցնծագին գոչում.

— Կեցցե՜ մեր հաղթությունը... ուռա՜ա՜...

Հենակներով մի մարդ, ծանր վիրավորի ժապավենը կրծքին, աճապարանքով խույս տվեց մեքենայից և սայթաքեց:

— Ղուրբան լինեմ վնասված ոտիդ,—հուզմունքով խոսեց վարպետ Ստեփանը՝ հաշմանդամի թևից վեր բարձրացնելով: Ապա իր հուզմունքը զսպելով, ավելացրեց.

— Պինդ կաց, բալա ջան, ամեն վերքի էլ ճար կա: Քառասուն տարի սիրտս յարալու էր—էսօր լավացավ: Քու յարին էլ մի ճար կլինի...

Նախկին զինվորի աչքերում երախտագիտության արցունքներ երևացին:

— Պինդ եմ, պապաշա,—ասաց նա,—մեր ժողովրդի ուրա-

II 26827

ԳՐԱԴԱՐԱՆ

խությունն այնքան մեծ է, որ իմ փոքրիկ վիշտը կորչում է ընդհանուր ուրախության ծովի մեջ։

— Ա՜յ ինչ եմ ասե՜լ, ըտե՛նց,— ու վարպետը հաշմանդամին համբուրելով առաջ անցավ։

Պատշգամբ մտնելու պես, վարպետ Ստեփանը գոչեց բաց պատուհանից.

— Ումա՛ն, խաչ ու մեդալդ շարիր, էսօր իմ ու քու տոնն է։

Ումանը, որ արդեն լսել էր Առաջնորդի ճառը, դուրս եկավ պատշգամբ և գրկեց իր հին ընկերոջը։

— Համա ռեխիցդ արաղի հոտ է գալիս հա՛,— ասաց նա ընկերոջ հետ համբուրվելով։

— Հա՛, կոնծել եմ, համա անիրավի պառավը կենտ թողեց...— Մի չջխտե՞նք, Ուման, բա ով իմանա-չիմանա դու որպես հին սալդաթ պետք է իմանաս, որ կենտ չի ըլի...

— Չի ըլի, բա՞, ես հո խամ չեմ։

Տնեցիք հենց պատշգամբում սեղան բաց արին։ Այդտեղ էին և Ումանի աղջիկները, փեսաները, թոռները։ Քեֆը թեժացավ ու այդ քեֆի ժամանակ վարպետ Ստեփանը շատ բան ասաց, բայց ես նրա ասածներից մեկը այստեղ պետք է հրապարակեմ, որպեսզի մեր ժողովուրդը կարդա և կրկնապատկվի նրա օրինական հպարտությունը։

— Ուման ջան,— սկսեց վարպետ Ստեփանը,— միտդ է՞, որ քառասուն տարի առաջ Յապոնը մեզ հաղթեց։ Ասենք էդ մե՛զ չհաղթեց, մենք որ հաղթվեցինք—էս մեդալները որտեղի՞ց,— ասաց նա ընկերոջ ու իր մեդալները ծանր ու թեթև անելով։— Հաղթվեց ոչ թե ռուս զինվորը, այլ ցարի փտած կառավարությունը հաղթվեց։ Միտդ է՞, որ ճապոնացիք ռուս զինվորին նկարել էին ասլանի գլխով, իսկ ցարական գեներալին՝ իշի ականջներով։ Բա՞, ռուս զինվորը որ խելոք գեներալ ունեցավ—սարեր շուռ կտա։ Տեսա՞ր ինչ արավ իմ Արմենակը իրան ռուս ընկերներով...

— — — — —

Քաղցրանում է խաղողը Նորքի այգիներում։ Երևանը՝ ծանրաբեռնված իր շողշողուն մրգերով, խաղաղ ու կենսախինդ կյանքի հեռանկարը սրտում աշուն է մտնում։

Զանգվի ձորից, Նորքի այգիներից երաժշտության և կենացների խառն ի խուռն ձայներ են գալիս։

Մի տեղ, արևագույն պտուղներով բեռնված դեղձենու տակ, աշնանամտի թավիշ կանաչին ծալապատիկ նստած են մի խումբ մարդիկ։ Երկու ալեհեր մարդ, մեջքները բարձերին թինկը տված, բաժակ բաժակի են խփում և նրանցից մեկը խմելուց առաջ հայացքով հավանության նշաններ է հայցում իր «պառավից» ու կեղծ խեղճացած ասում՝

— Դե, Նարգիզ ջան, դու էլ գիտես, որ կենտ չի լինի, պետք է անպայման ջխտենք, էս տեսակ ուրախ օրը կենտ ոնց կլինի...

Այդ՝ խառատ Ստեփանն է քեֆ անում ռուս-ճապոնական պատերազմի օրերի իր ընկեր Ոսմանի հետ։

Եվ բոլորից խորը նրա՛նք են զգում այս օրվա բերկրանքը, քանի որ նրանք՝ երբեմնի «պարտված» այդ զինվորները՝ ամբողջ քառասուն տարի սպասել են այս ցանկալի օրվան։

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԻ ԱՇՈՒՆԸ

Աննման է Սյունյաց աշխարհը աշնանը։ Նրա կուսական մթին անտառները կքված են շողշողուն ու համեղ պտուղների ծանրության տակ։

Մենք ընթացանք Ջրախոր գետի հոսանքն ի վեր և Խուստուփ սարի արջաքներից ցած վայրի ընկույզի անտառի պատահեցինք։ Շրջակա գյուղերի բնակիչները թափ էին տալիս ընկույզի ծառերը և լիքը ջվալները ավանակներին բարձած՝ գյուղ տանում։ Խճուղու եզերքներին անթիվ-անհամար նռնենիներ կային՝ ծանրաբեռնված խոշոր, կարմիր նռներով։ Լանջը գորշ էր ու քարքարոտ։ Անհրապույր քարերի արանքներից վեր էին ելնում նռնենու մուգ-կանաչ թփերը՝ փայլուն մանր տերևներով։

Երբ կեռմանները վերջացան և մենք դուրս եկանք Քարահունջի դիմաց՝ մեր առաջ ավելի փառահեղ տեսարան բացվեց. խճուղուց վերև և ներքև, քարքարոտ, անմատչելի զառիվայրերին իրար փաթաթված փարթամորեն աճել են վայրի խաղողի, թուզի և այլ պտուղների ծառերն ու թփերը և իրար խառնվելով՝ ստեղծել անանցանելի մի «ջունգլի»՝ շողշողուն ու հմայիչ պտուղներով։ Բոլոր ծառերն ի վեր փաթաթվելով, վեր են բարձրացել վայրի խաղողի որթերը և կանաչ վրաններ կապել նրանց գլխին։ Եվ երբ վեր ես նայում, հոգիդ խնդում է բերկրանքից,—տանձի, խնձորի, թուզի, կարմիր մասուրի և նռան հետ կախկխված են վայրի խաղողի սև ողկույզները... Որոտան գետի հովտում, բարձրաբերձ ժայռերի ճակատներին, քարերի ճեղքերում ընկույզի ծառեր կան՝ ծանրաբեռնված ընկույզներով,—ո՞վ է ընկույզը այդ բարձունքները հասցրել։ Հետո մի գյուղացի ինձ բացեց այդ գաղտնիքը։

— Ագռավները, որ ընկույզը տանում են ուտելու, սովորություն ունեն նստել մի բարձր ժայռի կատարին ու կտուցով ջարդել: Ջարդելիս՝ հաճախ ընկույզները գլորվում ընկնում են քարափի ճեղքը, կամ խոր անդունդը: Քամին փոշի է բերում լցնում այդ ճեղքերը, անձրևը ջրում է ու մեկ էլ տեսար՝ ծառ դուրս եկավ քարերի արանքներից...

Այդպիսի ընկուզենիներից մեկի կատարից նայում եմ Զանգեզուրի փարթամ, դեղնող անտառներին, անդնդախոր ձորերին ու հոգիս թնդում է բերկրանքից,—ի՜նչ սքանչելի աշխարհում ենք ապրում մենք: Ու ինձ համար մեկ անգամ էլ հասկանալի է դառնում, թե ինչու այնքան շատ անվեհեր մարդիկ է տալիս այդ լեռնաշխարհը և ինչու այդ մարդիկ այնքան անձնուրաց են կռվում ռազմի դաշտերում:

Եվ ո՞վ արյուն կխնայի այս հեքիաթային չքնաղ աշխարհը պաշտպանելու համար...

Լեռների ծերպերում ծխում են Սյունյաց աշխարհի գյուղերը: Նեղ, քարե շավիղներով, անդունդների պռունգներով ավանակների քարավաններ են ձգվում դեպի շեները՝ բարձած ոսկեգույն խուրձերով, արևագույն մրգերով լեցուն կողովներով: Այդ նույն շավիղներով հայրենի գյուղերն են վերադառնում այդ երկրի աննման զավակները՝ հպարտ հոգով ու կարոտից պապակված սրտերով: Նրանց առնական դեմքերից երևում է, թե որքան է կարծրացել նրանց սիրտը պատերազմի արհավիրքների մեջ: Բայց մի տեսեք, թե ինչպես այդ կարծրասիրտ մարդիկ գրկում, համբուրում են իրենց հայրենի թփերը, գուրգուրանքով նայում քարափներից կախկխված խաղողի ողկույզներին, ալեկոծված սրտով դիտում ժայռերի մեջ փորված անձավներին, ուր ծնվել են իրենք, ու լուռ արտասվում են կարոտից և անկրկնելի երջանկությունից...

Իսկ Սյունյաց աշխարհի բեղուն աշունը իր բեհեզ հագած անտառներով, իր մրգաստաններով ողջունում է նրանց՝ իր անվեհեր զավակների վերադարձը հաղթական կռվից:

***

Մեր մեքենան ընթանում է հարթ դաշտավայրով: Հնձած արտերում լուռ հանգստանում են խրձերի բարդոցները: Սև ցելերը

գոտիներ են կապել դեղին-գորշ դաշտի մեջքին։ Հարթավայր է — ինչքան որ աչքդ կտրի։

Խիստ թափով գնալիս հանկարծ մեր մեքենան կանգ առավ, շոֆերը դուրս թռավ, ցած նայեց ու գլուխն օրորեց։

— Քիչ մնաց անդունդը գլորվեինք,— ասաց նա։

Ի՞նչ անդունդ կարող է լինել այս հարթավայրում։ Մենք ցած իջանք և ապշեցինք — իրոք անդունդի պռնկին ենք։ Ներքևում անհատակ մի ձոր է, որի լանջերին — զառիվայրերին սրածայր ժայռեր են վեր ելնում, իսկ այդ ժայռերի արանքներում, նրանց խորքերում ու դիք լանջերին այդ երկրի բնակիչների բնակարաններն են։ Խնձորեսկ գյուղն է։

Իր ֆանտաստիկ-ապշեցուցիչ արտաքինով այդ գյուղը նմանը չունի աշխարհում, ուստի արժե մի քանի տող նվիրել նրա նկարագրությանը։ Ձորը սովորաբար ընկած է լինում լեռների միջև — առանց լեռան ձոր չկա։ Այդպես չէ այստեղ։ Այստեղ ուղղակի դաշտի մեջտեղը և նրա ընդերքում բնության տարերքի ուժով մի անդունդ է բացված, մի ստորերկրյա աշխարհ, ուր ժայռերը ոչ թե վեր են ելնում երկրի մակերեսից բարձր, ինչպես սովորաբար մենք տեսնում ենք մեր շրջապատում, այլ մնում են դաշտի մակերեսից ցած, այն պռնկից ցած, ուր կանգնած է մեր ավտոմեքենան։

Ամենի բարձրության այդ ժայռերը նման են իրար՝ մեկ մորից ծնված հսկաների պես,— բոլորն էլ բրգաձև, երկարուկ, կոկած «չարխաքաշ» — կարծես բնություն-ճարտարապետը հատկապես կերտել, հղկել ու իրար կողքի շարել է իր ստեղծագործության արգասիքը ի ցույց և ի զարմանս մարդկային սերունդների։

Անցյալներում ողջ Խնձորեսկ գյուղը — 1800 տուն — տեղավորված է եղել քարանձավներում։ Այդ երկրի հաղթաբազուկ ու քրտնաջան բնակիչները դարեր շարունակ փորել են ժայռերը և անձավ-բնակարաններ կառուցել իրենց համար։ Մտնում ենք խնձորեսկցու այդպիսի բնակարաններից մեկը.— մի ընդարձակ սենյակ է փորված ժայռի մեջ գմբեթաձև-կամարաձև առաստաղով։ Թախտերը կերտված են նույն քարից, պատերի մեջ պահարաններ, թարեքներ — «պատրհաններ» են փորված, ու այդ ամբողջը սենյակի հետ միասին կազմված է ընդամենը մեկ քարից... Անգամ ճրագ դնելու տեղ է փորված քարե պատին։ Սենյակին կից գոմն է,

քարե մուրճերով, նույնպես փորված ժայռի մեջ։ Նույն ժայռի մեջ փորված մի քարանձավ խոտանոց է, մի փոքրիկ քարանձավ հավարում, շեմքի մոտ մի կոկիկ խորշ՝ շան բույնը։ Այդպիսով յուրաքանչյուր տուն 5—8 անձավ ունի, բոլորն էլ փորված ժայռերի մեջ՝ բրիչով ու քլունգով։ Այդ գյուղում շուրջ 8000 այդպիսի անձավներ կան մարդու ձեռքով փորված... նրանցից մի քանիսը այնքան ընդարձակ են, որ 100 կով, կամ 400 ոչխար կարող են տեղավորվել։ Այդ գյուղի բոլոր անասունները ձմեռը տեղավորված են քարանձավներում։

Կալերը նկարագրածս անդունդի պռնկին են—ժայռերի գլխին։ Մենք եղանք կալերում և տեսանք, թե ինչպես հարդը սրբում, կալի պռնկի անցքով ցած են թափում։ Յուրաքանչյուր կալի ներքին պռնկին—ժայռի գլխին ծխնելույզի նման մի անցք կա, այդ անցքով հարդը գնում է ժայռի փորը,—բոլոր ժայռերի ներսն այդտեղ շտեմարաններ ու հարդանոցներ են...

Անգամ ջրանցքները փորված են ժայռերի մեջ, նրանց երկարությամբ։ Գյուղից ներքև, շատ ներքև խաղողի այգիներն են, իսկ ջուրը վերևում է։ Ջրի և այգիների միջև ձգվում են շեկ գորշ ժայռերի ամեհի շարքերը։ Համառ ու շինարար մարդը տասնամյակներ անընդհատ փորել է այդ ժայռերը՝ նրանց ողջ երկարությամբ և ժայռի ներսում, դրսից անտեսանելի ջրանցքներ բացել մինչև այգիները։ Այդ ստորժայռյա թունելներից մի քանիսը մինչև 1000 մետր երկարություն ունի։

Գյուղի տակի ավերակ վանքի դիմաց բարձրաբերձ ժայռերի վրա մի կտոր հող կա—մոտ մեկ քառորդ հեկտար տարածությամբ։ Մարդը չէր կարող այդ հողին մոտենալ,—նրանից ցած անդունդ է, վերև՝ սեպ ժայռեր, կողերին՝ քարափների ուղղահայաց պատերը։ Եվ ահա հնում մարդիկ ծակել են ժայռը, թունել տվել, հասել այդ կտոր հողին և այգի գցել նրա վրա։ Այդ թունելով հոսում է առուն, գնում է միրգը տեղափոխող ավանակը և կուզեկուզ՝ այդ հողը մշակող մարդը։ Ժայռերի ծերպերում թառած այդ ֆանտաստիկ այգին այժմ Խնձորեսկի մանկապարտեզինն է։

Ջրի հատակից վեր ելնող բարձրաբերձ ժայռերը ծակծկված են բազմաթիվ տեղերից։ Նրանց լանջերին, ճակատներին փորված են 3—4 հարկանի քարանձավներ։ Ներքևից նայում ես այդ ժայռերին, տեսնում ես նրանց անմատչելի խոռոչներում պահած

խոտի դեզերը, տեսնում ես ժայռը ծխում է իր բազմաթիվ երդիկներից ու ապշում ես, թե ինչպես են մարդիկ բարձրանում այնտեղ։

Աշնան երեկոն իր խաղաղ ու մեղմ շնչով իջավ գյուղի վրա։ Ես նստած եմ բարձրաբերձ ժայռի կատարին, նկարագրածս անդունդի պռունկին։ Ներքևում ժայռերը կուլ գնացին թանձր խավարին։ Անծանոթ մարդը սարսափով է նայում ցած,—ներքևից այդ ստորերկրյա աշխարհի թանձր խավարում թաղված բնակչության ժխորն է լսվում,—երեխաների լաց, հորթերի բառաչ, շների հաչոց և խառը խուլ ու խորհրդավոր աղմուկ։ Ապա այդ մռայլ տեսարանին փոխարինում է շլացուցիչ-ֆանտաստիկ մի այլ տեսարան,—անդունդը հանկարծ լուսավորվում է տներից, քարանձավներից, խորշերից ու գոմերից հորդող էլեկտրական լույսերից։ Բոլոր քարանձավներում էլեկտրական լույսեր են վառվում, երկնասլաց ժայռերի ճակատներին փորված պատուհանները, դռները հինգհարկանի անձավները լույս են հորդում։

***

Քսանվեց տարի առաջ գյուղի 80 տոկոսը քարանձավներում էր ապրում։ Այժմ 80 տոկոսը նոր, լուսավոր բնակարաններում է ապրում։ Քսանվեց տարվա մեջ հիմնովին հեղաշրջում է կատարվել գյուղի կյանքի, կուլտուրայի և կենցաղի մեջ։ Այդ խուլ անկյունում, ահից կիսաստորերկրյա կյանք վարող գյուղը արագությամբ վերափոխվեց կուլտուրապես։ Ժայռերի հետ կռիվ տվող այդ կոպիտ մարդիկ զարմանալի գրասեր դուրս եկան։ Միայն 1935 թվին գյուղում գործում էր 27 լիկկայան, 2 կիսագրագիտական դպրոց, 1 միջնակարգ դպրոց 1300 աշակերտով։ Այդ տարվանից մինչև Հայրենական Պատերազմն սկսվելը գյուղը գլխովին գրագետ դարձավ։ Դեռևս պատերազմից առաջ 500 տնից բաղկացած գյուղը ստանում էր մի քանի հարյուր օրինակ թերթ և ժուռնալ, ըստ որում քիչ չէր միութենական թերթեր ստացողների թիվը։ Գյուղի 3 գրադարաններում սիստեմատիկ ընթերցանությամբ են զբաղվում 390 հոգի։ Ակումբ հաճախում և այնտեղ ընթերցում են 200 հոգի։ Իր ժամանակին ձեռքից ձեռք են անցել «Սամվել», «Սասունցի Դավիթ», «Վարդանանք», «Պապ թագավոր»

վեպերը, իսկ այժմ սովետական գրողների նոր գործերը։ 75-ամյա ծերունի Շափաղաթը վերջին երկու տարում 30 կտոր գիրք է կարդացել։ Նա բացառություն չէ։ Արդեն ալեհեր կոլխոզնիկներ Գրիգոր Փանդունցը, Աշոտ Ցարմազյանը բազմաթիվ հետաքրքրական գրքեր 2—3 անգամ են կարդացել։ Հպարտության զգացումը համակեց մեզ, երբ իմացանք, որ իրենց մեծ հայրենակից Դավիթ Բեկի մասին գրված վեպը («Դավիթ Բեկ») կարդալու համար հոգի աշխատավորներից 36 հոգի հերթի են գրվել օրվա աշխատանքից հետո գիշերները կարդալու համար... Չնայած դաշտային ծանր աշխատանքներին այդ գյուղում վերջին 3 ամսում գրադարանները 500 գիրք են բաց թողել ընթերցողներին։

Գյուղը ռադիոֆիկացիայի է ենթարկված, այստեղ ամեն գիշեր 538 էլեկտրական ճրագ է վառվում։ Երեկ արջարներում ապրող այդ գյուղը շատ առաջավոր երկրների կարող է զարմացնել իր տված ինտելիգենցիայով։ Միայն Սովետական իշխանության 26 տարում երբեմնի հետամնաց ու քարանձավարնակ այդ գյուղը երկրին տվել է միջնակարգ կրթության տեր երիտասարդներ 445 հոգի, բարձրագույն դպրոցներ ու համալսարաններ ավարտած 127 հոգի, 29 բժիշկ, 21 գյուղատնտես, 28 ճարտարապետ, 9 պրոֆեսոր, 2 գրող, 2 կոմպոզիտոր։

Խնձորեսկը նշանավոր է մանավանդ իր հերոս զավակներով, նա հայրենիքին տվել է 2 գեներալ, 2 Սովետական Միության հերոս, 7 գնդապետ, 20 մայոր, 30 կապիտան, 110 միջին սպա։

Ինչքա՜ն պանդուխտներ է տվել Խնձորեսկ գյուղը... Կարիքից հալածված նրանք իրենց կյանքն էին մաշում Մանթաշովի նավթահանքերում, բեռնակիր էին Կասպից ծովի նավահանգստներում, բախտ որոնելով հասել էին Միջին Ասիայի աուլներն ու ավազուտները։ Շատ արագ թափով կատարվեց այդ գյուղի աղքատացումն ու թափառական կյանքի մատնվելը։ 1800 տնից մնաց 520 տուն։

Կոլտնտեսային կարգերի շնորհիվ խնձորեսկցին վռնդեց իրեն պանդխտության քշող կարիքը և ինքը հաստատուն մնաց իր պապենական օջախում։ Նա զինվեց հողագործության հզոր միջոցներով և բազմապատկվեց նրա ուժը բնության հանդեպ։ Քսանվեց տարի առաջ այդ գյուղն ուներ 22 արոր և գութան։ Այժմ ունի 30 գութան, 5 տրակտոր, 2 կոմբայն, 1 կալսող մեքենա։ Քսանվեց տարի առաջ գյուղում կար 300 տնտեսություն, որ զուրկ էր հողից,

անասունից և մշակություն էր անում հարուստների համար։ Այժմ այդ նույն մարդիկ և՛ հողի, և՛ անասունների, և՛ իրենց մարդկային իրավունքների տերն են։ Քսանվեց տարի առաջ այդ գյուղում ամեն տնտեսության միջին հաշվով ընկնում էր մեկ հեկտար ցանք, ըստ որում բնակչության մեկ երրորդը ցանքազուրկ էր։ Այժմ ամեն տնտեսության միջին հաշվով ընկնում է 4 հեկտար ցանք, այլևս ցանքազուրկ մարդ չկա այդ գյուղում։ Քսանվեց տարի առաջ գյուղն ուներ 2.300 ոչխար, 800 խոշոր անասուն։ Այժմ ունի շուրջ 13.000 ոչխար և 2.200 խոշոր անասուն։

Ի՞նչ օրի էր հասնում հայկական գյուղն անցյալում, ամեն պատերազմի։ Չորս տարի տևող Հայրենական Պատերազմի ժամանակ միայն նոր կարգերի շնորհիվ Զանգեզուրի գյուղերը ոչ միայն չաղքատացան, այլև առաջ գնացին, ավելի հզորացան։ Խնձորեսկում այդ տարիներին ոչ ոք հացի պակասություն չզգաց։ Պատերազմի տարիներին Խնձորեսկը այնքան հզորացավ, որ իր բնակիչներին ապահովելուց հետո պետությանը տվեց 20 հազար փութ միս, 1.600 փութ յուղ, 520 փութ պանիր, 1.800 փութ բուրդ, 68 հազար փութ հացահատիկ, կարտոֆիլ՝ 11 հազար փութ, ծխախոտ՝ 3.150 փութ, ձու՝ 135 հազար հատ, փոխառությանը բաժանորդագրվեց մեկ միլիոն 776 հազար ռուբլու։ Միայն այս տարի կոլտնտեսության ֆերման պետությանը հանձնեց 7 տոննա յուղ։

Անցյալներում հացի կարոտ այդ գյուղը վերջերս պետությանը հանձնեց 5,000 փութ հաց։

Ահա Խնձորեսկը Ռևոլուցիայի 26-ամյակին։ Եվ ինչքա՜ն Խնձորեսկներ կան մեր երկրում։

Մենք տոնում ենք մեր ազատության, մեր վերելքի տոնը։ Եվ այս մեծ տոնին, ես մտնում եմ Խնձորեսկ գյուղացի կոլխոզնիկ Ծատուր Գյուլխասյանի տունը և ուզում եմ մոտիկից տեսնել նրա ընտանիքի կյանքը։ Այդ մի ընտանիքի փոխակերպության մեջ ես տեսնում եմ մեր ողջ երկրի փոխակերպությունը, մեր երբեմնի չարքաշ գյուղացիության փրկությունը դարավոր ստրկությունից ու կարիքից։

Ահա այդ ընտանիքի պատմությունը։

... Ծատուրի պապը՝ Սարգիսջանը, անվանի հողագործ էր։

Նա իր արտը հասնելուն պես փափախը վերցնում էր ու ակնածանքով բարև տալիս հողին.

— Բարի լույս, ա՛յ տափ...

Ու դառնում խրատում էր ջահելներին.

— Հողը մեզանից մեծ է, հողին պետք է հարգել...

Նույն պատիվը նա տալիս էր իր լծկանին, իր գերդաստանի չարքաշ մշակներին, այն անասուններին, որոնք հլու և անմռունչ տանում էին իր ծանր կյանքի ծանր լուծը։ Եզը Սարգիսջան պապի թիկունքն էր, նրա աջ բազուկը, նրա հավատարիմ «ախպերը»։ Նա այդպես էլ կոչում էր իր եզներին։ «Դե, քաշի, ախպեր ջան, քիչ մնաց...»։

Մինչև այսօր էլ խնձորեսկցոց ականջին հնչում է Սարգիսջան պապի անցած-գնացած հորովելը տասնամյակների խորքից, հուսահատ ու սրտաճմլիկ, որպես իր դարդոտ, մաշված կյանքի «բայաթին»։ Ու հիշում են նրա սրտառուչ, ջերմ խոսքերն ուղղված իր «ախպորը»՝ եզանը.

Մատաղ լինեմ եզանը.
Եզը պահի խիզանը*.
Հորովել, այ ուսից մատաղ...

Եվ այդ մարդը, որ հոգին դուրս էր գալիս, երբ եզան կճղակների արանքը փուշ էր մտնում, այդ մարդը համաշխարհային առաջին պատերազմի տարիներին հասավ այնպիսի հուսահատ վիճակի, որ «խիզանը պահող» եզների աչքերն իր ձեռքով կուրացրեց...

Գորիսի և Խնձորեսկի միջև ընկած այլանդակ ժայռերով մի ձոր կա—Շոռի ձորը։ Սարգիսջան պապն այդ ձորի ժայռերի տակ կանգնեցրեց իր եզներին, կռացավ համբուրեց նրանց աչքերը և չուխան գցեց աչքերին։ Գցեց, որպեսզի չտեսնի այն ոճիրը, որ նա ստիպված էր կատարել։ Նա սուր քարի հարվածներով կուրացրեց իր եզների մեկական աչքը։ Ու տնքաց Սարգիսջան պապը ցավից, նստեց քարին արտասվեց ու անիծեց դաժան աշխարհը, դաժան օրենքը. տարել էին նրա մյուս եզները, քայքայվել էր տըն-

* Խիզան—գերդաստան։

ունեությունը, 17 շնչից բաղկացած ընտանիքն այդ մի զույգ լըծկանին էր նայում, այդ էլ պիտի տանեին, եթե նրանց աչքերը ողջ լինեին... Ահա ինչու էր Սարգիսջան պապը հանում իր եզների աչքերը:

Երբ 1916 թվին ռազմաճակատից վերադարձավ Սարգիսջան պապի տան սյունը, Ծատուրը, այդ եզներն էլ չկային, ընտանիքը թշվառության էր մատնված: Ու գնաց Գյուլխասանց Ծատուրը հեռու երկիր բախտ որոնելու:

Տասնամյակներ հետո Ծատուր Գյուլխասյանը նորից կռիվ գնաց և նորից վերադարձավ հայրենի օջախը:

Երբ տուն մտավ, արագ հայացքով խուզարկեց հարազատների դեմքերը,—առողջ էին, բայց սպասումի կարոտը աչքերի մեջ: Հայացքով խուզարկեց բնակարանը—ամեն ինչ տեղն է—դեռ անծանոթ իրեր էլ կան: Տնից դուրս եկավ՝ իր թողած անասունները ուրախ բառաչով դիմավորեցին իրեն:

Մարտին, էր, տարվա ամենապակաս ժամանակը:

— Հացի կողմից ո՞նց եք, այ կնիկ,—դարձավ նա կնոջը:

— Ջանդ սաղ լինի, դեռ մի տասը ջվալ էլ կա,—պատասխանեց կինն ուրախ:

Ես մոտիկից ծանոթացա Ծատուր Գյուլխասյանին,—նա իր հարևանների հետ դուրս է եկել անձավային կյանքից և կուլտուրական կյանքով է ապրում:

— Գրագե՞տ ես, Ծատուր դայի,—մի օր հարցրի ես նրան:

Նա հանելուկային պատասխան տվեց.

— Առաջ գրագետ էի, հիմի անգրագետ եմ:

Տեսնելով, որ տարակուսանքի մեջ եմ, նա «մանրեց» իր ասածը.

— Առաջ մեր գերդաստանի 17 շնչից մենակ ես էի գրագետ, հիմի մեծ տղես՝ Լևոնը ահագին կրթության տեր մայոր է, մյուս տղես՝ Աշոտը բժիշկ է, Շմավոնս միջնակարգն ավարտած լեյտենանտ է, Համբիկս Գյուղինստիտուտի չորրորդ կուրսումն է, Գառնիկս էլ 9-րդ դասարանումն է սովորում: Դե էդ ուսումնականների մոտ ես իհարկե հիմի անգրագետ եմ, ոնց որ մեր պապերի ձեթի ճրագը հիմիկվա էլեկտրական լիսի առաջ...

ՔԱՐԱՇԵՆ

I

Ի՞նչ գրիչ կարող է նկարագրել այն բերկրանքը, որ զգաց զինվոր Սարգիս Մարկոսյանը, երբ երևաց իր հայրենի Քարաշեն գյուղը՝ լեռան ժայռապատ լանջին ծվարած։

Աշնանամուտի իրիկնադեմ էր. օրվա տապից հետո լեռներից եկող զով զեփյուռը սվսվում էր դեղին-ոսկեգույն արտերում։ Հացաբույսերի, հասուն հասկերը խոնարհում էին իրենց գլուխները և թվում էր զինվոր Սարգսին, որ նրանք իր հաղթական վերադարձն են ողջունում։

Բայց այս ի՞նչ անծանոթ ցորենի տեսակներ են փռված գյուղից ցած ընկնող հովտում ու դաշտերում։ Այստեղ առաջ Զանգեզուրի տեղական ցորենն էր և «տարեկանի» վիզը երկար, կապտավուն հասկավոր արտերը։ Այս ի՞նչ անծանոթ ու ժպտերես արտեր են այժմ,—դրանց նմանը նա տեսել է միայն Ուկրաինայում։

Ահա գարու բոլորովին անծանոթ մի տեսակ՝ ցուցամատի հաստությամբ վեցշարանի ծանր հասկերը խոնարհած։ Կարծես սովորական գարու երեք հասկ իրար վրա դարսված—միացված է իրար։ Ահա արեգակի վերջին շողերից հուրհրատին տված «էլիգա» ցորենի ընդարձակ արտը, ահա հավասար, կարծես մի հսկայական մկրատով խուզած-հավասարեցրած «ֆերեգնում» ցորենի կարմիր-կարմիր արտերը՝ շողշողուն ոսկու տեսքով։

Իսկ երբ զինվոր Սարգիս Մարկոսյանը գյուղի ներքևի հովտում և խրճիթների առաջ կարմրաթշիկ ու դեղին խնձորներով

ծանրաբեռնված չահել ծառեր տեսավ, նրա ուրախությունը կըրկնապատկվեց. չէ՞ որ առաջ իրենց գյուղում պտղատու այգիներ չկային։ Ինչպե՜ս մեծացել, պտղավորվել են փոքրիկ այն տնկերը, որոնք ահա ու թուլակազմ ցրված էին այն ժամանակ տների առաջ ու գյուղի տակ։ Գյուղ դարձող յուրաքանչյուր զինվոր մատղաշ ծառերին նայելով՝ բնականաբար ուրախ մտածում է՝ «Հիմի իմ երեխեքն էլ են սրանց պես մեծացել...»։

Երեկոն իջնում էր գյուղի վրա, կալսիչը միալար չխկչխկում էր կալում, հնձվորները վերջին խրձերն էին կապում, երբ զինվոր Սարգիս Մարկոսյանը գյուղ մտավ՝ հոգնած ու երջանկությունից փայլող դեմքով։

2

Սարգիս Մարկոսյանը ռազմաճակատում մտածում էր, թե իրեն հանգստացնելու համար են տնեցիք գրում, թե նոր կով են առել, մի արկղ մեղուն վեցն է դարձել, ոչխարներ ունեն, տան կահկարասի են գնել։ Այդ ի՞նչպես, որտեղի՞ց։ Չէ որ Քարաշեն գյուղը դեռ չի մոռացել առաջին մեծ պատերազմի ծանր դասը։

Այդ «գաղտնիքը» նրան հաղորդեց կոլտնտեսության նախագահ Արշակ Սուջայանը, երբ Սարգիս Մարկոսյանը իր ընտանիքից կարոտն առնելուց հետո մյուս օրը գյուղամեջ էր դուրս եկել։

— Կռիվն սկսվելուն պես մի զարմանալի բան կատարվեց գյուղում—«հաշիվ էր տալիս» նախագահը պատերազմից վերադարձողներին։—Մարդիկ իրենց մասնավոր գործերը թողին ու հավաքվեցին կոլխոզի շուրջը։ Երբեք մարդիկ այնքան կարգապահ ու նվիրված չեն եղել համայնական գործին, ինչքան պատերազմի տարիներին։ Մեր դերն էլ այն էր, որ կազմակերպեցինք այդ շարժումը և ահա չորս տարում գյուղը կերպարանափոխվեց.—անցանք ցանքաշրջանառության. կորնգան ցանեցինք,—հողն ուժեղացավ, պարարտանյութ տվինք նրան—ավելի՛ ուժեղացավ։ Քերծերը ծակեցինք, ջրանցք անցկացրինք,—և այդ՝ ձեր մայրերն ու քույրերը ծակեցին, նրանք, որոնց մասին մի ժամանակ ասում էիք, թե՝ կինն ինչ է, որ ժեռ ծակի։ Մեր այս փոքրիկ, ընդամենը 150 տնից բաղկացած կոլխոզը այս տարիներին իր ոչխարների թիվն ավելացրեց 1.100 գլխով, խոշոր անասուններինը՝ 110 գլխով, ձիերինը՝

26 ղխով, կազմակերպեց խոզաբուծական և թռչնաբուծական նոր ֆերմաներ, ցորենի մի անագին պահեստ կառուցեց, մոլախոտն իսպառ վերացրեց դաշտերից և միջին բերքատվությունը ավելացրեց մեկին մեկ։ Իսկ ձեր բաժինը, սիրելի կովողներ, առաջին հերթին ենք ուղարկել. մի հաշվապահին հարցրեք. միայն պատերազմի առաջին երկու տարում 32.000 փութ հաց ուղարկեցինք ձեզ,—միջին հաշվով ամեն տնտեսության բաժնից 213 փութ... Չկարծեք, թե իրենց՝ ձեր հարազատներին բան չմնաց։ Մի հարցրեք ձեր հարևաններին՝ Բաբա Մնացականյանին, Լևոն Մովսիսյանին, Բալասան Ղուկասյանին, հարցրե՛ք, թե ինչու պահեստից չեն ստանում անցյալ տարվանից մնացած իրենց ցորենը...

Բաբա Մնացականյանի որդի Մեսրոպը, որ նոր էր եկել ռազմաճակատից, հաստատեց նախագահի խոսքը։

— Նորը ո՞րն է մեր գյուղում ձեր գնալուց հետո,—ձայնը բարձրացրեց նախագահը,—նորն այն է, որ գյուղացիք վերջնականապես համոզվեցին, որ փրկությունը միայն ու միայն համայնական աշխատանքի մեջ է։ Ահա այդ համոզմունքն էր, որ նրանց գործի մղեց, այդ համոզմունքն էր, որ կերպարանափոխեց գյուղը...

Ռազմաճակատից վերադարձած զինվորները գոհ մնացին նախագահի այդ «հաշվետվությունից», գոհ մնացին գյուղում կատարված գործերից, սրտանց շնորհակալություն հայտնեցին նրան՝ իրենց ընտանիքներին կարիքից փրկելու համար և գոհ սրտով դաշտ գնացին՝ դեռևս կանգուն մնացած վերջին արտերը հնձելու։

3

Կոլխոզի կալում դիտում ենք տեսակավոր ցորենի ու հաճարի արևագույն շեղջերը։ Դիմացի լանջից «հորովելի» ձայն է գալիս.— Մանգասար պապի գութանավորներն են—ցել են անում։ Ի՜նչ հաճելի զգացում է համակում մարդու աշնանամուտին գյուղում, երբ մարդիկ ժրաջան մեղուների նման բերքը շտեմարաններն են կրում, կրում են հոգնած ոտքերով և ուրախ սրտերով։

— Բայց մերկ բնություն ունի ձեր գյուղը, ափսո՜ս խաղող չունեք, թութ չունեք, այգիները նոր են և քիչ,—խոսեցի ես։

— Այգիներ կգցենք... բայց դե ամեն ինչ գալու է հացի մոտ, անհոգ եղեք,—ժպտալով պատասխանեց նախագահը,—նայեցեք գյուղի մեջ կանգնած ավանակներին՝ ներքին գյուղերից խաղող են բերել... Հիմի խաղողն էլ, թուզն էլ, ձմերուկն էլ, սեխն էլ, ամեն ինչ հացի դուռն է գալիս։ Վաղը հացը կբաժանենք—աշխօրին երևի 6 կիլո,—այն ժամանակ տեսեք, թե ինչքան խաս ու ղումաշ շորեր, ոտնամաններ ու խալիներ է գալիս մեր հացի դուռը...— Մանգասար ամի, հե՜յ,—գոռաց նա դիմացի լանջի մաճկալին,— այ մարդ, գոնե մի կես ժամ դադար տուր էդ անասուններին... արի՜, Երևանից մարդիկ են եկել, արի՜...

Մանգասար ամին գութանը կանգնեցրեց, թևքով սրբեց ճակատի քրտինքը, ձեռքով աչքերին շվաք արավ, մեր կողմը նայեց ու կարգադրեց հոտաղներին.

— Քշեցե՛ք...

Զանգեզուրի զվարթ ու դուրեկան «հորովելը» մեղմ ալիքներով մեզ էր հասնում, իսկ նախագահ Արշակը ստեպ-ստեպ գոռում էր դեպի դիմացի լանջը.

— Մանգասար ամի, հե՜յ... Այ մարդ, դե արի է՜, քեզ սպասողներ կան... Ճաշի դադարին երևի գա, շատ հետաքրքիր ծերուկ է, կծանոթանաք,—հուսադրեց նա մեզ։

Այդպես էլ Մանգասար ամին ոչ դադար արավ, ոչ էլ ներկայացավ մեզ։

Արևն արդեն մայր էր մտնում, երբ մենք ձի հեծանք։

Ճանապարհին ծանր խուրձերով բեռնավորված ավանակների ու գրաստների քարավան պատահեց։ Ի՜նչ հիանալի բերք են կրում նրանք իրենց մեջքերին։ Եվ հիշելով համառ մաճկալին՝ ակամայից անցավ մտքովս,—գուցե այս առատությունը հենց նրանից է, որ 75 տարեկան Մանգասար Օհանջանյանը գոնե կես ժամով դադար չի առնում և դադար չի տալիս հոտաղներին ու եզներին...

ՆՈՐԱԿԵՐՏ

1

Գիլլի լճի եղեգնուտներում հաջող որս կատարելուց հետո, ես մտա լճափնյա Նորակերտ գյուղը և հիացա այս գյուղում տիրող կարգ ու կանոնի վրա: Քայլում եմ գյուղի կենտրոնական փողոցով: Լայն ու բարեկարգ մի պողոտա է հիշեցնում դա. նրա երկու եզերքով ձգվում են առուները և նրանց ափերին՝ երկնասլաց բարդիների շարքերը: Ամեն հիսուն մետրի վրա պողոտան խաչաձևվում է լայն, հարթ ու բարեկարգ մի փողոցով: Փողոցների կողքերին իրարից հավասար հեռավորության վրա նորակառույց սիրուն բնակարաններ են, նրանց առաջ բարդիներ են տընկված՝ «Շատրվաններ ուղղաձիգ, ձգված կապույտ օդն ի վեր», ինչպես բանաստեղծն է ասում: Յուրաքանչյուր բնակարանի մոտ քառակուսի մի կտոր հողամաս կա, եղեգնյա ցանկապատով պատած: Ցանկապատի ներսում ծփում է դեղին, հուռթի հասկերի լճակը: Եվ դրանք՝ դեղնած արտերի այդ քառակուսիները այնքան նման են իրար, այնքան համահավասար, կարծես ոչ թե տարբեր մարդիկ են ստեղծել այդ ցանկապատերը, այլ հանճարեղ մի նկարիչ իր վրձինով գեղանկարել է՝ այդ գյուղի տների ու փողոցների ներդաշնակությունը լիակատար դարձնելու նպատակով:

Մտնում եմ պատահական մի բնակարան. գվարթ, առողջ դեմքեր, համեստ, բայց ճաշակով կահավորված սենյակներ: Կանգ եմ առնում ճերմակ ներկած մի սիրուն շենքի առաջ: Կենտրոնական թերթերի թարմ համարները կախված են շրջանակների մեջ,

ինչպես մեզ մոտ քաղաքում, շենքի առաջ բարեկարգ ու գրավիչ ծաղկանոցներ են՝ եղևնից հյուսած ցածրիկ, դանակով ձևավորված ցանկապատով։

Մտնում եմ ներս, շրջում այդ շենքի սենյակներում ու հիացմունքս զսպել չեմ կարողանում։ Մի ընդարձակ դահլիճ ընթերցարանն է, մի սենյակ՝ կոլխոզի գրասենյակը, մի համեմատաբար փոքրիկ սենյակ՝ նախագահի առանձնասենյակը։ Բոլորը յուղաներկ, ձևավորված այնքան նրբին ու բարձր ճաշակով, որ թվում է թե մայրաքաղաքի ամենակուլտուրական ակումբում ես, ամենաբարեկարգ գրասենյակում։ Տիրում է օրինակելի մաքրություն, սենյակները կահավորված և ձևավորված են արվեստով։

Դուրս եմ ելնում—փողոցում մոնտյորները էլեկտրալարեր են անցկացնում կոլխոզնիկների բնակարանները։ Այդ լարերն ինձ տանում են մի ընդարձակ, նորակառույց շենք, ուր գործի գցելու պատրաստ կանգնած է մի վիթխարի սև դիզել՝ հնդկական սև փղի նման։ Հաջորդ սենյակում նոր էլեկտրակայանն է։ Օրերս դղրդոցով կաշխատի դիզելը և նրա ուժով օրական 350 փութ ցորեն կաղացվի կից սենյակում, կոլտնտեսականների բնակարաններում պայծառ էլեկտրական աչքեր կվառվեն, իսկ կալերում այդ նույն անտեսանելի ուժով գլխապտույտ կպտտվեն մի քանի տասնյակ կամեր։

Լուռ ու մունջ, բավականության զգացումը սրտումս քայլում եմ դեպի դաշտ։ Իմ առաջ Սևանա կապույտ «ծովի» ափին նարնջագույն մի այլ ծով է փռվել—զվարթ արտերի ծովը, որ կոհակ առ կոհակ ալիք է տալիս լեռներից եկող մեղմ զեփյուռի շոյանքից։ Նրա մի ծայրից հսկա կոմբայնները հոնդոցով խուժում են տափարակի շեկ-ոսկեգույն վարսերը։

Սայլը եկավ դատարկեց կոմբայններից մեկի «փորը» ու հատիկը տարավ կոլխոզի ամբարը։ Կոմբայնը բեռից թեթևացած, աշխույժ առաջ շարժվեց։ Ատամնավոր դանակը թույլ աղմուկով սկսեց խուզել ծանր հասկերի տակ ճկված ցողունները։ Հնձվածը կոնվեյերով սահեց դեպի վեր ու մտավ մեքենայի պողպատե երախը, այնտեղից էլ կոկորդով ցած իջավ և կորավ ահագին ստամոքսում։

Առաջ է գնում կոմբայնը, կլանում ցողունների հոսանքը, բայց ցորենը չկա ու չկա։

— Զատի՛ անտեր չանավարը,—կատակում է կոմբայնի հետևից քայլող կոլխոզնիկը։

Չէ՛, ահա ամբարի վրա կռացած խողովակով սկսեց հոսել կարմիր նռնահատ ցորենի առվակը, որը գնալով ուժեղացավ։

Պահում ես ձեռքդ այդ առվակի տակ, զգում թափվող հատիկների զվարթ զարկերը ձեռքիդ վրա ու հոգիդ խնդում է բերկրանքից։ Փչում է կոմբայնը և նրա հետևից քամու հետ դուրս է թռչում հարդի մղեղը, որ արևի շողերի տակ փայլփլում է դեղին գույնով։

«Հո՛փ»—ազդարարում է կոմբայնավարը և տրակտորը կանգ է առնում։

Ամբարը նորից լցվել է, նորից պետք է դատարկել։

Աչքս տեսակավոր ցորենի անափ արտերին, ականջս մեքենաների ախորժալուր ձայներին, ուշքս ծառերի մեջ թաղված բարեկարգ ու կուլտուրական գյուղին, մի պահ ինձ թվում է, որ այս շենը կառուցված ու հատուկ խնամքով կարգավորված է մեր գյուղացիությանը նրա վաղվա օրը ցույց տալու համար, ցույց տալու համար այն բարձրագույն կազմակերպվածությունն ու կուլտուրան, որ պիտի տիրի գյուղում։

2

Երբ խորացա այդ գյուղի ներքին բովանդակության մեջ, զգացի, որ մարդիկ ցուցադրելու համար ոչինչ չեն արել, այստեղ դեկորատիվ ոչինչ չկա, այլ կոլեկտիվ աշխատանքի բնականոն ընթացքը գյուղին արագորեն հասցրել է այդ բարձունքին։

Պատերազմը անգամ չկարողացավ ընկճել նոր կյանքով ապրող այդ փոքրիկ գյուղին։ Միանալով նոր տնտեսաձևի մեջ, այդ փոքրիկ գյուղի ուժը բազմապատկվեց։ Պատերազմի դաշտ ուղարկելով իր աշխատունակ զավակներին, այդ գյուղը բնականաբար պետք է խեղճանար, ետ գնար։ Այդպես է եղել անցյալ բոլոր պատերազմների ընթացքում՝ Ալեքսանդր Մակեդոնացուց ու Հուլիոս Կեսարից սկսած մինչև մեր օրերը։ Զրկվելով հիմնական աշխատավոր ուժից, դաշտերը խոպանանում էին, տնտեսությունները քայքայվում և սովն ու համաճարակներն իրենց թևերն էին փռում երկրի վրա։

Դա բոլոր պատերազմների անխախտ օրենքն է—նրա անխուսափելի հետևանքը:

Հետավոր լեռնային Նորակերտ գյուղի օրինակը ցույց է տալիս, թե հազարամյակների այդ օրենքը, որ իր ավերածությունն է անում մանր-սեփականատիրական գյուղում, անզոր է դառնում սովետական, լավ կազմակերպված, հզոր տեխնիկայով զինված նոր գյուղում:

Լավ կլինի, որ մեր այս ընդհանուր դատողությունները հաստատենք մերկ ու համառ փաստերով:

Պատերազմի ընթացքում ոչ միայն չի կրճատվել հացահատիկի ցանքը Նորակերտում, այլև ընդարձակվել է 25 տոկոսով, իսկ բոլոր կուլտուրաների ցանքը՝ 55 տոկոսով: Ողջ ցանքը կատարված է ընտիր տեսակավոր սերմերով, այնքան ընտիր, որ իրենց սերմը բարելավելու համար այդ կոլխոզից սերմացու են տանում Սևանի ավազանի և Կրասնոսելսկի շրջանի կոլխոզները: Պատերազմի ընթացքում մոլախոտը չի խեղդել արտերին, ինչպես այդ տեղի էր ունենում անցյալ պատերազմների ընթացքում: Այդ գյուղի հերոսուհիները, ծերերը, երեխաները օրինակելիորեն մշակեցին դաշտերը և բերքատվությունը բարձրացրին 50—60 տոկոսով:

Լեռնային շրջանների անջրդի հողերը մեծ կախում ունեն բնության քմահաճույքից: Այդ և արևի ու ջրի պակասության պատճառով այնտեղ միջին բերքը ցածր է: Սակայն այդ կանոնը նույնպես «խախտել» են նորակերտցիք: Ինձնից երկու օր առաջ Բասարգեչարի պարտշրջկոմի քարտուղարը հարցրել էր Նորակերտի կոլխոզի նախագահ Օհաննես Զաքարյանին.

— Այս տարի հեկտարից քանի՞ ցենտներ հացահատիկ կտաք:

— Շրջանի միջինն ինչքա՞ն է,—իր հերթին հարցրել էր Օհաննեսը:

— Ութ, ինը:

— Շրջանի բոլոր կոլխոզներից շատ կտանք:

— Ի՞նչքան... տասներեք կտա՞ք...

— Հայաստանում տասներեք ցենտներ տվող կոլխոզներ անպայման կլինեն,—մենք ավելի՛ն կտանք...

Իմ ներկայությամբ հնձած առաջին հեկտարը հաստատեց

Օհաննեսի այդ հայտարարությունը,—ստացվեց 18 ցենտներ ընտիր հացահատիկ։

Նորակերտցիք նման բարձր բերք միայն մեկ տարի չէ, որ վերցնում են, այլ պարբերաբար, ամեն տարի, ինչպես դա վայել է կազմակերպված, սոցիալիստական տնտեսությանը։ Ուստի պատերազմի ընթացքում ոչ մի նորակերտցի հացի, հետևապես և այլ մթերքների պակասություն չի զգացել, քանի որ ամեն տարի անշեղ կերպով ավելացել է աշխօրին ընկնող հացի քանակը։

Այսպես, պատերազմի առաջին տարին, նրանք աշխօրին ստացել են երկու և կես կ.գ. հաց, երկրորդ տարին—3 կ.գ., երրորդ տարին՝ 3 և կես կիլոգրամ, չորրորդ տարին՝ 5 կ. գ., այս տարի կստանան 6 կ.գ.-ից ոչ պակաս։ Այստեղ խնդիրը միայն առատությունը չէ, այլ սկզբունքային նշանակություն ունեցող այն փաստը, որ համայնական, ինտենսիվ տնտեսությամբ մարդը սիստեմատիկորեն հաղթում է բնության տարերքը, հաղթահարում է կարիքը և տարեց տարի բարելավում իր վիճակը անշեղ կերպով։

Կոլխոզի զուտ դրամական եկամուտը վերջին հինգ տարում 140.000 ռուբլուց հասավ մեկ միլիոն ռուբլու։ Պատերազմի ընթացքում անասունների թիվը չկրճատվեց գյուղում, ինչպես այդ տեղի էր ունենում անցյալ պատերազմների ժամանակ, երբ մարդը անզոր մենատնտես էր և գերի բնության ու բռնության։ Պատերազմի ընթացքում անասուն չունեցող կոլխոզնիկները կովեր ու ոչխարներ ձեռք բերին և այժմ առանց կովի կոլտնտեսական չկա, իսկ 10—15 կթի ոչխար, 3—4 կով ունենալը սովորական է այդ գյուղում։ Անասնաբուծական ֆերմայում խոշոր անասունների թիվը պատերազմի ընթացքում աճեց 20 տոկոսով, ոչխարներինը՝ 370 տոկոսով։

Վերջին տարիներս հեռավոր լեռնային այդ գյուղում արմատավորված են հետևյալ կուլտուրաները. ծխախոտի մշակությունը, որ տալիս է ամենաբարձր բերքը լեռնային շրջաններում (հեկտարից 9 ցենտներ ընտիր ծխախոտ), կուլտուրական խոտերի ցանքը (օր. 250 հեկտար կորնգան), կաղամբի, վարունգի և բանջարանոցային այլ կուլտուրաների մշակությունը, որ նորություն է Սևանի ավազանի համար։

— Շուտով ջուր կունենանք և ես քաղցրահամ ձմերուկ կհաս-

ցնեմ, լեռնային ձմերուկ,—կիսակատակ, բայց լուրջ մտադրությամբ ասաց կոլխոզի նախագահը։

Պատերազմի ընթացքում կազմակերպվեցին հետևյալ ֆերմաները.

Գոմշաբուծական ֆերմա՝ 50 գոմեշով, ձիաբուծական ֆերմա՝ 65 ձիով, մեղվաբուծական ֆերմա՝ 100 ընտանիքով, խոզաբուծական ֆերմա՝ 200 խոզով, թռչնաբուծական ֆերմա՝ 350 թռչունով։ Այս ֆերմաները ընթերցողի աչքին փոքր կթվա, որովհետև նա չգիտի, որ այդ բոլորը տեղի է ունենում մի փոքրիկ գյուղում։ Այնպես որ, եթե մենք կոլեկտիվ տնտեսության հարստությունը մտովին բաժանենք նրանում միացած տնտեսությունների վրա, յուրաքանչյուր տնտեսությանը կընկնի 6 և կես հեկտար ցանք, որից 4,2 հեկտարը հացահատիկ, յուրաքանչյուրին՝ 12 խոշոր ու մանր անասուններ, չհաշված մեղուները և հավերը։ Դրան ավելացրեք և յուրաքանչյուր կոլտնտեսականի տնամերձ հողամասերից ստացվող 20—30 փութ ցորենը, ունեցած կովերը, ոչխարները, կոլխոզի դրամական եկամուտը, որից ամեն տնտեսությանը կհասնի 7.000 ռուբլի,—պարզ կլինի, որ այդ գյուղում մարդիկ ոչ միայն կուլ չգնացին պատերազմի դժվարություններին, այլև տնտեսապես ու կուլտուրապես բարգավաճեցին։

3

Անսպառ եռանդի տեր ու զարմանալի նախաձեռնող է Նորակերտի կոլխոզի նախագահ Օհանես Զաքարյանը։ Այդ մարդը մի քանի տարում հիմնովին հեղաշրջեց կյանքը Նորակերտում։ Նա հեռավոր Ղազախի անտառներից այնքան փայտեղեն բերեց, ինչքան չի բերել ողջ շրջանը, և կուլտուրական կառուցումներ սկսեց։ Նա կազմակերպեց բազմաթիվ նոր ֆերմաներ, օրինակելի կարգ ու կանոն հաստատեց, աճեցրեց նախիրը, լայնացրեց ցանքը, չորացրեց ճահիճները, և նոր, արգավանդ հողեր խլեց Գիլլի եղեգնուտից։ Նա Բաքվից խողովակներ է ձեռք բերել, որ 11 կիլոմետր հեռավորությունից զուլալ աղբյուրի ջուր բերի գյուղ, Երևանի հիմնարկներից ձեռք է բերել էլեկտրոլարեր, ընտիր յուղաներկեր, ամեն «մանրուք», ինչ հարկավոր է գյուղը բարեկարգելու համար։

Նրա ղեկավարությամբ այնպիսի բարգավաճման հասավ գյու-

դը, որ պատերազմի ընթացքում կոլտնտեսականները ոչ միայն չծախեցին իրենց կահկարասին, ինչպես այդ տեղի ունեցավ առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին, այլև մասսայաբար, բոլորը կահ-կարասի գնեցին, և որ ուշադրության արժանի երևույթ է՝ պատերազմի չորս տարիների ընթացքում ոչ մի մարդ չմեռավ այդ գյուղում (բացի երեք փոքր երեխայից)։ Այս կապակցությամբ ինչպե՞ս մեկ էլ չհիշել առաջին պատերազմին հետևող մղձավանջային տարիները, երբ իր ժամանակի թերթերի վկայությամբ «սովի ձեռքից ուղղակի խելագարվել էր ժողովուրդը...»։

Նա՝ կոլխոզի նախագահ Օհաննես Զաքարյանն այդ բոլորն ինքն անձամբ չարավ։ Նա կազմակերպեց և գործի դրեց հողի աշխատավորներին և այդ կազմակերպվածությունը հրաշքներ ծնեց։ Գործն այնպես է դրել, որ անգամ երեխաներն ու ծերունիները իրենց ուժերի չափ գործ են կատարում։ Իմ աչքի առաջ 9 տարեկան երեխաները օրական 20-ական կիլո հասկ էին հավաքում դաշտերից, իսկ 85—90 տարեկան ծերունիները մեկ ու կես աշխօր էին վաստակում։ Եվ դա առանց հարկադրանքի, հաճույքով, որպես բնական-կենսական պահանջ։ Ասում են աշխատանքի կազմակերպման գիտական մեթոդներ են մտցված այդ գյուղի անասնապահական ֆերմաներում։ Շրջակա գյուղերից այդ ֆերմաներն են գնում՝ ընդօրինակելու նրանցում մտցված կարգ ու կանոնը։

4

Նորակերտցիք՝ սուլթանական գեհենից մի կերպ ճողոպրած, սարսափների ու անլուր զրկանքների ենթարկված այդ մարդիկ վերջապես գտել են իրենց կյանքի հաստատուն հանգրվանը Սևանա լճի արևելյան ափին, և օրինակելի, ռացիոնալ տնտեսություն են ստեղծել։

Մի հսկա մեղվի փեթակի է նման Նորակերտը, ուր մանուկից մինչև զառամյալ ծերը գիտի իր տեղն ու դերը այդ մեծ ընտանիքում և մեղվի ջանասիրությամբ ու կազմակերպվածությամբ իր ջանքն է դնում ընդհանուր գործի մեջ։

***

Այդ անցյալ՝ 1945 թվին էր։

Մեկ տարի հետո ես նորից այցի գնացի նորակերտցիներին։ Նրանք իրենց դաշտերի առատ բերքը հավաքել էին, վերջացրել էին աշնան ցանքը և խաղաղ վայելում էին իրենց աշխատանքի արդյունքը։ Նրանք մեծ բերք էին վերցրել, չնայած շրջանում տիրող երաշտին, որովհետև ցանել էին բարձրորակ սերմեր, ամբողջ ցանքը կատարել էին դեռ 5—6 ամիս առաջ արած ցելերում, ուր կուտակվել էր խոնավություն և սննդանյութեր։ Ապա երկու-երեք անգամ մաքրել էին դաշտերը մոլախոտերից։ Արդյունքը եղել էր այն, որ կոլխոզը 3.500 ցենտներ ընտիր սերմացու էր հանձնել պետությանը՝ Հայաստանի լեռնային շրջանների գյուղերին բաժանելու համար։ Արդյունքը նաև եղել էր այն, ինչ ես տեսա կոլխոզնիկ Ղազար Ենգիբարյանի տանը։ Նրա բնակարանը մտնելուն պես մարդու դեմքին ծիծաղում են պատերից կախված խալիները, պատերի տակ գեղեցիկ նոր մահճակալներ են դրված՝ հարդարված նոր անկողիններով։ Այդ բոլորը Ղազար բիձեն գնել է այս տարվա իր աշխատանքով։

Ղազար բիձան առողջ, կարմրաթուշ մի մարդ է, կաղնի կոճղի նման լիքը և ամուր։ Նրա զվարթ դեմքը, աշխույժ շարժումները, կենսախինդ կատակները տեսնելով՝ մենք չէինք կասկածում, որ մեր առաջ միջին տարիքի մի մարդ է կանգնած։

— Շա՞տ է մեծ, հապա մի խոսեցրե՛ք,—ասաց գյուղի պարտկազմակերպիչ Օհանես Սարգսյանը։

Անհավատալի բաներ էր ասում Ղազար բիձան իր տարիքի մասին.

— Անցյալ կովին սոմանլուն, որ ինձ ասկյար տարավ, 57 տարեկան էի...

Հաշվեցի, դա 32 տարի առաջ էր...

Այո՛, մեր առաջ կանգնած է 90-ամյա մի ծերունի, իր 68 թոռներով ու ծոռներով, և այդ ծերունին կոլխոզի անվանի հընձվորն է, որ օրական հնձում է մեկ և կես հեկտար մշակովի խոտ (կորնգան), կամ մեկ հեկտար ցորեն,—այսինքն երեք ջահել տղամարդի գործ է կատարում։

Այս ամառ նա վեց օրում 22 աշխօր է վաստակել...

— Ա՜խ, պառավ չունեմ, պառավ որ ունենամ՝ 50 տարի էլ կապրեմ,—կատակեց նա։

Լավ է աշխատում Ղազար բիձան իր Անտրիֆան որդու հետ միասին։ Եվ լավ էլ վաստակում ու ապրում է նա,—օրերս նրա ստացած ցորենով 4—5 ընտանիք կապրի մի ամբողջ տարի...

— Ծեր ես, քեզ շատ մի զոռի,—պատվիրեցի ես՝ նրան հրաժեշտ տալիս։

— Աշխատանքի մեջ են պնդել մեր ոսկորները,—պատասխանեց նա։—Քսանվեց տարի Թասուլ բեգի համար ձրի քրտինք եմ թափել,—ի՛մ համար, ի՛մ երկրի համար ինչո՞ւ չպիտի աշխատեմ։ Քանի ջահել ենք կաշխատենք, երբ պառավեցինք, թող մեր գործը ջահելները շարունակեն...

Նախկին ճորտ, ներկայիս իր աշխատանքի ու մարդկային իրավունքի տեր Ղազար բիձաները օտար երկնքի տակ թափառելուց հետո, վերջապես իրենց բույնն են հյուսել Սևանի արևելյան ափին և իրենց բեղմնավոր գործով բարգավաճ են դարձնում իրենց նոր ավանը—Նորակերտը։

Հոկտեմբեր, 1946 թ.

ԿԱՐՏՈՖԻԼԻ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

I

Մենք հյուր ենք Թթուջրեցի Գասպար Կորեկյանի տանը։ Շենքի երկրորդ հարկի սիրուն սենյակները լիքն են երեխաներով։

— Կոլխոզի մանկապարտե՞զ է,—հարցնում եմ ես։

Գասպարը ծիծաղում է։

— Իմ ու եղբորս երեխաներն են։

Ես 13 երեխա հաշվեցի այդտեղ, բոլորն էլ կարմրաթշիկ, առողջ։ Նրանք բոբիկ վազվզում էին բակում ու թաղը զվարթացնում իրենց ուրախ ու անհոգ կանչերով։

— Ինչո՞ւ ես զարմանում,—դիմում է Գասպարն ինձ հանդարտ ու ինքնագոհ ժպիտով,—սա ավելի շատ ունի, ես դեռ ետ եմ մնացել,—ցույց է տալիս նա մեր սեղանակից, իմ մանկության ընկեր Խնկանոս Պապյանին։

Իսկապես, ես երեկ նրա տանն էի,—շարժվելու տեղ չկար, տան բակում նոր հանած կարտոֆիլի ահագին կույտն էր լցված, իսկ սենյակներում խռնված էին նրա երեխաները,—բոլորն էլ թմբլիկ, բոլորն էլ կարմրաթուշ։

— Ի՞նչ են ուտում ձեր երեխաները, որ այսպես լիքն են ու առողջ,— հարցնում եմ ես՝ հիացմունքով երեխաներին նայելով։

— Մաքուր օդ և կարտոֆիլ,—կատակում է Խնկանոսը լայն ժպիտը լայն բերանին։

Իրոք, շրջելով Կրասնոսելսկի շրջանի գյուղերը, ես համոզվեցի, որ մարդիկ ահ չունեն կարիքից, քանի կա կոլխոզային առատ կարտոֆիլը։

2

Գետակի մյուս կողմը, գյուղի դիմացի լեռան փափուկ ու արգավանդ լանջին մի խումբ կոլտնտեսականներ կարտոֆիլ են հանում: Հողամասի ծայրին ծուխ է բարձրանում՝ «կարտոֆիլ են խորովում»—հաճույքով մտածում եմ ես: Հողամասի հանած մասը սևացել է թանաքի նման ու այդ սև ֆոնի վրա ճերմակին են տալիս կարտոֆիլի ճերմակ կույտերը: Ի՜նչ շատ են այդ կույտերը: Ես գիտեմ, որ այս տարի խիստ երաշտ է եղել: Բայց և գիտեմ, որ ամենաանպաստ տարին անգամ հեկտարը ցորենից տաս անգամ ավելի բերք պիտի տա:

Ահա այստեղ է բրիգադիր Նիկոլ Սարգսյանը, գունատ դեմքով, հասակավոր մի մարդ, ծխամորճը մշտապես ծնոտից կախ:

Նա տխուր է, դժգոհ:

— Հեկտարից մի ութ հարյուր փութ հազիվ ստանանք,— թախիծով պատասխանում է նա իմ հարցին:—Երկինքը կապ ընկավ, թամամ երկու ամիս կապ ընկավ,—կարտոֆը հողում խաշվեց—մանր մնաց: Թե անձրև կգար, մեր կարտոֆիլի ցավքումը Ռոստով կհասներ: Բայց էլի կհասնի:

Այդտեղ ես մի պատահական ծերունու հարց տվի.

— Ինչքա՞ն կարտոֆիլ կստանաս այս տարի կոլխոզից:

Նա պատասխանեց.

— Հե՛չ, մի հինգ-վեց տոննա հազիվ ստանամ: Ու խուրձի կապը քանդելուց ու փռելուց հետո կարծես ինքն իրեն ավելացրեց. —Դե մի քանի տոննա էլ հաց կստանանք, թե չէ դրանով երեխա կպահվի՞...

3

Կես դար առաջ թթուջրեցի Սատուր հայը հարևան ռուսական գյուղից մի փեշ կարտոֆիլ բերեց ու ցանեց իր տան առաջ: Արևավառ դեմքով, ճերմակած մորուսով Շամիր դային այդ դեպքը լավ է հիշում:

— Սաղ գեղը թամաշի էր դուրս եկել, թե էս ինչ բանի է Սատուր հայը,—պատմում է նա:

— Էդ տակռին* ի՞նչ է, որ ցանում ես,—նախատել է նրան Բալա Թունունց Զատին։

Աշնանը Սատուր հային Շամշադնից մարդիկ են հյուր եկել։ Սեղանի վրա հանդես են եկել տապակած հավերը, բայց դրանք ծանոթ բաներ էին, Զատնի համար անսովորն ու զարմանալի համովը «սատանի խնձորն» էր՝ կարտոֆիլը, որի համը նա գաղտնի տեսել էր։

Ու Թունունց Զատին չի համբերում, ասում է.

— Ախպեր, էս հավը դենը դրեք, մի քիչ էն կարտոփիցը տվեք։

Այստեղ Սատուր հայի «պառավը» Զատնի երեսովն է տալիս նրա խոսքը.

— Ախր էդ էն անպետք տակռին է, ուտելու բան չի...

Կարմրում է Զատին ու հայտարարում.

— Ախպեր, ես ղալաթ եմ արել, էդ հո հացի պես բան է, սերմ տվեք ես էլ եմ ցանելու։

Այդ օրվանից հայկական գյուղերում արագ տարածվեց կարտոֆիլը, ցանքերը լայնացան, բռնեցին Կրասնոսելսկի շրջանի մարգագետինները ու արգավանդ լեռնալանջերը։ Այդ օրից կարտոֆիլը դարձավ «հացի օգնականը»—ինչպես Նահապետ ամին է ասում։

4

Սևանա լճը արևելքից եզերող Այծեմնասարի մյուս երեսին—աշխարհքից կտրված ու հեռավոր մի լեռնաշխարհ կա։ Այդտեղ, լեռնային տափաստաններում—«ուրթերում», անտառազուրկ կանաչ լեռների փափուկ լանջերին ու նրանց ստորոտների մարգագետիններում հողը դարերով հանգստացել է և կուտակել իր մեջ պտղաբեր նյութերի անսպառ պաշարներ։ Երկու լեռնաշղթա այդ լեռնաշխարհի երկու կողմերով ձգվում են դեպի Ադրբեջան, դեպի Քուռ գետի հովիտը։ Ու նրանց արանքով հոսում է կարմրախայտ ձկներով առատ մի գետակ։ Հենց այդ լեռնահովիտն էլ Հայաստանի կարտոֆիլի հայրենիքն է համարվում։ Ես շրջեցի այդ հով-

* Տակռի—արմատ

տում և ամեն տեղ եռ ու զեռ տեսա։ Անթիվ-անհամար մարդիկ, կանայք, ծերեր, երեխաներ, հարսներ ու աղջիկներ, իրենց խայտաբղետ հագուստներով նախշել են լանջերն ու հովիտները ու լցրել աշնան սելլաժի՝ գորշ դաշտերի, սև ցելերի և ուշ աշնան թավիշ կանաչով ծածկված մարգագետինների բազմերանգությունը։

Բոլորն էլ կարտոֆիլ են հանում, բոլորն էլ կարտոֆիլ են հավաքում։ Սևացած հանդերից սայլերը ճռճռալով, իրենց բեռքի տակ կքած գյուղն են գալիս։ Անթիվ ավտոմեքենաներ, փնչոցով ու տնքալով զգույշ ու դանդաղ, գյուղական խորդուբորդ ճանապարհներով դեպի քաղաք են գնում,—կարտոֆիլ են տեղափոխում։ Ճանապարհի եզրերին ուրիշ վայրերից եկած մարդիկ նստած իրենց լիքը ջվալների վրա, ավտոյի են սպասում,—կարտոֆիլ պիտի տանեն։ Գետափին փռված է հոտը, իսկ հովիվները մի փայտե լծակից դույլը կրակի վրա կախած, «շեքները» դեմ արած կրակին՝ սպասում են կարտոֆիլի եփելուն։ Բեռներ են դատարկում մոտիկ ամբարում,—առանց ստուգելու կարող ես համոզված լինել, որ կարտոֆիլ է։ Ամեն տեղ, ամեն տեղ կարտոֆիլ է, այդ շրջանը հեղեղված է կարտոֆիլով։ Կարտոֆիլն այդ գյուղերում մտել է մարդկանց կենցաղի մեջ—դարձել նրանց գլխավոր սնունդը, եկամուտի գլխավոր աղբյուրը։

5

Չափազանցություն չի լինի, եթե ասեմ, որ այդ շրջանի 7 գյուղը 7 շրջանի չափ կարտոֆիլ է տալիս երկրին։

Ինքներդ հաշվեցեք։ Միայն Հին Բաշքենդ գյուղը վերջին տարում 130.000 փութ կարտոֆիլ է ուղարկել Բաքու, Աշխաբադ և Կրասնոդար։

Թումանյան Չատրի երբեմնի անպատվված ու արհամարհված «տակրին» այժմ այդ շրջանի կոլխոզային գյուղացիության եկամտի գլխավոր և շատ վարար աղբյուրն է դարձել։ Օրջոնիկիձե գյուղի կարտոֆիլի այս տարվա քանակը դեռ հայտնի չէ, բայց հայտնի է, որ անցյալ սեզոնում այդ գյուղացի Ֆիլիպ Ապրեսյանը միայն կոլխոզից ստացել է 160 ցենտներ կարտոֆիլ, Եգոր Ապրեսյանը—180 ցենտներ, Մինաս Ապրեսյանը—260 ցենտներ։ Հայտնի է և այն, որ հին բաշքենդցի կոլխոզնիկ Կիրակոս Մուժի-

կյանը պատերազմի վերջին տարում ծախել է 150 հազար ռուբլու կարտոֆիլ, իսկ Բաղդասար Վարդանյանը՝ 270 հազար ռուբլու:

— — — — —

Ցրտում է: Լեռներից փչում է ուշ աշնան քամին: Սերմնագռավներն ու սարյակների վերջին խմբերը հյութեղ կարտոֆիլ են կտցահարում սևացած հողերում: Խոզերը, կովերը, ամեն տեսակ անասուններ կարտոֆիլ են փնտրում արտերում: Լցվում են հանրային շտեմարանները ճերմակ, երկարուկ, համեղ կարտոֆիլով, և ավելցուկը—ահագին ավելցուկը մեքենաներ ու վագոններ բարձած գնում է մայրաքաղաք, գնում է Բաքու, Կրասնոդար, Միջին Ասիա...

1945 թ., աշնանամուտ:

ՀԱՑ ՍՏԵՂԾՈՂՆԵՐԸ

Մենք դեռ գտնվում ենք Աղմաղանի հարավային փեշերից դեպի մայրաքաղաք ձգվող հացահատիկով ծանրաբեռնված «Կարմիր գումակների» գործած հիանալի տպավորության տակ։ Մենք չենք մոռանում այն խնդությունը, որով ընդունեցին Ջառ գյուղի սայլաշարքը քաղաքում։

— Ջա՜ռ, հացը եկավ...

Այդ սայլաշարքը հեռվից էր գալիս՝ 32 կիլոմետր տարածությունից։ Անձրև էր մաղում։ Ճանապարհին պատահեց պարտշրջկոմի քարտուղարը։

— Թրջվել եք, տղե՛րք,— հոգատարությամբ դիմեց նա։— Շատ նեղություն կրեցիք։

— Մարդ որ իր պետության համար նեղություն չքաշի, էլ ի՞նչ մարդ է նա,— պատասխանեց սայլերի առջից քայլող կոլխոզնիկը։

Այդ շարքային կոլխոզնիկի անպաճույճ պատասխանի մեջ մենք տեսնում ենք Կոտայքի շրջանի կոլխոզային աշխատավորության վերաբերմունքը դեպի իր պետությունը։

Եվ որովհետև այդ հոգեբանության տեր հողի աշխատավորների թիվը շատ է Կոտայքի շրջանում, ուստի հասկանալի է, թե ինչու հենց որ պետությանը լրացուցիչ հաց տալու հարց առաջացավ, շրջանի գյուղացիությունը մի քանի օրվա ընթացքում մայրաքաղաք փոխադրեց 2.200 ցենտներ հացահատիկ՝ պլանից դուրս։

***

Նոր, ուրախալին մեր գյուղացիության հոգեբանության մեջ նաև այն է, որ նա գիտակցում է պետությանը հաց տալու անհրաժեշտությունը և իր աշխատանքից սիրով բաժին է հանում երկրին: Քանաքեռում ես պատահեցի մի անվանի հողագործի՝ Հովսեփ Սահակյանին, որին գյուղում Ոսեփ ապեր են կանչում: Ամուր կազմվածքով, առողջ դեմքով, բարություն արտահայտող խելոք աչքերով մի ծերունի է նա: Ոսեփ ապերը կոլխոզի հին ագրոավագներից է, հողի լեզուն հասկացող, նրա հետ «մերված» մի մարդ: Իր պապերի փորձի և նոր ագրոգիտության հիման վրա նա աշնան ցանքը վաղ է կատարում, որպեսզի մինչև ձյունը նըստելը, ինչպես ինքն է ասում, արտը «բեչա տա»:

— Արտը, որ մինչև ձմեռը մի թիզ չբարձրացավ ու հետո էլ չփռվեց, նրանից հույս մի ունեցիր,— այսօր խրատում էր նա ինձ,— ո՞ւշ ցանեցիր, չծլե՞ց, հատիկները մրջյուններն են կրելու, ղշերն են տանելու, լափելու են ու ցրտահարվեն:

Գարունը բացվեց՝ Ոսեփ ապերը դաշտումն է: Ե՛վ անվանի մաճկալ է, և՛ վարպետ ջրող, մշակող, և՛ լավ հնձող: Մինչև հացահատիկը պահեստ մտնելը Ոսեփ ապերը դադար չունի: Նրա գլխավոր հոգսն է՝ հաց տալ երկրին: Եվ այդ հոգսով բռնված, նա աշխատում ու աշխատեցնում է իր հարևաններին և հաց ստեղծում երկրի համար, կոլխոզի համար, իր ընտանիքի համար:

Եվ այդ մարդը, որ անխոնջ գործունեությամբ հաց է ստեղծել, ամենայն սիրով իր քրտինքից բաժին է հանում պետությանը: Երբ կոլխոզում հարց դրվեց պլանից դուրս հացահատիկ տալ պետությանը, առաջինը Ոսեփ ապերը խոսք վերցրեց ու սրտալի առաջարկեց 150 ցենտներ ցորեն փոխադրել մայրաքաղաք: Իրավունքով խոսեց նա, հաց ստեղծողի իրավունքով:

Ես այսօր նրան խոսեցրի: Նա իր այդ առաջարկը և այն, որ ինքը ամբողջ սրտով է հացը հանձնում պետությանը՝ պատճառաբանեց հետևյալ կերպ.

— Մեր գյուղացիք առաջ առվի ջուր էին խմում: Պղտոր ջուրը լցնում էին քարից շինած գուռի մեջ, քամվում էր, ու այդ գուռը կոչվում էր «քարե մաշինա»: Ուրեմն առաջներում մեր գյուղի միակ «մաշինեքը» էդ քարե գուռերն էին: Հիմի սովետական իշխանությունը մեր դաշտերը լցրել է մաշինեքով, խակա՞ն մա-

շինեքով է՞, ոչ թե մեր պապերի «քարե մաշիններով»։ Մտի՛կ, մեր հողը համարյա ամբողջը պետությունն է վարում տրակտորներով։ Էս տարի ՄՏ կայանը մեզ համար 280 հեկտար վաղ ցել է արել, 80 հեկտար աշնան վար, 110 հեկտար կրկնավար։ Կայ էն տրակտորիստին, որ մի քիչ վատ վարեց, նորից ենք վարել տալիս, ստուգում ենք, հավանում, նոր ընդունում վարը։ Ցանքի ժամանակ մեկ էլ տեսար շարքացանները կոկլի՞կ նախշեցին դաշտերը։ Եվ ի՞նչ սերմ են գցում, ի՞նչ սերմ, ոնց որ նռան հատիկ,—ախր մեր կոլխոզը սերմաբուծական է…

Արտը հասա՞վ—փշի պես կոմբայնները օգնության են գալիս ու ամեն մինը 100 մարդու գործ է անում։ Էս տարի 190 հեկտար արտ կոմբայնները հնձեցին-կալսեցին։ Մեր հնձածն էլ կալսիչ մեքենան է կալսում։ Մի խոսքով, էս տարվա մեր ստացած 420 տոննա հացահատիկից միայն 40 տոննան ենք մենք կալսել, մնացածը ՄՏ կայանն է կալսել իր մեքենաներով։

Ուսեփ բիձան ինքնաբավականությամբ շարունակում է պատմել ու մեզ ապացուցել, որ ինչքան էլ տան, էլի՛ իրենք են պարտ մնում պետությանը։

— Մտի՞կ,—ասում է նա,—հրե՞ն ներքևից զավոդները եկել են խաչատուր Աբովյանի բաղին դեմ առել։ Շինում են, ո՞նց են շինում. է՛լ Ալումինստրոյ, է՛լ Քանաքեռգէս, է՛լ արտասահմանից եկող հայերի ավան, էլ չգիտեմ ինչ շինարարություններ։ Ախր էդ կառուցողները հաց են ուտում։ Ախր երկիրը պահող զորքին հաց է պետք։ Ախր մեր երեխաներին ուսում տվող ուսուցիչներին հաց է պետք։ Մտի՞կ, մեր գյուղում 2 միջնակարգ դպրոց կա, 36 ուսուցիչ,—ախր դա սովետական իշխանության տվածն է։ Ամեն տան ռադիո կա, ամեն տան էլեկտրական լույս կա, ախր էդ բաները շինողները հաց պիտի ուտեն, որ մեզ համար շինեն, ուղարկեն։

Իրոք, Ուսեփ ապոր հաշիվներից ու փաստարկումներից մենք էլ համոզվեցինք, որ Քանաքեռ գյուղը դեռևս շատ ու շատ է պարտական իր պետությանը։ Եվ նա իր պարտքը տալիս է սիրով, գիտակցաբար։

***

Ուսեփ ապերը շատ քիչ է համարում այն հացահատիկը, որ տվեց պետությանը։ Նա քիչ է համարում պետության բաժինը,

որովհետև իր բաժինը, կոլխոզային կարգերի շնորհիվ, պետության ուղարկած հզոր մեքենաների շնորհիվ շա՜տ-շատ է։ Այսպես, իր յուրաքանչյուր աշխօրին հասնող հացահատիկից 200 գրամը նա տալիս է պետությանը, իսկ 2 կիլոն պահում է իրեն։ Եվ այն էլ տալիս է ոչ թե ձրի, այլ ՄՏ կայանի կատարած այս տարվա աշխատանքի դիմաց, այն բնավարձի դիմաց, որ ՄՏ կայանը պիտի գանձեր կոլխոզից եկող տարվա բերքից։

Այնպես որ ճիշտ է կոլխոզի նախագահ Մարկոս Մուրադյանը, երբ պնդում է, թե պետությանը բնավարձի դիմաց ավանս տալը կոլխոզին որոշ իմաստով նույնիսկ օգուտ է։

— Եկող տարվա պարտքից թեթևանում ենք, եկող տարվա աշխօրն ավելի կուժեղանա,—բացատրում է նա։

Եկող տարվա առատ բերքին նա համոզված է։ Անձրևները մեծ վնաս հասցրին շատ կոլխոզների, բայց ահա այդ մարդը գործն այնպես կազմակերպեց, որ Քանաքեռին օգուտ բերին վերջին տեղումները։ Ինչպե՞ս։ Այդ հմուտ մարդը իր համագյուղացիների հետ միասին կարողացավ ժամանակին հավաքել, կալսել, տեղավորել հացահատիկը և կատարել աշնան ցանքը։ Եվ երբ նրան ակնարկում են անձրևը, նա ինքնագոհ ժպիտը դեմքին պատասխանում է.

— Անձրևը հո արտերի վրա չի գալիս, ցանքերի վրա է գալիս...

Բայց մենք դառնանք նորից մեր նշանավոր հողագործին— Ռուբեն ապորը։

Ինչպե՞ս է ապրում հայ ստեղծող այդ շարքային գյուղացին։

— Պուտքի միջի պես,—կասեր ինքը։

Համեստ հաշիվներով նա այս տարվա միայն իր աշխօրերի դիմաց կստանա մեկ տոննա հացահատիկ, 17 կիլոգրամ պանիր, 5 կիլոգրամ յուղ, 35 կիլոգրամ ընկույզ, 70 կիլոգրամ կախանի տանձ, 2.000 ռուբլի դրամ, 1 տոննա վառելիք։ Դա սոսկ իր աշխատանքի արդյունքն է։

Այժմ տեսնենք նրա աղջիկներից մեկի՝ Ամալիայի կատարած մեկ ու կես ամսվա աշխատանքի արդյունքը։ Նա ուսուցչուհի է և ամառվա արձակուրդին մեկ տափ շերամ է պահել, որի դիմաց ստացել է 47 մետր զանազան կտորեղեն (որից մի մասը մետաքսե թանկագին կտոր), կստանա 600 ռուբլի դրամ, 160 կիլո

հացահատիկ, ընկույզ, յուղ, պանիր, տանձ, վառելիք, գինի։ Մեկ և կես ամսում գրեթե մեկ տարվա ապրուստ՝ մեկ հոգու համար։

Բայց այս բոլորից զատ մի բան կա, որ ամենից բարձր է գնահատում Ուսեփ ապերը՝ ուսումը. Նրա հինգ որդիները բոլորն էլ միջնակարգ կրթություն են ստացել և վարում են կուլտուրական, շնորհալի կյանք, բարձր կուլտուրականությունը մտել է նրանց կենցաղի մեջ։

Խաչատուր Աբովյանը իր համագյուղացիների մասին կսկիծով գրում էր՝

> «Որդի, երեխա իշի պես մեծանում են, նրանց հոգսը չեն քաշում, վարժարան չեն բաց անում, չեն կարդացնում...»։

Ո՞ւր է մնացել Աբովյանի նկարագրած, խավարի մեջ խարխափող Քանաքեռը...

Ուսումը նոր պահանջներ է առաջ բերում մարդուս մեջ, հըղկում է ճաշակը։ Այսպես, Ուսեփ ապերը հիմի գոհ չէ իր ամեն հարմարությամբ օժտված բազմասենյակ տնից՝ երկհարկանի լուսավոր նոր շենք է կառուցում իր որդիների համար։

— Լուսավոր դարում ենք ապրում, մեր հին տունն էլ աչքիս լավ չի երևում։

Կառուցում է, որովհետև կարողանում է կառուցել։ Էլ ինչո՞ւ նա չպիտի պետությանը սրտալի բաժին հանի իր ստեղծած հացից։

Օգոստոս, 1946 թ.

ՆՈՐԸ ՍԵՎԱՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՓԻՆ

Երբ մտնում ես այս գյուղը, քեզ դիմավորում են քարերին զարնվող ու նրանց արանքում ճերմակ փրփուրներ արձակող շառաչուն գետակները։ Գյուղը բռնված է լեռնային ջրերի քաղցրալուր աղմուկով։ Թվում է դրանք գալիս են հեռավոր վայրերից, այդ ջրառատ ու ձկնառատ գետակները։

Բարձրանում ենք երկու ձորակների միջև ընկած բլուրը, ուր տեղավորված է Գյոդակբուլաղ գյուղը և հիանում մեր առաջ բացվող տեսարանով. ժայռերի ճեղքերից ու լեռնալանջի քարքարոտ ծերպերից բխում են անթիվ-անհամար ջրառատ աղբյուրներ և զարնվելով չեչոտ քարերին երփներանգ ծիածանիկներ են կապում աշնանային արևի թույլ շողերի տակ։ Իրենց ստորերկրյա կապանքներից ու զնդաններից ազատագրված այդ պաղ ջրերը ուրախ խոխոջյունով իջնում են ցած ու աշխատեցնում միքարանի ջրաղացները։ Տեղ-տեղ նրանք դուրս են հորդում ժայռի ճեղքից ու անմիջապես կալանքի ենթարկվում,—մարդը սանձում է նրանց ուրախ ընդվզումը և հարկադրում է նախ պտտեցնել աղացաքարը, ապա դուրս գալ լույս աշխարհ։ Այնպես որ մոտիկից նայելով ջրաղացին չես նկատում ոչ ջրանցք, ոչ ջուր, ոչ խողովակ, ունկնդրում ես շենքի ներսի խուլ դղրդյունին և զարմանում, թե ինչ ուժով է աշխատում այս ջրաղացը։

— Աղբյուրը ջրաղացի մեջն է,—գաղտնիքը բացում է գյուղացիներից մեկը։ Եվ դա ասում է հպարտության շեշտով, այս իմաստով, թե «Ուրիշ տեղեր էլ տեսե՞լ եք ջաղաց աշխատեցնող աղբյուրներ»։

Ձորակներում, աղբյուրների ակունքների մոտ, գետակների ափերին հին ու նոր ջրաղացներ են, որ անքուն ու անդադար գիշեր ու ցերեկ աղում են Գյոդակբուլաղի նոր բերքը։ Այդպիսի 32 ջրաղացներ է ունեցել այդ գյուղը և բոլորն աղբյուրների վրա։ Ահա ինչ ուժ ունեն Գյոդակբուլաղի աղբյուրները։

Նրանցից կազմված գետակների ափերին բարակիրան, երկնասլաց բարդիներ են շարված՝ ագռավի բազմաթիվ բներով։

Կարճ ճանապարհ են անցնում այդ ջրերը,—ներքև, հենց գյուղի տակ ծփում է Սևանա լիճը։ Երևի դրանից է ծագել գյուղի անունը՝ Գյոդակ-բուլաղ, որ նշանակի՝ կարճ աղբյուր։

***

Շատ տարիներ առաջ Թուխ աչքերի հեզ արտահայտությամբ, արևառ դեմքով այդ կոմերիտականին ես տեսա Կրեմլի գոթական ոճի կլոր մի փոքրիկ դահլիճում, առաջնորդի առաջ շփոթմունքից ու բերկրանքից շիկնած։ Մոլոտովից նա ընդունեց իրեն հատկացված նվերը և դառնալով դեպի ընկեր Ստալինը, հայերեն թոթովեց.

— Շնորհակալ եմ... շա՛տ եմ շնորհակալ... սրանից հետո ավելի՛ լավ կաշխատեմ...

Այսքան միայն կարողացավ ասել Գյոդակբուլաղի կոլխոզի երիտասարդ նախագահ Սերոբ Միրզոյանը։ Առաջնորդը ժպտաց անսահման բարությամբ և ամուր սեղմեց նրա ձեռքը։

Իր կյանքի այդ, ամենաերջանիկ պահից մի քանի օր անց, Մոսկվայի թերթերում որոշում հրապարակվեց Սերոբ Միրզոյանին Լենինի շքանշանով պարգևատրելու մասին։

Իր հոգու խորքում առաջնորդի պատկերը փայփայելով, իր ձեռքի մեջ զգալով նրա ձեռքի հայրական ջերմությունը, սիրտը լիքն անսահման ուրախությամբ, նա Կրեմլից եկավ այն փրփրադեզ աղբյուր-գետակների ափը։ Եվ այդ պահից նրա որոնող միտքը դադար չունի, և այդ պահից սկսած նա մի գերագույն հոգս ունի՝ խղճուկ արորի, մոլախոտերի, գետնափոր խրճիթների ու աթարի «ամրոցների» այդ գյուղը հանել դարավոր հետամնացությունից, հեղաշրջում առաջ բերել հողագործության մեջ, կենցաղի մեջ, մարդկանց հոգու ու գիտակցության մեջ։

Նա որոշեց ձեռնարկել առաջին նորմուծությունը և տնկել միչուրինյան այգի Սևանի ցրտաշունչ ափին։ Հողի հումուսից, պատմությունից, ծերերի խոսքից նա գիտեր, որ լիճն անցյալում շըրջապատված է եղել անտառներով, և լճի՝ աննման այդ գեղուհու մերկությունը թախիծով էր համակում նրան։

— Ի՞նչ աննման երկիր կդառնա Սևանը, եթե շրջապատվի ծառաստաններով...

Կրեմլից վերադառնալուն պես, նա Վորոնեժից բերել տվեց ցրտին դիմացող տունկեր և աղբյուրների ստորին հոսանքում գցեց առաջին միչուրինյան այգին Սևանի ավազանում։ Ջրաղացներից դուրս գալով, Գյոդակբուլաղի աղբյուրներն այլևս աննպատակ չէին վազում դեպի լիճ. նրանք մեղմ խայտում էին ջահել, դաճաճ տունկերի շարքերում ու կյանք տալիս նրանց։

Օրերս ես պատահեցի Սերոբ Միրզոյանին գերագույն հըրճվանքի մեջ,—նա գյուղացիներին բաշխում էր միչուրինյան այգու առաջին բերքը՝ 2 տոննա խնձոր։ Գյոդակբուլաղցիք իրենց գյուղի հիմնադրման օրից սկսած, առաջին անգամ խնձոր ստացան իրենց հողից։

Սերոբ Միրզոյանը դրեց Սևանի ավազանը պարտեզներով պատելու մեծ գործի հիմքը։ Մարդիկ տեսան լճափնյա գողտրիկ, կարճահասակ ծառերի ընդարձակ այգին ու գործի անցան։ Գյոդակբուլաղի օրինակը վարակիչ հանդիսացավ։ Հարևան Ծովինար գյուղի մոտ հիմք դրվեց պտղաբուծական սովխոզին, մեծագույն նորությանը Սևանի ավազանի համար։ Մեզ ասացին, որ այդտեղ այս տարի մեկ կիլո 200 գրամանոց խնձոր է ստացվել։

— Զմերուկի պես կախված էր ճյուղից,—չափազանցրած պատմում է այգեպանը։

Մենք «ձմերուկի պեսը» չտեսանք, բայց ճաշակեցինք Գյոդակբուլաղի հյութեղ, խնկահամ ու քաղցր պտուղները և խորին համոզմունքով հայտարարեցինք, որ դրանք չեն զիջում Ղրիմի խնձորներին։

Սերոբ Միրզոյանը լի ու լի վարձատրված էր։

Հրաժեշտ տալիս նա ասաց.

— Ես չեմ մեռնի, մինչև չտեսնեմ Սևանը թաղված ծառաստանների մեջ։

Հիմա է պարզվում, որ այդ նպատակն ուներ նա, երբ առաջնորդին խոստանում էր «ավելի լավ աշխատել»։

***

Նրա այդ խոստման մեջ մտնում էր նաև լճափնյա այդ քարքարոտ, անջրդի ու չոր հողերի մշակության նշանակների հեղաշրջումը։

Նա հիշում էր հայրենի հին գյուղը, երբ ինքը բատրակ էր, իսկ մարդիկ հողը հերկում էին իրենց պապերից մնացած կարկատած արորով։

Ո՞ւր է մնացել հին Գյոդակբուլաղը։ Սերոբ Միրզոյանը հանձինս նոր գյուղի, հանձինս համայնական տնտեսաձևի, հզոր ուժ ունի իր ձեռքի տակ՝ իր նորմուծությունները կատարելու լայն մասշտաբներով։

Սովետական մեքենան հզոր հունդյունով օգնության եկավ գյուղին։ Նրան ցնծությամբ դիմավորեցին Գյոդակբուլաղում։

Այս ամառ Բասարգեչարի դաշտերում 33 կոմբայն էր աշխատում։ Շրջանի տափարակի հողագործությունը մեքենայացված է։ Հենց այժմ Գյոդակբուլաղում ամենի կալսիչը շխկրտում է գիշեր ու ցերեկ, իր հետևից նռնահատ ցորենի առվակներ հոսեցնելով։ Նա կոմբայնների հետ մեկտեղ 2.500 ցենտներ ցորեն է կալսել,—գյուղի բերքի երեք քառորդը։ Այդ ուժերը բավական էին Գյոդակբուլաղի կոլխոզի համար, որպեսզի նա մահու կռիվ հայտարարեր դարավոր թշնամիներին—երաշտին, մոլախոտերին, մրիկին ու անբերրիությանը։

Այդ կռիվը երկար չտևեց և այժմ արդյունքը հրապարակի վրա է, ողջ ցանքը կատարվում է նախապես, ամիսներ առաջ հերկած-մշակած ցելերում, շարքացանով և զտված-ախտահանված ու բարելավված սերմերով։ Կիրառվում է Լիսենկոյի մեթոդը—յարովիզացիան։ Հողերը պարարտացվում են գոմաղբով, քիմիական պարարտանյութերով։ Մտցված է ցանքաշրջանառություն։

Արդյո՞ւնքը։

Գնանք 3-րդ բրիգադայի այն հողամասը, որ մշակել են Հայրապետ Սիմոնյանն ու Սարգիս Վարդանյանը։ Այն, ինչ մենք տեսանք ամառը,—արտ չէր, այլ ոսկեգույն ցոլքերով ծփացող մի ծով։

— Երեսուն սայլ քյուլաշ եղավ ամեն հեկտարից, կրեւով չէր վերջանում,—պատմում է մի կոլխոզնիկ։

— Իսկ գարի՞։

— Առանձնապես շատ չէր, հեկտարից 60 ցենտներ,—համեստորեն պատասխանեց նախագահը։—Ցորենի բերքն ավելի պակաս էր,— դժգոհեց նա,—չորրորդ բրիգադան իր մի հողամասի ամեն հեկտարից 35 ցենտներ գարնանացան ցորեն ստացավ։

— Բայց դա արդեն ռեկորդային է,—բացականչեց ընկերս։

— Ռեկորդայինն այն կլինի, որ պիտի ստանանք,—հեկտարից 100 ցենտներ գարի... Երեք տարի է պատրաստում եմ հողը ագրոգիտության բոլոր կանոնների համաձայն... հարյո՛ւր կստանանք, անպայմա՛ն կստանանք,—ավելացրեց նա կարծես ինքն իրեն, մտքում ինչ որ հաշիվներ անելով։

Երեք տարի առաջ նա ավարտեց Գյուղատնտեսական ինստիտուտը և եկավ քայքայված կոլխոզն ընդունելու։ Երեք տարում անդուլ աշխատանքով կոլխոզն իր դաշտերի միջին բերքը զգալի բարձրացրեց։ Այս տարի, չնայած շրջանում տիրող երաշտին, ագրոգիտության կիրառմամբ նրանք լավ բերք ստացան, պետությանը բոլոր գծերով հանձնեցին 7 հազար փութ հաց և կոլխոզնիկներին ապահովեցին հացի առատ պաշարով։

***

Անհանգիստ, պրպտող միտք ունի ագրոնոմ-նախագահ Սերոբ Միրզոյանը։ Նա համեստ ու անաղմուկ փորձեր է կատարում հողի վրա։ Այս տարի սածիլներով կարտոֆիլ է ցանել։ Տնկում է կարտոֆիլը, ծիլերը դուրս են գալիս նրա բազմաթիվ աչքերից, ապա այդ ծիլերը աչքի հետ կտրում ու տնկում է առանձին-առանձին։ Մեկ կարտոֆիլից ստացվում է 5—10—12 թուփ, ամեն թփից 4—6 կիլո կարտոֆիլ։ Այդպիսով նա կարտոֆիլի ամեն պալարից 25—30 կիլոգրամ բերք է ստացել։

Գյուղի աղբյուրները տիղմ են բերում լեռնալանջերից և կուտակում լճի ափին։ Այդ տիղմը Նեղոսի տիղմի ուժն ունի։ Գարին խտանում է, դառնում մարդահասակ ու պառկում։ Գտել է նա՝ ագրոնոմ նախագահը խոնավ, ուժեղ ու տղմոտ հողերում չպառկող գարու մի տեսակի սերմից 10 կիլոգրամ, բազմացրել, հասցրել 100 ցենտների ու մասսայական ցանք է կատարում տղմոտ հողերում։

Պատահական չէ, որ Հայաստանի Գիտությունների Ակադեմիան հատուկ ուշադրություն է դարձնում Գյուղակբուլաղում դրվող սերմի բարելավման փորձերին, այդտեղ առաջադեմ, անվանի հողագործներ կան, հացահատիկային տնտեսության նովատորներ։ Այստեղ մենք տեսնում ենք գիտության գործիչների կապը պրակտիկ հողագործների հետ, նրանց սկզբունքների, տեսությունների, դրությունների ու ենթադրությունների ստուգումը հողի վրա։ Այստեղ է փորձարկվում Բարուկ Գարասեֆերյանի «արմյանկա» աշնանացան և գարնանացան ցորենի հիանալի սորտը։ Այս սորտը աչքի է ընկնում իր բարձր բերքատվությամբ և խոստանում է Գյուղակբուլաղից արագ տարածվել Հայաստանի լեռնային շրջանները։ Այստեղ է փորձարկվում ակադեմիկոս Մ. Թումանյանի ստացած «միլտուրում» գարնան ցորենը։ Այդ ցորենից հարգելի ակադեմիկոսը ուղարկեց Գյուղակբուլաղ ընդամենը 900 գրամ... Ապա ամեն գարնան ու ամառ գնաց գյուղ՝ կոլխոզնիկներին սովորեցնելու նրա մշակությունը։ Հատիկ առ հատիկ ցանելով ու բազմացնելով Գյուղակբուլաղի կոլխոզնիկները ժանգին, մրիկին դիմացող ու վաղահաս այդ սորտի հատիկները 900 գրամից հասցրին 10 ցենտների։

Որքա՜ն արտեր են ցրտահարվում վերահաս աշնան ցրտերից... Կտարածվի ակադեմիկոս Թումանյանի ստացած այդ հիանալի ցորենը մեր բարձր լեռնային շրջաններում և կհեռացվի աշնանցրտերը վրա հասնելուց առաջ։ Իսկ գյուղակբուլաղցիք ամենայն իրավունքով կպարծենան, որ իրե՛նք են զարգացրել ու բազմացրել այս սորտը։

Նույն իրավունքով գյուղակբուլաղցիք պարծենում են իրենց մշակած «սամսոն» և «տրապիզոն» ծխախոտով։ Առաջինը նրանք ծխախոտի կուլտուրան մտցրին Սևանի ավազանը։ 1934 թ. նրանք ծխախոտի դեղին արևագույն տերևներն ուղարկեցին Երևան և հետո էլ գրեցին.

— Մենք ապացուցեցինք, որ լեռներում էլ կաճի տաք երկրի ծխախոտը։

Այժմ նրանք մշակում են 50 հեկտար ընտիր ծխախոտ։ Նրանց օրինակը վարակեց հարևան գյուղերին ու շրջաններին և մեր լեռնային վայրերը հարստացան մի նոր մշակույթով ևս։

Եվ ի՜նչ ծխախոտ։

Ահա դեռատի մի հարս՝ Մանիշակ Ղազարյանը կանգնած է իր մշակած ծխախոտի թփերի մեջ։ Թուփը նրա հասակից շատ բարձր է։ Նա հեկտարից 8 ցենտներ բերք տվեց։ Իսկ հարևան բրիգադան «Զորեր» հողամասում այնպիսի ծխախոտ մշակեց, որ «տրապիզոնի» հայրենիքում անգամ չեն տեսել։ Դա ծխախոտ չէր, այլ ջահել ու փարթամ թավուտ։ Թփերի բարձրությունը հասնում էր 2 և կես մետրի, իսկ տերևներից մեկով, որ 65 սմ. երկարություն և 38 սմ. լայնք ունի, կարելի էր քնած երեխա ծածկել վերմակի տեղ։ Այն հողամասը, որ մշակել էր Լևոն Մարգարյանի բրիգադան, հեկտարից 15 ցենտներ խնկագույն ծխախոտ տվեց։

Նույն փորձերը, պրպտումներն ու նորմուծությունները մենք տեսանք նաև մեղվաբուծության, անասնաբուծության մեջ։ Չկա, այլևս վերացել, անցյալի գիրկն է անցել Բասարգեչարի վտիտ ու գաճաճ կովերի նախիրը։ Այստեղ «շվից» ցեղն է տիրապետում, ցուլերն ամեհի են ու առյուծաբաշ. նրանք տարեց տարի բարելավում, ազնվացնում են համայնական նախիրները։

Բայց Սերոբ Միրզոյանի միտքը չի մնում շվիցի սահմաններում։ Նա գիտի, որ տեղական ցեղերը խորը արմատներ են գցել, նրանք հիմնովին հարմարվել են կլիմային, պայմաններին։ Եվ նա մետիսացմանը զուգընթաց ընտրություն է կատարում տեղական տեսակներից։

— Դարվինը լավից լա՛վն ընտրելով՝ ապշեցուցիչ արդյունքների հասավ,—բացատրեց նա ինձ իր միտքը։

— Բայց դա երկար ժամանակ է պահանջում, անասունի շատ սերունդներ։

— Ոչինչ, ես արդեն ունեմ առաջին արդյունքը,— խորհրդավոր ժպտաց նա,—հոտից տասը մաքի եմ ընտրել, ու խնամում եմ առանձին։ Նրանցից ամեն մեկից ես 140 լիտր կաթ եմ ստացել։ Նկատի ունեցեք, որ այս տարվա մեր ոչխարի միջին կաթնատվությունը 67 լիտր է, մի քանակ, որ քիչ չի համարվում, քանի որ անցյալում ավելի պակաս է եղել—1943 թ. 30 լիտր... Դե համեմատեցեք և կհամոզվեք, որ Դարվինի ուղիով էլ մեծ արդյունքի կարելի է հասնել—ընտրության միջոցով...

Ապա քիչ լռելուց հետո ավելացրեց.

— Մի տեսնեիք ի՛նչ գառներ են ծնել այդ մաքիները...

Դրանցից էլ ընտրել-առանձնացրել եմ, նրանց սերնդի մեջ էլ ընտրություն կկատարեմ։ Եվ այդպես անվերջ։ Եթե Դարվինի չափ ապրեցի՝ վիթխարի «մաղեխներ» ու «քալլասներ» կստանամ, որոնց մոտ այսօրվա ոչխարները թոխլիների չափ կերևան... կիսակատակ ավելացրեց նա։

Այդպիսի լավատես, պայծառ երազներով է լիքը այդ անհանգիստ նովատորի գլուխը։

Հոկտեմբեր, 1946 թ.

ՄԱՆՐ ԱԿՆԱՐԿՆԵՐ

1. ՋԵՐՄ ԱԿՈՒՆՔ

Արարատյան դաշտից թեքվելով դեպի ձախ, մենք մտանք պատմական Վայոց ձորը և Արևելյան Արփաչայ գետի ափով, նրա հոսանքն ի վեր այնքան գնացինք, որ հասանք այդ գետին սկիզբ տվող վտակներին։

Անդունդների վրա կախված ապառաժե ճանապարհը մեզ հանեց լեռնային ծաղկափթիթ մի մարգագետին, ուր ինչքան աչքդ կտրի՝ ծով կանաչ է, ծաղիկ, անտառ և մարդու հայացքը շոյող լեռնային բնության հարուստ ու թարմ գույներ։ Ահա այդտեղ բա՜րձր-բարձր ժայռերի վրա թառած է Ջերմուկ կուրորտի ճերմակ լուսավոր շենքը։ Այստեղից չքնաղ մի տեսարան է բացվում մեր առաջ. ներքև, ժայռերի տակ փրփրադեզ գետն է ծեծում իր բազալտե ափերը, դիմացի կուսական անտառներում բուժվողների աչքի առաջ արջերը միրգ են փնտրում վայրի տանձենիների տակ, ու սարահարթերում, փարթամ կանաչի ու ծաղկի մեջ փռված արածում են Մուղանի շոգից ազատագրված հոտերը։

Այդ լեռնաշխարհը մեզ դիմավորեց իր զով, մայիսյան շնչով, թեև ներքև՝ հովտում հուլիսը արդեն վերջանում էր։

***

Երկրի ընդերքի հարուստ հանքերից շատրվանում են բուժիչ տաք ջրերը։ Այդ ջրերի, այդ սքանչելի վայրի մասին Ալիշանն իր «Սիսական» աշխատության մեջ իրավամբ ասում է, որ «պետք է այս լեռնապատ բարձրավանդակն անվանել ջրերի գբոսարան, այն բազմաթիվ կարկաչահոս ու ակնակյա վտակների պատճառով, որոնք նեղ ծործորներով հոսելով թափվում են Արփա գետը»։ Այդ ջրերն իրենց բաղադրությամբ, իրենց բուժիչ հատկություններով նմանվում են Կարլսբադի (Չեխոսլովակիա) աշխարհահռչակ ջրերին։ Այդ ջերմ ակունքներում հաջողությամբ բուժվում են կանացի հիվանդությունները, ոսկրացավ, լյարդի, լեղապարկի, ստամոքսաղիքային տրակտի հիվանդությունները։

Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ դեռևս 13-րդ դարում

Հայաստանի զանազան գավառներից այդ ջրերը բուժվելու էին գալիս իր ժամանակի հիվանդները: Այդ «ծաղկազարդ բարձունքների և ծիծաղագնաց առվակների մեջ» (Ալիշան) էին անցկացնում իրենց ամառանոցային կյանքը Վայոց ձորի կուսակալները: Նրանք ավազաններ էին կառուցել և բարձրացրել «քար ու կրով շենքեր»: Իսկ ռամիկ ժողովուրդը «վաննաներ» էր ընդունում ցեխաջրի մեջ ու ապրում տաք աղբյուրների մոտ անօթևան:

Ջերմուկների հրաշագործ ջրերը աշխատավոր մարդու կորցրած առողջությունը վերականգնելու սկսեցին ծառայել միայն սովետական կարգերի շնորհիվ: Սովետական իշխանությունը լեռնային դժվար ճանապարհներով շինանյութ ու տեխնիկա հասցրեց այդ հեռավոր լեռները, կառուցեց վաննաների, սանատորիայի շենքեր, բժշկական կադրեր ամրացրեց այդտեղ, ուր բացի սանատորիական հիվանդներից, ռեսպուբլիկայի բոլոր ծայրերից ու հարևան Ադրբեջանից աշխատավորները գալիս, բուժօգնություն են ստանում և ապրում այդտեղ, տաք աղբյուրների շրջակայքի վրաններում ու տնակներում:

Հանքային տաք ջրերով անչափ հարուստ է մեր նկարագրած վայրը: Այդ ջրերը կբավականացնեն օրական 23 հազար հիվանդի բուժիչ վաննա նստեցնելու: Միայն մեկ աղբյուրը օրական կարող է տալ 800 հազար լիտր 61 աստիճանի տաք ջուր:

Մի շարք մինիստրություններ և հիմնարկներ շտապ կարգով բնակելի շենքեր, սանատորիաներ են կառուցել Ջերմուկում:

Մեծ շինարարություն է սկսված այդ հեռավոր վայրերում, որը երբ ավարտվի, Ջերմուկը կանցնի աշխարհահռչակ կուրորտների շարքը:

Հուլիս, 1947 թ.

2. ԳՈՐԾԱՐԱՆ ԱՌԱՆՑ ԲԱՆՎՈՐԻ

Ո՞վ մտքով կանցնի, որ երբեմնի հետամնաց Հայաստանում առանց բանվորի աշխատող գործարան կա: Այդ գործարանը Զանգվի ձորումն է, Երևանի մոտ:

Ահա կանգնած է նա, այդ գորշ գույնի շենքը կանաչազարդ ձորում, ուր Զանգուն զարնվելով իր բազալտե ափերին, հրաշագեղ շրջադարձ է կազմում ժայռերի տակ: Պահակն է այն միակ մարդը, որին հանձնարարված է այդ շենքի՝ 2-րդ հիդրոէլեկտրակայանի պաշտպանությունը:

Գործում է էլեկտրականություն արտադրող այդ գործարանը գիշեր-ցերեկ ու իր հզոր դինամոների ձայնը միացնում գիժ Զանգվի որոտին։ Նրա դռան վրա մի ահագին կողպեք կա։ Գալիս են մարդիկ երկու ամիսը մեկ անգամ, բաց են անում այդ կողպեքը, այն էլ յուղի պաշարն ավելացնելու համար միայն։ Ապա նորից կողպում են ու գնում։ Իսկ գործարանը շարունակում է աշխատել ինքնիրեն և իր արտադրած էներգիայով տասնյակ այլ գործարաններ աշխատեցնել։

— Բայց ո՞վ է ղեկավարում գործարանի աշխատանքը,— հարցրինք մեկ օր գործարանին հսկող պահակին։

— Տեխնիկը,—պատասխանեց նա։

— Բայց ո՞ւր է նա։

— Հրե՛ն, էն մյուս հիդրոկայանում է, երեք կիլոմետր հեռու։ Էնտեղ նա նստած իր սենյակում, ապարատներին է նայում, ու էդ ապարատներից երևում է, ոնց որ հայելու մեջ, թե ո՛նց է աշխատում այս հիդրոկայանը։

— Ներեցեք,—զարմացած հարցնում ենք մենք,—իսկ եթե հիդրոկայանում հանկարծ որևէ բան վնասվի՞,—ավարիա տեղի ունենա՞... Առանց մարդու օգնության մեքենաները կփչրվեն, պայթյուն կառաջանա, էլեկտրականությունը, ջուրը...

— Դրա մասին էլ մտածել է սովետական գիտությունը,—մեր խոսքը կտրում է պահակը,—հենց որ ավարիա եղավ—կայանն ավտոմատիկ կերպով իմաց է տալիս մյուս կայանին։ Հետո, շչակներն այնպես են աղմկում, այնպես են ճչում, հարայ կանչում, օգնություն խնդրում, որ ողջ քաղաքն իմանում է, որ մի բան է պատահել։ Ու էլ կայանը չի սպասում, որ օգնության գան, իսկույն ավտոմատիկ կերպով շլյուզներն իջնում են, ջուրը փոխում է իր ընթացքը, և կայանը անմիջապես կանգ է առնում։ Հապա՛, կատա՞կ եք կարծում, սրա նմանը ամբողջ աշխարքում մի քանի հատ է,—հպարտությամբ վերջացրեց պահակը։

3. Ո՞Վ Է ԳՈՂԱՆՈՒՄ ԿՈԼԽՈԶԻ ՋՈՒՐԸ

Իմ ծննդավայր Շամախյան գյուղի վերև, մի կանաչ գոգավորության վրա կառուցվեցին «Հարված» կոլխոզի կաթնապրանքային ֆերմայի նոր տիպի ընդարձակ ու լուսավոր գոմերը։ Եվ որպեսզի ձմռան ցրտին անասունները չտանեն Պապանի առուն

ջրի,—կոլխոզնիկները այդ առվի ակունքի աղբյուրների ջուրը գետնի տակով բերին մինչև ֆերմա։ Այժմ բացի ֆերմայից, այդ ջրից օգտվում է նաև գյուղի վերին Թաղը։ Ջուխտակ աղբյուրներից բերված այդ ջուրը զուլալ է, սառնորակ ու առատ։

Բայց ահա ստորերկրյա խողովակներով եկող այդ ջուրն սկսեց նվազել։ Ֆերմայի աշխատողները գնացին Ջուխտակ-Աղբյուրները և այնտեղ չափեցին խողովակների մեջ մտնող ջուրը։ Գարուն էր, աղբյուրները հորդ էին և կավե խողովակները լրիվ լիքն էին հոսող ջրով։ Բայց այդ ջրի հազիվ կեսն էր հասնում ֆերմա։ Ուրեմն ջրի կես մասը կորչում է ճամփին։

Այն ժամանակ կոլխոզնիկները հողը քանդեցին, խողովակները բաց արին և ստուգեցին։ Խողովակների մեծ մասը երկաթից էին, ամուր հագցված իրար մեջ, և նրանց ճաքվելու կամ ջարդվելու մասին խոսք լինել չէր կարող։ Բայց ակունքից սկսած մոտ 100 մետր տարածությամբ շարված էին իրար մեջ հագցված կավե խողովակներ։ Սակայն դրանք էլ չէին ճաքված և ոչ մի տեղից ոչ մի կաթիլ ջուր չէին մաղում։ Մինչդեռ հաշիվները ցույց էին տալիս, որ ճանապարհին ամեն քսանչորս ժամվա ընթացքում կորչում է շուրջ 5 հազար լիտր ջուր... Ո՞ւր է գնում այդքան ջուրը, երբ խողովակները անվթար են...

Ժամանակ անցավ և ֆերմայի ջուրը նվազելով՝ գրեթե կտրվեց։ Զարմանքը պատել էր կոլխոզնիկներին, իսկ սնահավատ ծերուկներից մեկը նույնիսկ կարծիք հայտնեց թե՝ «Գետնի տակ ուշաբ կա, որ բերանը դեմ է արել ջրին, խմում է հա՛ խմում»։ Իհարկե ծերունու վրա ծիծաղեցին, բայց ոչ ոք չկարողացավ լուծել այդ հանելուկը—ջրի խորհրդավոր անհետացման գաղտնիքը։

Վերջերս կոլխոզնիկները ետ տվին հողը և ստուգեցին կավե խողովակները։ Այստեղ մի երևույթ գրավեց մեր ուշադրությունը։ Մոտիկ ու հեռու տեղերից ջրի տոչոր ծառերն իրենց արմատները գետնի տակով մեկնել էին դեպի խողովակները։ Այդ արմատները, ծարավ ծառերի ջուր փնտրող այդ «հետախույզները», եկել էին ջուր տանելու, բայց դեմ առնելով խողովակներին՝ փաթաթվել էին նրանց՝ ամեն գույնի ու ամեն հաստության օձերի նման։

Իրենց բուսական «բնազդով» նրանք զգում էին, որ խողովակների ներսում ջուր կա և «լսում» էին նրա ախորժալուր կարկաչը,

խողովակներին փաթաթված «ականջ» էին դնում նրա ձայնին, զգում նրա գուրեկան ու զով մերձավորությունը: Բայց ջուրը փակված էր թրծած կավե պատերի ներսում: Եվ ծառերն իրենց այդ արմատների միջոցով զգում էին ջրի ներկայությունը, բռնվում այն կլանելու անզուսպ տենչով ու նորանոր «հետախույզ» արմատներ գետնի տակով մեկնում դեպի ջուրը, կարծես նրանց պատվիրելով.

— Շո՛ւտ, գնացեք պարզեցեք... Ինչո՞ւ ուշացան, ինչո՞ւ ջուր չեն ուղարկում... Չէ՞ որ նրանք արդեն ջրի ափին են... Ես զգում եմ այդ իմ նյարդերով...

Երբ մենք «վիրահատության ենթարկեցինք» այդ խողովակների շրջակայքը, գետնի տակ այդ վայրերում եղած բոլոր տեսակի ծառերի արմատներից մի խիտ ցանցի պատահեցինք: Այդտեղ էին լորենու, թխկենու, լայնտերևի, բոխի, հաճարի ծառերի արմատներ: Այդտեղ էին հասել նույնիսկ դիմացի լանջին, քարերի մեջ աճած, ուռի և ջրի կարոտ ծուռ ու մուռ կաղնու թուխ արմատները: Այդտեղ էին ճանապարհի երկարությամբ խճճված մասրենու, սզնենու, զկեռի, մոռի թփերի արմատները և անթիվ անհամար խոշոր մոլախոտերի արմատներ: Ու այդ բոլորն իրար խառնված, իրար հյուսված, իրար նեղելով, հրմշտելով ու իրարից առաջ ընկնելով եկել խռնվել էին փրկարար ջրի շուրջը: Նրանք բոլորն էլ եկել էին ջուր տանելու՝ արևի ջերմությամբ գործող իրենց սաղարթ-խոհանոցների համար...

Եվ ահա ապրելու տենչը տեսեք ինչպես «հնարամիտ» է դարձրել այդ բույսերին. նրանք մազից էլ բարակ արմատներ են արձակել, որոնք իրենց ասեղի նման սուր ծայրերով ծակել—անցել են խողովակների թաց կավե պատերը ու հասել նրանց ներսում հոսող ջրին: Մենք հանեցինք խողովակներից մեկը և մարդու բազուկի հաստության ու երկարության մազարմատների փնջեր տեսանք նրա ներսում: Այդ փնջերը ագահությամբ կլանում էին ջուրը ու կավե պատի միջով մեկնված՝ բարակ «արմատ-խողովակներով» անընդհատ և ինտենսիվ կերպով ջուր ուղարկում իրենց մայր ծառերին: Եվ որպեսզի ավելի շատ ջուր վերցնեն, մայր արմատները խողովակների ներսում այնքան շատ մազարմատներ էին արձակել, որ դրանցով մի տեղ նույնիսկ խցանվել էր խողովակը և ֆերմայի ջուրը կտրել բոլորովին:

Իրենց վերցրած ջուրը լրիվ տեղափոխելու համար, խողովակների պատը ծակած մաղարմատները գերբնական ջանք են գործադրել, լայնացրել կարծր պատի միջև իրենց բացած անցքերը ու հաստացել մախաթ ասեղի թելի չափ, ուրիշ խոսքով՝ մեծացրել են իրենց «ջրատարողությունը»:

Ահա ովքե՛ր և ինչպե՛ս էին գողանում իմ հայրենի Շամախյան գյուղի կոլխոզի ջուրը:

Կոլխոզնիկները մաքրեցին խողովակները այդ «արմատավազակներից» և ջուրը հորդառատ հոսեց դեպի ֆերման:

Բայց բույսերը շատ համառ են իրենց գոյության համար մղվող կռվում: Նրանք նորից շրջապատել են խողովակներն իրենց արմատներով, նորից ջանում են ճեղքել կավե պատերը և ջուր հասցնել իրենց մայր ծառերին: Ու այդ պայքարը Շամախյան գյուղի մարդկանց և Ջուխտակ-Աղբյուրների ծառերի միջև շարունակվում է այսօր էլ,—պայքարը ջրի համար: Ու այդ պայքարում մեզ զարմացնում է բույսերի համառությունը, նրանց «հնարամտությունը», նրանց նպատակասլաց ջանքերը՝ արևի տակ ապրելու իրավունք նվաճելու համար...

Ապրիլ, 1947 թ., Դիլիջան

ԱԺԴԱՀԱ ԼՅՈՒՐԵՆ ԵՎ ԻՐ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ

1

Երբ մենք մտանք Կալինինոյի շրջանի Ստալինի անվան կոլտնտեսության ցուլանոցը, ինձ թվաց, թե աֆրիկական ամեհի առյուծների վանդակը մտանք,—առյուծի հաղթ գլխով, դիք կանգնած բարձր բաշով, կնճռոտած հաստ վզով, փղի նման խոշորամարմին մի վիթխարի գազան կնճռոտ աչքերով նայեց ինձ զայրացած և այնպես ցասումնալից գոռաց վրաս, որ օճորքից հող թափվեց: Նա շղթան թափահարեց ու սկսեց դոփել գետինը իր տոննանոց ծանրությամբ, և այդ դոփյունից հողը դողաց իմ ոտքերի տակ:

Ես ահով ետ-ետ գնացի: Ինձ ուղեկցող Անաստասիա Գրիգորևնան՝ կաթնապրանքային ֆերմայի վարիչը՝ ինքնագոհ ժպտաց (երևի այն պատճառով, որ ստացածս առաջին տպավորությունն իր ֆերմայից ցնցող էր) և ասաց.

— Շղթան քթածակերից է անց կացրած, չի կտրի... Անպիտանը, չգիտեմ ինչու, մարդ տեսնելիս գազազում է:

Անաստասիա Գրիգորևնան մոտեցավ ցուլին և մի զույգ նախատինքի ու մի զույգ էլ փաղաքշական խոսք ասաց: Ամեհի այդ կենդանին իսկույն հանդարտվեց և վրդովմունք արտահայտող նրա հայացքը հետզհետե մեղմացավ:

Լյուրեն՝ այդ ցուլին ամենից լավ Անաստասիա Գրիգորևնան է զսպում: Ես դա բացատրում եմ նրա հմտությամբ, նրա նուրբ մոտեցումով, այդ գազանի վրա ունեցած իր հոգեբանական

ազդեցությամբ։ Ֆերմայի զոոտեխնիկ Վերա Դեդիկը այդ երևույթին մի այլ բացատրություն է տալիս.

— Ախր Անաստասիա Գրիգորևնան միաժամանակ մեր ֆերմայի կովերի արհեստական սերմնավորողն է։ Նա է Լյուբեին տանում իր սիրուհիների մոտ...

Մենք ծիծաղեցինք, իսկ Անաստասիա Գրիգորևնան կարմրեց։

— Այո, ես չեմ քաշվում, որ Լյուբեին իր սիրուհիների մոտ եմ տանում, դրանով ես ողջ շրջանի անասունների ցեղն եմ հեղաշրջում։ Բայց ահա սրան, այս մեծագլխին ոչ մի կովի մոտ չեմ տանի, որքան էլ մղկտա։

Նա ցույց տվեց Լյուբեի հետև, հակառակ շարքում կապված մի թուխ-թուխ ցուլիկի։

— Ինչո՞ւ, լավ ցուլիկ է,—փորձեցի կարծիք հայտնել ես։

— Ցեղը լավ է, ճիշտ է, բայց գեղեցիկ չէ։ Նայիր մի Լյուբեի՛ն,—կարծես քանդակած լինի։ Իսկ սա, այս մեծագլուխը—մեծագլուխ ժառանգներ կունենա։ Մեծ գլխի պատճառով չեն կարող լույս աշխարհ դուրս գալ, կամ դուրս կգան իրենց մայրերին անասելի տանջանքներ պատճառելով։

Անաստասիա Գրիգորևնայի այդ առաջին իսկ խոսքերից հասկացա, որ ես գործ ունեմ անասնաբուծության մանրուքին գիտակ մի կնոջ հետ։ Այնուհետև ծանոթանալով Անաստասիա Գրիգորևնայի գործունեությանը, ես տեսա, թե ինչպես նա անասնաբուծության բնագավառում մարդկության ձեռք բերած կուլտուրան կիրառում է իր ֆերմայում։ Հասկացա, թե ինչու նրա ձեռքին է գտնվում Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի փոխանցիկ դրոշը։

2

Լյուբեն ինձ հետաքրքրում է այն չափով, ինչ չափով որ «ցուլը նախիրի կեսն է»։ Նա նախիրի ցեղը բարելավողն է, անասնաբուծության արդյունավետության հիմնական բարձրացնողներից մեկը։ Բավական է, որ յուրաքանչյուր կոլտնտեսություն ունենա մեկ Լյուբեն—մեր անասնաբուծությունը մեկ գլխով կբարձրանա։ Եվ իրոք, մոտիկից նայենք նրա բարերար ազդեցությանը և կհամոզվենք դրանում։

Նախ՝ ինչպե՞ս է ապրում Լյուբեն։

Փառավոր շենքում, տաք, մաքուր, կուշտ։ Նրա ամենաչափակերը՝ խոտն է, ճակնդեղը, վարսակը։ Իսկ բեղմնավորման շրջանում, ինչպես Անաստասիա Գրիգորևնան է ասում՝ «առաջին կարգի բաժին է ստանում»։ Այսինքն—օրական 5 ձու, 2 լիտր կաթ, բացի վարսակից։

— Մի՛ք զարմանա,—դարձավ ինձ Անաստասիա Գրիգորևնան,—պատկերացրեք, նա մենակ 30 ցուլի գործ է կատարում։

— Այդ ի՞նչպես։

— Շատ պարզ, նրա մեկ անգամվա արտադրած սերմով մենք բեղմնավորում ենք 15—20 կով։

Եվ իլուստրացիայի համար Անաստասիա Գրիգորևնան ցուցադրեց Լյուբեի «աշխատանքը» (ինչպես ինքն է անվանում)։

Լյուբեն դուրս եկավ գոմից, աշխույժ թառանչ արձակեց, օդը հոտոտեց և դուրեկան մի տենդով բռնված բարձրացավ հատուկ դազգահի վրա։

Անաստասիա Գրիգորևնան իր օգնականներով , ճերմակ խալաթները հագած, դեզինֆեկցիայի ենթարկած գործիքները ձեռքներին պատրաստ, մաքուր լվացված, կարծես վիրահատության էին պատրաստվել։ Զուգավորման ակտից հետո սերմը հավաքեց հատուկ անոթի մեջ և լաբորատորիայում միկրոսկոպով անալիզի ենթարկեց։

Շարժո՞ւն են, աշխո՞ւյժ են սպերմատոզոիդները սերմի մեջ, թե մեռածներ կան, կամ նոսր են։ Բավարա՞ր է սպիտակուցը, թե պակաս է։ Այդ հարցերը արագ վճռելով, նա գտավ, որ այդ սերմից հիանալի արարածներ առաջ կգան— բազմաթիվ Լյուբեներ... Եթե գիտության այդ պահանջները չբավարարեր սերմը, Անաստասիա Գրիգորևնան խոտան կհայտարարեր այն և կկարգադրեր.

— Ավելի շատ ձու և կաթ տվեք Լյուբեին... Սպիտակուցը պակաս է...

Ապա նա իր դեղատնիկը բացեց, սպիրտով մաքրեց սրսկիչը և գիտության պահանջների համաձայն նրա նշած դոզայով սերմնավորեց կովերին։

Ո՞րն է բեղմնավորման այդ մեթոդի առավելությունը և ինչու այդ մեթոդը կիրառում են Հայաստանի առաջավոր անասնաբույծները։

Հաճախ ցուլը վարակվում է հիվանդ կովից և այդ վարակը տարածում ողջ նախիրում։ Նա նիհարում, շուտ ծերանում է տագնապով վազվզելուց և իր ուժերն աննպատակ վատնելուց։ Արհեստական սերմնավորման դեպքում ցուլը այն է, ինչ ես տեսա.— գեր, հանգիստ, փայլուն մազերով, միշտ ջահել։ Կոլխոզը և իր անդամները հազարից ավելի կով ունեն։ Բոլորն էլ արհեստական կերպով են սերմնավորվում։ Եթե ազատ բեղմնավորում կիրառվեր, ինչպես անցյալում է եղել, 50 ցուլ կպահանջվեր այդ գյուղի համար։ Այժմ 3 ցուլ լի ու լի բավարարում են ողջ գյուղի նախրի կարիքը։

3

Լյուրեի ժառանգները իրենց հոր նման ազնվացեղ են, նրա նման հսկայատիպ։

Մենք տեսության գնացինք նրանց։ Ճերմակ, առողջ ատամներով, պայծառ վարդագույն այտերով, երկնագույն վճիտ աչքերով մի ծերունի գոմի շեմքում մեզ կանգնեցրեց.

— Ոտներդ ախտահանման ենթարկեցեք,—կարգադրեց նա։

Ինձ ուղեկցող կանայք ոտները թաթախեցին անկյունում դըրված արկղի կրի մեջ։ Մեքենայորեն նույնը արի ես՝ մտածելով, որ մեր բնակարանի շեմքին անգամ մենք հյուրին չենք կանգնեցնի և ոտքերի վիճակի մասին հիշեցնի նրան։

Ծերուկը՝ հորթապահ Մատվեյ Ցյոդորովիչը մեզ ներս հրավիրեց։ Ահա և Լյուրեի ժառանգները։ Անցյալներում, մեր հին գյուղում ես անասնապահ եմ եղել, շատ անասուններ եմ աճեցրել, և ինձ համար դժվար էր հավատալ, որ դրանք հորթեր են— այնքան խոշոր էին և առողջ աճած։ Հաջորդ բաժանմունքում մենք գրեթե մի ամբողջ լաբորատորիայի սարք ու կարգ տեսանք։ Մի անկյունում դրված է փոքրիկ, շարժական դեղատունը։ Հորթերից մեկը իրեն վա՞տ զգաց, աչքը ցավե՞ց, քո՞ս ընկավ,—Մատվեյ Ցյոդորովիչը իսկույն օգնության է հասնում իր դեղորայքով, ապա գնում անասնաբույժի հետևից։ Մի անկյունում՝ հատուկ ամանների շարքն է՝ տակից արհեստական պտուկները կախված։ Այստեղ շարվում են հորթերը և ծծում իրենց բաժին կաթը ռետինե պտուկ-

ներից։ Յուրաքանչյուրին կաթ է տրվում իր կշռի համաձայն։ Կաթը պետք է անպատճառ 36 աստիճան ջերմություն ունենա։ Մի անկյունում սեղան է դրված. դրանով Մատվեյ Ցյոգորովիչը կաթի յուղն անջատում է և միայն սպիտակուցային մասերը տալիս արդեն մեծացած հորթերին, որոնք արդեն լավ սնվում են խոտով, քուսպով, ճակնդեղով, բայց դեռ սպիտակուցի պահանջ ունեն՝ ոսկորների աճման համար։ Իսկ մինչ այդ հորթերը խմում են կեսը երեսը քաշած, կեսն անքաշ կաթ։ Դրանից էլ առաջ՝ զուտ անքաշ կաթ։ Այսպիսով հորթերը, նրանց վիճակը, նրանց առողջությունը, նրանց աճումը կախված են միայն և միայն Մատվեյ Ցյոգորովիչից և ոչ թե իրենց մայրերից, ինչպես մեր հին անասնապահության պայմաններում էր։ Կովը հիվանդացա՞վ—հորթը վարակվում է նրա հիվանդությամբ։ Կաթ չունե՞ց—հորթը հյուծվում է։ Սատկե՞ց՝ հորթի համար կործանում է։ Այդպես չէ այստեղ։ Այստեղ հորթը մորը չի տեսնում, չի ճանաչում և նրանից կախում չունի։ Բոլոր դեպքերում էլ, ինչ լինի-չլինի—նրա բաժին կաթը կա, ըստ իր կշռի և օրգանիզմի պահանջի։ Կովերն այստեղ առանց հորթի են կթվում։ Հիանալի կարգ է դա։ Հորթի պատճառով ոչ մի կով չի հալվում, չի նիհարում, նրա անկման դեպքում կովը չի ցամաքում։ Հորթը շատ է․ խանգարում կթվորին՝ մաքրություն պահպանել կթելիս։ Հորթով կթելիս 14 ամսական մոզին անգամ պետք է ծծի, որ մայրը համաձայնի կաթ տալ մեզ, մինչդեռ Մատվեյ Ցյոգորովիչը 3 ամսից հետո այլևս կաթ չի տալիս հորթերին, և դրա կարիքը չկա էլ։

Ահա մյուս հիանալի նորությունը, որ կիրառվում է այդ առաջավոր ֆերմայում։

4

Մատվեյ Ցյոգորովիչը կյուրեի զավակներին պահում է այդպես մինչև նրանց արբունքի հասնելը և հանձնում քուրդ Սամո Շարոևի և հայ պատանի Վանո Դարբինյանի խնամքին։ Մենք նրանց ևս այցի գնացինք։ Ահա փոքր կյուրեների մի ահագին բազմություն—բոլորն էլ իրենց հոր նման թուխ, ոլորկ մազերով, եղջյուրները դեպի աչքերը ցած իջած՝ ծովացուլի ժանիքների նման։

Ինձ ասում են, որ սրանք մեկ և կես, 2 տարեկան ցուլիկներ են։ Հավատալս չի գալիս, իմ առաջ կարծես հասուն ցուլեր են։ Ես ձեռքս դրի մի ցուլիկի վրա ու հարցրի պատանի Վանոյին.

— Քանի՞ տարեկան է։

— Մեկ և կես։

— Կշի՞ռը։

— 235 կիլո։

— Սա՞։

— Երկու տարեկան չկա... կշռում է 268 կիլոգրամ։

Այդ արդեն տաս տարեկան եզի կշիռ է։

— Ցեղակա՞ն են։

— Ո՛չ, մետիսներ են։

Մատվեյ Ֆյոդորովիչը այս ցուլիկներին, անքուն գիշերներով պահած-փայփայած, աճեցրած այդ արարածներին Սամոյին հանձնելիս հուզված պատվիրել է.

— Դե, ինչ ասեմ, Սա՛մո, իմ երեխեքի պես եմ նայել դրանց... Լա՛վ պահիր։

— Բոլորին էլ իրենց մայրերին կհասցնեմ, ոչ մեկը կիսամուտ չի մնա,—ասել է Սամոն։

Եվ բոլոր երինջներն ու արջառները այդ կոլտնտեսությունում, թվով 300 գլուխ, կենդանի են մնացել։

5

Զարմանալի կուլտուրականություն, զարմանալի կարգ ու կանոն է տիրում ասածս ֆերմայում։ Ուր շրջեցի՝ մաքրություն, դեպի գործը, դեպի անասունները այնպիսի բծախնդիր մոտեցում, ինչպիսին գիտական անասնապահությունն է պահանջում։ Այդ գյուղի արոտները մասերի է բաժանված և արածեցվում է հերթականությամբ։ Ուստի անասունները միշտ թարմ, առատ կանաչի մեջ են։ Այստեղ կովերը դաստիարակված են այնպես, որ հերթով, իրենց անունը տալիս կգան, կարգով կկթվեն ու կգնան։ Առանց կթվելու ոչ մի կով չի հեռանա, ինքնակամ չի բացակայի։ Այստեղ նորածին հորթերը 10 օր հատուկ խնամքից հետո անխափան բժշկական քննության են ենթարկվում, նոր միայն հանձ-

նըվում (առողջները) հորթապահ Մատվեյ Ֆյոդորովիչին։ Մատղաշը հասունացման որոշ աստիճանի հասավ՝ ակտով, կշռով, բժշկական քննությամբ հանձնվում է հաջորդ ինստանցիային։

Եվ զարմանալի չէ, որ այդտեղ անկում գրեթե չկա, հիվանդությունները բուժվում կամ, կանխվում են արագ, և կովերը 3—4 անգամ ավելի կաթ են տալիս մեր սովորական կովերից, իսկ արուները Լյուբեի նման վիթխարի են և արդյունավետ։

***

Դաշտում հարյուրավոր անասունների մեջ, դեռ հեռվից երևում են, թե որոնք են Լյուբեի ժառանգները—ահագին մարմնով, թուխ, եղջյուրները ցած կախված։ Ինչպե՞ս հեղաշրջել է մի ցուլը ողջ գյուղի նախիրը։ Ըստ էության հեղաշրջել են այդ երկրի աննման անասնապահները։ Նրանք հասնելով գիտական անասնապահության բարձունքներին, օգնում են հարևան գյուղերին, հարևան շրջաններին, ողջ Հայաստանին, մեր անասունների ցեղը բարելավելու համար։ Միայն պատերազմի տարիներին նրանք 225 ցուլ են տվել մեր ֆերմաներին—225 Լյուբեններ... իսկ դրանից առաջ տվածը չկարողացան հաշվել։ Անգամ հեռավոր Գրոզնու շրջանի կոլխոզները Կալինինոյի ֆերմայից ցուլեր են տանում,—Լյուբեի ժառանգները մինչև Հյուսիսային Կովկաս են հասել։

Ստալինի անվան կոլխոզի ֆերման եզակի չէ Կալինինոյի շրջանում։ Այդտեղ 8—9 գյուղ կա, ուր նույն օրինակելի կարգ ու կանոնն է տիրում։ Եվ շրջանը, որ ստացել է ՍՍՌ Միության Զինված Ուժերի Մինիստրության փոխանցիկ դրոշը, աշխատում է շրջանի անխտիր բոլոր կոլտնտեսություններում նույն օրինակելի կարգ ու կանոնը մտցնել, ինչ մենք տեսանք Անաստասիա Գրիգորևնայի ղեկավարած ֆերմայում։

ՄՈՒՂԱՆԻ ԽԱՇՆԱՐԱԾՆԵՐԻ ՄՈՏ

Փոքր Կովկասյան լեռնաշղթան իր արևելյան ծայրին կտրտըվում է, լեռները կոտակվում են և անկանոն, խառը ապառաժոտ ու կիրճաշատ մի մռայլ լեռնաշխարհ ստեղծում։ Լեռների այդ կոտակումը եթե չլիներ, Արարատյան դաշտը կձգվեր մինչև Քուռ-Հովիտը, մինչև Սալյան, ուր Արաքսը խառնվում է Քուռին։ Սակայն ասածս լեռնաշխարհը կտրում է Արարատյան դաշտի առաջը, և Արաքսը հարթ ու արգավանդ դաշտից մտնում է ապառաժոտ կիրճերը և հյուսիսային Իրանի ու Փոքր Կովկասի լեռների միջև սեղմված, իր նեղ ու քարքարոտ ուղուց սրտնեղած, փրփրած բաշը թափ տալով թնդում է ձորերում։

Նրա հետ, նրա ձախ ափով այդ կիրճերն է մտնում նաև Ջուլֆա—Բաքու նոր երկաթուղին։

Ապա մի 5—6 ժամ այդպես անհրապույր կիրճեր կտրելուց հետո, Արաքսն ու գնացքը միասին դուրս են գալիս ընդարձակ ու պայծառ մի տափաստան,—նրանց հետ էլ մենք՝ ճամփորդներս։

Իր արտաքին տեսքով, իր կլիմայով ու կենդանական աշխարհով դա բոլորովին տարբեր և մեզ համար անծանոթ մի աշխարհ է—կարծես մի կտոր Միջին Ասիայի տափաստաններից, սուր հակադրությունը մեր Հայկական բարձրավանդակի խստասիրտ բնության և կնճռոտ արտաքինի։

Հունվարի կեսերին է։ Վագոնի բաց պատուհանից վաղ գարնան շունչը ներխուժում է վագոնները։ Դուրս ենք նայում։ Վայրի սագերի և դաշտահավերի խուռն երամները ցրված արածում են կանաչ արտերում։ Անծայրածիր տափաստանում ցրված են ան-

Թիվ-անհամար հոտեր։ Մենք քայլում ենք տափաստանում շոգից նեղվելով։ Այստեղ ամեն ինչ գարուն է հիշեցնում, այն պահին, երբ մեզ մոտ խորին ձմեռ է...

Ես տաս օր շրջեցի այդ տափաստանում, Արաքսի ծիծաղկոտ ափերից հասա Քռի եղեգնուտները և ամեն տեղ, ամեն տեղ վրաններ տեսա։ Ողջ տափաստանի խաշնարած բնակչությունն ապրում է վրաններում — այո՛, հոմվարին եղեգնյա վրաններում — և հոտերի հետ պարբերաբար տեղափոխվում է դեպի տափաստանի ավելի խոտառատ մասերը։

***

Դուրեկան, գարնանանման տաք ձմեռը, ձմռան թավիշ կանաչը, Քռի և Արաքսի կերառատ, հյուրընկալ ափերը դեպի իրենց են քաշել մեր ողջ երկրի թևավորներին։ Ինչքա՜ն հավք կա այս երկրում... Բայց ինձ համար նորը թուրաջն է — կաքավի չափ և նրանից սիրուն թռչուն, որից Հայաստանում չկա, և եղեգնուտներից ու մոշուտներից իր կարմրավուն շքեղ թևերը թափահարելով վեր թռչող փասիանը։

Սակայն այս երկրի բնության իսկական թագուհին ջեյրանն է։ Փորի տակը և հետևը ճերմակ, մեջքը՝ գորշ, ոտները բարակ, ճկուն ու բարակ իրանով, նուրբ կերտվածքի մի կենդանի է դա՝ նման հայկական եղնիկին և էգ այծյամին, բայց նրանցից նրբագեղ, նրանցից գողտրիկ։ Տեսնելով այդ կենդանիներին, հեռվից կասկածանքով ու երկյուղով մեզ նայելիս և հիացմունքով դիտելով նրանց նազելի քայլքը և աննման վազքն ու գրացիոզ ոստյունները՝ ինձ համար հասկանալի դարձավ թե ինչու արևելյան ժողովուրդները դեռ շատ հնուց — պոետ և աշուղ, ռամիկ և սիրահար հովիվ — իրենց սիրուհիներին նմանեցրել են այդ կենդանուն — ջեյրանին, որպես Արևելքի բնության ամենանուրբ կերտվածքին։

Ջեյրաններին հեռվից դիտելով և նրանց հոտերը հալածելով՝ ես հրացանը ձեռքիս կանգ առա մի փոքրիկ օբայի առաջ։ Եղեգյա վրանների մոտ շագանակագույն ու չալտիկ գառների մի ստվար հոտ էր արածում։

Այդ երկրում օբաներին մոտենալ անհնարին է — գայլախեղդ գամփռները, որոնց ողջ կյանքը արյունահեղ կռիվ է կոլխոզի հա-

ափի պահպանության համար, խիստ անվստահությամբ և թշնամանքով են նայում օտարականներին։

Նրանք շրջապատեցին ինձ և անշուշտ կպատառոտեին, եթե հովիվը մահակը օդում ճոճելով վրա չհասներ և չաստեր նրանց,—ի զարմանս իմ նախատինքի հայերեն խոսքերով.

— Այ կոտորվեք դուք, չեք տեսնո՞ւմ, որ եկողը վնաս է...

— Այ մարդ, հա՞յ ես,—հարցրի ես։

— Հայ եմ, բա՞... Սաղ Զանգեզուրը էստեղ է, հո մենակ ես չեմ... Հայաստանից ես եկե՞լ... գնա՛նք, գնանք, մեզ մոտ հանգստացիր...

Անծանոթ մարդը ինձ առաջնորդեց մի սովորական վրան։ Կարմիր թշերով, առողջ կազմվածքով մի կին և արևխաշ դեմքով ու չլապինդ մի թուխ տղամարդ արևելյան ձևով բարև տվին և հրավիրեցին նստել օջախի մոտ։ Օջախը վառվում էր վրանի մեջտեղը, նրա մոտ թաղիք էր փռած, որի վրա դրված էին փափուկ բարձեր՝ թիկն տալու համար։ Հոգնած որսորդի համար դրանից էլ ախորժալի բան կա՞ աշխարհում։

Պարզվեց, որ ես ընկել եմ Սիսիանի շրջանի Շաքի գյուղի կոլխոզի ոչխարաբուծական ֆերման։

Այդ ֆերմայի հովիվները իրենց կյանքն անց են կացնում վրաններում,—ամառը՝ Իսաի-Սույի լեռներում (Դարալագյազ), իսկ ձմեռը՝ Մուղանի տափաստանում։ Նրանց ողջ կյանքը անցնում է խոտառատ արոտներ փնտրելով, կռիվ տալով գայլերի դեմ, որոնք Դարալագյազի ու Զանգեզուրի լեռներից աշնանամտին, հոտերի հետևից գաղտագողի իջել են Քուռ հովիտը ու այժմ, տեղական շնագայլերի հետ միացած՝ հարձակումներ են գործում Շաքիի հոտերի վրա։

Պարզ է այդ մարդկանց կենցաղը,—ողջ ֆերմայի ունեցվածքը 8 ուղտի բեռ է, որոնք ահա հիմա ատամները թափած պառավի նման «լմլմում» են անապատի փշերն ու դրանով էլ բավականանում։ Ի միջի այլոց վաչկատուն կյանքը ստիպել է Զանգեզուրի անասնաբուծական ֆերմաներին Մուղանի բնակիչների օրինակով ուղտեր ձեռք բերել և նրանցով ճամփորդություն կատարել։ Մեզ շներից ազատող մարդը՝ Ակոբը ասաց, որ օրերս ֆերմայի ուղտերը գնալու են Շաքի՝ կթվորներ և կաթնամթերքի ամաններ բերելու։

— Դեռ ձմեռ է, ի՞նչ կթելու ժամանակ է,—հարցրի ես։

— Մեզ մոտ գարունը հունվարին է սկսվում, իսկ Հայաստանում՝ մարտին,—պատասխանեց Ակոբը։—Տեսա՞ր մեր գառներին... Սիսիանում հիմի գառներն իրենց մոր փորում մի մկան չափ են, իսկ մերոնք հրե՜ն արածում ու տրտնգի են տալիս դուզերում։ Իսկ վաղը-մյուս օրը մի թիզ կանաչ կլինի ու կաթը գետի պես կգնա—դու տղա ես կթվոր ու աման հասցրու։

Հյուրասեր տանտիրուհին իսկույն խմոր արավ և բարակ լավաշներ թխեց սաջի վրա։ Անգամ հաց թխելը հարմարեցված է թափառաշրջիկ կյանքին—խմորը հունցում են սառը ջրով, առանց թթխմորի և իսկույն թխում օջախի վրա։ Այստեղ ամեն ինչ պարզեցված է ծայր աստիճան. մի՞ս կա—իսկույն խորովում են, չկա՞—ուտում են կաթի անհամար վարիանտները—մածուն, դալ, խեժ, «բուլամա», պանիր, շոռ, յուղ...

Ֆերմայի վարիչի անունը նույնպես Ակոբ է։ Այդ պահին նա ֆերմայի մի այլ օբայում էր,—ֆերման 3—4 օբայի է բաժանված, որոնք իրարից հեռու են 5—6 կիլոմետրով։ Մի տեղ սուբաճճերն են պահում, մի տեղ ծնող ոչխարների ֆերման է, մի այլ տեղ՝ այլ անասուններ։ Ֆերմայի վարիչ Ակոբի մասին շատ դրական արտահայտվեց մեզ հյուրասիրող ադրբեջանական կինը.

— Քանի՜ հազար ոչխար ծնեցրի՜նք... իսկի մի գառան քիթ արնե՞ց... էսքան անասուն ենք պահում, իսկի մեկը փչացե՞լ է... Յաղուբը՝ մարդը լավ աշխատող է ու լավ էլ աշխատեցնող։

Այդ ֆերմայում ադրբեջանականներն ու հայերը խառն են, իրար մերված։ Ֆերմայում երկու Հակոբ կա, երկուսին էլ ադրբեջանականները Յաղուբ են կոչում։ Ու սիրով են խոսում իրար մասին, հոգատար։

***

Տեղական բնակչությունը շատ լավ է ընդունում մեր խաշնարածներին և նրանց լավ արոտներ է տրամադրում։ Շաքիի հարևան Դունյամալլար գյուղի օբայում ես այդ մասին խոսեցի ադրբեջանական քոչվորների հետ։

— Մենք պարտական ենք ձեզ,—ասացի նրանց։

— Մենք էլ ձե՛զ—պատասխանեց մի ժիր ծերունի,—էս դուզը, որ հիմի ջեննաթի նման է, ամառը իսկական Մուհամմեդի

ասած ջհանդամն է,—ամբողջ գուղը աչավի պես վառվում է։ Խոտ չկա, ջուր չկա, մոծակները քրքրում են, գողից տալաղը ուռչում է—ռանգդ հողի ռանգ դառնում։ Մայիսի վերջին արար-աշխարհ չորանում է, պապակվում, մի կերպ դուրս ենք գալիս էս դժոխքից ու ձեր սիրուն սարերում հովանում, կյանք առնում։ Հիմի ո՞վ ում է շատ պարտական…

Ծերունին անկեղծ էր ասում, բայց ես էլ պակաս անկեղծ չէի,—իրոք այդ՝ փոխադարձ հյուրընկալությունը—նրանց՝ մեր լեռներում, մեզ նրանց տափաստանում—եղբայրական համագործակցության, ժողովուրդների փոխադարձ օգնության հիանալի օրինակ է։

***

Հաճելի է տեսնել, թե ինչպես կենտրոններից կտրված հովվները ապրում են մեր երկրի քաղաքական կյանքով։ Ամբողջ գիշերը վառվող օջախի շուրջը նրանք հարցեր էին տալիս ինձ ու խելոք, հասուն դատողություններ անում «հայկական հարցի», «միջազգային կոնֆերանսի», և մանավանդ Գերագույն Սովետի ընտրությունների մասին։

— Ո՞վ է ձեր առաջադրած թեկնածուն,—հարցրի ես։

— Գիտնական է, զանգեզուրցի նշանավոր գիտնական,— հպարտությամբ ասաց մի ջահել հովիվ։

— Կարծեմ ազգանունը ճամփա է նշանակում,—ջանաց մտաբերել ադրբեջանական տան տերը,—յոլ… յոլ… Յոլյան (յոլ— ադրբեջաներեն ճանապարհ է նշանակում)։

— Այո՛, նշանավոր պրոֆեսոր է ձեր առաջադրած թեկնածուն,—հաստատեցի ես,—այնքա՜ն մարդու կյանք է փրկել…

***

Երբ ես գրում եմ այս տողերը, այնտեղ հարավի արևը կենդանություն է տալիս տափաստանին, գառները խայտում են կանաչ թավիշի վրա, թռչունները կչկչում են Արաքսի շամբուտներում և ջեյրանները արևկող արած դիտում են համրաքայլ անցնող ուղտերին։

Իսկ զանգեզուրցի խաշնարածնե՞րը։ Նրանք սպասում են Սյունյաց աշխարհի գարնանը, սպասում մայիսին—կրկնապատկված հոտերով սար բարձրանալու համար։

Փետրվար, 1946 թ.

ՆՈՐԻՑ ՄՈՒՂԱՆԻ ԴԱՇՏՈՒՄ

(Տպավորություններ)

Որքան ձմեռը այս տարի ցրտաշունչ էր մեզ մոտ՝ Երևանում, նույնքան մեղմ էր Մուղանի դաշտում։ Ճիշտն ասած, եղանակն այնտեղ ավելի գարուն էր հիշեցնում, քան ձմեռ։ Երբ մենք հունվարի 28-ի գիշերը Մուղանի դաշտով գնում էինք գտնելու Սիսիանի շրջանի Շաքի գյուղի ոչխարաբուծական ֆերման, գարնան բույրն էինք առնում դաշտերից և քայլում էինք արդեն մի թիզ բարձրացած կանաչի միջով։ Դաշտում գիշերվա կեսին արածող անասունների պատահեցինք.—գոմեշներ էին, որ մեզ տեսնելով խրտնեցին։ Նրանք, ամենից շատ մրսող այդ կենդանիները, ողջ ձմեռը գիշեր-ցերեկ արածել են բացօթյա։

Երևացին վրանների ուրվագծերը և գամփռների մի ահագին ոհմակ հարձակվեց մեզ վրա. հասել էինք Շաքիի ֆերման։ Որքան հյուրընկալ են ղանգեզուրցի խաշնարածները, նույնքան կասկածոտ և անհյուրընկալ են նրանց գամփռները։ Հիսուն շուն ունի այս ֆերման, հիսուն արթուն պահապան համայնական հոտերի։ Եվ որովհետև ամեն թփի տակից գայլերն են նայում Շաքիի շաղ ոչխարների թմբլիկ դմակներին, ուստի նրանց շների կասկածոտ բնավորությունը մեզ միայն դուր եկավ։

Հովիվները դուրս թափվեցին վրաններից, մահակներով քշեցին շներին, մեզ առաջնորդեցին ֆերմայի ամենագրագետ, ամենակուլտուրական մարդու՝ Վարդան Ստեփանյանի վրանը։

***

Ցայլեց Մուղանի առավոտը և մեզ թվաց, թե մայիսի վերջին մի ընդարձակ սարահարթում ենք գտնվում։ Մեր առաջ փռված էր թարմ կանաչով ծածկված անծայրածիր տափաստանը, որը հարավից եզերվում էր Իրանական Ադրբեջանի լեռներով, իսկ հյուսիսում կապույտ մշուշի մեջ ճերմակին էին տալիս Լեռնային Ղարաբաղի բարձունքները։ Ողջ դաշտը ծածկված էր ոչխարների հոտերով։ Լեռներից այդտեղ էին իջել Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի հանրային հոտերը։ Այդ հոտերը կարծես տարին բոլոր գարնան մեջ են. գարունը վերջանալուն պես նրանք Փոքր ու Մեծ Կովկասի բարձունքներն են ելնում, ուր նորից գարուն է մինչև աշնանամուտ։ Նոյեմբերին անձրևներից ջրվում է Մուղանի չոր ու խանձված տափաստանը. և երբ հանրային հոտերը իջնում են այդ դաշտը, նորից գարնան մեջ են, որովհետև դեկտեմբերից այդտեղ սկսվում է գարունը և ոչխարների մասսայական ծինը։ Այնպես որ կոլխոզային կարգերի շնորհիվ հնարավոր դարձավ մեր հոտերին տարին բոլոր արածացնել թարմ կանաչ, շարունակ պահել գարնանային մթնոլորտի մեջ։ Շնորհիվ այն բանի, որ կոլխոզները կազմակերպված ձևով իրենց հոտերը Արաքսի և Քուռ ստորին հոսանքի մոտ ձմեռային արոտի են տանում, և շնորհիվ այն հիանալի համագործակցության, որ կա հայ, վրացի, ադրբեջանցի անասնապահների միջև, որոնք փոխադարձաբար իրար արոտներ են տրամադրում ձմեռն՝ Ադրբեջանում, ամառը՝ Հայաստանում և Վրաստանում,—շնորհիվ ահա այդ նոր պայմանների, խիստ շահում է մեր անասնաբուծությունը։ Եվ իրոք, որքա՞ն կեր հարկավոր կլիներ և որքան կորուստ կունենայինք, եթե մեր հոտերը լեռնային Հայաստանից ձմեռը չգնային Մուղան և 5 ամիս շարունակ կեր ուտեին փարախներում։ Իսկ այստեղ՝ Մուղանում ողջ ձմեռվա ընթացքում միայն մի քանի օր անհրաժեշտ կլինի կեր տալ անասուններին։ Դրանից էլ մեր անասուններն այդտեղ գեր էին, առույգ,—կարծես հունիսին՝ մեր սարերում։ Այն ժամանակ, երբ Բասարգեչարում մենք երկու ամիս հետո գառ կսեսնենք, այդտեղ արդեն երկու ամսական գառներն իրենց թմբլիկ դմակները շարժելով խաղում ու արածում էին նոր կանաչի մեջ։ Ցվածս նոր պայմանների շնորհիվ այստեղ Շաքիի ֆերմայի ոչխարների թիվը

տարեկան ավելանում է շուրջ 1.500 գլխով։ Եվ հենց այդ պայմանների շնորհիվ է, որ Փոքր Շաքին այժմ 8.500 ոչխար ու գառ ունի և կատարել է նույնիսկ 1948 թվի մսամթերման պլանը։ Է՛լ ավելի շատ անասուններ ունեն բուն Մուղանի կոլխոզները։ Մենք եղանք հարևան Դունյա-Մալլար գյուղի ֆերմայում և այնտեղ բրիգադիր Աբաս Ջաֆարովը մեզ պատմեց, որ 160 անտեսություն ունեցող իրենց կոլխոզը 11.000 գլուխ ոչխար ունի, և որ իրենք այս տարի աշխօրին մեկ կիլո անքաշ պանիր են ստացել, և տոննայով պանիր ստանալը սովորական երևույթ է այդ գյուղի կոլխոզնիկի համար։

— Եվ դա նաև մեր հայ եղբայրների շնորհիվ,—ավելացրեց նա երախտագիտության զգացումով,—եթե Հայաստանի կանաչ սարերում մեզ հյուր չընդունեք, ամառը մեր բոլոր անասունները կկոտորվեն...

***

Շաքիի կոլխոզի հովիվներն իրենց կյանքն անց են կացնում հոտերի հետ, ուստի դարձել են փորձված մասնագետներ՝ ոչխարաբուծության գծով։ Պատկերացրեք, ինչպիսի փորձառու աչք պիտի ունենա մարդ, որ իր հոտի բոլոր 400 ոչխարների գառներին էլ մեկ-մեկ ճանաչի, իմանա ո՛ր գառը ո՛ր ոչխարինն է։ Իսկ գառները սագերի պես նման են իրար։ Այդպես են և ոչխարները։ Այդպիսի փորձված աչք ունի Շաքիի ֆերմայի հովիվ Շիրվան Ջաֆարովը,—սև բեղերով և մոթալ փափախով մի մարդ։ Նա 18 տարվա հովիվ է և վարպետ ծնեցնող։ Երբ մենք այնտեղ էինք, նա 270 ոչխար էր ծնեցրել։ Իսկ ծնեցնելը և գառը մինչև ամրանալը պահելը ամենանրբին «մոմենտն» է հովվի ողջ տարվա գործունեության մեջ։ Եվ Շիրվանի հմտությունն այդ գործում այն արդյունքն ունի, որ իր ստացած մոտ 300 գառներից միայն երկուսից է զրկվել։ Ողջ ֆերմայում այդ օրերին ստացվել էր շուրջ 2.000 գառ, որից միայն մեկ և կես տոկոսն էր փչացել։

Զանգեզուրցի անասնապահները վերջին տարիներս ձմեռները ընկնելով նոր միջավայր, աշխատում են յուրացնել տեղական բնիկ անասնապահների փորձը և այն կիրառել իրենց ֆերմաներում։ Այսպես, նրանք Մուղանի խաշնարածներից են վերցրել ոչ-

խարներին ձմեռը, ժամկետից 3—4 ամիս առաջ ծնեցնելու սովորությունը։ Դա այն առավելությունն ունի, որ գառները Հայաստանում ծնված գառների համեմատությամբ աշնանը մեկ և կես անգամ խոշոր են լինում և ոչխարը կաթ է տալիս նաև ձմռան ամիսներին։ Դոնյա-Մալլարի կոլխոզում հունվարի վերջին հոտն այնպես էր կթվում, ինչպես մեզ մոտ ապրիլին։ Տաքիի ֆերմայում տեղացիներից մեկ ամսով ուշ են ծնեցնում և ուշ էլ սկսվում է կիթը։ Բայց և այնպես մենք այստեղ դեռ հունվարին հյուրասիրվեցինք ոչխարի առատ կաթով, մածնով և նոր պանրով։ Նրանք ուղտերը Սխիան էին ուղարկել, որ կթվորներ ու ամաններ բերեն,—սկսվում էր մասսայական կիթը։

— Այնպես որ, եթե գաք մեզ մոտ փետրվարի 10-ին, ձեզ կաթի վաննա կնստեցնենք,—կատակեց հովիվներից մեկը, և զարմացավ, երբ ասացինք, թե փետրվարի 10-ին մեզ մոտ՝ Հայաստանում դեռ խորին ձմեռ կլինի։ Զարմացավ, որովհետև 17 տարի է նա ձմեռ չի տեսել...

— Ոնց թե ձմեռ,—հարցրեց նա,—էստեղ դեկտեմբերից սկըսած վար են անում... Հրե՞ն Սարին Սու գետի շամբուտներում մոծակներ էլ կան...

Տեղացիներից վերցրած մյուս նորությունն այն է, որ գառները ծնվելուն պես իջեցվում են առանձին, ստորերկրյա, թոնրանման «փարախիկները»։ Ֆերմայի աշխատողներից Գալուստը մեզ առաջնորդեց դեպի այդ գառնարանները, որին տեղացի խաշնարածները «գյոմա բախան» անունն են տվել, որ կնշանակե՝ երկինք նայող։ Իրոք այդ ոչ խոր, ջրհորի տեսքով «փարախից» գառները միայն երկնքի մի կտորն էին տեսնում։ Նրանց այդտեղ իջեցրել էին հորի նեղ բերանից և այդ բերանով էլ պետք է հանեն՝ մեկ շաբաթ այդտեղ հատուկ խնամք ստանալուց հետո։ Այդտեղ նրանք ազատ են տափաստանում փչող ցուրտ հողմերից։

Այդ կացարանները բավական չէին լինի գառներին այնպես աշխույժ ու գեր տեսք տալու, եթե չլինեին այդ ֆերմայի անձնվեր հովվուհիները։ Մենք ծանոթացանք նրանցից չորսի հետ միայն։ Մեկը մեզ հյուրընկալող Վարդան Ստեփանյանի կինն էր—Սրփիկը, որը խնամում է իր 7 ամսական փրանաբնակ որդուն—Սամվելին, ամուսնուն, 6 հովիվների և նորածին գառներին։ Խայտաբղետ շըն-

շավորների այդ բազմությունն Արփիկի ձեռքին է նայում, նրանից սպասում իր սնունդն ու հարմարանքը։

Մյուս հովվուհին բրիգադիր Համիդ Հյուսեյնովի կինն է— Շհարը, որը սրանից երկու ամիս առաջ մի սիրուն, առողջ երեխա բերեց վրանում և հոգատարությամբ խնամում է նրան։

Այստեղ տեսանք մենք և մի ջեռատի հովվուհու—Վարդանուշ Գրիգորյանին, որը հովիվներից մեկի շունն էր կարկատում, տեսանք և կարմրաթուշ, քաջառողջ մի այլ կնոջ՝ Խզըռվ Սարանչանին, որ կերակուր էր եփում հանդ գնացող հովիվների համար ու պատրաստվում էր նրանց շորերը լվանալ։

Ներկա բնության դաժան տարերքին, վրանաբնակ այդ կանայք իրոք հերոսական գործ են կատարում մեր երկրի հանրային անասնապահության համար։

— Երեխա բերելուց մի քանի օր անց նորից աշխատանքի անցավ,—պարծանքով մեզ ասաց մի հովիվ՝ Արփիկի մասին։

Կինը լսեց, կարմրեց և արդարանալու համար պատասխանեց.

— Ինչ անեի, գործը մնում էր...

Իսկ ամուսինը ժպտացեմ ու կիսակատակ դիմեց մեզ.

— Ձեր կանանց նման քնքուշ չկարծեք, կոշտ կյանքը մերոնց ամրացրել է։

Այդ պահին տիկին Արփիկը փոքրիկ Սամվելին նոր էր հանել տաշտակի ջրից և սրբում էր։ Շները դրսում մեկին վրա տվին։ Նա երեխան գրկին դուրս թռավ վրանից։

— Երեխան կմեռնի ցրտից,—ահով ասացի ես։

— Չի՛ մեռնի, վրանում է ծնվել... Թող ջանը պնդի,—ծիծաղելով պատասխանեց տանտերը։

Հետագա օրերին հարևան ֆերմայում ես տեսա, թե ինչպես գառների հետ ուրախ խաղում են հովիվների կիսամերկ, բայց առողջ ու խնդուն երեխաները։

Անսովոր երևույթ է ձյունն այդ տափաստանում, քանի որ այն պահին, երբ մեզ մոտ սկսվում է ձմեռը, այնտեղ սկսվում է գարունը։ Միայն պատահում է, որ երբեմն ձմեռը Ղարաբաղի լեռներից ներխուժում է Մուղանի դաշտը։

Եվ երբ մի օր հյուսիսից սառը քամի փչեց ու սկսվեց ձյան փաթիլը, այդ երկրի թևավոր ու անթև բնակիչների մեջ խրա-

թանցում ու խուճապ ընկավ, որովհետև խանգարվել էր կյանքի բնականոն ու նորմալ ընթացքը։

Թուրաջները կոտորվեցին, Սառուցյալ օվկիանոսի ափերից այդ տաք ու հյուրընկալ հովիտը ձմեռելու եկած անթիվ սագերի, բադերի, թզուկ արոսների ստվար երամները խուճապահար չները լցվեցին, որ պաշտպանվեն փոթորկից։ Իսկ ջեյրանները խրտնած ու սարսափահար փնտրում էին անակնկալ կերպով անհետացած կանաչն ու արևը։

Հովիվները մռայլվել էին, բայց առանձին մտահոգություն չկարդացինք նրանց դեմքերին։

— Եթե երեք օր շարունակի ձյուն տեղալ, ոչխարները կկոտորվեն,—կարծիք հայտնեցի ես։

Վարդան Ստեփանյանը քմծիծաղ տվեց։

— Անցյալ տարվանն այլևս չի կրկնվի։ Անցյալ տարի մենք վնասվեցինք, բայց փորձ ձեռք բերինք հետագա բոլոր տարիների համար։ Ամառը մարդիկ ենք ուղարկել այստեղ՝ խոտ են հնձել։ Քուսպ ունենք, գարի ունենք, հարևան կոլխոզները հարդ են տվել։ Փոթորիկը մեզ համար հե՛չ։ Ձմռան կյանքն այստեղ մի շաբաթից ավելի չի տևում, մի՛ք մտահոգվի…

Իսկ հովիվներից մեկը—Սամսոնը ավելացրեց.

— Հենց ձյունը կտրվեց—ոչխարը քշում եմ խամը։

Հաջորդ օրը մենք հոտերի հետ այդ «խամը» գնացինք։ Աշնանից մի կտոր տարածություն անարատ էին թողել։ Այստեղ բարձրացել էր գվարթ կանաչը՝ «սև օրվա» համար և դեպի իրեն էր գրավել վայրի կենդանիներին ու թռչուններին։

Ամպամած ու ձախորդ այդ օրը հոտը մեղմ փնչոցով արածում էր «խամի» ձյունախառն ու հյութալի կանաչը, շները դընչները հողմին արած աշխատում էին որսալ դավադիր գայլերի հոտը, իսկ հովիվները յափնջիների տակ լուռ արձանացած հսկում էին արածող հոտերին։

ՀՈՂԻ ՎԱՐՊԵՏՆԵՐԸ

(ԱԳՐՈԱԿՆԱՐԿ)

Այդ գյուղը, ուր մենք եղանք մի քանի օր առաջ, գտնվում է Մասիսի դիմաց և այդ լեռան անունն է կրում։ Ընտիր այգիներ և բերրի դաշտեր ունի այդ գյուղը։ Ունի և ճահիճներ, որ դրենաժների միջոցով չորացնում, վեր են ածում ընտիր վարելահողերի։ Այդ ճահիճների հաշվին է լայնանում բամբակի ցանքի տարածությունը այդ գյուղում։

Մասիսը—նախկին Թոխանշալուն—բամբակագործության բնագավառում առաջին տեղերից է գրավում Արտաշատի շրջանում և ունի հմուտ բամբակագործներ։ Անցյալ տարի այդ գյուղի կոլխոզը բամբակի հանձնման պլանը կատարեց 140 տոկոսով։

Անվանի հողագործների պատահեցինք մենք այդ գյուղում։ Շրջանակների մեջ պատից կախված դիպլոմները վկայում են, որ պարտկազմակերպիչ Սահակ Սարգսյանը անվանի բամբակագործ է և քիչ «ճերմակ ոսկի» չի տվել երկրին։ Կրծքին փայլող Աշխատանքային Դրոշի շքանշանը վկայում է, որ Սիրանուշ Գևորգյանը նույնպես հողի վարպետ է։ Մի տարի նա ռեկորդ սահմանեց, հեկտարից տալով 47 ցենտներ բամբակ։

Այստեղ է նաև դեռևս կոլխոզնիկների ռեսպուբլիկական 1-ին համագումարի ժամանակ անուն հանած և նրա բանաձևերում հիշատակված Հովհաննես Շահբազյանը։

Եվ այդ բոլորի «պապը»—Լևոն Գևորգյանը, մի ժիր ծերունի, որը չնայած 33 թոռ ունի, 6 որդի և պատկառելի տարիք, մտել է

համատարած այն մրցության մեջ, որն սկսվեց պարտիայի Կենտկոմի փետրվարյան պլենումից հետո և որը դաշտային աշխատանքների ծավալմանը զուգընթաց վարարեց ու իր հոսանքի մեջ առավ հողի բոլոր աշխատավորներին։

Ահա այդպիսի կադրերի ուժերին ու նվիրվածությանը վստահ՝ Մասիս գյուղի կոլխոզը որոշեց այս տարի հողից վերցնել մաքսիմումը, որ նա կարող է տալ և այդպիսով նվաճել ՍՍՌՄ Գերագույն Սովետի Հրամանագրով նախատեսված պարգևները։

Շրջանում Մասիս գյուղի կոլխոզի նման 16 կոլխոզներ պարտավորվել են բամբակի այդպիսի բարձր բերք տալ։ Նույն նպատակն են իրենց առաջ դրել բամբակագործական 66 բրիգադա և 166 օղակ։ Ծանոթանանք այդ օղակներից մեկին, որի դաշտը մեզ առաջնորդեց կոլխոզի նախագահ Անդրեաս Հարությունյանը։

Իրենց ալրաթաթախ տերևները կախ ու արբեցուցիչ բույր արձակող փշատենիների շարքերի միջով մենք անցանք և դուրս եկանք խաղողի այգիներով շրջապատված մի արգավանդ դաշտ։ Կոլխոզի գործունեության կիզակետն է դա։ Այստեղ է որոշվելու միջկոլխոզային մրցության «ով—ում» հարցը, այստեղից ստացված բամբակի քանակով պիտի որոշվի, թե ո՛վ ի՛նչ կարգի պարգևի պիտի արժանանա—նախագահ Անդրեասը, բրիգադիր Բարիսը, օղակավար Ծովիկը։

Այդ հողամասի մի կտորը հանձնել են Ծովիկ Հայրապետյանի օղակի խնամքին։ Սա շիկահեր, կապտախաժ աչքերով, ճերմակ, կլոր թշերով առողջակազմ մի աղջիկ է։ Իր նման ջահել են օղակի մյուս աղջիկները, ուստի գյուղում այս օղակը հայտնի է «երիտասարդական օղակ» անունով։ Չգիտես ինչ տրամաբանությամբ այդ դեռատի աղջիկների օղակն է ընկել բարձրահասակ, նիհար մի ծերունի—Դանիել Մկրտումյանը, որն անցյալ տարի Նոր Ջուղայում (Իրան) օրավարձով փայտ էր ջարդում հարուստների համար։ Օղակում նրան «Դանիել հայրիկ» են կոչում։ Նա օղակի ամենահասակավորը, բայց և ամենաանփորձ հողագործն է։

— Կյանքումս ոչ բամբակ եմ մշակած, ոչ ցանող մեքենա եմ տեսած, ոչ էլ գաղափար ունեմ այս պարարտացնող նյութերեն,— մանկական անմեղությամբ խոստովանեց նա։ Նա շարունակ անսովոր բաներ է տեսնում, ուստի և շարունակ զարմացած է։

— Բայց շատ շուտով հայտնի հողագործ կդառնա Դանիել

հայրիկը,— պարծեցավ բրիգադիրը,— հենց հիմա հմուտ հողագործների նման է աշխատում։

Մեզ հետաքրքրում էր առաջին անգամ իր երազած հայրենի հողի վրա աշխատող մարդու ձեռքի գործը։

— Ակոսներով ջրածը, որ տեսաք, իմ ձեռքի գործն է... այն իմ ջրածներն են բուսել,— խանդաղատանքով ասաց Դանիել հայրիկը և նրա արևառ դեմքը շառագունելուց ավելի մգվեց։

Մենք մոտիկից տեսանք նրա «ակոսներով ջրածը» և մեր մտքում որոշեցինք, որ դաշտը ջրված է հավասարապես, հանդարտ, խնամքով։

Այդպիսով անփորձ ու նոր հողագործ «Դանիել հայրիկը» դրել է բարձր բերքի հիմքը։ Դա հաստատեց 60-ամյա մի ծերունի՝ օղակավար Աղաջան Բաբաջանյանը, որ կանգնած էր այգու ծայրին՝ սրսկիչ մեքենան շալակին։

— Ջրելը հեշտ բան չկարծեք... Չասես, թե ջուր է, կկապեմ— կգնա... Տե՛ս ինչպես են ջրել առաջին բրիգադում, կարծես վերևից սելավ եկած լինի։

Առաջին բրիգադցիները լսեցին գլխահակ։ Իրոք «Դանիել հայրիկի» ջրածն ո՞ւր, նրանցն ուր...

Այնտեղ, ուր բահը ձեռքին աշխատել է «Դանիել հայրիկը» միջակոսային տարածություններում իրենց կանաչ, կարծես յուղած, սպաղուն գլխիկներն էին հանել վաղվա փարթամ թփերի դեռևս անզոր ու քնքուշ ծիլերը։ Այս հողն է, որ հեկտարից պետք է տա 85 ցենտներ բամբակ և իրեն մշակողին՝ օղակավարուհի Ծովիկին հասցնի փառքի գագաթնակետին՝ Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչման։

Բայց դա դեռ ցանկություն է, պլան, որ ձևակերպված է մրցության պայմանագրով։ Կատակ չէ 85 ցենտները— ավելի քան 500 փութ...։

— Այդքան կարտոֆիլ հազիվ են ստանում... էդ ո՞ւր է՛... զարմացավ կոլխոզնիկներից մեկը։

Լավ բերք է տվել այդ նույն հողն անցյալ տարի— հեկտարից 27 ցենտներ։ Բայց 27-ն ո՞ւր, 85-ը ուր...

Ես խոսեցրի օղակի անդամներին և զգացի, որ նրանցից ոչ մեկը չի կասկածում այդ թվի ռեալականությանը։

Այդքան բերք ոչ ոք չի ստացել Հայաստանի բամբակագործու-

ծյան պատմության մեջ։ Բայց նոր տնտեսաձևը՝ կոլխոզները, առաջավոր ագրոտեխնիկայի կիրառումը, նոր մարդիկ հնարավոր են դարձնում այդպիսի բերք ստանալ։

Որջկոմի քարտուղարը նրանց մի շատ պարզ հաշիվ արավ.

— Հեկտարի վրա աճեցրե՛ք հարյուր հազար բույս։ Այս հողում ամեն բույս կտա 30 կնգուղից ոչ պակաս։ Յուրաքանչյուր կնգուղը 4 գրամով՝ կանի 120 ցենտներ։ Եթե, իհարկե, կարողանանք բոլոր բույսերը պահպանել... Ամբողջ խնդիրն այդ է։

Այս ռեալ հաշիվը խանդավառել է կոլտնտեսականներին։ Բայց ամեն հեկտարի վրա այդքան կնգուղներով, այդքան թուփ աճեցնելը պահանջում է ագրոտեխնիկական բազմաթիվ միջոցառումներ կիրառել, պահանջում է աշխատել բարեխիղճ ու լարված։

Այդ պարզ հաշիվը գործնականում ահա ինչպիսի բարդ ձևով են լուծում սամծս գեռատի աղջիկներն իրենց «Դանիել հայրիկի» հետ միասին։

Ամենից առաջ, հողը հերկել են 3 անգամ։ Բոլոր դեպքերում խրախուսելի չէ շատ հերկը, հողը կփոշիանա։ Բայց այդ հողը կավային է և հերկը կատարված է երկար ընդմիջումներով, որով և կանխված է փոշիացումը։

Եվ ի՞նչպես են հերկել։

— Երեք անգամ տրակտորը վռնդել ենք հողամասից,—պարծանքով ասում է ագրոտեխնիկ Հովհաննեսը։

— Մի՞թե վռնդելը պարծանք է, չէ՞ որ պարապուրդ կտա։

— Թող տա, որ խրատվի... ագրոկանոնը խախտե՞ց—կվռնդեմ, բա՛... ուղղակի ասացինք՝ բրակ ես անում, գնա՛...

— Ես երեսուն սանտիմ եմ պահանջում—նա քսան է վարում, ինչպե՞ս չվռնդեմ,—արդարացավ բրիգադիրը։

Այդպիսով, նրանց հաջողվել է անցյալ տարվա 20 սանտիմետրի փոխարեն այս տարի 25—30 սմ. խորությամբ վարել։ Դա նշանակում է, որ 5—10 սմ. հողաշերտ, որ անհիշատակելի ժամանակներից ի վեր հանգստանում է երկրի ընդերքում և հարուստ է սննդանյութերով, դուրս է եկել արևի երես և սնում է նորածիլ ծամբակենուն։

Այդ հողամասը, որ 15 տարի անընդհատ ցանվում է և հոգնած է, այդ պարզ միջոցով այժմ հանգստացել է իր 15 տարվա հոգնածությունից։

— Ուրիշ ի՞նչ նոր բան եք ավելացրել անցյալ տարվան:

— Այն, որ անցյալ տարի պլանը կատարելու համար վարում էին նաև դեռ քեշը չեկած, որը հակառակ էր ագրոկանոններին. հիմա վարեցինք քեշը գալուց հետո,—մեջ մտավ օղակավարուհին, կարմրեց հասակավորների առաջ, ապա հետզհետե բացվեց, սկսեց հողի մշակության իր բացատրությունները, «իր» մեթոդի մեկնությունը: Հետևելով նրա խելոք մտքերին, մի պահ ինձ թվաց թե իմ առաջ կանգնած է ոչ թե դեռատի մի գեղջկուհի, այլ գյուղատնտեսական բարձր կրթությունը հողագործության պրակտիկայում ստուգած մի կատարյալ գյուղատնտես:

Նրա խոսքից ես հասկացա, թե որքա՜ն բերքից ենք զրկվում մենք Էջմիածնի, Զանգիբասարի, Հոկտեմբերյանի շրջաններում թեկուզ միայն մարգերով ցանելու և ջրելու պատճառով: Իրոք, մի՞թե հասկանալի չէ, որ երբ հողի սննդանյութերով հարուստ, մշակված վերնաշերտը մենք քերում ենք, նրանով թմբեր պատրաստում, զրկում ենք բույսին անհրաժեշտ սննդանյութից: Ապա ջուրը կապում ենք մարգերի մեջ, հողի բարձրադիր մասերը ուշ ու քիչ են ջուր ստանում, ցածր տեղերում ջուրը լճանում է, որից հետո կեղևակալում, ճաքճքում, դրանից էլ դժվարանում է բույսի աճը, կուլտիվացիան, մշակությունը: Եվ մենք ամեն տարի, ամեն տեղ ահագին տանջանքով, բանվորական ուժ ծախսելով մարգոց ենք անում միմիայն սովորույթի ուժով և ոչ թե ելնելով նպատակահարմարությունից:

Ծովիկը, առաջավոր բամբակագործը կտրականապես վերջ է տվել բամբակի մշակության պապենական ձևի այդ հետադեմ մնացորդին և հողը ցանել ու ջրում է բացառապես ակոսներով: Այդպես անհամեմատ լավ է, այդպես հողի կազմությունը չի փչանում, օդը ազատ թափանցում է բույսի արմատների շրջանը, այդպես բույսը ջուր է ստանում ոչ թե վերևից, հեղեղվելով, այլ կողքից, հանդարտորեն: Այդպես բամբակենին կաճի փարթամորեն և արագ կպտղակալի: Ծովիկը դա գիտե ագրոնոմիայից և իր սեփական փորձից:

Նա գիտե նաև, որ կավաշատ ծանր այդ հողը կարոտ է ազոտի, և 1.500 կիլոգրամ ազոտ է տվել նրան: Մինչև այժմ նրա հողամասը 3 անգամ հանքային և տեղական պարարտանյութ է ստացել:

Է՞լ որն է նորությունը:

Անցյալ տարի հեկտարի վրա 70—80 հազար բույս կար։ Այս տարի նրանք բոլոր կոշտերը մեկիկ-մեկիկ փշրեցին ձեռքի գործիքներով, ուստի անհամեմատ շատ բույս արևի երես դուրս եկավ, քանի որ մատղաշ ծիլերին խեղդող չկար—հողը կեղևակալած չէր և զուրկ էր կոշտերից։

— Բայց այնուամենայնիվ լրացնել պետք է, նոսր տեղեր կան,—դիտեցի ես։

— Սերմը թրջած ենք պահում... Հենց պարզվեց ո՛րտեղ է բաց—իսկույն կլարկատենք, իսկույն, որ նոր տնկածները հիներին հասնեն,—պատասխանեց օղակավարուհին։—Եվ ես դեռ հույս ունեմ հեկտարի վրա ոչ թե հարյուր հազար, այլ հարյուր տասը հազար բույս աճեցնել,—ավելացրեց նա։

Լիարժեք հեկտար ունենալ, այնպիսի հեկտար, որի վրա առանց բամբակենու ոչ մի «քաչալ» տեղ չլինի, ամբողջ հեկտարի վրա ոչ մի թիզ ազատ տեղ չլինի,—սա բարձր բերք ստանալու այսօրվա հիմնական միջոցառումներից է։

Բայց բավական չէ հեկտարի վրա 110 հազար բույս «ծնեցնել»։

Ծնվածը պե՛տք է ապրի... **Բոլո՛րը պիտի աճեն։**

Ահա Ծովիկի ողջ ջանքն էլ հենց դրան է ուղղված, որ **բոլոր** բույսերն ապրեն, և **բոլորը** զարգանան փարթամորեն։ Իսկ ի՞նչ է անում նա այդ նպատակին հասնելու համար։ Ասածս հողամասից 1 և կես հեկտարի բույսերին նա տվել է ցիանամիդ, սուպերֆոսֆատ։ Շուտով կտա սելիտրա։ Այդ թույլ ծիլերը երեխայի նման ամեն ինչ պատրաստի են ուզում. ուստի ամեն անգամ սնունդը տալուց հետո ջրում է, որ բույսերը պարարտանյութը լուծված վիճակում ստանան ու յուրացնեն։ Հետո, նա **բոլո՛ր** բույսերին է բաժին տալիս, նա հետևելու է, որ ոչ մի բույս առանց սննդի և առանց ջրի չմնա։ Նա բոլոր բույսերին է խնամելու, որպեսզի նրանցից ոչ մեկը չմեռնի...

Մատղաշ բամբակենու կանաչավուն շարքերը հազիվ են երևում մուգ հողի վրա և մոլախոտի ոչ մի նշան չկա դաշտում։ Բայց օղակավարուհի Ծովիկը մեզ հետ իսկույն համաձայնեց (որովհետև այդ բանը նա մեզանից լավ գիտեր), որ բամբակենու առաջին «մոլախոտը» իր հարևան բամբակենին է։ Արևի դեմ պարզելով իրենց կլորավուն տերևները, իսկ ներքևում տարածելով իրենց

մաղարմատները, այդ նորելուկ արարածներն սկսել են կյանքի ու մահու համառ ու լուռ կռիվ իրար դեմ՝ լույսի, ջրի, սննդի համար։ Հին գյուղի բամբակագործը ուշադրություն չէր դարձնում այդ պայքարին։ Նա չէր հասկանում, որ մրցակից բամբակենին մոլախոտից ավելի վտանգավոր է, որովհետև եթե մոլախոտը հաճախ հեռու է լինում՝ միջշարքային ազատ տարածության վրա, իր ցեղակից բամբակենին իր կողքին է և կլանում է իր բաժինը անմիջական կերպով։ Եվ այդ բանը չըմբռնելով, հին հողագործը սպասում էր մոլախոտի աճելուն, կատարում էր առաջին քաղհանը, ապա նոր կատարում նոսրացումը։ Այդ վնասակար կարգը սովորույթի ուժով շատ գյուղերում պահպանվել է մինչև օրս։ Այժմ դաշտերում եղած բամբակենու ծիլերի ճնշող մեծամասնությունը մենք հանելու-թափելու ենք (նոսրացում)։ Ահա ինչու Ծովիկի օղակում պատրաստվում են նոսրացումը կատարել առաջին քաղհանից ոչ թե հետո, այլ առաջ։ Մենք շատ կշահեինք, եթե այդ նույն բանն արվեր մեր բոլոր բամբակագործական օղակներում։

Նոսրացման հետ կապված մի այլ «մանրունք»։ Յուրաքանչյուր բնում հաճախ 2 բույս են թողնում։

— Էլի նրանք իրար կնեղեն, իրարից գոնե 4—5 սանտիմ հեռու պիտի թողնեմ,—իր մտադրությունը մեզ հայտնեց Ծովիկը։ Նա իրավացի է, այդպես բույսերն ավելի ազատ կզարգանան։

Այնուհետև։

Մշտապես մարդու հոգատար խնամքի տակ գտնվելով, բամբակենին հազարամյակների ընթացքում նրբացել է, քնքշացել և կորցրել գոյության կռվի իր զենքերից շատերը։ Դրան հակառակ ոչ-կուլտուրական բույսերը սրել են իրենց զենքերը՝ արևի տակ ապրելու համար։ Ուստի նրանք երևան են գալիս և աճում կատաղի արագությամբ ու խեղդում մարդու պաշտպանությանը ապավինած բամբակենուն։ Եվ վայ այն բամբակագործին, որ զգոն չեղավ, հապաղեց, դանդաղեց։ Նա արագությամբ զոհ կտա իր աճեցրած բույսերը և տանուլ կտա բարձր բերքի համար մղվող մրցության մեջ։ Այդ հոգսն է նստած Ծովիկ Հայրապետյանի և իր ընկերուհիների հոգում և նրանք թաքուչակները սրած սկսում են պայքարը։ Այդ պայքարն ասածս օղակում հետևյալ կերպ են պատկերացնում։ Ամենից առաջ քաղհանը քաղհանին պետք է հետևի առանց ընդհատումի։

— Յոթն անգամ կմշակենք... այո՛, յոթից ոչ պակաս։ Եվ հետո, քաղհանն էլ, կուլտիվացիան էլ վարպետություն են պահանջում։ Այսպես, կուլտիվացիան սկզբում հարկավոր է ոչ խոր և ոչ լայն կատարել, քանի դեռ բույսերը փոքր են ու թույլ։ Որքան բույսերը մեծանան, այնքան պետք է կուլտիվացիան խոր ու լայն կատարել։

Սա օղակի անդամներից մեկի բացատրությունն է։ Կոլխոզի ագրոտեխնիկը ավելացրեց.

— Ոչ բերքատու ճյուղերը կտրելը և ծերատումն էլ բերքը կբարձրացնեն։

— Այդ ի հարկե կանենք... ծերատումը մտցնողը ակադեմիկոս Գուլքանյանն է։ Որ օգտակար բան չլիներ ինչի՞ պիտի առաջարկեր էդ գիտնականը,—ավելացրեց մի հասակավոր կոլխոզնիկ։

Եվ վերջապես, ոչ մի տերև չպիտի տրվի չոփին, և արմատահան են արվում բամբակի դաշտի սահմանների վայրի խոտերը, որոնք հիվանդությունների օրրան են։

Իսկ ինձ ուղեկցող ագրոնոմը նայեց առուների ափերին խոնարհված ուռենիներին, որոնց սաղարթները պատած էին թրթուրի խիտ ոստայններով և ուղղակի առաջարկեց.

— Սրանք թրթուրի բուն են։ Ի՞նչ օգուտ այս ծառերից—ոչ շինափայտ է ստացվում, ոչ վառելափայտ։ Բարդի տնկեցեք—գնա երկինք հասնի, ոչ թրթուր տարածի, ոչ շվաք անի ցանքի վրա և ուզածդ ժամանակ էլ շիմշատ գերաններ տա։

***

Մեր տպավորությունն այդ մարդկանցից այն է, որ տարիներ շարունակ փորձ և ագրոգիտելիքներ կուտակելուց հետո այս տարի նրանք իրենց ողջ ունեցածը,—գիտություն, փորձ, եռանդ դնում են հողի վրա, նրանից քամելու առավելագույնը, այն, ինչ անհնարին է եղել հողագործության հին տեխնիկայի, հին սիստեմի պայմաններում, հին հոգեբանության պայմաններում։ Եվ այդ կհաջողվի նրանց, ու շարքային գեղջկուհի Ծովիկ Հայրապետյանն ու իր օղակի անդամները Սովետական երկրի անվանի կանանց շարքը կդասվեն՝ իրենց «երիտասարդական օղակի» ջանքերով և Սովետական պետության հզոր

օգնության շնորհիվ, շնորհիվ այն բանի, որ Սովետական իշխանությունը աշխարհում միակ իշխանությունն է, որ գյուղացուն ասում է.

— Ահա՛ քեզ ընտիր հող, առաջավոր մեքենաներ ու բուժանյութեր, ընտիր սերմեր, առ հանքային պարարտանյութեր, ագրոնոմներ, մշակիր, հողից այնպիսի բարիք վերցրու, որի մասին երազել են քո նախնիները, վերցրու, ապահովիր քո և քո երեխաների կյանքը և հզորացրու քո հայրենիքը։

Մայիս, 1947 թ.

ԴԱՐՂԱԼՈՒ

Արտաշատի շրջանի Դարղալու գյուղում մենք մտանք մի բակ։ Թթենու ստվերում կանաչն առաջին որոճում էր մի կապած հորթ, շունը լեզուն հանել էր շոգից, հավերը բակում ծառից թափված թութն էին կտցահարում։ Սյունից կախված էր մածնի տոպրակը և թամվում էր հանդարտ։ Դույլով դրված շիճուկից և ամանեղենից երևում էր, որ այստեղ հենց նոր պանիր են պատրաստել։ Սրահի տակ, վառվող թոնրի մոտ մի տարեց կին ինչ որ գործի էր։ Շան հաչոցից նա գլուխը վեր բարձրացրեց և սաստեց շանը։ Պատշգամբում երևաց այն կինը, որին ես Երևանից հատկապես տեսության էի գնացել՝ անվանի բամբակագործ Պայծառ Հովհաննիսյանը։

Մեզ տեսնելով՝ նա շփոթվեց, ուզեց շուռ գալ, ապա ձայնեց.

— Համեցեք... համեցեք։

Մենք նստեցինք պատշգամբում և զրույցն սկսելուց առաջ զովացանք թարմ և սառը թանով։ Մեզ անհրաժեշտ էր պարզել, թե ինչպես է օղակավարուհի Պայծառը հեկտարից 42 ցենտներ բամբակ ստացել, սակայն նա շարունակ զբաղված էր մեզ հյուրասիրելու պատրաստություն տեսնելով։

Դեռ չհարցրած մեր գալու նպատակը, անմիջապես սեղան բաց արին.—զարմանալի լավ սովորություններ ունի Արարատյան դաշտի բնակչությունը։

— Կերեք, շեն օջախ է,—սիրալիր ասում էր տանտիրուհին։

Եկավ ամուսինը—առողջ, խոշոր մի տղամարդ։ Թամանյան դիվիզիայի զինվորներից է, վաղուց չէ, որ զորացրվել է։

— Ուստենք, ես էլ ձեզ նման ղոնաղ եմ,—առաջարկեց նա։

Իմ ակնարկին, որ ինքը շատ առողջ տեսք ունի, մարդը ուրախ պատասխանեց.

— Լավ է պահում կնիկս... ավանսով ուտում եմ նրա անցյալ տարվա վաստակած մթերքը,—աշնանը պարտքս կփակեմ։

Կինը ծիծաղեց։

— Մի՛ մտածիր, տանը հինգ տարի պահել եմ, էլի կպահեմ։

Եվ իրոք հիանալի տուն է պահել այդ կոլխոզնիկուհին։ Միայն իր անձնական աշխօրերի դիմաց նա անցյալ տարի ստացել է 12 փութ չամիչ, 55 փութ խաղող, 50 փութ ցորեն, 5 փութ փշատ, 4.000 ռուբլի դրամ, չհաշված իր տնամերձ այգու եկամուտը։

— Շատ պիտի ստանա, որ ապրի. դե դրա շնչերը շատ են, հո ինձ պես մենակ չէ,—խոսում է ամուսինը մեզ աչքով անելով։

Ամուսնու ռազմաճակատ մեկնելուց հետո Պայծառը չհուսալքվեց։ Նա արտասովոր ուժ գտավ իր մեջ, աշխատանքի անցավ կոլխոզում և աչքի ընկավ շրջանում։ Երբ իր ստեղծած մթերքից Ուկրաինայի պարտիզանները բաժին ստացան, և երբ իմացավ, որ իր արտադրած չամիչը, բամբակը, գինին մեր զորքի հետևից հեռավոր Եվրոպա է հասնում, զգաց, որ իր կատարած գործը ավելի մեծ ու կարևոր է եղել, քան ինքն էր կարծում։

Իսկ երբ Միութենական Կառավարությունը նրան պարգևատրեց Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով, նա ամբողջովին համակվեց միայն մեկ հոգսով,—այնպես գործել, որ արժանի լինի այդքան մեծարանքին։ Եվ նա խորացավ իր գործի՝ բամբակի մշակության մեջ ու այդ գործը նույնպիսի խնամքով տարավ, ինչպիսի խնամքով ու ճաշակով կինը մանրակրկիտ մանյակ կասեղնագործի։

Մենք Պայծառի հետ միասին եղանք իր օղակի հողամասում և մոտիկից տեսանք նրա գործը։

Տեսանք և հիացանք։ Իրենց թշնամի մոլախոտերից բոլորովին ազատ, պարարտացված փխրուն հողում սիրուն ու համաչափ շարքերով աճում են բամբակի մատղաշ բույսերը՝ Արարատյան դաշտի բարկ արևի զորությամբ։ Նայում ես՝ ողջ դաշտում բա-

ցի բամբակենուց, ոչ մի այլ ծիլ չկա, նրա բաժինը խլող չկա, այդ դաշտին տրվող ողջ ջուրը, սննդանյութերը, ջերմությունը միայն նրան՝ բամբակենուն են պատկանում, ուստի նա այժմ իրեն հիանալի է զգում և աճում է արագությամբ։

Ուրախ դեմքերով և ժիր շարժումներով աղջիկներ են աշխատում այդ դաշտում—Վերգինեն, Վարդիթերը, Սանամը, Վարդուշը,—բոլորն էլ իրար հասակակից, 20—22 տարեկան, բոլորն էլ մուգ շիկահեր, չնայած արևոտ հարավի դստրեր են։

— Ինձ ասացեք ձեր գաղտնիքը.—ինչպե՞ս եք այդքան բերք ստանում,—հարցրի ես, երբ նրանք արդեն նստոտել էին փշատենու հովին։

Մեկն ասաց.

— Խոր վարիցն է,—վարը 25 սանտիմետրից պակաս չենք անում։

Մյուսն ասաց.

— Լավ հսկելուց է. Պայծառը նստում է թե՛ տրակտորին, թե՛ շարքացանին, գնում է կուլտիվատորի հետևից, որ ամեն ինչ՝ թե՛ վարը, թե՛ ցանքը, թե՛ փխրեցումը կատարվի ագրոկանոնների համաձայն, առանց շեղումների։

Մի ուրիշը ասաց.

— Իմ կարծիքով, բարձր բերքի գաղտնիքն ահա ինչի մեջ է. սկզբում քանի բույսը կարճ արմատներ ունի—քաղհանը 5 սանտիմետր խորությամբ ենք կատարում։ Երկրորդ անգամ քաղհանում ենք 10 սանտիմետր խորությամբ, երրորդ անգամ—15, իսկ այժմ, ինչպես տեսնում եք, արդեն մինչև 20 սանտիմետր խոր ենք քաղհանում։

— Է՛հ, դա ինչ նշանակություն ունի որ,—անգետ ձևացա ես։

Նրանք գործին հմուտ մարդկանց նման ինքնաբավականությամբ ժպտացին։ Աղջիկներից մեկը պատասխանեց.

— Այն նշանակությունն ունի, որ բույսի արմատները խորանալու հետ միասին հետզհետե փխրեցումը խորացնելով, մենք նրանց օդ, արև և սնունդ ենք հասցնում։

Իսկական ագրոնոմի պատասխան։

— Ըստ երևույթին օղակիդ անդամները բավական հասկանում են հողի մշակությունից,—դարձա ես Պայծառին։

— Այո՛, մի-մի փոքրիկ ագրոտեխնիկներ են դրանք,—պատասխանեց նա ինքնագոհությունից շիկնելով։

— Բայց այնուամենայնիվ խոշական գաղտնիքը դեռ չասացիք։

Նրանք իրար երես նայեցին և մնացին տարակուսած։

— Գուցե նրանից է, որ մենք հողը ոչ թե 2, այլ 3 անգամ ենք հերկում,—կարծիք հայտնեց մեկը,—հերկում ենք նոյեմբերին, մարտին և ցանելուց առաջ։ Մենք դրանով սննդանյութերի լուծման և խոնավության կուտակման լավ պայմաններ ենք ստեղծում,—բացատրեց նա իր միտքը։

— Սերմն ընտրելն էլ նշանակություն ունի,—ցանելուց առաջ նիհար սերմերը ընտրում, դեն ենք գցում,—մեջ մտավ բրիգադիրը։

Այնուհետև խոսք եղավ այն մասին, որ այդ օղակում բամբակենին լավ է աճում, որովհետև առաջ ջրում են, հետո քաղհանում, պատմեցին որ դաշտը գիշերներն են ջրում, որ մեծ առավելություն է, մարգերի արանքն այնպես է հարթեցված, որ ջուրը հավասարապես ծածկում է միջշարային տարածությունն ու ոչ մի տեղ չի լճանում։ Ես տեսա, թե ինչպես յուրաքանչյուր շարքի գլխին երկաթե մի խողովակ կա դրված, որից ջուրը թափվում է ակոսի մեջ. հետևաբար շարքերը հավասարաչափ են ջուր ստանում և ջրումն էլ միաժամանակ է վերջանում։ Այստեղ ամեն տարի խնամքով հեռացնում են բամբակենու ոչ բերքատու ճյուղերը, որոնք սնունդ խլելուց բացի, ոչ մի օգուտ չեն տալիս, հետո՝ ծերատում են Լիսենկոյի մեթոդով, որից փարթամանում է բամբակենին։

Այս բոլորը մի-մի «գաղտնիք» է բարձր բերքի։ Բայց ամենամեծ գաղտնիքն այն է, ինչ ասաց ինձ կոլխոզի նախագահ Լևոն Սահակյանը։ Ես նրան հարցրի.

— Երկու օր է ձեր գյուղում եմ, դեռ ոչ մի պարապ մարդ չեմ տեսել։

— Այդպես է,—պատասխանեց նա գոհ սրտով,—այստեղ եթե ուզում ես պատժել մեկին—գործի մի ուղարկի...

Ահա և, իմ կարծիքով, բարձր բերք ստանալու գաղտնիքը Դարղալու գյուղում։

Մենք երկու օր շրջեցինք այդ գյուղի դաշտերում և համոզվե-

ցինք, որ կոլխոզի մյուս դաշտերը նույնպիսի խնամքով են մշակված, ինչպիսի խնամք մենք տեսանք Պայծառ Հովհաննիսյանի օղակի դաշտում:

Վերադառնում ենք դաշտից, ընթանում ենք երկու կողմից ճանապարհի վրա կռացած փշատենիների միջով:

Ինչքա՜ն երկար է փշատենիների այդ ծառուղին, ինչքա՜ն փշատ կա: Գյուղ ենք մտնում: Կանոնավոր լայն փողոցներ, և նրանց երկու կողքերից էլի փշատենիներ են կանգնել. ողջ գյուղը թաղված է փշատենիների մեջ և նրանց արբեցնող անուշ բույրը ներս է հորդում դարղալվեցիների բաց պատուհաններից...

Հունիս, 1946 թ.

ԷՋՄԻԱԾՆԻ ԲԱՄԲԱԿԻ ԴԱՇՏԵՐՈՒՄ

Կառքով Էջմիածնից գնում ենք Սև-Ջրի ուղղությամբ։ Երկու կողմից հասկակալած արտերի կանաչ ծովն է ծփում։ Կողքիս նստած ցածրահասակ, թուխ մարդը տիրոջ հայացքով նայում է ծալծալող ցորենի հուռթի հասկերին ու խորին գոհունակության մի ժպիտ է խաղում նրա դեմքին։

— Էս տարի լավ հաց ունենք,—կարծես ինքն իրեն ասում է նա, աչքն արտերից չկտրելով։ Միկոյանի անվան կոլխոզի նախագահն է,—Լենինի շքանշան ունի և՛ ինքը, և՛ իր ղեկավարած կոլխոզը։

— Այս արտերն էլ են Հայաստան Ամիրյանի բրիգադինը,—հիմի կմտնենք նրա բամբակի դաշտը, և դուք կտեսնեք, որ նրա բոլոր ցանքերը հիացմունք են պատճառում,—ասաց դեմս նստած կոլխոզի ագրոնոմ Պարթև Տատուրյանը։ Ապա դառնալով կառապանին՝ ձայնը բարձրացրեց.

— Ուստա Արտաշ, զգույշ քշիր, շուռ կտաս, ինկի գիտե՞ս ինչ մարդ ես տանում։

«Ուստա Արտաշը» ետ նայեց, ծերունական պղտոր հայացքով աշխատեց որոշել, թե «ինչ մարդ է տանում» և քմծիծաղ տվեց.

— Փա՛հ, դրա պես մարդիկ եմ տարել էլի՜... դա հո պրոֆեսոր Մառից մեծ մարդ չի,—ասում էր՝ «Նո՞ւ, ուստա Արտաշ, հրեղեն ձիերդ լծի գնանք Գեղարդ...» ու էնպես էլ համով հայերեն էր խոսում,—ինքն էլ, կնիկն էլ... Շատ լավ մարդ էր, շա՛տ։

Ես շատ կուզեի կառապանին հարց ու փորձ անել աշխարհա-

հռչակ գիտնականի մասին, բայց կառքը կանգ առավ բամբակի դաշտի ափին և մենք ցած իջանք:

Դաշտի մեջ ցրված, յուրաքանչյուրը կռացած իր մարգի վրա, թարուջակներով քաղհան էին անում Հայաստան Ամիրյանի բրիգադայի կանայք: Դաշտը բաժանված է նեղ, երկար շերտերի: Կան շերտեր, որ ծայրե ի ծայր թուխ են, կանաչ երանգներով,— դրանք քաղհանած մարգեր են: Այն որ մուգ կանաչին են տալիս,— այդ մարգերին դեռ թարուջակ չի կպել: Կան և կեսը թուխ, կեսը կանաչ շերտեր,— այդտեղ կռացած, քրտնաթոր, վարժ շարժումներով գործում են կանայք, և մեր աչքի առաջ հետզհետե երկարում է թուխ շերտը կանաչի հաշվին:

Յուրաքանչյուր կոլտնտեսուհի ունի իր մարգը: Եվ ահա մենք իսկույն որոշում ենք ո՛վ է հարվածայինը և ո՛վ՝ ետ մնացողը: Այդ շերտերն իրե՛նք են մեզ ասում այդ:

Ահա շերտերից երկուսը ծայրե ի ծայր սև են՝ թարուջակի թարմ հետքերով: Նրանց տերերը՝ երկու դեռահաս աղջիկներ, վերջին հարվածներն են տալիս հողին, դեն նետում արմատից կորզված մոլախոտերը ու քրտինքը սրբելով՝ շփոթված կանգնում մեր առաջ:

— Վերջացրին երկրորդ քաղհանը,— բացատրում է գյուղատնտեսը: Նրանցից Աստղիկ Սարգսյանը, որ սև աչքերով, ձախ այտին խալ ունեցող մի աղջիկ է, օրական երկու նորմա է կատարում: Նրա ընկերուհին՝ Ռոզա Մուրադյանը երկու մարգ է վերցրել ու մեկ մարգ ունեցողներից շուտ վերջացրել երրորդ քաղհանը:

— Այսպես փոքրիկ է, բայց չանաքի ժամանակ էլ երկու կնոջ չափ գործ է կատարում,— պարծենում է բրիգադիրը:

Նրանց մարգերի կողքին մի մարգ դեռ կիսով չափ անմշակ է: Մոտենում ենք: Արևխաշ դեմքով մի թուխ կին է աշխատում, դա Հայկանուշ Ավետիսյանն է:

— Ինչո՞ւ ես ետ մնացել,— մեղմությամբ հարցնում է ագրոնոմը:

— Եսի՞մ,— քրթմնջում է կինը՝ ամաչելով մեղավորի պես և շարունակում է դանդաղ աշխատել:

— Երեխան հիվանդ է, երեկ գործի չէր եկել,— օգնության է հասնում բրիգադիրը:

Նրա հետ մրցում են իր հարևանուհիները—Ռոզան, Աստղիկը և մյուսները։ Այդ մրցությունը Առաջնորդի ասած սկզբունքով է տարվում,—առաջավորները վեր են քաշում, առաջ մղում ետ մնացողներին։ Ահա Ռոզան ու Աստղիկը իրենց մարգերը ավարտելուն պես մտան Հայկանուշի մարգը և իրենց թափով վարակեցին նրան էլ։

Ես չգիտեմ մեր բամբակագործական շա՞տ կոլխոզներում են մարգերը կցված առանձին անհատների, թե ոչ, բայց այստեղ այդ հիանալի կարգը մտցված է։ Յուրաքանչյուր կոլտնտեսուհի ունի իր մարգը և անմիջականորեն շահագրգռված է խնամքով ու ժամանակին մշակել այն։ Այդպես հեշտ է ստուգել աշխատանքի որակը։ Հենց դաշտի ափից առաջին հայացքից կարող ես որոշել, թե ո՛վ է բարեխիղճը, ո՛վ անբարեխիղճը, ո՛վ է առաջավորը, ո՛վ ծույլը։

Այսօր բամբակենին դեռ թույլ է, վաղը նա փարթամ մարգերով կանաչին կտա և հենց այդ մարգերից կերևա, թե ո՛վ ինչպե՛ս է աշխատել։

\- - - - -

Մի այլ դաշտում կարմիր մի դրոշակ է փողփողում։ Մոտենում ենք.—Հայաստան Ամիրյանի բրիգադի և ողջ կոլխոզի առաջավոր օղակն է։ Օղակի ղեկավարը միջին տարիքի և միջահասակ մի կին է—Աշխեն Գալստյանը։ Նրա օղակի բոլոր անդամներն էլ կոլխոզում առաջինը ավարտել են 1-ին, 2-րդ, 3-րդ քաղհանը և այժմ լրացուցիչ պարարտանյութ են տալիս բամբակենուն։

Օղակի «դրոշակակիրը» կլոր ճերմակ դեմքով, շագանակագույն մազերով մի աղջիկ է—Թամարան։ Որևէ հողամաս վերջացնելուց հետո, երբ օղակը հաղթականորեն տեղափոխվում է մի այլ հողամաս, օղակի առաջից քայլում է կլորերես Թամարան՝ կոլխոզի փոխանցիկ դրոշը ուսին։ Տեղ է հասնում, դրոշը խփում իր մարգի գլխին և սկսում... Այժմ էլ դրոշը նրա մարգի գլխին է խփված։

Նրա ընկերուհիները բոլորն էլ 16, 17 տարեկան աղջիկներ են—Քնքուշը, Մանուշը, Մանյան,—բոլորն էլ զարմանալիորեն

նման ջիրար՝ ճերմակ մորթով, բայց շագանակագույն մազերով, ջահելի կրակն աչքերի մեջ։

Եվ այդ գեղանի աղջիկները որոշել են կոլխոզի դրոշը պահել իրենց մոտ մինչև բերքը բաշխելը։ Իսկ դա հեշտ չէ։ Դրա համար նրանցից յուրաքանչյուրն իր հողակտորը պետք է 6—7 անգամ քաղհանի և այն էլ բոլորից շուտ, բոլորից լավ և աշնանը բոլորից շատ «սպիտակ ոսկի» տա, ինչպես տվել է նրանց բրիգադը անցյալ տարիներին։

———

Նրանք դաշտ են դուրս գալիս առավոտը շուտ և աշխատում 12—13 ժամ։ Բնությունը ձախողում է նրանց գործը, քաղհանն ուշանում է,—նրանք պետք է շտապեն։ Առատ անձրևներից մոլախոտը աճում է զարմանալի փարթամությամբ և շրջապատում բամբակենու թույլ բույսերը։ Այդ աղջիկները խնամքոտ ձեռքերով բամբակենին ազատում են շրջապատող թշնամիներից, բայց սրանք աճում են աներևակայելի արագությամբ։ Հարատև կատաղի կռիվ է արևի ջերմության համար, սննդի համար, տեղի համար։ Բամբակենին անզոր է այդ կռվում,—դարեր շարունակ նա մարդու խնամքի տակ է եղել և հույսը մարդու վրա դրած՝ կորցրել է իր պայքարի զենքերը։ Մոլախոտը, ընդհակառակը, խնամող չունենալով, գոյության կռվում ուժեղացրել է իր զենքերը։ Եվ վա՜յ այն բամբակենուն, որի քաղհանը ուշացած է... Մոլախոտն իսկույն բամբակենուն շրջապատում է և խլում նրա սնունդն ու արևը։ Ետ մնացող կոլտնտեսուհիների, ինչպես օրինակ ասածս Հայկանուշ Ավետիսյանի գործը կրկնակի է դժվարանում, քանի որ գնալով նրանց մարգերում փարթամանում է մոլախոտը և կրկնակի դժվարացնում քաղհանը։ Իսկ Թամարայի և Ռոզայի նման առաջավորների գործը կրկնակի հեշտանում է նրանով, որ նրանք շարունակ գործ ունեն դեռևս թույլ զարգացած մոլախոտի հետ։

———

Հայաստան Ամիրյանի բրիգադան Արարատյան դաշտի անվանի բրիգադաներից է։ Անցյալներում նրա միջին բերքը հեկտարից եղել է 25—30 ցենտներ բամբակ։ Ինչպե՞ս է նա հասել

այդպիսի բերքի: Ագրոկանոնների կիրառմամբ: Այն դաշտը, ուր մենք եղանք, դեռևս աշնանը պարարտացված է և ցրտահերկ է արված: Գարնանը կրկնավարի ժամանակ խնամքով հավաքված են մոլախոտերի արմատները, փոցխելու, մարգացի, հարթեցման, ցանքի, ցելաչրի, նոսրացման աշխատանքները կատարված են այնպես, ինչպես պահանջել է գյուղատնտես Շատվորյանը:

Այդ բոլորը լավ: Այդ բոլորով հանդերձ մենք շատ կոլխոզներում լավ բերք չենք ստանում մի հիմնական սխալի պատճառով.—հաճախ բամբակի դաշտը քաղհանում են, հետո ջրում: Հայաստան Ամիրյանը խուսափում է դրանից, որովհետև քաղհանելուն պես ջրելու դեպքում մենք մեր կատարած գործը նորից զերոյի ենք հավասարեցնում. չէ՞ որ ջրելուց հետո նորից կեղևակալում է առաջ գալիս, նորից ջուրն արագ հողի երեսն է անում ու գոլորշիանում: Ահա ինչու այդ բրիգադում առաջ ջրում են և «քեչի» ժամանակ միայն փխրեցնում:

Մյուս սխալը այն է, որ հաճախ ջրում են բրիգադի ողջ դաշտը, ապա սկսում մի ծայրից մշակումը: Այդ դեպքում մինչև դաշտի կեսը մշակելը, մյուս կեսում առատորեն աճում է մոլախոտը և խեղդում բամբակենին: Հայաստան Ամիրյանը դաշտը բաժանում է մանր հատվածների և ջրում ու մշակում է հատված առ հատված, հաջորդական եղանակով, որով և մոլախոտը թույլ է զարգանում, մշակումը՝ հեշտանում:

Եթե մշակման այդ ձևերը կիրառեն մեր բամբակագործական բոլոր բրիգադները, անկասկած բարձր բերք կստանան:

— — — — —

Կոլխոզի ագրոնոմ Պարթև Շատվորյանը մի շարք գյուղատնտեսական գրքույկների հեղինակ է և լուրջ մասնագետի համբավ ունի: Այս գարնան նա փոքր տարածության վրա ակոսային ցանք կատարեց: Արդյունքը եղավ այն, ինչ նա սպասում էր,—ջրելուց հետո հողը չկեղևակալեց և բամբակի ծիլերը դուրս եկան անարգել: Կեղևակալումը մեծ չարիք է բամբակի համար, նա խեղդում է բամբակենու ծիլերը: Մեծ աշխատանք են կատարում—տափանում են՝ կեղևը փշրելու համար: Տեղ-տեղ էլ դա չի հաջողվում և ստիպված են լինում հողամասը այնպես առած ձկար-

կատել—լրացուցիչ ցանք կատարել այն մասերում, որ չի ծլել: Փոխ մարգոցը—այդ ամենածանր աշխատանքն է բամբակի դաշտում, որ միայն Միկոյանի կոլխոզից ամեն գարնան 1000 աշխատօր է խլում: Ակոսային ցանքը ազատում է և՛ կեղևակալման վտանգից, և՛ տափանելու հոգսից, և՛ մարգոցից: Ջուրն ընթանալով բամբակենու շարքերին զուգահեռ ձգվող ակոսներով, ջրում է նրան ոչ թե վերևից, այլ կողքից, ֆիլտրացիայի ձևով, ուստի և հողի մակերեսի կեղևակալում չի կատարվում: Այդ դեպքում չի ջրվում միջշարքային տարածությունը և այնտեղ մոլախոտերը թույլ են զարգանում—հեշտանում է քաղհանի գործը: Ահա թե ինչու այս տարվա փորձի հիման վրա այդ կոլխոզը հաստատապես որոշել է եկող տարի բամբակի ողջ ցանքը կատարել ակոսներով: Դա կհեշտացնի պայքարը մոլախոտերի դեմ:

Այն եռանդը և նորմուծությունները, որ մենք այսօր տեսանք այդ բրիգադայում, մեզ բերում է այն համոզման, որ բրիգադան բամբակի ռեկորդային բերք է վերցնելու, ինչպես որ պարտավորվել է սոցմրցման պայմանագրով:

Հունիս, 1946 թ.

ԱՐՏԱՇԱՏԻ «ՃԵՐՄԱԿ ՈՍԿԻՆ»

Մեծ եռ ու զեռ է Արտաշատի բամբակի մթերակայանում: Կոլխոզներից հենց նոր ժամանած բեռնատար ավտոմեքենաները՝ բարձած հաստափոր բարդաններով՝ հերթի են սպասում ահագին կշեռքի մոտ:

Ծածկերի տակ, ծածկերից դուրս—բացօթյա ճերմակ բլուրներ են բարձրացել: Գնացքները ամեն օր դուրս են գալիս այստեղից և բեռնավորված սողում են դեպի բամբակազտիչ գործարանները: Նրանց մեկնելու պահին իջնում են ճերմակ բլուրները, ապա մի քանի ժամվա ընթացքում կուտակվում, լեռնանում է Արարատյան դաշտի ճերմակ, ձյունաթույր բերքը:

— Բարդանները ե՛տ տվեք,—պահանջեց Դալլարի ներկայացուցիչը:

Նրա պահանջով դատարկեցին բարդանները:

— Ձեզ էլ ո՞րտեղից բամբակ, արդեն պլանը կատարել եք 120 տոկոսով:

— Դուք գոգնոց ու բարդան հասցրեք,—մեր բամբակին վերջ չկա:

Գոգնոց և բարդան,—ահա Արտաշատի բամբակի բերքահավաքի նեղ տեղը: Բարդան հասցրեք,—պահանջում են բոլոր գյուղերից:

Բարդանը քիչ չէ, բամբակն է շատ, այնքան շատ, որ մթերակայանը չի հասցնում ընդունել: Անցյալ տարի այսօր 29 տոննա բամբակ է հանձնվել շրջանում: Այսօր՝ 88 տոննա: Եղավ մեկ օր, որ 230 տոննա բամբակ եկավ մթերակայան—ողջ պլանի 6,5

տոկոսը... Մարդիկ շփոթության մեջ ընկան, այդքան բամբակ մեկ օրում երբեք չէր հավաքվել Արտաշատի շրջանում: Դա ավելի էր 1919 թվին Հայաստանում հավաքված ողջ բամբակի բերքից...

Այդ շրջանը մեզ հիացնում է բերքահավաքի արագացող տեմպերով: Եթե առաջ մթերակայանն օրական 60—70 տոննա էր ընդունում, այժմ ընդունում է միջին հաշվով 100 տոննա: Շրջանը քայլում է բոլոր բամբակագործական շրջանների առաջից, նա արդեն կատարել է բամբակ հանձնելու պլանի 75 տոկոսը:

— — — — —

Մենք ընթանում ենք դաշտերով:
— Ահա և մեր սպիտակ ոսկին,—հպարտությամբ ցույց է
տալիս մեզ ՄՏ Կայանի դիրեկտորը՝ ձեռքը ճերմակ դաշտերի կող-
մը մեկնելով:
— Ոչ միայն սպիտակ ոսկի, այլև սպիտակ վառոդ...—ուղ-
ղում է նրան ռայկոմի քարտուղարը, նշանակալից ժպտալով:
Մենք դեմ առանք Յամանչալվի մասսիվ դաշտերից մեկին,—
մոտ 30 հեկտար տարածություն բռնված է համատարած բամբա-
կենիով: Դաշտի մի ծայրին խայտաբղետ շորերով կանանց մի
խումբ զվարթ զրույցով ու կատակներով բամբակ է հավաքում:
Այդ գյուղը մի քանի օրից կկատարի պետությանը բամբակ հանձ-
նելու պլանը: Բայց դեռ ինչքա՜ն բամբակ կա դաշտում... Դրսից
գորշ, շագանակագույն, ներսից ճերմակ փաթիլներով ողողված
այդ դաշտը շատ խոստմնալից է:
— Հիմա մենք անալիզ կանենք ու կորոշենք այս դաշտում
եղած բամբակի չափը,—հանդիսավոր հայտարարեց ռայկոմի
քարտուղարը՝ մարդաբոյ թփերի դաշտը մտնելով: Նա արմատա-
հան արավ բամբակենու մի քանի թփեր ու սկսեց հաշվել: Նա
արդեն բամբակագործության մասնագետ է դարձել:
— Ամեն թփի վրա միջին հաշվով բամբակով լիքը 14 կըն-
գուղ կա: Դա կանի հեկտարին մոտ 10 ցենտներ...
Ապա մտքում ինչ-որ հաշիվներ անելով, նա գոհունակությամբ
ինքն իրեն ասաց.
— Ոչինչ, մի երեսուն տոկոսով կգերակատարենք... Վատ չի
աշխատել ծերուկ Գրիգորը:

«Ծերուկ Գրիգորին» (կոլխոզի նախագահին) մենք գտանք մի այլ դաշտում—թրթուրավոր տրակտորի մոտ։ Հնձվորները առվույտի վերջին բերքն էին քաղում, մյուս կողմից փնչոցով վարում էր տրակտորը։

— Բամբակը դու եկող տարի տես,—պարծենում է «ծերուկ Գրիգորը»—քանի տարի է յոնջայի տակ է... տե՛ս, խոփը խորքը չի մտնում,—էդ հողի ուժիցն է...

Բամբակի կեսը դեռ դաշտումն է ու քիչ մտահոգություն չի պատճառում այդ մարդկանց։ Բայց և պակաս մտահոգված չեն նրանք վաղվա բերքով։ Եվ այստեղ ոչ միայն առվույտի հերթական դաշտերն են հերկում, այլև այս տարվա բամբակի դաշտերը արագորեն մաքրվում են թփերից, ու հետևից գալիս են ՄՏ Կայանի տրակտորները՝ իրենց հետևից թուխ ժապավեններ թողնելով։

– – – – – –

Երևի մի ժամանակ ազատ խայտալով հոսել է ու Արաքսին միացել Ալմաղանից եկող այս արագ գետը։ Դրա համար են Ազատ անվանել այդ գետին։ Սակայն սովետական մարդը ազատությունից զրկեց Ազատ գետին, նրան դրեց ցեմենտակուռ հունի մեջ, կաշկանդեց բանդերով ու պատվարներով և ստիպեց այլևս չթափվել Արաքս, այլ տարածվել դաշտում, սնել որթատունկ ու բամբակ։ Ի՛նչ կենսահյութեր ասես, որ չի բերում այդ գետը Ալմաղանի բարձրունքներից... Նրա ջրած փարթամ այգիներն այս տարի տվին երեք-չորրորդը ողջ Հայաստանի խաղողի բերքի։ Նրա ջրած դաշտերը՝ իրենց նոր, ժրաջան տերերի ջանքերով ռեկորդային բերք տվին։ Ահա նրա ճյուղերից մեկը՝ փոխվելով առվակի, հասել է Մրգանուշ գյուղի այն դաշտը, ուր աշխատում են Չինար Թարվերդյանի օղակի կոլխոզնիկուհիները։ Այդ դաշտը արդեն հեկտարից 13 ցենտներ տվել է պետությանը, բայց կնգուղների նույնպիսի մի անալիզ ցույց տվեց, որ մի այդքան էլ դեռ կա հավաքելու։

Այդ դաշտում մենք պատահեցինք անվանի բամբակագործ աղջիկների։ Ճերմակ գլխաշորերով, արևառ դեմքերով այդ դեռատի աղջիկները զարմանալի ճարպիկ ու արագաշարժ հավաքում էին բամբակը։ Նրանցից Հասմիկ Հակոբյանը,—ճերմակ մորթով,

թաց-շագանակագույն մազերով, առողջ թշերով մի աղջիկ,—սովորաբար հավաքել է օրական 100 կիլո բամբակ։ Երբ ես զարմացա այդ թվի վրա, նա ամոթխածությամբ պարծեցավ.

— Դա ի՞նչ է որ... մի օր 130 կիլոյի հասցրի...

Նրա օրինակը վարակիչ է եղել իր ընկերուհիների համար։ Նրա հետ աշխատող սև աչքերով, թուխ մազերով 15 տարեկան մի աղջիկ—Արշալույս Այվազյանը—բամբակի առատ շրջանում օրական հավաքում էր 80—90, երբեմն 100—110 կիլո։ Իսկ նրանց երրորդ ընկերուհին՝ 18-ամյա Ջինար Վարդանյանը մինչև 120 կիլոյի է հասցրել, օրական վաստակելով 3 աշխօր։

Նրանց նման հարյուրականների թիվը քիչ չէ Արտաշատի շրջանում։ Դրանց գլխավոր «գաղտնիքը» զույգ ձեռքով հավաքելու մեջ է։ Անցյալ տարի շրջանում մոտ 100 հոգի զույգ ձեռքով էին հավաքում։ Բերքահավաքից առաջ շրջանի ղեկավարությունը այդ առաջավորների փորձի փոխանակություն կազմակերպեց։ Նրանք հատուկ խորհրդակցություն-դասընթացներում իրենց ընկերուհիներին սովորեցնում էին զույգ ձեռքով շանաքելու, օրեկան հարյուր կիլո բամբակ հավաքելու արվեստը։

Եվ ահա այժմ զույգ ձեռքով շանաք անողների թիվը շրջանում հասել է 300-ի։

— Եթե եղանակն սպասեր և բերքն այսքան շատ չլիներ,—մի ձեռքն էլ հերիք էր,—այսպես պատճառաբանեց «հարյուրականներից» մեկը, երբ հեռանում էինք Մրգանուշի դաշտերից։

———

Երբեք շրջանում բամբակն այս տարվա նման խնամքով չէր մշակվել։ Եվ ահա հրապարակի վրա է ազնիվ աշխատանքի արդյունքը։ Գետաշենը բամբակագործական գյուղ չէ, բայց արդեն հեկտարից 16 ցենտներ հանձնել է, 2 ցենտներ էլ կհանձնի։ Դվինն արդեն հեկտարից միջին հաշվով հանձնել է 18 ցենտներ։ Գետաշենից Դավիթ Մանուկյանը իր բրիգադի հողամասի ամեն հեկտարից 22 ցենտներ հանձնեց։

— Շատ չէ, ամեն մի հեկտարում տասը ցենտներ էլ կլինի,—համեստությամբ ասաց նա։

Եվ այդ հիանալի մարդկանց պայծառ գալերիայի մեջ այս

տարի նորից շողշողում են շրջանի անվանի օղակավարուհիներ Լենինի շքանշանակիր Ծիածան Ասլիյանի և Կարմիր Դրոշի շքանշանակիր Պայծառ Հովհաննիսյանի դեմքերը։ Նրանք իրարից հեռու են,—առաջինը՝ Վերին Արտաշատում, երկրորդը՝ Դարղալվում։ Իրարից «թաքուն» նրանք հողը մշակելու նոր եղանակներ են փնտրում, գտնում, կիրառում, ապա գնում են իրար կատարած գործը ստուգելու։

Ապա իրարից սովորելով և իրարից անցնելու խանդով բռնված, նրանք շարունակում են իրենց հայտնի մրցությունը։ Շրջանը հետևում է այդ մրցությանը, և առայժմ նշաններն այնպես են, որ Պայծառը հեկտարից 25 ցենտներ կտա, Ծիածանը՝ 30 ցենտներ։

Բայց այս տարի պարծենալու շատ բան չունեն նրանք, որովհետև նրանց չափ բերք տվողների թիվը շատացել է Արտաշատի շրջանում, այդտեղ այլևս ոչ թե անհատապես, այլ մասսայաբար են բարձր բերք տալիս։

— — — — —

Ամեն օր լուսաբացին չորս հազար կին ու աղջիկ դաշտ են դիմում։ Ամեն օր կեսօրից հետո բամբակ հավաքողների թիվը բարձրանում է մինչև տասը հազարի,—դպրոցներից դուրս է հորդում աշակերտությունը, բազմաբղետ մի բազմություն ուրախ կանչերով օգնության է շտապում իրենց մայրերին ու քույրերին։

Ողջ շրջանը մոբիլիզացիայի մեջ է,—ուսուցիչներ, ծառայողներ, բանվորներ, բոլորը, բոլորը աշխատանքից հետո դաշտ են դիմում «ճերմակ ոսկի» հավաքելու։

Եվ տարբեր արհեստների, տարբեր տարիքի ու հոգեբանության տեր այդ հազարավոր մարդիկ միայն մեկ ցանկությամբ են բռնված,—ավարտել բերքահավաքը անցյալ տարվանից շուտ և երկրին պլանից ավելի տալ 200 տոննա բամբակ։

Աշուն, 1946 թ.

ԴԱՐՊԱՍ

Սիսիանի լերկ, ժայռապատ, խանձված ու անհրապույր բնությունից մենք ընկանք Որոտան գետի Շամբ կոչված հովիտը։ Մերկ ժայռերի միջև սեղմված կանաչ, փարթամ մի օազիս է դա, որի միջով իր կարմրախայտ ձկների հետ խայտալով ընթանում է Որոտան գետը։ Նրա ափերին, նրա վրա իրենց բերքի տակ խոնարհված են մրգատու ծառերը։ Առափնյա թթենիների տակ կոլխոզնիկները օղի են ծխում։ Շուկաներից ու կենտրոններից հեռու ընկած այդ հովտում միրգն այնքան առատ է ու աժան, որ տոննաներով ընտիր կեռաս ճմլում-թթվեցնում են օղու համար։

Ոչ մի տեղ կյանքի ու մահու հակադրությունը բնության մեջ այնքան ցայտուն չէ, ինչպես այդ ձորում. երկու կողմից անկենդան, տաքացած ժայռեր ու բուսականությունից զուրկ լանջեր, ներքևում մրգառատ, զմրուխտագեղ ու ծիծաղկոտ մի հովիտ, որն իր հավերժ կենսալից տեսքով հաղթական հեգնանք է շրջապատի անկենդան ու մեռյալ ժայռերին։

Այդ աննման հովիտը Դարպաս գյուղի կոլխոզի հանրային այգին է։

***

Գետի բարձրադիր ափին անասունների ձմեռանոցն է։ Հենց այդտեղ էլ կալսիչ մեքենան գիշեր-ցերեկ աշխատում է, և եզները դանդաղ պտտեցնում են կամները։ Թվում է ողջ գյուղն այդտեղ է, ողջն էլ տենդով բռնված արգավանդ հովտի բերքն են հավաքում,

կալսում, հարդը թողնում տեղում՝ անասուններին, հացահատիկը ուղարկում գյուղ, որ 4 կիլոմետր հեռու է այդ վայրից։

Նոր բերքի նմանահատ շեղջերը հաճույքով դիտելուց և ծառերի տակ պղնձե ծորակից հոսող թթի հայտնի օղին խմելուց հետո, մենք նստեցինք կոլխոզի ավտոմեքենան և ոլորապտույտ ճանապարհով բարձրացանք լեռան լերկ լանջն ի վեր։ Հովիտը ներքև մնաց։ Ճանապարհն անցնում էր ժայռերի ճակատներով և լեռան ուղղահայաց լանջերով։ Այնպես որ, երբ մենք դուրս եկանք հաջորդ հովիտը՝ Դարպաս գյուղի դիմաց, ցած նայել չէինք կարողանում, որովհետև ներքևում խորը անդունդ էր, որի հատակին աղջամուղջի միջից լսվում էր լեռնային գետակի շառաչը։

Մեր առաջ մի այլ հովիտ բացվեց,—կանաչով, պտղատու ծառերով ու զուլալ ջրերով հարուստ մի «թաքուն» աշխարհ, որ ճամփորդի տեսողությունից ծածկված է մնում այդ հովտի դեմքը փակող մի լերկ լեռնամասով։

Երբ մենք գյուղ մտանք, տեսանք, որ ողջ գյուղը, նրա տները, փողոցները, մանր շենքերը թաղված են շողշողուն մրգերի մեջ և պարտեզներով ու փողոցներով ամեն քայլափոխի խոխոջուն պաղ ջրեր են վազում։

***

Բերկրալի է տեսնել, թե ինչպես հեռավոր Սիսիանի շրջկենտրոնից 32 կիլոմետր էլ դենը, լեռների գրկում, աշխատավոր հայ մարդիկ ապառաժների դեմ, ամլության դեմ կռիվ մղելով իրենց գեղեցիկ բույնն են հյուսել այդ ձորում, իրենց տոկուն բնավորությամբ բարեկարգ, գեղեցիկ ավան են կերտել, բարեկեցիկ կյանք ստեղծել իրենց սերունդների համար։ 1930 թվին գյուղը կործանվել է երկրաշարժից։ Մեծ աշխատասիրությամբ օժտված այդ մարդիկ մի քանի տարում նորից կառուցել են իրենց շենը։ Առհասարակ զարմանալի շինարար մարդիկ են այդ ձորերի բնակիչները։ Եվ ինձ թվում է՝ Դարպասի կոլխոզնիկների այդ հատկությունը մարմնավորված է իրենց նախագահ Գրիգոր Բաբայանի մեջ։ Համեստ, մեղմ ու բարի այդ մարդը չես կարող կարծել, թե կարող է մարդկանց կազմակերպել, օգտագործել, գործի դնել։ Մինչդեռ ահա իր նախագահ նշանակվելու օրից

սկսած ընդամենը 6 ամսվա ընթացքում նա իր փոքրիկ կոլխոզ-ուժերով կառուցել է անդունդների վրայով անցնող այն ճանապարհը, որով մենք գյուղ եկանք, կառուցել է 40 մետր երկարությամբ նոր պահեստ, կառուցում է գյուղի կուլտուրական օջախը՝ մի փառավոր ակումբ, կառուցել է 4 խոշոր նոր տիպի գոմեր ֆերմայի անասունների համար: Կոլխոզի աջակցությամբ այս տարի կոլխոզնիկները 32 նոր բնակարան են կառուցել իրենց համար, 5 բնակարան էլ կառուցվել է ներգաղթողների և Հայրենական Պատերազմի զոհերի ընտանիքների համար:

Ահա ինչու դարպասցիները սիրում են այդ գործունյա ու խելոք մարդուն:

Հաճելի էր տեսնել նաև, թե ինչպես հեռավոր այդ շենն է մտել սովետական կուլտուրան, թե ինչպես երբեմնի քսնեֆոնյան այդ գյուղը միջնակարգ դպրոց ունի, ունի զարգացած՝ կիրթ, առաջադեմ երիտասարդություն և թե ինչպես Գրիգոր Բաբայանը նորակառույց ակումբի շինանյութերը Երևանից փոխադրում է օդանավով...

***

Զարմանալի ռելեֆ ունի այդ գյուղը: Դարպասի հանդերում Հայաստանի կլիմայական բոլոր գոտիներից էլ կհանդիպեք,—և՛ Արարատյան դաշտի շոգն ու մրգերը, և՛ Կոտայքի չոր ու հացառատ լեռնալանջերը, և՛ Լոռու հարուստ անտառների նմուշները, ուր վխտում են արջերն ու վարազները: Իսկ ավելի վեր ալպիական գոտին է: Լեռներն ուղղահայաց ձգվում են դեպի ամպերը, նրանց ստորոտում խաղողն է հասունանում, իսկ կատարին ձյուն է տեղում: Այնպես որ, այն պահին, երբ ներքև՝ հովտում հունձն արդեն վերջանում էր, վերևում, ամպերի տակ կային արտեր, որ նոր էին կանաչել: Դա հեշտացնում է դարպասցիների գործը: Նրանք հուլիսի մեկից սկսել են հունձը ձորերում և հետզհետե արտերի հասունանալու հետ միասին գնում են դեպի լեռնալանջերն ու լեռները, ուր հնձելով կհասնեն սեպտեմբերի վերջերին...

Ձորերում նրանք առաջինն սկսեցին հունձը, շրջանում առաջինը հաց հանձնեցին պետությանը և առաջինը լրիվ կատարեցին պետության հանդեպ իրենց պարտքը, դեռևս անցյալ ամսի 28-ին:

Ահա 15 օր է, որ հունձը հետզհետե վեր, դեպի լեռներն է գնում, և կալերից հացահատիկը անընդհատ ու հորդ առվակներով հոսում է կոլխոզի նորակառույց պահեստը։ Դարպասի կոլխոզի նոր պահեստի մեծությունը համապատասխան է այս տարվա բերքի չափին։ Գրիգոր Բաբայանը ոչ թե զարգանալով ու խստությամբ, այլ իրեն հատուկ մեղմ, համոզկեր տոնով կոլխոզնիկներին «հարկադրեց» հողը մշակել ագրոկանոնների համաձայն, նորություններ մտցնել հողի մշակության ձևերի մեջ։ Արդյունքը մենք տեսանք կալսիչի մոտ, ուր օղակավար Ղազար Պետրոսյանը մեքենայի բերանն էր տալիս «իր» օղակի հողամասից բերված վերջին խուրձերը։ Մտախոհ ու տենդագին հաշիվներ անելուց հետո, նա մոտեցավ նախագահին.

— Կարծես 25-ին չենք հասցնում, 24 է դուրս գալիս...

— Անջրդի հողից 24 ցենտներ միջինը քի՞չ է... Լավ կմշակես ցելը, լավ ցանք կանես, եկող տարի ավելին կտաս։

Մենք եղանք և բրիգադավար Ներսես Գևորգյանի արտերում։

Այստեղ բերքն այնքան է, որ բրիգադավարը, իր հաշիվներով ինքը 2 տոննա ցորեն կստանա միայն մրցանակի կարգով...

* * *

Մենք շրջեցինք Դարպաս գյուղի արտերում, եղանք հնձվորների մոտ և հիացանք այդ կոլխոզում տիրող կարգ ու կանոնով։ Ողջ գյուղը հնձի էր դուրս եկել, բայց արտերում մենք խուրձեր գրեթե չտեսանք,—հնձածն իսկույն գյուղ էր փոխադրվում և նույն օրը կալսվում։ Հենց դա էլ կորուստ քիչ տալու առաջին պայմանն է, չէ՞ որ խուրձերը դաշտում կեր են դառնում մկներին, թռչուններին և չորանալուց հետո ճանապարհին թափում են իրենց հատիկները։

Մենք տեսանք գյուղի աշակերտությանը օղակների բաժանված մարտական շարքերով դաշտում առաջ գնալիս։ Յուրաքանչյուր դաշտավարական բրիգադ 20—30 երեխայից բաղկացած հասկահավաք օղակ ունի։ Խուրձը վերցնելուն պես օղակը մտնում է դաշտ և այլևս ոչ մի հասկ չի մնում գետնին և կեր չի դառնում թռչուններին։ Օրական 100 կ. գ. ցորեն էր հավաքում մեր տեսած

օղակը, իսկ մինչև հնձի վերջը նրանց հավաքած-փրկած հացը տոննաների կհասնի:

Այնուհետև մենք նկատեցինք, որ Դարպասի կոլխոզնիկները հնձի են գնում լուսադեմին, իսկ ուշ երեկոյան նրանք շարունակում էին հնձել նորելուկ լուսնի լույսով: Այդպես բարեխիղճ, արագ առաջ տանելով հունձը, նրանք հասել են մի այլ, մի շատ կարևոր արդյունքի,—այդ գյուղում ոչ մի արտ չի կծղում և բոլոր արտերը հնձվում են հասնելուն պես, ժամկետին: Իսկ լավ հասած արտը հնձում են գիշերը և առավոտյան ցողին, որ հատիկները չթափվեն: Հարկ կա՞ պնդելու, որ դրանից կորուստները հասնում են նվազագույնի:

Առհասարակ այդտեղ կորուստ բերող պատճառները վերացված են հնարավորին չափ: Այսպես, ճանապարհները հատկապես հարթել են, քարերը հավաքել միայն այն նպատակով, որ խուրձը կրող սայլերը չթխկթխկան: Գարին, որ արև ժամանակ վզից շուտ կոտրվում-ընկնում է,—հնձում են բացառապես հովին, իսկ ցորենը՝ արևը բարձրանալուց հետո: Կալերի ափերը լայնացրել են, դեզերի տակերը կավացեխով սվաղել, որ թափվող հատիկները չկորչեն: Եվ վերջապես մի քանի տեղեր հացահատիկը կալսում են դաշտում, որպեսզի փոխադրելու հետ կապված անխուսափելի կորուստները կանխեն:

Ինչ է սպասվում արտերի հոգատար մշակումից և այդքան ուշադիր հնձելուց ու կալսելուց:

Եթե նախագահին հարցնես, նա համեստորեն կպատասխանի.

— Երևի անցյալ տարվանից երկու անգամ շատ հաց բաժանենք...

Իսկ կոլխոզնիկներն արդեն հաստատ գիտեն, որ այս աշնան 3—4 տոննայով հաց ստանալը սովորական բան է լինելու դարպասի կոլխոզնիկի համար:

***

Մենք հրաժեշտ տվինք պարտեզների մեջ թաղված այդ հիանալի գյուղին և նրա աշխատասեր, բարեհոգի ու հյուրասեր բնակիչներին:

Նրանց հանդերում վայրի աղավնիների երամով տարված, ես

արևառ դեմքով, փոքրամարմին մի մարդու հանդիպեցի, որ զարմանալի արագաշարժ ու ճարպիկ ձևերով իրենից մեծ խրձեր էր կապում։

Դա Դարպաս գյուղի ամենանոր բնակիչն է, որ դեռևս անցյալ տարի ճորտ էր Իսպահանի Սարդարջան բեկի մոտ։

Մի տեսակ ուրախ ռիթմ կար այդ մարդու աշխատանքի մեջ և անհոգ բավականություն այն պահերին, երբ ծնկի տակից խուրձը վեր էր քաշում ոտքի կանգնեցնում ու հեգնական ժպիտով սպասում, որ հնձվորները նոր «հաշան» հասցնեն։ Այդ թաքուն բերկրանքը գուցե նրանից է, որ իր ողջ կյանքում այդ մարդն առաջին անգամն է ի՛ր համար աշխատում։ Բայց միայն այդ չէ. իմ հարց ու փորձից պարզվեց, որ իր հաշիվներով այդ մարդը՝ երեկվա ճորտ Խաչիկ Պողոսյանը միայն այս սեզոնի աշխատանքով աշնանը կարող է երկու կով գնել, իր տարվա հացը մի կողմ դնելուց հետո։ Մնկաշոք խուրձ կապելիս նա հենց այդ մասին էլ մտածում էր, որով և մատնում էր իր ներքին ուրախությունը։ Նրա մեջ հաջող աշխատանքից ստացած բավականությունն էլ է բերկրանքի աղբյուր հանդիսանում,—այդ երևաց այն ժամանակ, երբ հետո հնձվորներն առանձին պարծանքով ասացին.

— Լավ հնձվոր է, օրեկան մինչև 5 հազար խուրձ է կապում...

— Թե որ շատ հնձեք, ավելի՛ն կկապեմ,—պատասխանեց մարդն ուրախ։

Բայց ինձ թվում է, թե այդ բոլորից զատ ու այդ բոլորից վեր մի զգացմունք կա այդ մարդու մեջ, որն իր բոլոր նոր ուրախությունների սկզբնաղբյուրն է և որը նա արտահայտեց այս անպաճույճ բառերով.

— Մե՛ր երկրում եմ, մե՛զ համար եմ աշխատում, էլ ի՞նչու լավ չպիտի աշխատեմ...

Հուլիս, 1947 թ.

ՄԱՆԻՇԱԿԱԳՈՒՅՆ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄ

(Շրջագայություն պատերազմից առաջ)

1.

Ես գլուխս դուրս հանեցի տուփաշեն շենքի բաց պատուհանից, և իմ առաջ բացվեց Ախուրյանի ձորն իր փրփրաբաշ ջրերով։

Արևն իր վարսերը հավաքեց դեղին-ոսկեգույն դաշտերից և անցավ մանիշակագույն լեռների հետևը։

Մեղմիկ սվսվոցով եկավ զեփյուռն Ալագյազի բարձունքներից և իր հետ բերեց բյուրավոր ծաղիկների բույրը։

Հասուն արտերը մեկ էլ մեղմիկ ծփացին, արտույտը վերջին անգամ երգեց մարգերի մեջ և ապա այլևս ոչ մի հասկ չօրորվեց, և ոչ մի տերև չշարժվեց։ Երկրի վրա իմաստուն մի խաղաղություն իջավ, իրիկնային մշուշը խտացավ Շիրակի լայն տափարակում, և քառագագաթ Արագածն սկսեց ընկղմվել մուգ-մոխրագույն շղարշի տակ։

Բնությունն սկսեց նիրհել ամառային զով երեկոյի անդորր ու երջանիկ մի քնով՝ Արփաչայի քաղցրալուր վշշոցի տակ։

Ես նորից հիշեցի զով ու լուսնկա երեկոն Ղազախի սարերում, և իմ մեջ նորից ու նորից բորբոքվեց լեռների կարոտը, ծաղկի ու մարգագետնի կարոտը։

Ինձ սթափեցրեց ընկերոջս ձայնը.

— Իսկ դու ո՞ր գյուղերն ես ուզում։

— Տվեք ինչ շրջանի ամենահեռավոր լեռնային գյուղերը,— պատասխանեցի ես և կռացա սեղանին փռված քարտեզի վրա։

Թղթի վրա կապույտ օձապտույտ երակն ինձ տարավ Արփաչայի ակունքը, Արփա լիճը։ Նրանից վերև, Վրաստանի սահմանում, 2.300 մետր բարձրության վրա, մի սև կետ կա։ Մատս դրի վրան և խնդրեցի ինձ ուղարկել այդ գյուղը—Բավրան։

— Շա՛տ է հեռու,—առարկեց շրջկոմի քարտուղարը։

— Ջատ երկիր եմ ասում, է՜, հո՞վ, կանա՞չ, ծաղկո՞տ... հիացմունքը դժվարությամբ զսպելով մեջ մտավ ընկերս, որն աշխատում էր այդ շրջանում և որը տեղյակ էր իմ ճաշակին։

— Տվե՛ք, հենց հեռուն եմ ուզում,—պնդեցի ես։

————

Մյուս օրը ծեգին, մեր ավտոն սլացավ Ամասիայից—Ղուկասյան ձգվող բարեկարգ խճուղով, երկու ժամ անընդհատ լափեց լեռան լանջերով ձգվող դեղին ժապավենը և մեզ դուրս բերեց անսպառ կանաչի ու ծով ծաղիկների մի ընդարձակ սարահարթ, որն ընկած է Աղբաբայի լեռների ամենաբարձր ուսին՝ Ջաջուռից մինչև Ախալքալաքի։

Մեր մեքենան թեթև սլանում է լայնատարած ու փիթխարի այդ գորգի վրայով, ապա թեքվում է դեպի ձախ ու մտնում նոր հնձած հողերը, և չորացող խոտերի շերտերի արանքով մեզ հասցնում է լեռան բարձր լանջը, Հայաստանում ամենաբարձր դիրքն ունեցող գյուղը—Բավրան։ Այդ՝ Հայաստանի և Վրաստանի միացման կետն է։ Այդտեղից է սկսվում Ախալքալաքի շրջանը՝ պատմական Ջավախքն իր փարթամ այգիներով և գեղածիծաղ լեռնային լճակներով։

Այն խճուղին, որ կտրում է ընդարձակ սարահարթը, մեզ թողնում է սահմանում և հարավային վրացական հեռավոր լեռների կանաչ պանորամայի վրա ձգվում է որպես օձապտույտ դեղին ժապավեն՝ մինչև Ախալցիխե և Աբասթումանի։

Մենք իջնում ենք մեքենայից, բարձրանում ենք ծաղկապատ բլրակը և նայում հյուսիս՝ Ջավախքի լեռնաշխարհին։

Մեր ոտների տակ, լեռնային կանաչավետ մի գոգավորության մեջ, մուգ կանաչ ֆոնի վրա, կապույտ ու արծաթ ճաճանչներով մի հսկա սկուտեղ կա։ Կարծես երկնքի կապույտ լազուրից մի

կտոր պոկվել ու ընկել է բարձրավանդակի այդ գոգը: Ջավախքի լճակներից է դա, առափնյա իր փարթամ շամբուտով և վայրի բադերի երամներով:

Մի գուցե դա պատմական Խաչլվա լիճն է, որի մթին խորքերում պահվում է ավանդական հավլունի թուրը. քանի որ նա փոթորկոտ է ու կատաղի, երբ լեռնային խստաբարո բնության տարերքը խառնվում են իրար:

Կամ մի գուցե ավանդական Փարվանա լիճն է, որ առաջացավ կտրիճին սպասող Փարվանա կույսի արցունքներից, քանի որ նա ջինջ է ու հստակ, որպես կույսի արցունքը:

Հավանաբար ոչ այս է, ոչ այն. Ղարսից հյուսիս-արևելք ընկնող լեռնաշխարհի խառնարաններում ու գոգավորություններում ծփացող գեղանի լճերից է, որոնք այնքան առատորեն կապույտ խալեր են կազմել Անդրկովկասի աշխարհագրական քարտեզի այդ մասերում:

Մոտենում ենք լճակին: Լեռներից փչող հովը կնճռոտում է նրա պայծառ ու թափանցիկ դեմքը, ու կոհակները խայտալով խաղում են ափի ավազների հետ: Եղեգնուտից աղմուկով վեր է բարձրանում վայրի բադերի մի ստվար երամ: Օդը լցվում է թափահարվող թևերի շափշափյունով: Մենք հափշտակված նայում ենք ջինջ ջրերին և ապա ետ ենք դառնում ու գյուղի թիկունքով բարձրանում ենք Օքսուզ-Դաղ (Որբ-Սարը), որի լանջերին զրնգում է գերանդին:

Այդ լեռան արևելյան լանջը գորշ է և վերից վար ձգվող գորշ-մոխրագույն երակներ ունի: Այդ՝ չորացող խոտն է կանոնավոր շարքերով ձգվող «լասերում», որը հնձվել է երեկ և այժմ դանդաղորեն գույնը փոխում է արևի ու քամու ազդեցության տակ: Այդ շերտին հաջորդում է մուգ կանաչ լասերով լայն մի շերտ, որ ձգվում է կատարից մինչև ստորոտը: Սովոր աչքն իսկույն կնկատի, որ այդտեղ նոր միայն գործել է գերանդին, գործել է կոլտնտեսական ջոկատը և արևի երեսն է հանել մուգ կանաչը, որը մինչև հնձելը պահված է ծաղկած ու արդեն գույնը փոխող խոտի ցողունների տակ: Ապա գալիս է չհնձված խոտհարքը, որ լեռան արևմտյան լանջով իջնում է ցած ու ծով կազմում լեռնային տափարակում: Այս շերտն արդեն դեղին-կարմրագույն երանգներ ու-

նի, թեև նրա խորքը դեռ կանաչ է զմրուխտի պես։ Այդ նշան է, որ խոտը հասել է։

Մուգ կանաչ շերտն այժմ լայնանում է մեր աչքի առաջ։ Հեռվում, սպիտակ ու գորշ կետեր են երևում, որ շարժվում են ցած և նրանց հետևից գծվում են մուգ կանաչ գծեր՝ կանոնավոր շարքերով։ Ապա, երբ առաջին շարժվող կետը տեղ է հասնում, մի պահ կանգ է առնում, արևի ճառագայթների տակ փողփողում է պողպատը, և լսվում է մուրճիկի ականջ շոյող միալար թրխթրխկոցը։

Այդ՝ Սողոմոն բիձի օղակն է, որ վարպետորեն խուզում է լանջը վերից վար։

Երևանի փոշուց ու շոգերից հետո հով ու զմրուխտ այդ լանջերին բացօթյա քնելու բուռն ցանկություն եմ զգում։ Մենք պառկում ենք թավիշ կանաչի վրա և ննջում մեղմ զեփյուռի շոյանքի տակ։

Կռնչում է անգղը բարձրաբերձ ժայռի գլխին, և կարծես երազում լսում եմ ծեծվող գերանդու ախորժալուր չխկչխկոցը՝ դիմացի լանջերից...

2.

— Կոմսոմոլ բալա՛, արևդ կծեմ... ե՛լ զարկենք, զարկվենք։

Այդ՝ լեռնաշխարհի ամենահայտնի հնձվոր Սողոմոն բիձեն է ձայն տալիս իր որդուն—կոմերիտական Պետրոսին։

Դեռ աղամամութին նրանք հեսանները գոտիները խրեցին և ընթացան շաղոտ մարգագետիններով։

Այնտեղ զրնգում է Ռոստոմի հնձիչը, որ լայն մի շերտ քերելով ընթանում է «Ստալինեցի» հետևից։ Այնտեղ ծիաքաշ փոցխերը մաքուր սանրում են կոկ լանջը և իրենց հետևից թողնում են չոր խոտի մանր կույտեր։

Սակայն սովետական հսկա տնտեսությունը, որ հեռավոր Արագածից մարդիկ է ուղարկել իր խոտն այդ լեռներում հայթայթելու, միայն մեքենայով իրեն ապահովել չի կարող։

Դրա համար է վաղ վեր կացել Սողոմոն բիձեն։

Երեկ ռայկոմի քարտուղարը խոսեց և լավ խոսեց։ Սողոմոն բիձեն այս գիշեր շուտ ու մութ եկավ և անհանգիստ նիրհի մեջ գերանդին սրեց։

— Կոմսոմոլ բալա՛, ե՛լ, ղուրբան քեզի, ճաշ դառավ։

Երբ մթնշաղի մեջ կորան Ղարախաչի բարձունքները, լիալուսինը ժպտաց Ալագյազի ուսից։ Լանջերը ողողվեցին կաթնագույն լույսով։ Պողպատի զրնգոցը դադարեց մարգագետիններում և լռեց հնձող մեքենայի աղմուկը։

Միայն երկու հնձվոր բանեցին մինչև առավոտ, և ողջ գիշերը լսվեց գերանդու ախորժալուր խշշոցը, ընկնող խոտի մեղմ շըրշյունը։

Երբ աստղերը գունատվեցին, ծերունի հնձվորը կանգնեց, հենվեց գերանդու կոթին և նայեց Արագածի կողմը։ Արևելքում, բարձր երկնակամարի վրա, միայն մի աստղ էր մնացել՝ սառն ու պայծառ ցոլքերով։ Արագածի քառագագաթ բարձունքները հետըզհետե դուրս էին գալիս վաղորդյան մուգ մոխրագույն մշուշից։

Հետզհետե գունատվեց և պայծառ աստղը։ Վաղորդյան սառը քամին շոյեց նարգիզի թերթիկները։

— Շունչ առնենք, կոմսոմոլ բալա, լուսաստղն էլ մաշվեց։

Շաբաթը դեռ չէր լրացել։

Շրջում էր ռայկոմի քարտուղարը մարգագետիններում։ Նա զարմանքով տեսավ, թե ինչպես լեռան ահագին լանջը բաց կանաչագույն մարգերի է վերածված։ Այդ՝ Սողոմոն բիձի հմուտ բազուկն էր գեղեցիկ լասեր արել կանաչ լանջերին, և լեռը նախշել էր, ինչպես հմուտ նկարիչը՝ կտավի վրա։

Կա՞ ավելի սքանչելի պեյզաժ, քան կերտել է առույգ հողագործի գերանդին զմրուխտյա այդ լանջերին։

3.

Հինգ օր անընդհատ անձրև էր տեղում։

Ամպը որոտում էր Ղարախաչի բարձունքներում և կայծակը փայլատակում էր լճակի այլայլված ջրերի մեջ։

Ուժը նիրհում էր բազուկներում, և խոտը ծանրանում էր հընձած լասերում։

Ոչ ոք այդ օրերին Սողոմոն բիձի մշտուրախ դեմքին ժպիտ չտեսավ։

Նա խրճիթի կիսաբաց դռնից կսկիծով նայում էր մթագնած երկնքին, և նրա փորձառու աչքը պարզ եղանակի նշաններ էր որոնում արևմուտքում։

Հինգերորդ օրը, երբ ողջ երկնակամարը նորից մթին էր և երկինքն անձրևում էր առատորեն, Սողոմոն բիձեն մի կտոր հրատակ լազուր տեսավ արևմուտքում։

— Քամակը պարզեց, կոմսոմոլ բալա, գերանդիդ հազրիր։

Որդին տեսավ հրեղեն օձը երկնքում, լսեց ահեղ դղրդյունը և հուսահատ նայեց հորը։

Բայց ծերուկի դեմքն ուրախ էր և նա լեռնական մի եղանակ սուլելով «ծեծում էր» գերանդին։

Կարծես ծանր կապարն ընկավ մարդկանց սրտերից, երբ Սողոմոն բիձու մուրճիկի հարվածների ձայնը պատուհանների ճեղքերից ներս խուժեց։

— Տղե՛րք, պատրաստվեք, հիմի երկինքը կպարզի։

Կա՞ ավելի դյութիչ տեսարան, քան ծաղկոտ ու կանաչ լեռնաշխարհն է անձրևից հետո, երբ արևը ժպտում ու բազմերանգ կամար է կապում երկնքում, երբ ամպերի արանքից ոսկեզօծ շողերն ազատագրվում են կապանքներից ու վիթխարի լուսարձակների նման առատ լույսի խուրձեր են սփռում զմրուխտյա մարգագետիններում, երբ կաթիլներն անհամար ադամանդների նման փայլփլում են կանաչի ու ծաղկի վրա։ Կարծես բնությունը ներկայանում է իր բոլոր սքանչելիքներով, իր փառահեղ զգեստներով և ադամանդյա ժպիտներ է շաղ տալիս ալպիական բարձրավանդակի վրա։

Նորից կենսարար հեղուկն աշխուժորեն վազեց երակներում և վեր պարզած գերանդիները նորից առկայծեցին ազատագրված արևի շողերի տակ։

Երբ հարևան օղակի հետ մրցման պայմանագիր կնքվեց, Սողոմոն բիձեն ամուր թքեց կոշտացած ձեռքերի ափերի մեջ, ափերն իրար քսեց, աջ ձեռքի բթի արմատով «սղալեց» ցանցառ բեղերը և օղակի առաջն ընկավ։

Նրան հետևեցին վեց քաջարի գերանդիավորներ։

Ես մոտիկից դիտեցի այդ փոքրիկ մարդու հունձը։

Նա ոտքերը դրել է լայն և գերանդին պտտում է երկայնահասակ մարդուց էլ լայն։ Նա թեքվում է դեպի աջ, խոտը քերում է հեռվից, ապա գերանդու հետ գալիս ու ճոճվում է դեպի ձախ, և խոտը բարդվում է առատությամբ։ Եվ լասը լայն վերցնելու համար այդ մարդը շարունակ ճոճվում է աջից ձախ։

Նա չի հնձում, այլ մաքուր կլպում է երկրի երեսը, «թրաշում» է կոկիկ, և երկրի մակերեսը դառնում է «ռանդած» տախտակ:

Նրա խոտի լասն այնքան առատ է, որ, ինչպես օղակի անդամներն են չափազանցրած ասում՝ «շվաք է անում հարևանի լասի վրա»:

Եվ այսպես, հանդիստ առաջ է գնում, կարծես առանց լարման և ոչ մի մկան չի շարժվում նրա դեմքին: Հաստատ ու միալար, մինչև «յոնի» վերջը:

Երբ նա ավարտեց «յոնն» ու ետ նայեց, օղակը համաչափ զարկերով առաջ էր ընթանում «յոնի» կիսում: Նա աշադ սրեց գերանդին, վերադարձավ, նորից «յոն» վերցրեց և արագ ծրեց վերևից ներքև: Ես ավելի մոտիկից դիտեցի նրա հունձը. նրա գերանդին մեղմ ֆշշոցով այնպես արագ է անցնում խոտի տակով, որ ցողունները չեն զգում, որ անջատված են արմատից, մեկ տասներորդական ակնթարթ կանգուն են մնում և ապա սվսվոցով գնում են գերանդու հետ ու բարդվում լասերում:

Սողոմոն բիձու գերանդու ֆշշոցն ուրվականի նման հեռվից հալածում է հնձվոր խմբին: Մարդիկ լարվում են, ուռչում են նրանց վզի երակները, և առնական ու հմուտ այդ հնձվորները, որոնց նմանը ես քիչ եմ տեսել, հուզվում ու շփոթվում են փոքրահասակ ծերունու գերանդու ֆշշոցի առաջ:

Ղալը Օհանեսը,—որ երեկ փափուկ պաշտոն ուներ կոլտնտեսության մեջ և իր մեջքը քրտնեցնելու ոչ մի մտադրություն չուներ, խուճապի մատնվեց,—վտանգը մոտենում էր:

— Կրունկներդ աղացի հա՜... ը՜ը՜ը, հաջաթդ կտրի՛, հաջա՛թդ...

Ղալը Օհանեսը վիզը ձգում է տանջալի, ամեն քայլից հետո սրում է գերանդին և շունչ առնելու համար ոչ մի պատրվակ բաց չի թողնում:

Ընդհանուր քրքիջի տակ, քրտինքի մեջ կորած, նա, հազիվ հասավ «յոնի» ծայրը և այս անգամ էլ փրկվեց Սողոմոն բիձի հալածանքներից: Բայց Սողոմոն բիձի կծու լեզուն խնայել չգիտե: Կուլան գլխին քաշելուց և բավականությունից փռթացնելուց հետո, նա դարձավ Օհանեսին՝

— Տո, ի՞նչ ես զրփում անատամ գոմշի պես. թրաշի՛ր ածելու պես, թրաշի՛ր:

Ապա հնձածն ստուգելով, նա նորից Օհանեսին դարձավ.

— Չէ, բալամ, նախիրը բեղամաղ չի լինի քեզանից, նախրի փայը բոլ ես թողել...

Բարձրացավ ուրախ մի քրքիջ:

Եվ նորից սաստկացավ հունձն Օքուզ-Դաղի լանջերին, սաստկացավ մրցումը երկու հմուտ հնձվորների՝ Սողոմոնի և Թոմասի օղակների միջև:

4.

Խիզախ մարդիկ են կոլխոզնիկները:

Նրանք դեռ աշնանը խոր, շատ խոր հերկեցին խոպան հողերը, կոշտերը քրքրեցին երկաթե փոցխերով: Աշնան անձրևը, ուշ աշնան ձյունը քայքայեցին հողի մակերեսը: Ցելը նիրհեց հաստ ձյան շերտի տակ և ապրիլին ագահությամբ ներս ծծեց հալված ձյունը՝ մինչև վերջին կաթիլը: Հողը հերկած էր խնամքով, ամենամեծ համարի գութանով, և ջուրն ամբարվեց ցելի ընդերքում: Երկրորդ բրիգադը զտած և ախտահանած սերմը պահ տվեց սև ցելում, հողը երեք անգամ Ռոստովի «զիգ-զագով» քրքրելուց հետո: Իսկ երբ արտը բարձրացավ, կոլտնտեսական կանայք ուրախ կատակով արմատահան արին մոլախոտը:

Այս բոլորը նոր էր հեռավոր Բավրա գյուղի համար:

Եվ այժմ զեփյուռի առաջ հանդարտ ալեկոծվում է կանաչ ծովը:

Կարծես հանճարեղ մի արվեստագետ ձևավորել, կոկել է լայնատարած արտի կանաչ վարսերը:

Մեր ձիերը կայտառ քայլում են համատարած կանաչի միջով ձգվող գորշ շավղով:

Ես հարցնում եմ մեզ ուղեկցող մարդուն.

— Ինչքա՞ն կստանաք հեկտարից:

— Քսան-քսանհինգ ցենտներ, եթե սլոլը չտանի:

— Իսկ անցյալում մենատնտե՞սը:

— Ութը-տասը,— ու ավելացնում է.— չութով էին վարում, ցելը չգիտեին ինչ է, քաղհան չէին անում, մի խոսքով՝ նրանք ո՞ւր, մենք ուր...

— Բայց էդ սրա սածդ ե՞րբ է վտանգավոր:

— Հենց հիմի էլ: Մի քանի օր առաջ, երբ մեզ մոտ անձրև-

ներ էին, գյուղը սուգ էր մտել։ Լուսադեմին եղյամ դրե՛ց—էլ հաց չես վերցնի։ Մի տարի օգոստոսին արտերը ցրտին տվինք։ Էս ուր է՞, ձեզ մոտ մի ամիս է հնձում են, իսկ մեզ մոտ տես՝ ցորենը նոր է ծաղկում։

Իսկապես, ցորենը մուգ-կանաչ էր, իսկ միքանի արտ դեռ հասկ չէին գցել, թեև մի շաբաթ էր, ինչ մտել էինք օգոստոս։

— Շատ չէ, տասն օր էլ որ դիմանա, էլ մեր հացին հաց չի հասնի։ Էսպես բերք Բավրայի պապն էլ չի տեսել. աշխօրին մի փութը նաղդ է...

Մենք դուրս եկանք արտերի մուգ-կանաչագույն պեյզաժից, և մեր առաջ փռվեցին ալպիական փարթամ արոտները։

Այստեղ փռվել է համայնական նախիրը՝ կաթնառատ ու խոշոր կովերով։

— Ուկրաինական սորթ է,—բացատրում է մեզ ուղեկցողը։

Հեռու, սարի ուսով, հովի նման արագ մի բան է անցնում. նրան հետևում է երկրորդը, երրորդը, չորրորդը, ապա ստվար մի խումբ արշավում է ու վայրկենապես անցնում սարի մյուս երեսը։ Ընկերս, որ որսի սիրահար է, լարում է տեսողությունը, եղջերվի նախիր հո չի՞...

Այդ՝ կոլտնտեսության նժույգների երամակն է ալպիական բարձրավանդակներում։ Երեկ մենք այդ երամակը տեսանք գյուղում։ Նրանց մաշկը փայլփլում էր ոսկեզօծ բեհեզի նման, իսկ իրենք կլորիկ էին ու կայտառ։

Մենք կանգ առանք մի կանաչ բլրակի վրա և ետ նայեցինք։ Թոմաս բիձու օղակը հնձում է լեռան ստորոտում։ Նրան զուգահեռ ու քիչ վերև Սողոմոն բիձու օղակն է։ Իսկ ամբողջ լանջովը մեկ ծփում է կանգուն խոտը։ Ցինիշը լեռան գագաթն է։

Գյուղի մոտ, առվակի եզերքին կթվում է կոլտնտեսության ոչխարի հոտը։ Ապա մեկը բարձրանում է քարի գլուխը, գլխարկը շարժում է օդում ու բղավում առողջ թոքերով.

— Գյալ հո՜ո՜... (արի հե՜յ...)։

Կիթը վերջացել է, գառներին է կանչում։

Քիչ անց մի մահակ է շարժվում դիմացի լեռան ուսին, և լեռան լանջի կանաչ ֆոնի վրա շագանակագույն գոտի է կապվում։

Այդ՝ գառներն են վազում լանջով դեպի ցած, գարնանային պղտոր առվակի նման։

Գառների ու մայրերի մայունը բռնեց ողջ շրջակայքը և միախառնվեց գերանդիների զրնգոցին։

Կոլտնտեսական գյուղի առօրյան է,—պարզ, սրտառուչ ու պայծառ...

Միջօրեի արևը տաքացնում է հանդը, ցողն արագ վեր է կենում և բարակ, հազիվ տեսանելի գոլորշի է բարձրանում հնձած թաց խոտից։

Եվ երբ խոտը ցեղնեց և խշխշաց, բլրակի ուսից օդում ճոճվեց Սողոմոն բիձու գերանդին և լսվեց նրա խռոխտ կանչը.

— Այ հուրի-փերինե՛ր, խոտը չորացավ, հասեք հա՜...

Ապա նստեց եռոտանու վրա և ձորակն արձագանքեց նրա միալար չխչխկոցին։

Իսկ երբ մենք նորից հեծանք ձիերը, կթվոր կանայք փայտե փոցխերը օդում ճոճելով, զվարթ կատակներով, գյուղից դուրս եկան ու դիմեցին դեպի խոտհարքը։ Նրանց հետևից լասերի հետ խաղում և փափուկ խոտի մեջ գլխկոնձի էին տալիս երկու կայտառ մանուկներ և մի բրդոտ շնիկ։

Փոցխավոր կանանց նոր խմբեր հետևեցին նրանց։ Կարծես ողջ գյուղը դուրս թափվեց. արևմուտքում ամպ էր երևացել։

Իսկ երբ մենք թեքվեցինք դեպի աջ և սարի հետև անհետանալուց առաջ ետ նայեցինք, մարգագետինն արագ ծածկվում էր չոր խոտի անթիվ ու անհամար բլրակներով։

5.

Ձթե շապկավորների խումբը դագաթը հասավ և խորը ներս ծծեց լեռնային անապական օդը։ Քիչ ցած դեռ զրնգում էր պողպատը Թոմաս բիձու օղակում։

Այդ երեք օր հետո էր, երբ մենք վերադառնում էինք Ախուրյանի առափնյա գյուղերից, այն ամուր համոզմամբ, որ հեռավոր այդ բարձրավանդակում անգամ կյանքը հեղաշրջվում է արմատապես, փոխվում է հնամյա գյուղերի տեսքը, փոխվում է հանդ ու դաշտի տեսքը, փոխվում է գործիքը, որով մարդը կռվում է բնության դեմ, փոխվում է դարավոր սովորությունը։ Այդ ամենի հետ փոխվում է և ինքը՝ այդ ամենը փոխող մարդը։

Պլանը, հաշիվը, նոր տեխնիկան, ագրոնոմիան ու զոոտեխ-

նիկան երկրի այդ, երբեմնի խուլ անկյուններն էլ է մուտք գործել։

Երբ մեր ձիերը կոկիկ հնձած յանջին էին մոտենում, լեռան գագաթին արեգակի ճառագայթների տակ պսպղում էր Սողոմոն բիձու գերանդին՝ մի մեծ կտոր ադամանդի նման։ Նա գերանդին անկել էր որպես դրոշակ, որպես իր հարևան Թոմասի օղակին մրցության մեջ հաղթելու ազդանշան։

Վաթսունամյա ծերուկը կանգնել է լեռան բարձր գագաթին, շողշողացող գերանդու մոտ, ձեռքը դրել է արևից խանձված ճակատին և նայում է իր ոտների տակ փռված զմրուխտյա հովտին։

Արևմուտքում ձգվում են Բին-Գյոլի բարձունքները, իսկ դեմը՝ գագաթների շուրջպարից այս կողմ, հսկա մի հակինթի նման փայլփլում է լճակը։ Նրա շրջապատի եղեգնուտները կանաչ են — դեղնագույն երանգներով։ Լճակից դուրս է գալիս Արփաչայը, հանդարտ հոսում է լեռնային ընդարձակ տափաստանով, որպես արծաթե փայլուն գոտի՝ մուգ կանաչ ֆոնի վրա։ Կանաչ այդ հովիտը Հայաստանի տորֆի աշխարհն է, որի մակերեսի վրա խոտն աճում է փարթամորեն, և ուր վայրի հռնդյունով հնձում են հեռավոր Ռուսիայից բերված մեքենաները։

Հոսում է գետը հեքիաթային սարահարթով, հոսում է երկու տարբեր աշխարհների միջով...

Նայում է հնձվոր ծերունին՝ ձեռքը դրած բրոնզյա ճակատին, և ընկղմվում է մտքերի ծովի մեջ։

Նայում է ու մտածում, թե ո՞ւր կորան Իսմայիլ բեգը, Սանդրո աղան, Դալի Յուսուֆը, ո՞ւր մնացին էն ժամանակները։ Նա մտածում է, որ կանաչ հովիտը խորթ էր իրեն ու անհասանելի — այնտեղ փռված էին բեգական երամակները։ Նայում է ու մտածում, որ այնտեղ՝ հովտում այժմ Խանչալլի կոլխոզն է, որի ամեն մի անդամին, եթե մտքով բաժանես, «մի կուլակի չափ տավար ու ոչխար է հասնում»։ Իր ոտների տակ փռվում են Գյոլլի, Ղարանամազ, Շիշթափա, Դուզքենդ գյուղերի խոտհարքները, որոնք ձգվում են մինչև Արփաչայի արծաթափայլ ջրերը։

Նա մտածում է, որ այդ կոլխոզների տավարը շա՛տ շատ է, և ադրբեջանցի հարևանն ապրում է ու լավ է ապրում։ Եվ այն, որ նա լավ է ապրում, ուռցնում է կոլխոզնիկ Սողոմոնի կուրծքն անկեղծ բերկրանքից։ Ապա նա նայում է արտերի ծփացող ծովին և մտածում, որ հիմի «Ռուսեթում» էլ էդպես շատ արտեր կան և

այդ բոլորը մերն է։ Նա վճռական մի շարժում է անում, ապա քլքլալեն սառնորակ ջուր է խմում կավե սափորից, վերցնում է գերանդին ու կանչում է որդուն զրնգուն ձայնով.

— Ե՛լ, կոմսոմոլ բալա՛, Թոմասը էտ մնաց, ե՛լ օգնենք, էն կտորն էլ դուրս գցենք, ավինդը* լավ չի երևում աչքիս։

— — — —

Եվ մենք հեռվից դեռ երկար-երկար տեսնում էինք Սողոմոն քեռու գերանդու փայլը ու լսում էինք ծեծվող գերանդու աշխուժալուր չխկչխկոցը մանիշակադույն բարձունքներից։

---

* Ավինդ—եզանակ։

ՆՈՐԻՑ ԾԱՆՈԹ ԽՆՁՈՐԵՆՈՒ ՎՐԱ

1.

Շատ տարիներ հետո ես նորից տեսա այն աղջկան դեղին-ոսկեգույն սաղարթների մեջ, ծանոթ խնձորենու վրա։

Նա զամբյուղը կախել էր ճյուղից և ճարպկությամբ քաղում էր դեղնող խնձորենու վերջին պտուղներն ու զգուշությամբ դարսում զամբյուղի մեջ։

Եվ վաղո՜ւց, շատ վաղուց, տարիների մշուշում կորած քաղցըր մի հուշ զարթնեց իմ մեջ։

Ես նորից մտքով սլացա դեպի կանաչավետ ու ծաղկափթիթ մեր լեռները, դեպի մեր թավշյա մարգագետիններն ու կուսական փարթամ անտառները, ուր եղնիկների հետ, եղնիկների պես անհոգ ու կայտառ անց եմ կացրել իմ մանկության օրերը սևաչյա այդ աղջկա հետ...

2.

Բարձր լեռան ուսին, փոքրիկ մի գոգավորության մեջ, լեռնային ցրտաշունչ քամուց պատսպարվել էին մեր վրանները։ Սարահարթի ծայրին, արագիլի քանդված բնի նման, մի քարի տակ կուչ էր եկել նրանց վրանը։

Աղքատ էին, շատ աղքատ։ Հայրը հովիվ էր, իսկ մայրը հարևանների կովերն էր կթում։

Հուլիսյան պայծառ օրերին, երբ արևը ջինջ զենիթից հաղ-

թանարում էր լեռնային հովը, ես ու նա վազում էինք լեռան կանաչ լանջերով, թավալգլոր իջնում էինք ցած՝ լեռնային վտակի ափը, ուր ջուրն անագին ժայռից թափով ցած էր իջնում, խփվում քարերին ու ադամանդի անհամար հատիկներ ցրելով, սքանչելի ծիածան էր կապում։

Հիշում եմ, բարձրանում էի կաղնիների կատարը և ցած բերում ագռավի կապտավուն ձվերը։ Որպիսի՜ բավականությամբ էինք ձվերը գլորում զմրուխտ կանաչի վրայով։

Ես բարձրանում էի հինավուրց լորենին, կտրտում նրա ճյուղերն ու թութակներ պատրաստում։ Մենք անհոգ, թութակ էինք փչում։

Իսկ երբ մառախուղը պատում էր, կայծակը շանթում էր լեռան կուրծքը, մենք պատսպարվում էինք մթին ու խոնավ քարանձավներում և սպասում էինք կենսատու արևին։

Ամառային լուսնկա գիշերին վրանում պառկած՝ չաթանի ճեղքերից ներս էի ծծում զեփյուռի հետ եկող ծաղիկների բույրն ու անձկությամբ նայում էի հանդիպակաց փոքրիկ վրանին, ուր մո՜ւշ-մո՜ւշ, հովվի սրնգի մելամաղձոտ նվագի տակ ննջում էր նա։

3.

Մի օր մայրս մտավ վրանը և տխուր ասաց.

— Վարդին կնյազին են տալիս։

Շանթահար եղա։

— Ինչո՞ւ,—հազիվ կարողացա հարցնել ես։

— Է՜... որդի՛, քյասիբության տերը մեռնի, քյասիբությունը չիգյար չի հարցնում։ Տալիս են կնյազին, որ բոստանը պահի, ջրի, մի քանի մանեթ պարտք ունեն, տեղը դուրս գա։

Այսպես բացատրեց մայրս ու սկսեց օջախը վառել կաթ տաքացնելու համար։

Ես գլխիկոր ու տրտում իջա անտառ և ամբողջ օրը թփերի մեջ պառկած մտածում էի։

Մյուս օրը նա մոր հետ, մի խուրջին շալակին, վարանոտ քայլերով շարժվում էր սարահարթի ծնկահար խոտերի մեջ։

Դյուղ էր գնում, որտեղից պետք է տանեին կնյազի ագարա-

կը: Հարթության պանկին հասավ, մի վայրկյան կանգնեց, ետ նայեց: Ես հազիվ արցունքս զսպելով, փափախս բարձրացրի ու թափահարեցի օդում:

Չգիտեմ նկատե՞ց, թե ոչ, ու անհետացավ...

Այնուհետև ես երկար ժամանակ չտեսա նրան, սևաչյա, մերկ ու փոքրիկ ոտիկներով այն աղջկան...

4.

Գավառական քաղաքից վերև, ծառազարդ ու արգավանդ հովտում շրջակայքին տիրականորեն իշխում էր կնյազ Ճավճավաձեն, վրաց Հերակլ թագավորի ազգականներից մեկը:

Դեռ ափին ընկած բերդի սևահող շերտերի վրա կանոնավոր շարքերով աճում էին կնյազի պտղատու ծառերը: Օդը ժխորված էր նրա մեղուների բզզոցով, իսկ կնյազի երկհարկանի ու թիթեղյա կտուրով գեղեցիկ «ամարաթը» վեհությամբ բազմել էր գետափնյա ծառազարդ բլրակի վրա:

Եվ իշխում էր ազնվազարմ կնյազ Ճավճավաձեն հովտի, վայրի տանձուտի և դիմացի լեռան լանջերը պատող փարթամ անտառների վրա:

Վայրի պտուղներն առատությամբ թափվում ու փտում էին խոնավ «խաշամի» տակ:

Հաղարջն ու մոշը չորանում էին թփերի վրա: Հաճարն ու կաղինը ձյունի տակ էին մնում ու ծլում հաջորդ գարնանը: Ո՞վ կարող էր մի տանձ վերցնել, մի ճիպոտ կտրել այդ անտառից:

Անտառն անարատ պիտի մնա: Թող նրանում անդորր կյանք վարեն ու բազմանան եղնիկներն ու պախրաները,—Թիֆլիզից ամառանոց եկող ազնվազարմ հյուրերը որսի պիտի գնան, զվարճանան:

Եվ մենք, հարևան գյուղի բնակիչներս, վախով էինք նայում կնյազի բաղին, կնյազի անտառին:

5.

Անցան ամիսներ: Աշնանը ես արդեն հաճախում էի Դիլիջանի ծխական դպրոցը:

Հիշում եմ, մի օր դպրոցից տուն վերադառնալիս, անցանք կնյազի այգու մոտով։ Ցանկապատի արանքից գլուխս ներս խոթեցի։ Ահա նա՝ լեռան աղջիկը։ Ոտաբոբիկ կանգնել է մարգերում և ցնցուղով ջրում է ծաղիկները։ Մատներս բերանս դրի, լեզուս ծալեցի և սուլեցի զիլ, այնպես, ինչպես մեր լեռներում։

Նա ծանոթ սուլոցից ցնցվեց, ցնցուղը վայր դրեց և ինձ տեսնելով, գաղտագողի մոտեցավ ցանկապատին, բարևեց և տխուր ու կարոտագին ժպտաց։

— Իմ նանը ո՞նց է,—հարցրեց նա։

— Լավ է, օրը մի մեջոկ տանձ է հավաքում քոլիցը,—մխիթարելու համար պատասխանեցի ես։

— Էլի թութակնե՞ր ես շինում... Ինքա՞ն եմ կարոտել մեր հանդերին,—ասաց նա այնպիսի կարոտով, որ կարծես տարիներ ի վեր գերության մեջ լիներ։

Ես զգացվեցի։ Նա այդ նկատեց և կեղծ ուրախ ձևանալով, սկյուռի նման մագլցեց խնձորենին։

— Փափախդ բռնի՛,—ասաց նա սաղարթների միջից։

Փափախս դեմ արի։

Նա փափախիս մեջ մի քանի խնձոր գցեց, ապա թռավ ցած և մի մեծ դեղին խնձոր մեկնեց ինձ։

Հիշում եմ, վերցրի, բայց շատ ամաչեցի։

— Էլ կգաս, չէ՞,—հարցրեց նա բաժանվելիս՝ այնքան տխուր շեշտով, որ նոր նկատեցի, թե ինչպես մարել է նրա աչքերի փայլը։

— Քեզ լա՞վ են պահում,—հարցրի ես։

Նրա աչքերի մեջ արցունքներ երևացին, և լուիկ ու արագ քայլերով հեռացավ։

Խե՜ղճ աղջիկ, գերված այծյամի նման օրըստօրե թառամում է։

Մի քանի օրից հետո նրա մայրը պատմեց, որ վերակացուն աղջկան ծեծել և գցել է անասունների ախոռը։

Հասկացա, որ իմ մեղքով էր դա ու վրեժի զգացումի հետ խղճի խայթ զգացի։

Հետո լսեցի, որ նա մի քանի օր հիվանդ ու անօգնական ընկած է եղել ախոռում։

Իմ պատանի միտքը դժոխային մեքենայություններ էր որոճում կնյազի ու նրա այգու վերակացուի դեմ։

6.

Այդ օրից մի քանի տարի անց, մարդկանց երկաթե հեղեղը գարնանային հորդացած գետի նման սրբեց-տարավ հովտում արմատակալած բռնությունը, քանդեց զեխության ու ցոփության մարմարյա որջերը...

Եվ բացվեց մի նոր ու լուսավոր առավոտ մեր լեռնոտ երկրի վրա։

7.

Ստեղծագործ հարվածների տակ հովիտը փոխում էր իր կերպարանքը։

Մեր սայլերը կանգ առան գետափին այն պահին, երբ պայթեցին դինամիտները, և դարավոր կաղնիները դղրդյունով թափվեցին ցած։

Կնյազի այգու նոր, իսկական տերերը արմատահան էին անում հնամենի ծառերը, որոնց տակ կնյազը խրախճանքի գիշերներ էր լուսացնում, արմատախիլ էին անում, որպեսզի արևը կենդանու տաքություն հաղորդի ծմակի սառը հողին, և սովխոզի տնկարանի մատղաշ տնկիները բոյ քաշեն։

Հայրս՝ բանիահ Ստեփանը, Ղալմանց Արթինը, Մարկոսանց ուստա Ակոփը և չորս հարյուրի չափ ջլուտ բանվորներ գետի հատակից քարեր էին հանում և ամբարտակներ կառուցում գետի երկայնքով՝ հովտում նոր հիմնադրվող թանկարժեք կուլտուրաները կատաղած գետի հեղեղումից պաշտպանելու համար։

Իսկ մենք քանդում էինք բլրի կուրծքն ու սայլերով հող բերում ամբարտակներն ամրացնելու համար։

8.

Կեսօրվա հանգստի ժամին, երբ ես հողոտ ձեռքերով հացը բռնած՝ կրծում էի ախորժակով, հանկարծ, բոլորովին անսպասելի կերպով հայտնվեց Նա՝ ջրով լիքը դույլը ձեռքին։

— Կոմսոմոլ ընկեր, ջուր խմի՛ր, բկումդ մնաց,—ասաց Նա ժպիտը դեմքին։

Շփոթվեցի։

Հայրս նկատեց և բարությամբ ժպտաց։

Դույլից ջուր խմեցի։ Հետո հարցրի, թե ինչ գործ ունի այստեղ։

— Էնքան գործ կա՜... ծոր տվեց նա,—հալա տներ պիտի շինե՜նք, հալա պանրի ղավոդ էլ ենք շինելու՜...

Եվ անմիջապես ճառը դադարեցնելով, դույլը վերցրեց ու դեմքին կեղծ խիստ արտահայտություն տալով ասաց.

— Ինչ ես թամբալություն անում, հիմի էլ հո կնյազինը չի։ Տղամարդի պես աշխատի, տղամարդի... Ը՛հ, քեզ կոմսոմոլ ասողի...

«Հիմի էլ հո կնյազինը չի»,—այս բառերը երկար ժամանակ մեխված մնացին ուղեղումս, և հետագա օրերին իսկապես որ «տղամարդու պես» աշխատեցի։

Այնուհետև նա մեկ-մեկ հայտնվում էր բահը, ցնցուղը կամ մի այլ գործիք ձեռքին, գաղտագողի ժպտում էր ինձ և արագ իր գործին գնում։

Նա իմ աչքում բոյ էր քաշել և սիրունացել։ Եվ որ գլխավորն էր, այժմ նա ամբողջ օրը սնդիկի նման անհանգիստ շարժման մեջ էր։ Իսկ ես նրա ժպիտներից խրախուսված, ավելի ուժգին էի զարկում քլունգը բլրի կրծքին...

9.

Այդ օրերից տասնամյակներ անցան։ Աշխատում էի այլ շրջաններում, այլ միջավայրում և մեր վայրի ու փարթամ բնության հակադիր այլ բնության մեջ։

Այնուհետև ես դմրուխտ կանաչի փոխարեն տեսա ձյունանման բամբակը և դանդաղաշարժ եզների փոխարեն՝ հոնդացող «պողպատե ձիերի» ջոկատները։ Պայքարեցի նրանց հետ միասին, և անծայրածիր այդ դաշտերում, գոռ պայքարի մեջ հետզհետե մոռացա նրան։

Միայն ամառվա խեղդող տոթին, երբ իմ մեջ բորբոքվում էր հովի կարոտը, մեր լեռների մեղմ զեփյուռի կարոտը, իմ ներսում թույլ առկայծում էր անցյալի մոխիրներում թաղած կայծը...

Վաղանցիկ երազի նման ես նրա՛ն էի հիշում, սևաչյա ու տաքարյուն այն աղջկան...

10.

Մեր ավտոն սլացավ ծառուղիներով, անցավ կամուրջն ու կանգ առավ երկհարկանի նորակառույց մի շենքի առաջ։ Իջանք և գյուղատնտեսի առաջարկությամբ բարձրացանք լեռան լանջը,— այնտեղ, ուր առաջ կնյազի անտառն էր։

Անտառն ստեղծագործ բազուկների գրոհից նահանջել էր դեպի վեր և ամրացել անմատչելի ծերպերում ու զառիվայրերում։

Իսկ ներքևի տափարակները, բերրի լանջերը զիջել են միչուրինյան տնկարանին։

Կայտառ շարքերով ձգվել են մատղաշ տնկիների մարգերը։ Վաղը դրանք ծառաստաններ կդառնան Սևանի լերկ ափերին։

Այստեղ անթիվ-անհամար մատղաշ եղևնիներ են աճում։ Եվ «Կնյազի բաղի» իսկական տերերը խնամքոտ ձեռքերով տեղափոխում են տնկիները Դիլիջանի սանատորիայի շրջակայքի արևոտ լանջերը, բլրակները։ Նրանք աճում են ու այդ ձորը լցնում դուրեկան խնկահոտով և իրենց կենսատու բույրով առողջացնում, թարմացնում և՛ Ալավերդուց եկած լեռնագործին, և՛ Լենինականի դեպոյի խառատին, և՛ ջաջուռցի կոնդուկտորին, և՛ արտաշատցի կոլխոզնիկ բամբակագործին։ Պայծառ արևի տակ աճում ու ժպտում են նրանք, այդ մատղաշ տունկերը՝ մեր ծիծաղկոտ ու կայտառ մանուկների պես։

— Մենք գրեթե ողջ Հայաստանի կեսին բավարարում ենք այս տնկարանից,— պատմում է գյուղատնտեսը,— այնքա՜ն պարտեզներ են հիմնվել մեր տնկիներո՜վ... Տե՛ս, դիմացի գյուղն ինչպես է թաղվել այգիների մեջ, մեր տնկարանի սերունդն է այդ այգիները։ Իրոք, հարևան գյուղը, որ իմ ծննդավայրն է, առաջ զուրկ էր պարտեզներից։

— Իսկ մեր գյուղացիք հիշու՞մ են կնյազին,— հարցնում եմ ես։

— Կնյազի մասին միայն տխուր հուշ է մնացել, իսկ ջահելները կարծում են, թե միշտ էլ այս ձորում սովխոզ է եղել։

Անտառից նոր մաքրված լեռան լանջով ձգվում է ցեմենտակուռ ջրանցքը։ Հինավուրց մի առու էր այստեղ կալվածքի առաջին տիրոջ՝ Բեգմանի օրոք կառուցված։ Այստեղ էր Բեգմանի ջրաղացը։

Հենց այստեղ, ջրաղացի ջրատարից թափվող ջրի փրփուրների մեջ ամեն արևածեգի լողանում էին Բեգմանի աղջիկները։

Այժմ ջրաղացը չկա, իսկ հինավուրց առուն կուլ է գնացել սովետական ջրանցքի լայն երախին։

Այժմ այդտեղ վեր է ելնում շրջանային հիդրոէլեկտրակայանը։

Իսկ հարևան գյուղում հին հովիվ Փեռ Սողոմը, որ կնյազի տիրապետության տարիներին նավթի տեղ **մարխ** (եղևնու արմատ) էր վառում, այդ առավոտ մեր ներկայությամբ ծանր ու հատու թելադրում էր գյուղսովետի քարտուղարին.

— Գրի՛, որ մեր կողմանե խնթրվում ենք տերությունից, որ մեր տունն էլ նմանապես էլեկտրիցկի դցի, քանի որ նավթի լամփեն էս ժամանակին էլ ձեռք չի տալիս։

11.

Սովխոզը հսկա մի ընտանիք է, որի բազմաթիվ անդամների աշխատանքը ընթանում է զարմանալի ներդաշնակությամբ։

Մի մասն ազնվացեղ ու կաթնատու կովերն է կթում, մի մասը կաթն անց է կացնում սերզատով, բանվորուհիները մեքենաներով յուղ ու պանիր են պատրաստում, մի քանիսը կերակրում են «յորկշիր» ցեղի խոզերին, իսկ տավարածները Սեմյոնովկայի ալպիական արոտատեղերում տնտեսության տավարն են պահում։

Հենց այնտեղ, կանաչի ու ծաղիկների ծովի մեջ հպարտորեն կանգնած է նորակառույց պանրագործարանը՝ կարմիր թիթեղյա տանիքով։

Գետափի իջնելիս պատահեցի այն քարին, որի տակ տասնամյակներ առաջ կնյազի վերակացուն հոտաղ ընկերոջս մատները կտրել էր և վերքի մեջ աղ լցրել, խնձոր «գողանալու» համար։

— Լավ կլինի այն քարը պայթեցնենք,—հուզված գոչեցի ես։

Ինձ ուղեկցող գյուղատնտեսը զարմանքով նայեց ինձ։

Երևի այդ րոպեին ես շատ տարօրինակ դեմք պիտի ունենայի։

Ինչ իմանային, որ տխուր հուշեր ունեմ՝ կապված այդ քարի հետ։

12.

Սովետական կուլտիվատորը առույգ կտկտալով անցել է շարքերի միջով և ապահովել հեկտարին չորս հազար փութ ճակնդեղի բերքը։

Իսկ վերևում, ուր մի ժամանակ մենք բոլորն էինք քանդում՝ ամբարտակին հող հասցնելու համար, հաղթականորեն կանգնել է նորակառույց գոմը, ուր սովխոզի ավելացող կովերը ճակնդեղի են սպասում։

— Տնկարանի ու ցանքի համար ամենից շատ ընկեր Ռոզային ենք պարտական,—ասաց մեզ տնտեսության դիրեկտորը, այն բանվորուհի-բրիգադիրի մասին, որը, ըստ երևույթին, շատ էր սիրված հովտի բնակիչների շրջանում։

— Քանի՜ անգամ է Մոսկվա ցուցահանդեսի գնացե՜լ,—ավելացրեց կաթ զտող կինը՝ պարծանքի առանձին շեշտով։

— Ռոզան ուրիշ բալա է, ուրի՛շ...

Ցանկացանք տեսնել անվանի կնոջը։

— Հրե՜ն, բաղի ծերին, խնձոր ա քաղում,—մատով ցույց տվեց մի կին՝ հարող մեքենայի կոթը բաց թողնելով։ Մեքենայի աղմուկը դադարեց մի րոպե և ապա նորից լսվեց նրա աշխույժ չխկրտոցը։

Մեր ավտոն թեթև ծուխ ու բենզինահոտ արձակեց և սլացավ գետափով ձգվող գեղեցիկ ծառուղիով։

Վերջին խնձորենուն մոտենալիս մեքենան ընթացքը դանդաղեցրեց։

Կարմիր գլխաշորով, կապույտ գոգնոցով, սևաչյա և բավական գեղեցիկ մի կին ծառի վրա վերջին խնձորներն էր քաղում ու զգուշությամբ դարսում ճյուղից կախ տված զամբյուղի մեջ։

— Սպասեցե՛ք, խնձոր վերցրեք, ընկերնե՛ր,—զվարթ ձայնեց նա վերևից։

Ավտոն կանգ առավ ծառի տակ՝ նորոգված ցանկապատի մոտ։

Նայեցի վերև։ Մեր հայացքները հանդիպեցին, և նրա աչքերն ինձ ծանոթ թվացին։

Եվ վաղո՜ւց, շատ վաղուց, տարիների մշուշում անհետացած քաղցր մի հուշ, հեռավոր մի կարոտ համակեց ինձ։

— Վա՞րդ... գրեթե ճչացի ես և ավտոյի մեջ կանգնելով, ձեռքս մեկնեցի նրան։

Նա ճանաչեց և արագ շառագունեց։ Նորից ծանոթ ժպիտը փայլեց նրա դեմքին, և նա ամուր, շատ ամուր սեղմեց ձեռքս։

— Մանկության ընկերն է, որի մասին պատմում էի,—ասացի ընկերոջս։

— Դե՛, գլխարկդ պահիր՝ խնձոր գցեմ,—ասաց նա մոտակա ճյուղերից խնձորներ պոկելով։

— Կարծեմ մեկ էլ եմ գլխարկս պահել, չէ՞, Վարդ։ Վա՛հ, սա հո հենց այն ծառն է, չէ՞,—հանկարծ բացականչեցի ես՝ ծանոթ խնձորենին ճանաչելով։

— Հա՛, է՛ն է, է՛ն, նո՞ր ես հիշում։ Իսկ ես ամեն օր բարձրանում եմ սրան ու հիշում եմ քեզ, ամեն օր նայում եմ ցանկապատին, որտեղից գլուխդ ներս էիր կոխել, հիշո՞ւմ ես... խոսեց նա կարոտով ու թախիծով։

— Երեսո՞ւն տարի,—ասացի ինքս ինձ,—ամեն ինչ փոխվել է, նախկին ցանկապատն էլ է փոխվել, խնձորենին էլ է աճել։ Դո՛ւ էլ ես փոխվել, Վա՛րդ, խալիս հուրի-մալաք ես դարձել, աղջի՛,—կատակեցի ես իմ նախկին բարբառով։

— Դե՛ դե՛, էլի շաշությունդ բռնե՞ց,—ասաց նա մեղմ ծիծաղով ու խնձորները թափեց ավտոյի մեջ։

— Աղջի՛, հերիք է, վերակացուն կծեծի։

— Յանի հիշո՞ւմ ես, որ քո պատճառով ինձ ծեծեցին,—ասաց նա ուրախ ծիծաղով։—Վերցրո՛ւ, նրա գլուխը վաղուց եմ հողել...

Ընկերս շտապում էր։ Ավտոն սկսեց աշխատել։

—Դե, իհարկե, մայրաքաղաքցի ես դառել, լավեղ չես անում երկար խոսել,—ասաց նա վիրավորված ձևանալով։ Եվ երբ մեքենան շարժվեց, ավելացրեց.

— Սովխոզի մասին նյութ ուղարկեմ՝ կտպե՞ս։

— Ուղարկի՛ր, անպայման ուղարկի՛ր, և լա՛վ աշխատիր, լավ։

Մեքենան դուրս եկավ հարթ խճուղին, և արագացրեց ընթացքը։ Դեղնած տերևների միջից հայացքով մեզ ճանապարհ էր դնում Վարդ-Ռոզան, իմ մանկության ընկերը, «կնյազի բաղի» այսօրվա տերը...

ՀԱՎԱՏ

Խանձված, շագանակագույն բլուրն անցնելուց հետո մեր առաջ բացվեց Մալիշկայի փարթամ այգիների կանաչ պանորաման:

Ընկերս կանգնեցրեց ձին, մատը մեկնեց դեպի ցած ձգվող հեղեղատն ու խուլ ձայնով ասաց.

— Էստե՛ղ սպանեցին տղերքին...

Ես էլ կանգնեցրի ձիս և հարցական նայեցի նրան: Նա կարծես մոռացավ իմ ներկայությունը և հին-հին հուշերից ալեկոծված կարծես ինքն իրեն խուլ ձայնով սկսեց խոսել.

— Քսանմեկ թիվն էր: Այնազուրի տակ մի աղբրի մոտ նստեցի, ոտիս փաթաթանը քանդեցի ու վերքը լվանում էի, երբ Նժդեհի զինվորները մոտեցան՝ գերի պարտիզաններին ախիներն առաջ արած: Ճանաչեցի. փոնչի Աբրահամն էր, քանաքեռցի Մուկուչը, Նանագյուլյանց Օհաննեսն ու Միրզաֆար Օղլի Սեյիդը: Այնազուրի կռվումն էին գերի ընկել:

Ինձ էլ հետները խառնեցին ու հրացանի կոթով հրելով քշեցին դեպի Մալիշկա՝ հենց այս ճամփով:

Հասանք այստեղ: Ինձ առաջ քշեցին: Էն քարի մոտ դեռ չհասած, համազարկ լսեցի: Ետ նայեցի՝ Օհաննեսն ու փոնչի Աբրահամն արնաթաթախ ընկած խոտերը պոկոտում էին... կսկծից շուռ եկա և շարունակեցի ճանապարհս՝ մոլոր քայլերով:

Էս թումբն անցնելիս մեկը հետևիցս աղեկտուր կանչեց.

— Արմենակ ջա՜ն... սպանում ե՜ն...

Ետ նայեցի։ Լսվեց ծանր թրմփոց և ապա նույն խուլ ձայնը.

— Վաշիկիս կպաշես իմ տեղակ, հորս ասա...

Նրա ձայնը խլացավ հրացանի կոթի հարվածից։

Բլրաշատցի Արսեն ապու տղա Նիկոլն էր։

Մենք լուռ շարունակեցինք ճանապարհը։

— Հե՞տո, Արսեն ապուն չպատահեցի՞ր,—հարցրի մի փոքր անց, մի որևէ բան ասած լինելու համար։

— Պատահեցի... և ահա թե ինչ պայմաններում։ Մի ամսից ավելի հալվող ձյունի, ցեխի մեջ սոված կռվեցինք։ Մոտեցանք Բլրաշատին. էն բլուրների մյուս երեսին մի աղքատ գյուղ էր։

Ցերեկով մեր գործը բավական հաջող գնաց, որովհետև հակառակորդի զինվորները շատ էին մեղր կերել...

— Ավելի լավ, կուշտ փորով կկռվեին,— նկատեցի ես։

— Էդ ճիշտ է, բայց արի տես, որ նրանց գնդացիրները մեղրի պատճառով շատ անկանոն էին գործում։

— Չեմ հասկանում։

— Ինչ պիտի հասկանաս.—ասաց ընկերս բարեսրտությամբ ժպտալով,—խմբապետական զորքի հետ գործ ունեցե՞լ ես, որ հասկանաս։ Էդ օրը դաշնակցական տղերքը հարևան գյուղերում մեծ հաջողություն էին ունեցել. գյուղի բոլոր փեթակները ջուրն էին քաշել ու մեղրը կերել այնպես, ինչպես քաղցած թվի մարդը, էն էլ մաուզերխատ մարդը կուտի։ Մեղրն իր գործը տեսավ։ Գնդացիրների համար ներքևի աղբրից էին ջուր հասցնում։ Ծարավից պապակած զինվորները դիրքերից դուրս էին թափվում, ծեծում ջուր տանողներին, խլում ջուրն ու գլուխներին քաշում-խմում։ Այդ օրը նրանց գնդացիրները առանց ջրի մնալով չգործեցին, և մենք նրանց մինչև Բլրաշատ մի շնչում քշեցինք։

Չորս-հինգ օր էր չէինք քնել։ Ջարդված, քնահարամ, մտանք տաք քուրսիների տակ ու քնեցինք Մարա Մելիքի քնով։

Մյուս օրը, ես Արսեն ամուն ներկայացա և հայտնեցի, որ Նիկոլի ընկերն եմ։ Տուն գնացինք։ Տունը մշուշված էր նոր վառած թոնրի ծխով։ Կիսամթին հազիվ ոտքի ելած մի մանուկ ինձ տեսնելուն պես «ապա, ապա» կանչելով փաթաթվեց ոտներիս...

Ես չկարողացա գրկել ինձ, արտասվեցի ու երկար ժամանակ չկարողացա խոսել...

Արսեն ամին հասկացավ և նրա ալեհեր գլուխը խոնարհվեց կրծքին։ Միայն երեսի մկանունքները մի թեթև ցնցվեցին։

Երբ ծանր տրամադրությամբ վեր կացա մնաք բարի ասելու, Արսեն ամին խո՛ւլ, կարծես անդունդից եկող ձայնով ասաց. «Գնա՛, բալա՛, այամը ձերն ա, ձեզ հետ է ժողովուրդը»։

Դուրս գալիս տան մութ անկյունից հեկեկոց լսեցի։

Նիկոլի դեռատի կինն էր…

————

Ընկերոջս պատմածից հետո ես հիշեցի, որ Արսեն ամուն պատահել եմ 1922 թվին։

Այն ժամանակ խորհուրդների ստեղծագործ ձեռքը նոր էր հասնում մեր երկրի հեռավոր ու խուլ այդ անկյունը։

Հիշում եմ, երբ գավառային կոմիտեում առաջին անգամ սերմանման կամպանիայի խնդիրը դրվեց, գավկոմի քարտուղարը գտնում էր, որ մեծ գործ կատարած կլինենք, եթե սերմը մաքրելու համար գործադրենք պապենական «տեփուրը»։

Ո՞ւր էին այսօրվա Վորոնեժի տրիերները…

Բլրաշատում, երբ խոսեցի կամպանիայի նշանակության մասին, երբ մի քանիսը դժգոհեցին, թե «դրանով բան չի լինի, բան ունեք-բան տվեք», անկյունից խելացի դեմքով մի ծերունի վեր կացավ ու հենվելով ձեռնափայտին, ամուր շեշտով հատ-հատ ասաց.

— Էս տարի էլ տեփուրով շուռ կտանք։ Շատ չի քաշիլ, մաշինը կգա։ Արխային կացեք, կգա։ Մեր թիկունքին ռուս ժողովուրդն է, կգա՛։

Ու կարծես ինքն իր մեջ.

— Ռուսեթի ուժին ուժ չի հասնիլ…

Արսեն ամին էր…

—————

Օրերս ես անցնում էի Բլրաշատով։ Կանգ առա կոլտնտեսության կալի մոտ։

Դիմացս բլրի տակ վեր էին ելնում կոլտնտեսության նորակառույց գոմերը՝ լուսավոր ու տուֆաշեն։

Սիլոսի աշտարակի մոտ աղ էին լիզում «շվից» ցեղի ցուլերը՝ կլորիկ տռուզ մարմնով և փայլուն մազերով։

Հեռվից լսվում էր ախորժալուր կտկտոց։ Այդ՝ կոլտնտեսական հնձվորն է ծեծում գերանդին։

Կալի մոտ, բարձրաբերձ դեղձի հովանու տակ, կալվորների օղակը ճոխ մի սեղան էր բացել։

Ես իջա ձիուց և ուշադիր նայեցի խրձի սայլի առաջից քայլող ծերունուն։ Սայլը ճռնչալով կանգ առավ։ Ծերունին շփեց եզների աչքերը, խանդաղատանքով շոյեց կենդանու մազոտ այտը.

— Ծաղիկ ջան, բեզարեցի՞ր, հա՞...

Ապա դառնալով ինձ՝ ժպտալով ասաց, կարծես կիսատ թողած զրույցն էր շարունակում.

— Եզներումն էլ հալ չմնաց, թամամ մի ամիս ա կրում ենք, չի վերջանում։

Ու ետ դարձավ, կռացավ, եզն արձակեց և հենց պպզած շարունակեց.

— Առաջ էլ հաց կար, ախպե՛ր, սա ուրիշ բան ա։ էն տարիները սելը սրանից շատ էինք բարձում, հենց էինք բերում, ոնց որ բմբուլ, հիմի խրձերը ծանր են... տեսնո՞ւմ ես, եզները քըրտինքի մեջ կորել են։

Երբ հսկա կալսիչը ծուխ արձակեց և սկսեց հնդալ, մի աշխույժ երիտասարդ բարձրացավ մեքենայի վրա, թևերը վեր քշտեց ու ջահելի բերկրանքով ճչաց վերևից.

— Պա՛պի, մաշինը խոդն ընկավ, խո՛րձ հասցրու...

Ծերունու խանձված երեսի ծալքերը հարթվեցին, ճակատը պայծառացավ, խուրձ-խուրձ հետևից շպրտեց վեր։

— Վաչիկ ջան, շուտ-շուտ ռեխը տուր...

Աշխատանքը թեժացավ, վրա հասան օղակի մյուս անդամները, և սովետական վիթխարի կալսիչն սկսեց կլանել խուրձ-խրձի հետևից։

Մեքենայի հետևից սկսեցին ցած հոսել տեսակավորված ցորենի կարմրավուն առվակները։

Ծերունին զվարթ դեմքով մեկ էլ նայեց նռան հատիկի նման ցորենին, հենվեց եղանին ու դարձավ ինձ.

— Հրամանքդ ո՞րտեղացի ես

— Երևանցի։

— Հա՜…

Ապա մի քիչ մտածելուց հետո ծանր խոսեց.

— Ասում էի նեղ օրերն անց կկենան, լիություն կգա, չէիք հավատում։ Ո՞նց ա հիմի, քաղաքացի ախպեր։

Ես ծիծաղեցի։ Կարծես չհավատացողը ես էի և նախատինքն ինձ էր ուղղված։

Խորին համոզմունքի շեշտ ունեցող այդ ձայնը վաղո՜ւց, շատ վաղուց հնչել էր իմ ականջին։ Եվ ես ճանաչեցի Արսեն ամոււն։

Տարիներն ակոսել էին նրա դեմքը, և մեջքը կորացրել։ Բայց դեռ պինդ էր։

— Մաշինի վրայի էն սիրուն տղեն ո՞վ է,—հարցրի ես, նախապես մի բան գուշակելով։

— Թոռս է, ասլան թոռս…

Ապա կարծես տարիների մշուշից հնամենի մի վիշտ առկայծեց նրա աչքերում։ Ծերունին մի պահ մռայլվեց, պաղ ու մոլոր նայեց դեպի շվաքում հեռղ շանը և թոռան կանչից սթափվելով, մեքենայորեն կրկնեց.

— Թոռս ա, ասլան թոռս, պարտիզան Նիկոլի տղեն, կարող ա լսած ըլես…

Ապա այնպես ուժգին սկսեց շպրտել խուրձերը, այնպես մոլեգնած ու ներվային տենդով, կարծես աժդահա ձեռքով գերեզմանաքար էր նետում անցյալի մղձավանջի վրա։

Մեքենայից հոսող ցորենի առվակները վարարեցին։

———

Արսեն ամին այն լավագույնն է, որ կա գյուղի հողագործ աշխատավորության ընդերքում։

Արսեն ամիները քսանհինգ տարի առաջ, ռևոլուցիայի դժվարդակ օրերին անսահման հավատ ունեին մեր մեծ գործի նկատմամբ, ուս մեծ ժողովրդի ուժի նկատմամբ։

ՔԱՋԱՐԱՆ

Այնտեղ, ուր Արաքս գետը նեղ ու ժայռոտ ձորերից դուրս է գալիս Մուղանի դաշտն ու հանդարտվում, Երևան—Բաքու երկաթուղուց մի գիծ է բաժանվում ու ձախ կողմով, մի կանաչ հովտով գնում դեպի լեռների խորքը։

Գետը, որի ափով դեպի վեր են սողում գնացքները պղտոր է, ժանգակալած։ Երկրաբանը նայելով այդ ջրերին՝ իսկույն կռահում է, որ այդ գետն իր սկիզբն առնում է հանքերով հարուստ լեռներից։

Հենց դեպի այդ հանքերն են սուրում բեռնավորված գնացքները, տանելով մեքենաներ, գործարանների սարքավորում, մեծ քանակությամբ շինանյութեր, սննդամթերք, հագուստ և բեռնատար ավտոմեքենաներ։

Հասնելով Ղափան՝ նրանք բեռնաթափվում են և պլնձով բեռնավորված՝ վերադառնում։

Ղափան մտնելուն պես զգում ես, որ այդ լեռնաշխարհի մի ինչ-որ հեռավոր անկյունում մեծ շինարարություն է կատարվում, որի վիթխարի ծավալի մասին գաղափար ես կազմում այստեղ բլրակներ կազմած անտառանյութերից, մեքենաներից, պարենից, ապակու կույտերից, ընդարձակ գարաժից և այն աշխույժ եռ ու զեռից, որ տիրում է Ղափանի ապրանքային կայարանում։ Այդ կայարանն այլևս ի վիճակի չէ ընդունել և տեղավորել նորակառույցի համար ստացվող շինանյութերը ու բազմապիսի ապրանքներ։

Մանր ու դանդաղաշարժ էքսկավատորներն ու ճանապարհա-հարթիչ մեքենաները շարժվեցին այդ կայարանից Օխչի գետի հոսանքն ի վեր և հասան անցյալում անմատչելի լեռների ծերպերը։ Նրանք Քաջարան տանող լեռնային կածանը լայնացրին, հարթեցին, կոկ ուղի դարձրին։

Կափուտջուղ լեռան ստորոտում ապրող այդ ձորերի բնակիչները մեծ զարմանքով էին դիտում մեր տեխնիկայի մուտքը լեռների ընդերքը և իրավամբ հպարտանում էին նրանով։ Երբ առաջին անգամ ավտոմեքենա մտավ Օխչիի ձորը, Աչաղլու գյուղի բնակիչները դուրս թափվեցին տներից և ցնծությամբ շրջապատեցին Քաջարանշինի մարդկանց։ Ադրբեջանական մի կին մի վազք բերեց և նվիրեց ճանապարհի շինարարության ինժեներին։

Մինչ սա դժվարանում էր վերցնել նվերը, կինը ասաց ջերմությամբ.

— Փեշքեշը ետ չեն տալ, վերցրո՛ւ... Մենք շատ ենք պարտական ձեզ, դուք մեզ փրկեցիք, մեզ ճանապարհ տվիք։

Երախտագիտության այդ զգացմունքով պետք է բացատրել այն բացառիկ եռանդը, որ ցուցաբերում են տեղի բնակիչները՝ կին, պատանի, ծերունի՝ Քաջարանի ճանապարհի կառուցման վրա։

Ասածս ապրանքատար կայարանից բեռնատար ավտոները շինանյութերով ծանրաբեռնված շարժվում են դեպի Կափուտջուղ լեռը՝ բացառիկ դժվարին ճանապարհով, անդունդների սարսռեցուցիչ եզրերով։

Զրախորի կուսական, անմարդաբնակ ձորերը, որ Հայաստանի ամենաչքնաղ վայրերն էին, շինարարական եռ ու զեռով են պատած։ Ճանապարհն իր ողջ երկարությամբ բռնված է ճանապարհաշինարար բանվորներով, մեքենաներով, բենզինահոսով, շինարարական ժխորով և անգամ Սովետական Բուլղարիայից այդտեղ աշխատանքի եկած մորթե սրածայր գդակներով մարդկանց աղմուկով։

***

Այս անգամ ես բախտ ունեցա հասնել Հայաստանի ամենահեռավոր, անմարդաբնակ ու լեռնոտ անկյուններից մեկը։

Փոքր Կովկաս լեռնաշղթան գնալով դեպի արևելք և դեմ առնելով Քոռ հովտին կտրտվում է, կուտակվում ու կազմում խառնիճաղանճ ու մռայլ լեռների մի լաբիրինթոս։ Երկնամբարձ ժայռեր՝ պատած թփուտներով, ուր հոտերով այծյամներ են վխտում, անդնդախոր ձորեր՝ մթին ծմակներով, ուր արջերն ու վայրի խոզերը վայրի ընկույզ են խժռում, ալպիական արոտներ անմատչելի բարձունքներում, ուր ընտանի անասունները չեն հասնում և ուր հավերժական ձյան հյուսերի սահմաններում արածում են հայկական մուֆլոնի (վայրի ոչխարի) հոտերը։ Այդ լեռնաշխարհը ընկնում է Մեղրու, Ղափանի և Սիսիանի միջև և տարվա մեջ 5 ամիս (ձմեռը) կտրված է լինում արտաքին աշխարհից։ Հարթ տարածություն այդ լեռնաշխարհում բոլորովին չկա. այնպես որ այդ երկրի եղած չեղած մի քանի գյուղերը չնայած շատ փոքր են, սակայն բաժանված են իրարից հեռու ընկած թաղերով, գոնե երկու կալաչափ հարթություն չկա, որպեսզի գյուղը տեղավորվի մեկտեղ։

Ահա այդ բարձրավանդակն է, որ իր հանքային հարստություններով աչքի է ընկնում ոչ միայն Սովետական Միության մեջ, այլև աշխարհում։ Այդ լեռներն իրենց ընդերքում անսպառ հարստություններ ունեն թաքցրած։ Եվ այդ հարստությունները մնացել են կուսական-անարատ վիճակում, քանի որ նեղ շավիղներով այդ լեռնաշխարհը կարելի էր մտնել միայն ավանակներով և քանի որ մարդը դեռևս չէր զինված այն աստիճան, որ կարողանար ճեղքել լեռները և հասնել նրանց ընդերքը։

* * *

Ջրախոր գետի հոսանքն ի վեր մենք այնքան գնացինք, որ գետը բարակեց և դարձավ լեռնային գիժ վտակ։ Եվ երբ անցանք Դավիթ Բեկի բերդն ու պատմական Կապան քաղաքի ավերակները, մոտիկից իր կնճռոտ ու ահարկու հայացքով մեզ նայեց Կափուջուղ լեռը (որ ամենաբարձրն է Հայաստանում Արագածից հետո)։ Առաջ մենք այդտեղ կհասնեինք երկու օրում, քանի որ նեղ շավիղը ձգվում էր ժայռերի ճակատներով և անդունդների վրայով և մենք պետք է գրաստներով ճամփորդեինք։ Այս անգամ մենք տեղ հասանք երկու ժամում, քանի որ Սովետական Միության հերոս Ռուբեն Հակոբյանը ասածս նեղ շավիղը լայն խճուղի է դարձ-

րել, որով երթևեկում են Քաջարանշինի տասնյակ ավտոմեքենաները։

Ճանապարհին մի տեղ փոքր ժայռը փշրում էին քլունգներով՝ ճանապարհը լայնացնելու համար։ Կանգ առանք։ Նրանք՝ ադրբեջանական կանայք, առանց մեզ նայելու և առանց դադար առնելու շարունակեցին ժայռը փշրել և խիճը տեղափոխել ճանապարհի ներքին պռունկը։ Արագ, աշխույժ, կարծես մեկն անընդհատ շտապեցնում էր նրանց։

— Շարունակ այսպես շտապում են... Այսպես սրտով աշխատող ժողովուրդ դեռ չեմ տեսել,—խոսեց Ռուբենը։

— Քեռակին, քարափներն էլ չեն դիմանում ձեզ,—խրախուսեց ընկերս։

Ադրբեջանական կինը դնչկալը վեր քաշեց, բերանն ու քիթը ծածկեց մեր տեսողությունից և մատը դեպի հաջորդ ժայռերը մեկնելով համեստությամբ պատասխանեց.

— Մեր արածն ի՞նչ է որ... առաջ գնացեք, գործն էնտե՞ղ է։

Մենք առաջ գնացինք և ապշեցինք կատարվածից։ Գրեթե 400 մետր լայն ճակատ ունեցող մի ահռելի ժայռ, որ ամպերից գիրթ իջնում է Ջրախորի անդունդի վրա, մեջտեղից ակոսված է։ Այդ ակոսով պիտի ընթանա մեր մեքենան։ Այդ քարե ճանապարհը մի շատ երկար քարայրի տպավորություն է թողնում, քանի որ մարդիկ ողջ ժայռը վերից վար տաշելու հնարավորություն չունենալով, ուղղակի թեք՝ դեպի ներս կտրել են ժայռը։ Այնպես որ ամբողջ ճակատով մեկ ժայռը նոթերը կիտած կացած է ճամփորդի վրա ու գլուխդ ցած պիտի պահես՝ առաստաղին չկպչելու և չջախջախվելու համար։ Մենք ահով իջանք մեքենայից։ Ցած նայեցինք։ Պատի նման ուղղահայաց ցած իջնող ժայռերի ստորոտում, կիրճի կիսախավարի մեջ շառաչում է փրփրերախ Ջրախոր գետը։ Ապշում ես, թե ինչպես են մարդիկ կանգնել ժայռի ճակատին և պայթեցրել—ճանապարհ կտրել այդ ապառաժների մեջ։ Դրա գաղտնիքը մեզ բացեց Ռուբեն Հակոբյանը.

— Ժայռի կատարից մարդկանց իջեցնում էինք պարաններով, և նրանք անդունդի վրա կախված՝ քար էին ծակում ու պայթեցնում։

Ահա թե ի՞նչ,—մարդիկ պարաններով կախված են աշխատել ամիսներ շարունակ, և նրանցից ոչ մեկը չի վնասվել։ Ջափա-

զանցություն չլինի, եթե ասենք, որ թուխ երեսով, կրակոտ աչքերով և պարզ հոգով ղազախեցի այդ երիտասարդի արարքն այդ վայրում բոլորովին էլ պակաս չէ Կերչի պարանոցում Արմյանսկ քաղաքի մոտ թշնամու ամրությունը ճեղքելու իր խիզախությունից, որի համար նա ստացավ Հերոսի կոչում։

Նա խորին բավականությամբ նայում է իր կառուցած ֆանտաստիկ ճանապարհին, նայում է Խուստուփ լեռան արջաբներին և ուրախ բացականչում.

— Բայց դե արջ չմնաց էս ձորերում է՞... բոլորը սարսափահար փախան պայթյուններից։

***

Արամ Նավասարդյանի հետախույզները — քաջարանցի հանքափոր Սարուխանը, օխչեցի Գարեգինը և Հրաչ Սարգսյանի ղեկավարությամբ գործող մյուս հետախույզները, սարը ծակել են այս լանջից և դուրս եկել հակառակ լանջում։ Ապա գագաթից ծակել են և ուղղահայաց իջել խորքը։ Ապա ծակծկել են սարի կողերը, թունելներ տվել, ստորերկրյա ուղիներ կառուցել։ Եվ ինչ են պարզել. — պղնձի և մոլիբդենի հանքաքարը ոչ թե երակներով է, այլ ողջ լեռը ամբողջությամբ հանքաքարից է կազմված և անսպառ պաշար է հանդիսանում կառուցվող գործարանների համար։

Մենք ստորերկրյա թունելներով հասանք լեռան սիրտը։ Այդտեղ լապտերի աղոտ լույսով Արևմտյան Ուկրաինայի մի հանքափոր նմուշներ էր հանում և հանձնում երկրաբան Վարդիթեր Աբրահամյանին։

Հայն երեսով, առողջ ցորնագույն այտերով մի աղջիկ է դա։ Ավարտել է Երևանի Պետ. Համալսարանը։ Աղջիկը քննում է լեռան յուրաքանչյուր երակը, հրճվանքով նշում իր հայտնագործումները։ Եվ դա լցնում է նրա ողջ հոգեկան աշխարհը։ Չէ՞ որ նա մոլիբդենի ամենահարուստ հանքերն է քննում, մոլիբդենի, անչափ թանկ այն մետաղի, որը անխորտակելի է դարձնում մեր զրահները թշնամու արկերի հարվածների դիմաց, որը կուռ ամրություն է տալիս սովետական հրետանուն, որը հզորացնում, անպարտելի է դարձնում պողպատը։

Ինչքա՞ն հանքաքար ունի այդ լեռը։ Կառուցվելիք ֆլոտացիոն

գործարանները մի դարի ընթացքում անգամ չեն սպառի այդ լեռը։ Իսկ երբ սպառեն՝ մեջը փուչ սար կստացվի, որի կեղևի վրա կշարունակեն վար ու ցանք անել Քաջարանի բնակիչները... Բայց մինչ այդ երկրաբան հետախույզները այնքան պաշարներ կհայտնաբերեն, որ առհավետ կծխան գործարանները այդ լեռնաշխարհում։

Քաջարանը խոշորագույն շինարարությունն է Հայաստանում։ Բավական է ասել, որ նրա կառուցման վրա ծախսվելու է շուրջ 200 միլիոն ռուբլի։

Երբեմնի ամայի, աշխարհից կտրված այդ ձորերը շինարարական եռ ու զեռի մեջ են։ Կառուցվում է բանվորական ավան, հասարակական, կուլտուրական հոյակապ շենքեր,—Քաջարանը կուլտուրական հեղաշրջում է առաջ բերել այդ հետամնաց վայրերում։

Սովետական մարդը իր հզոր տեխնիկայով կհասնի նաև Ագարակի և արևելյան Նախիջևանի հանքերին և այն ժամանակ նկարագրածս լեռնաշխարհը իրավամբ կարող է Հայկական Ուրալ անունն ստանալ։

***

Քաջարանցիք հավանաբար քաջ են եղել և Դավիթ Բեկի զորքերի հետ միասին կռվել են իրենց ազատության համար։ Նրանք քլունգներով ծակել են Փիրդովութ սարը, շիկավուն հանքաքար հանել, հալել իրենց պրիմիտիվ հնոցներում ու զենքեր կռել։ Եվ Սյունյաց աշխարհի հին մարդիկ դեռ դարեր առաջ նկատել են, որ Փիրդովութ սարի պղինձը կարծր է բրոնզի պես և նրանից շինած զենքը պողպատի ուժ ունի։ Նրանք, մեր հետամնաց նախնիները ծանոթ չէին մոլիբդենին և չէին կարող իմանալ, որ պղնձի հետ խառը մոլիբդեն կա և որ նա է պղնձին ամրություն տվողը։ Առաջին անգամ մարդիկ 1853 թվին հայտնագործեցին մոլիբդենն այդ վայրում, բայց իրենց անզոր տեխնիկայով նրանք անկարող էին մշակել այն։

Եվ լեռը բեռնված իր անբավ հարստություններով, սպասում էր իր իսկական տիրոջը։

Եվ եկավ նրա իսկական տերը՝ սովետական մարդը։ Ծայրերը

ճեղքելով և իր հզոր տեխնիկայի համար լայն ճանապարհ բացելով եկավ։ Նա իր հետ փորող մեքենաներ բերեց, փղանման դիզելներ բերեց և նրանք իրենց շաչյունով ազդարարեցին նոր մարդու ուժի ու հնարքների մասին։ Սովետական տեխնիկան հասավ խուսափող լեռան արքաների, հասավ ծեր Կապուտջուղի ստորոտը։

Աղմաղանի ստորոտներով, Արարատյան դաշտի աղուտներով, Երևելյան Արփաչայի ծաղկուն հովտով, Սիսիանի լեռներով՝ փոքր Կովկասի երկարությամբ անթիվ-անհամար սյուների շարքն է ձգվում մինչև Քաջարան։ Նրանց ամրացված պղնձալարերը Սևանի վիթխարի ուժն են բերում Քաջարանին, և այդ ուժով էլեկտրամուրճերն են աղմուկով աշխատում լեռան ընդերքում։ Ու հանքաքարով բեռնված գնացքները դուրս են գալիս շախտերից և Ողջիի ձորի վրա կախված օդալարային ֆանտաստիկ ճանապարհով գլորգլոր գնում-դատարկվում դիմացի լանջին ծխող ֆլոտացիոն գործարանում։

Դա Քաջարանի վաղվա օրն է։ Մենք հավատում ենք, որ կգա այդ օրը, շուտով կգա։

Քաջարան, նոյեմբեր, 1946 թ.

ՎԵՐԵԼՔ

(Երևանի ավտոդողերի գործարանում)

1.

Այս այն գործարանն է, ուր աշխատում է երկրի համար ռետին պատրաստող անվանի բանվոր Գևորգ Միրզոյանը։

Այստեղ, ավտոդողեր պատրաստելու գործը հենց Գևորգ Միրզոյանից էլ սկսվում է, այն բանվորից, որին պատիվ վիճակվեց փետրվարի 10-ին խոսք ասելու իր ձայնն Առաջնորդին տալու առթիվ։ Գեղեցիկ, ժանյականախշ ավտոդողերը, որ պատրաստի դուրս են գալիս այդ գործարանից ու ավտոմեքենաների անիվներ դարձած, գլորվում մեր երկրի ասֆալտապատ ուղիներով, Գևորգ Միրզոյանի ձեռքում դրանք դեռևս տձև, հում զանգվածներ են, տարբեր նյութերի կույտեր։

Արտաքուստ այնքան պարզ ձուլվածք թվացող ավտոդողը— պակրիշկան իր մեջ ունի և՛ Ամազոն գետի ավազանի կուսական անտառներից բերված կաուչուկ, և՛ Արարատյան դաշտի բամբակ, և՛ Արաղդայանի լեռների կրաքար, և՛ Բելգրադի կավիճ, և՛ Միջին Ասիայի սովխոզների խանդրիլայի խեժ, և՛ Յարոսլավլի կարտոֆիլից ստացված ռետին, և՛ Ռուսաստանի մագնեզիումի ու ցինկի օքսիդ, և այդ բոլորին սև գույն ու ամրություն տվող Բաքվի մուրը։ Այդ բոլոր նյութերը, դրանց հետ և քիմիական այլ նյութեր—կարմիր ներկ, կանիֆոլ և այլն—թաթախված են Գևորգ Միրզոյանի մեքենայի մոտ։ Կոմունիստ բանվոր Գևորգ Միրզոյա-

նի վարպետությունը հենց այն է, որ այդ բոլոր նյութերի խառնուրդից ստանում է ավտոդողի որակյալ ռետինը:

Այդ ցեխում դրված են փղի փորի հաստության գլաններ, որ պտտվում են պղնձե լարերով հոսող Զանգվի զորությամբ և իրենց արանքում ահռելի ուժով ճմլում, իրար են խառնում, հունցում, տրորում—«հասիլ անում» թվածս բոլոր նյութերը:

Հաջորդ ցեխում նույնանման ամեհի գլանները իրենց արանքով անց են կացնում լայն քաթանե գործվածքներ և նրանց վրա համաչափ քսում են մածուցիկ նյութ—ռետին:

Ռետինով պատած այդ կտորներն են ահա, որ ձևում, դարսում են իրար վրա շերտ առ շերտ, մամլում, շոգիով եփում և ավտոդողի տեսք տալիս:

Բայց այստեղից միայն ավտոդող չէ դուրս գալիս. Գևորգ Միրզոյանի պատրաստած խեժն այստեղ դառնում է շարքացանի խողովակներ, որով սերմը հոսում է հողի գիրկը, դառնում է փողոցները ջրելու և հրդեհները հանգցնելու խողովակներ, և ամեն տեսակի կոշիկներ: Այդ նյութից պատրաստած երկարաճիտ կոշիկներով է որսորդը թաք կենում ճահիճներում՝ մինչև ծնկները խրված ջրի մեջ, և այդ նույն կոշիկները հագին լեռնագործները աշխատում են Ղափանի ու Շամլուղի հանքահորերի ջրի ու ցեխի մեջ:

Ինչե՞ր ասես, որ չի ստացվում Գևորգ Միրզոյանի մեքենայի տակից դուրս եկած խառնուրդից...

Բայց այդ բոլոր պրոցեսների մեջ մեզ համար ամենից գրավիչը ավտոդողի կամերա պատրաստելու պրոցեսն էր:

Այդ նպատակով Գևորգ Միրզոյանի ցեխում ստանում են բարձրորակ, շատ ճկուն և ազնիվ տեսակի կաուչուկ, որին կարմիր հանքաներկ խառնելով՝ բաց-կարմրավուն դուրեկան տեսք են տալիս: Եվ ահա պատկերացրեք, միս աղալու մեքենայի նման մի խոշոր մեքենա իր ներքին թափից խուլ գվվում է,—ներսում ինչ-որ բան է պտտվում ուժգնորեն: Ճիշտ միս աղալու նման,—վերևի անցքից լցնում են կաուչուկի տաձև կտորները. Թե ինչ է տեղի ունենում ներսում, հայտնի չէ, ես միայն այն տեսա, որ ասածս «մսաղացի» ծայրի անցքով դուրս եկավ կամերայի հաստության դեղին—կարմրավուն ռետինե խողովակը և օձի նման գալարվելով՝ առաջ սողաց: Ցեխի ողջ երկայնքով գալարվում է նա առաջ, անընդհատ աճում ու երկարում: Իսկ ծայրից երիտասարդ բան-

ձորուհիները տնտղում են, ստուգում որակը, հաստությունը, լայնքը, խոտան տեղերը կտրում—դեն գցում, պիտանի մասերը չափում ավտոյի կամերայի երկարության չափով ու կտրում։

Փոքրիկ մարմնով, արագաշարժ մի բանվորուհի՝ Պոլինա Վոստրոյնիկը միացրեց այդ կարմրավուն խողովակներից մեկի ծայրերը, մամլեց, ապա անցք բաց արեց, այդ անցքով օդ փչեց—ուռեցրեց և կաղապարին հագցնելով՝ ծածկեց ու բաց թողեց բարձր ջերմության շոգին։

— Հիմա կեփի, կարկատանները կձուլվեն, կամրանա և ճկուն կդառնա,—բացատրեց նա այնպիսի տոնով, որ կարծես ոչ թե մեքենան է «ճկուն դարձնում», այլ ինքը։

Ապա երբ կամերան «եփեց»—ինժեներ Հրանտ Խաչատրյանը դա գցեց ջրով լիքը ավազանը և լարվեց, կենտրոնացավ նրա ուշադրությունը։

— Պղպջակներ չեն երևում—անցքեր չունի,—վճռեց նա, ապա դարձավ մեզ.

— Այստեղից դուրս եկող ոչ մի իր չկա, որ բաց թողնելուց առաջ մի քանի անգամ չստուգվի։ Փոքրիկ պակասություն ունեցա՞վ,—կամ երրորդ տեսակի կգնա, կամ որպես խոտան կվերադառնա իր արժանի տեղը՝ Յարոսլավ, ուր հնոտիքի հետ նորից կեփվի և վեր կածվի հումքի։

2.

Երևանի ավտոդողերի այս գործարանը կառուցվեց 1943 թվին հապճեպ կերպով—ընդամենը 5—6 ամսում։ Թշնամին Կովկասը կտրել էր Լենինգրադից, Սովետական Միության արդյունաբերական կենտրոններից, հարկավոր էր ավտոդողեր արտադրել Հարավում և հասցնել Կովկասյան ռազմաճակատ։

Ամայի վայրում հապճեպ բուսած այդ գործարանը այն ժամանակ զուրկ էր գործին տեղյակ, բանիմաց կադրերից։

Գյուղերից այստեղ եկած հողագործներն իրենց կյանքում ոչ կաուչուկ էին տեսել, ոչ մեքենա էին աշխատեցրել։ Երևանի Պոլիտեխնիկական Ինստիտուտն ավարտած երիտասարդների մի խումբ, որ ոգեշնչված էր երկրին ավտոյի անիվներ տալու բուռն

ցանկությամբ, կաուչուկի տեխնոլոգիական պրոցեսները միայն գրքերից գիտեր։

Նրանք խնդությամբ լցվեցին, երբ երկու և կես տարի առաջ, Հոկտեմբերյան Ռևոլյուցիայի տարեդարձի օրը տվին առաջին զույգ ավտոդողը։ Բայց երկու տարի տևեց մինչև անփորձ նորավարտ Հրանտ Խաչատրյանը դարձավ գործարանի տեխնիկական ղեկավար, մինչև զորացրված սերժանտ Լյուդվիգ Միքայելյանը դարձավ անվանի բրիգադիր և Պոլիտեխնիկ Ինստիտուտն ավարտած անփորձ աղջիկներ Աննա Հարությունյանն ու Աշոտանուշ Մելիքյանը դարձան փորձված, բանիմաց ինժեներներ ու կազմակերպիչներ։ Ժամանակը, գործարանի բովը, փորձն էր, որ մի շարքային, սովորական բանվորի՝ Գևորգ Միրզոյանին նույնպես դասեց երկրի անվանի արտադրողների շարքը։

Եվ ճիշտ է գործարանի դիրեկտոր Բոյախչյանը, որ իր գործարանի աճը կադրերի աճումով է բացատրում։ Կարելի է ասել, որ մինչև այս տարի այդ գործարանում մարդիկ ոչ այնքան արտադրում էին, որքան սովորում, աշխատելով, փորձելով, հաճախ փչացնելով սովորում։ Գործարանը անցյալ տարվա պլանը կատարեց 50 տոկոսով, իսկ խոտանի տոկոսը բարձր էր—մինչև 8։

Եվ ահա հողագործները մերվեցին մեքենային, նրան հասկացան, իսկ նորավարտ ուսանողները գրքերից սովորածը վերջնականապես ըմբռնեցին մեքենաների մոտ։ Իսկ Բոյախչյանը սովորեց մարդկանց կազմակերպելը։ Եթե նա առաջ մեղքը գցում էր այս կամ այն նյութի պակասության վրա, այժմ նրա ներկայացուցիչները մուր են հայթայթում Բաքվում, կավիճ փոխադրում Բելգորոդից, հետևում, որ անխափան կերպով գործարանը հումք ստանա։

Մարդիկ,—շարքային թե ղեկավար,—սովորեցին աշխատել, հմտացան գործի մեջ։ Եվ գործարանը մի անգամից անուն հանեց երկրում։ Այս տարվա հունվարին գործարանը իր արտադրական պլանը կատարեց 104 տոկոսով։ Փետրվարին ավելի մեծ պլան տրվեց, բայց կատարվեց 106 տոկոսով։ Մարտի ընդլայնված պլանը կատարվեց 116 տոկոսով։

— Իսկ այս ամսի՞նը,—հարցրի ես։

— Այսօր մայիսի հաշվին ենք աշխատում,—գոհ ժպիտը դեմքին պատասխանեց դիրեկտորը։

Դա ապրիլի 23-ին էր։

Այսպիսով, տենդենցը դեպի վեր է, անընդհատ դեպի վեր։ Ու այն, որ գործը շարունակ դեպի վեր է գնում, այն, որ իրենք այլևս չեն կարմրում երկրի առաջ, մի անգամից բարձրացրեց բանվորության և նրանց ղեկավարների տրամադրությունը։ Գործը կարծես հեշտացավ և դարձավ խնդալից։ Նախատինքը վեր ածվեց խրախուսանքի և դարձավ շարժիչ հզոր ուժ։

— Հիմի որ հանգիստ խղճով եմ քնում... Ժանգոտել էինք, ախպե՛ր, երեխաների հետ էլ չէինք կարողանում հանգիստ խոսել,—ասաց ինձ հասակավոր բանվորներից մեկը։

Այդպես, երեք տարվա նյարդային պայքարից հետո— մարդկանց նյարդերը հանգստացան ներքին բավականությունից, այն փայլուն արդյունքից, որին վերջապես հասան նրանք։

Ինչպես ասացի, ավտոդողի հիմքը կաուչուկով պատած գործվածքն է։ Այդ գործվածքը ձևողներին և ավտոդող պատրաստողներին ես այսօր տեսա զվարթ դեմքերով և աշխույժ աշխատելիս։ Ես նկատեցի առողջ մրցություն նրանց միջև՝ ավելի շատ և ավելի լավ արտադրելու։ Նկատեցինք նաև, որ բանվորները իրար հսկում են և իրարից պահանջում.

— Հացրու է՞, պարապ մնացի։

Այդպես է, եթե մեկը ծուլացավ, դանդաղեց,—հաջորդը մնում է պարապ։ Եվ որովհետև այստեղ բոլորն են ուզում գերակատարել իրենց պլանները, բոլորն են ուզում աչքի ընկնել, ուստի բոլորն էլ իրարից գործ են պահանջում։

Այսպես, երբ մենք մոտեցանք ավտոդող հավաքող Երանուհի Մուրադյանին, նա վարժ շարժումներով մի կողմից կաուչուկապատ կտորները շերտ առ շերտ դարսում էր իրար վրա, ձևավորում, ավտոդողի կլոր կերպարանք տալիս, ու հետո էլ գանգատվում.

— Չե՛ն հասցնում, կտոր չեն հասցնում...

Առողջ կազմվածքով, ամբողջովին ավյունով լցված, զգում ես, որ այս բանվորուհու համար ծանր է թեկուզ մեկ րոպե պարապ մնալը։ Ու չի տանում դանդաղողներին, ասում է անգամ իր մտերիմ ընկերուհուն, եթե նկատում է, որ սա սրտով չի կպչում գործին։ Ինժեներ Աշոտանուշը—ձվաձև թուխ դեմքով, թուխ փայ-

ցոն աչքերով մի աղջիկ—մեզ գանգատվում էր, որ Երանուհին «կռվի» է գնում հարևան ցեխը։

— Լավ եմ անում, թամբալություն չանեն՝ չկռվեմ,—կտրեց Երանուհին կարմրելով։

— Ո՞վ է թամբալություն անում,—հետաքրքրվեցի ես։

— Այ, Ռոզա Հարությունյանը։

Ռոզային կանչեցինք։

16-ամյա, առողջ թուխ դեմքով մի աղջիկ է դա։

— Թող ցեխի վարիչն ասի, իմ պլանը կատարո՞ւմ եմ, թե ոչ,—արդարացավ նա։

— Է՛լ ուժ դեմ բողոք ունես,—հարցրինք Երանուհուն։

— Ա՛յ, Էմման էլ է ուշացնում շերտերը, իսկ Դունաշը թամբալ է ձևում,—հանգի՛ստ, հեչ պետքը չի, թե ես Վարդուշից ետ կմնամ։

Իզուր է գանգատվում Երանուհին. Էմման՝ քաջառողջ, կարմրաթուշ, արագաշարժ այդ աղջիկը իրար հետևից հասցնում է կտորը իր պլանից շատ ավելի։ Իսկ Դունաշը, թեև գեղջկուհու հանգստությամբ, բայց լուրջ և տակտով ձևում էր։ Այդ կինը, որի «մասնագիտությունը» քաղհանն է եղել, իսկ «տեխնիկան»—թաքուչակը,—գանդաղությամբ վարժվեց էլեկտրական ձևիչին և դեռ պահպանել է հողագործության հին տեխնիկայից բխող սովորությունները.

— Քա, կրակ շընկա՛ր, կանենք էլի, վռազդ ինչ է...

Բայց Երանուհին «վռազելու» և անհանգստանալու շատ լուրջ պատճառներ ունի։

Նա օրական 70—80 ավտոդող էր հավաքում և խաղաղ էր հոգով, քանի որ պլանով օրական 60 հատ պետք է հավաքեր։ Բայց ահա մի օր նա եկավ աշխատանքի և իր դազգահի վրա տեսավ կավիճով գրված մի թիվ—110։ Այդքան ավտոդող Վարդուշ Պատուրյանն էր հավաքել նախորդ հերթափոխության ժամանակ, նույն դազգահի վրա։

Տեսավ այդ թիվը Երանուհին, շանթահարվեց և այդ օրվանից խանգարվեց նրա հանգիստն ու այդ օրվանից դարձավ «կռվարար»։

— Էմմա՛, հինգերորդ շերտը շուտ հասցրու։

— Դունա՛շ, ձեր գյուղում հո չե՞ս, արագ շարժվիր է՛, ձեռքերդ հո չարդված չեն։

— Աղջի՛, Ռոզա՛, ի՞նչ ես վեր ընկել, ախր քո պատճառով ետ մնացի։

Ու պատահում է լաց է լինում, երբ նյութը չեն հասցնում։

Այդպես, շարունակ գործելով ու պահանջելով որ գործեն, նա հասցրեց օրական 100 ավտոդողի։ Բայց Վարդուշը դեռ 10-ով ավելի էր նրանից։

— Նյութ հասցնեն՝ օրական 120 ավտոդող կտամ,—գանգատվեց նա։ Իսկ երբ բաժանվում էինք, խորը վշտով ասաց.

— Ա՜խ, ռեկորդս ձեռիցս գնաց—նյութ չհասցրին անիծվածները։

Եվ արցունքներ երևացին նրա աչքերում…

3.

Ուրախալին, գնահատելին այն է, որ այդպիսի տենդագին մրցության մեջ չի մոռացվում որակը։ Զարմանալի բարեխիղճ աշխատողների մենք հանդիպեցինք այդ գործարանում։ Հենց աՆռաձս Երանուհին, որ «կրակ կտրած» շտապում է հասնել իր մրցակից Վարդուշին և որին դազգահի վրա կավիճով գրված 110 թիվը քուն ու դադար չի տալիս,—այս ամսին ոչ մի հատ խոտան չի տվել։

Նրա հավաքած ավտոդողերը եփում են հաջորդ բաժանմունքում, ուր բրիգադիր է նախկին սերժանտ—ռազմաճակատային Լյուդվիգ Միքայելյանը։

Այստեղ ահագին մամուլների մեջ ահռելի ճնշումով գեղեցիկ ձև են ստանում և նախշերով պատում, ապա շոգիով «եփվում», ձուլվում, ամրանում Վարդուշի ու Երանուհու հավաքած ավտոդողերը։

Լյուդվիգ Միքայելյանն ու իր մարդիկ նախորդ օրվա հերթափոխությանը ձուլել էին 86 ավտոդող, պլանով նախատեսված 60-ի դիմաց։ Եվ այդքանից ոչ մի հատը խոտան չէր։ Ապրիլ ամսի առաջին երեք շաբթում պատրաստած 3 հազար ավտոդողից խոտան համարվեց միայն 19-ը…

Անհասարակ այդ գործարանը «առողջանում է» բոլոր կողմերով։ Անցյալ տարի նրա արտադրած ավտոդողերի մինչև 8 տոկոսը

կոսը խոտան էր։ Այս տարվա առաջին եռամսյակում այդ տոկոսն իջավ 4-ի։ Ապրիլ ամսին խոտանը մեկ տոկոսից էլ ցածր է…

Երբ Լյուդվիգ Միքայելյանը կաղապարներից հանում ու շարում է նախշուն ավտոդողերը, գալիս ու նրա արտադրանքը տեխնիկական ստուգման են ենթարկում այդ գործից հասկացող հատուկ մարդիկ և բաժանում են տեսակների։ Բծախնդիր են այդ մարդիկ, բայց վերջերս շատ քչերի վրա են նրանք երկրորդ և երրորդ տեսակի կնիք դնում. «Գիգանտների» 75 տոկոսն այժմ առաջին տեսակի է ստացվում, իսկ «Գազի» 91 տոկոսը։ Առաջ այդպես չէր։ Անցյալ ամիսներին գործարանի տված ավտոդողերի 50—60 տոկոսը երկրորդ և երրորդ տեսակի էին։

Այդ ավտոդողերը սովետական մեքենաների տակ սլանում են Անդրկովկասի լեռնային ճանապարհներով և նրանց գործածողները գոհ են որակից։ Շինարարական տրեստը վկայում է, որ ասածս մարդկանց պատրաստած ավտոդողերը դիմացկուն են։

***

Վեդիից՝ մինչև Մեղրի, Փոքր Կովկասի հարավային ճակատներով ձգվում են դեղին-պղնձագույն ժայռերի կնճռոտ շարքերը։ Կրաքարից կազմված այդ ժայռերը սովետական տեխնիկայի հզոր ուժով վեր են ածվում կրի, ցեմենտի, կարբիդի, ռետինի։ Հայ գիտնականները աշխարհում առաջին անգամ այդ լեռ քարից ստացան կրկնակոշիկներ։

Անվերջանալի են մեր ռետինի հումքի պաշարները, ու կան այդ պաշարները, քանի կա Փոքր Կովկասյան լեռնաշղթան։ Սակայն փոքր դեր ունի քարից ստացված ռետինը ավտոդողեր պատրաստելու գործում։ Առայժմ փոքր։ Այդ գործարանի և մեր քիմիկոսների առաջ խոշորագույն պրոբլեմ է դրված,—կրաքարից ստացվող կաուչուկը լայնորեն գործադրել ավտոդողերի արդյունաբերության մեջ։ Եթե դա հաջողվի, իսկ դա անպայման կհաջողվի, այն ժամանակ ասածս գործարանը կունենա ծրի հումքի այնպիսի բազա, որպիսի բազա չեն կարող ունենալ աշխարհիս ավտոդողերի բոլոր գործարանները միասին վերցրած։

Ապրիլ 25, 1947 թ.

ԵՐԱԽՏԻՔԻ ԶԳԱՑՈՒՄԸ

ՔԵԶԻ ՇԱՏ ԿՅԱՆՔ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ, ՔԵԶԻ
ԱՐԵՎ, ՀԱՅՐ ՍՏԱԼԻՆ։
(Հայրենադարձ հայերի երգերից)

«Պոբեդա» նավի շքեղ կահավորված հանգստասենյակում մեզ դիմավորեց կլոր, բարի դեմքով, մեղմ ժպիտով, կիրթ շարժ ու ձևով միջահասակ մի մարդ։ Քարավանի պետ Հակոբ Թոլյանցն է։ Իր հետ է իր դեղանի, դեռատի կինը։ Նավը հենց նոր ափ հասավ։ Քիչ առաջ նա տախտակամածից դիտում էր զմրուխտյա շքեղ հանդերձներով պճնված ափերը, երկնասլաց կիպարիսների մեջ ճերմակին տվող վիլլաները, մինչև ամպերը բարձ-բարձրվող Կովկասյան փառահեղ լեռները։ Դեռ հուզված է, ուստի այսքան միայն կարողացավ ասել.

— Շատ էի լսած սովետական ազգերի եղբայրության մասին, բայց աչքով տեսած չէի։ Ճանապարհին, բազմազգի ծովայինների հոգատարության մեջ ես զգացի ազգերու եղբայրությունը շոշափելի կերպով։ Ի՜նչ հիանալի մարդիկ են ռուս մարդիկ, ես անոնց հետ առաջին անգամ գործ ունեցած եմ, և չեմ թաքցներ հիացմունքս...

Որ ռուս մեծ ժողովրդի շնորհիվ, բոլշևիկների մեծ պարտիայի շնորհիվ է, որ այսօր այդ թափառական մարդիկ ունեն հայրենիք, այդ գիտակցում են Սիրիայի, Լիբանանի հեռավոր տափաստաններում ու լեռներում, աշխարհից կտրված մարդիկ անգամ։ Ահա սև բարձր փափախը գլխին ծուռ դրած, ձեռքերը կողերին կան-

թած, խրոխտ ու հպարտ քայլվածքով այս ծերունին կես դար փակ կյանք է վարել Կիլիկիայից հյուսիս ընկնող անմատչելի ու աՀավոր Ճեպել Մուսայի լեռներում։ Նա նույնիսկ չգիտի որտեղի՞ց են սերում իրենց նախնիները, ե՞րբ են հիմնվել այդ լեռներում պատսպարված 5—6 հայկական գյուղերը։ Ե՛վ այս փախստավոր ծերունին՝ Եսայի Յաղուբյանը, և՛ իր համերկրացիները լսել էին հեռավոր Հայաստանի մասին և գիտեին, որ այդ երկիրը կործանումից փրկվեց ռուսների ձեռքով։

Նրանք, այդ մարդիկ հայրենիք չեն տեսել։ Եվ որովհետև իրենց նախնիներն էլ զուրկ են եղել հայրենիք ունենալու երջանկությունից, ուստի սերնդե սերունդ անցել է հայրենիքի կարոտը, հնացել է այդ կարոտն ու արբեցուցիչ դարձել հին գինու նման։ Ու լեռներում փակված այդ մի բուռ ժողովուրդը, հեծեծալով օտարի լծի տակ, իր երազների մեջ յուրովի է պատկերացրել ու փայփայել Սովետական Հայաստանը։ Հայրենիքի կարոտը թերևս ոչ մի ժողովրդի մեջ այնպես բուռն կերպով չի արտահայտված, որքան այդ լեռնականների մեջ, որոնք հայրենիքը երազել են ոչ թե տասնամյակներով, այլ դարեր շարունակ։

— Մենք հայրենիք չէինք տեսել, բայց մութ կերպով կզգայինք, որ մենք պետք է որ հայրենիք ունենանք,—ինձ բացատրեց ասածս փախստավոր ծերունին,—կզգայինք, որովհետև բանականությունը մեզ կթելադրեր, որ մարդը հայրենիք պետք է ունենա, այդ՝ երկրե-երկիր քշվող ծախու անասուններն են, որ հայրենիք չունեն։ Եվ կգար մեր սովետական հայրենիքի ծագումին լուրը հեռավոր երազին մը պես և մեր սրտերը կվառեր մեկ փափագով միայն՝ բախտ ունենալ տեսնել այն երկիրը, ուր կարոտը սրտերին մեջ մեռան մեր հայրերն ու պապերը, տեսնել այն մեծ ժողովուրդը, այն մեծ մարդը՝ ով մեզ հայրենիք ավեց, ով վերջ տվեց մեր պանդխտությանը։

***

Եսայի Յաղուբյանը Մերձավոր Արևելքում անուն հանած կտրիճ է։ Կես դար նա կռվել է բռնապետության դեմ, և իր խիզախությամբ փրկել Ճեպել Մուսայի հայությանը։ Նա ողջ բնակչությանը լեռ է բարձրացրել, տեղավորել մթին անտառներում ու անմատչելի քարանձավներում ու իր կտրիճների հետ միասին

զենքով պաշտպանել այդ մի բուռ ժողովրդի ազատությունն ու կյանքը։

Այդ լեռնաբնակ հայերին ստիպում էին ուրանալ հավատը, մոռանալ մայրենի լեզուն, արգելում էին հայերենի դասավանդումը։

— Գայմագամի ուղարկած պաշտոնյաները բռնի կերպով հանեցին եկեղեցիների զանգերը, ես նորեն կախեցի։ Անոնք հանեցին, ես նորեն կախեցի։ Եվ երբ զորքով եկան, որոշեցինք մեռնել բոլորս—բայց չենթարկվել բռնակալությանը։

Բարեբախտաբար նրանք չմեռան։ Մի մութ գիշեր նրանք ցած իջան լեռներից, ճեղքեցին շրջապատումը, հասան Միջերկրական ծովի ափը և փախան ֆրանսիական նավերով։

Այդ մարդու անձնազոհությունը բնորոշող մի փոքրիկ դեպք։

Երբ շատ են նեղում խաղաղ հայ շինականներին, Եսայիս ոտից-գլուխ զենքի մեջ կորած լեռներից իջնում է շրջանի կենտրոն, մտնում ոստիկանապետի մոտ ու հայտարարում.

— Անզեն ժողովուրդը կոտորելը քաջություն չէ։ Ես զենքով եմ—ի՛նձ խփեցեք...

Պատմում են, թե ինչպես այդ քաջը տիրականորեն ու հպարտ անցավ ոստիկանների առջևից և ոչ ոք չհամարձակվեց կրակ բացել նրա վրա։

Ճեպել Մուսայի ժողովուրդը իր կորիճներով ծառայում է ֆրանսիացիներին։ Եսային լեգիոն է կազմակերպում ու պաշտպանում Էգեյան ծովի կղզիներից մեկը։

— Նորեն օտար էին, մեր զոհերը ոչ մի արժեք չուներ անոնց համար,—ցավով պատմում է նա։—Երբ կկռվեինք անոնց համար—պատիվ ունեինք։ Ֆրանսիական ծովակալի մոտ մտնելիս, հարգանքով տեղեն կելլեր։ Բայց երբ կռիվը վերջացավ—այլևս պետք չէինք անոնց, արդեն կարհամարհեին որպես շան։ Վերադարձանք Լիբանանի Սուր քաղաքը։ Այստեղ էլ ոչջ հողը, իրավունքը, իշխանությունը Ահմադ և Քյազիմ բեկերինն էր։ Նորեն մնացինք ընչազուրկ, նորեն ազատությունեն զուրկ էինք։ Ճեպել Մուսային մեջ գոնե լեռներ կային, ուր մեր ազատությունը կըպաշտպանեինք։ Այստեղ 7 տարի ես մնացի ինչպես վանդակի մեջ և 7 տարվա մեջ այս ծովի չափ արցունք թափեցի։ Կմտածեի՝ ին-

չի՞ նման է մարդս առանց հայրենիքի, առանց ազատության։ Ու 7 տարի ես անցուցի կարծես գերեզմանի մեջ։ Հիվանդություններ եկան վրաս, ուժս պակսեց, սիրտս մեռավ։ Բայց երբ լուր տվին, որ պիտի հայրենիք դառնանք, կարծես հարություն առա գերեզմանեն, ուժս ետ եկավ ու հիվանդություններս չքացան։ Հիմա, ըսեմ ձեզի, ես անձնվեր ծառայեցա ֆրանսիացիներին—արհամարհանք ստացա։ Ես գործ ունեցա տաճիկ պաշտոնյաներու ու արաբ բեկերու հետ ու ամեն տեղ ինձ վերքեր հասուցին, ինձ հալածեցին։ Ինչո՞ւ։ Հայրենիք չունեի, թիկունք չունեի։ Ինչպե՞ս հիմի համեմատեմ ինձ այս ափը բերող ռուսներին ֆրանսիացիներու հետ... ինչպե՞ս չափսոսեմ իմ ջահելությունը, որ տվի օտարներուն և միայն իմ ծերությունը նվեր բերի ինձ հայրենիք տվող ռուս ժողովրդին ու մեծ Ստալինին։

Ծերունին մի պահ լռեց. հուզմունքից շառագունել էր։ Քիչ հետո նա հանդարտ շարունակեց.

— Չորս որդի եմ բերել Սովետական երկրին նվեր, չորս կտրիճ... անոնք երախտահատույց կլլան իմ փոխարեն։

Երբ նավի կամրջակի ծայրը առավ քարափին, ծերունին դուրս եկավ նավից, ծանր ու հպարտ ցած իջավ և քարափի վրա կանգնած զինվորականներին նայելով հարցրեց.

— Ռուսնե՞ր են...

Ապա դրական պատասխան ստանալով, բարձր ձայնով հարցրեց.

— Իրավունք կտա՞ք համբուրեմ այդ կտրիճներու շքանշանները։

Ապա մոտեցավ մեկիկ-մեկիկ համբուրեց սպաների մարտական շքանշանները և կռիվների մեջ ճերմակած նրա դեմքի մազերի վրայով ցած գլորվեցին երջանկության արցունքները։

— Քաջը քաջին կսիրե,—շշնջաց մեկը։

— Կուզեր ռուս կոնսուլին մոտ երթալ Գերմանիո ճակատը մեկնելու... Անիկա ըլլալու բան չէ, ըսինք ու կերպ մը համոզեցինք զինքը ետ մնալ այդ մտքեն,—կամաց պատմում էր մեկը։

Իսկ ծեր զինվորը զմայլված տնտղում էր վերջին սպայի շքանշանները ու կցկտուր ասում.

— Ափսո՜ս, բախտ չունեցա ձեզի հետ կռիվ գնալ... Իմ քաջությունս աննպատակ անցավ, իմ գնդակներն ապերախտ օտարներու համար արձակեցի... Բայց ես չեմ մեռնի, մինչև հայրենիքիս համար կռիվ չերթամ սովետական կտրիճներու հետ։ Ալ ինչո՞վ կարող եմ երախտահատույց ըլլալ Առաջնորդին, եթե ոչ իմ կյանքով ու աշխատանքով, իմ քաջությամբ...

Հուլիս, 1947 թ.
Բաթումի

ՄՈՒՏՔԸ ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐ

Մենք հիացած էինք Բաթումիի կախարդական բնությամբ, այդ փարթամ կանաչի և երփներանգ ծաղիկների աշխարհով։ Մենք տարված էինք երկնասլաց կիպարիսներով և արբեցած՝ մագնոլիաների բույրով։ Ծովափնյա զբոսավայրերի զովում նստած, արմավենիների արանքով մեզ ժպտում ու դյութում էր Սև ծովի անեզր կապույտը։ Եվ չնայած մենք շրջապատված էինք մերձարևադարձային բնության հրաշալիքներով, այսուամենայնիվ մեր հայացքը շարունակ թափառում էր ծովի հեռուներում, ուր ջրերի մուգ կապույտը միանում է երկնի բաց լազուրին։

Այնպես հանդարտ ու մեղմ էր ծովը այդ օրը, այնպես սիրալիր էր ժպտում նա մեզ ու այնպես նազանքով շոյում իր ափերը։

Եվ այդ խաղաղ միջօրեին կապույտ հորիզոնի վրա արնագույն մի դրոշ երևաց, ապա ճերմակ կայմը, կարմիր գոտի կապած ծխնելույզը և մի ահագին_ճերմակ նավ վիթխարի կարապի նման սկսեց վեհորեն սահել դեպի ափ։

Ափից ցնծագին ձայներ լսվեցին.

— «Պոբեդա՜ն» է, գալիս են, գալի՜ս...

Նավը հետզհետե մեծացավ և ծովից փչող մեղմ քամին մեզ հասցրեց Հայկական Պետական Հիմնի ծանոթ հնչյունները. տախտակամած բարձրացած բազմությունը հուզված և խրոխտ երգում էր ու թաշկինակներ թափահարում։

Երբ նավը մոտեցավ քարափին, մի պահ դադարեց երգը և առնական մի ձայն նավի վրայից կանչեց.

— Ողջույն քե՛զ, սովետ աշխարհ, ողջույն մեզ հայրենիք պարգևող մեծ Ստալինին…

Եվ երկու հազար բերան միաժամանակ «ուռա» գոչեցին։

«Պոբեդան» խարիսխ ձգեց և կամրջակն իջավ ցած։

Անհամար ծաղիկներ ափից թռան դեպի վեր։ Նավի բոլոր հինգ հարկերից կարոտակեզ սրտով մարդիկ բռնում, հոտոտում ու համբուրում էին հարազատ երկրի ծաղիկները ու լալիս ուրախությունից։

***

Կամրջակով բարեհամբույր ժպիտը լայն դեմքին մի կին բարձրացավ մտավ նավի հիվանդանոցը, ողջունեց ծննդկան կանանց և հանձնեց նորածին մանուկների օժիտը,—ճերմակ շորեր, սավաններ։

— Կարգն այսպես է մեզ մոտ, բոլո՛ր նորածինները օժիտ են ստանում,—բացատրեց նա զարմացած ու շփոթված կանանց։

Երբ մենք զրուցում էինք նրանց հետ և քնքշանքով նայում ճանապարհին ծնված մանուկներին, կանանցից մեկը թույլ ձայնով հանդարտ խոսեց.

— Ես ուրախ եմ, որ իմ երեխան ծնվեց սովետական ջրերու վրա… Եվ անանկ խաղա՜ղ էր ծովը, կարծես անծայր կապույտ սավան փռած ըլլային… Ես որդուս անունը Պոբեդա դրի, մեզ ազատության ափ հանող սովետական նավի պատվին…

Այս նավի վրայի կանայք, որ այլևս ազատագրված են կապիտալիստական ստրկությունից, արդեն ամուր համոզում ունեն իրենց զավակների կրթության ու ապագայի վերաբերմամբ։

Անցյալ տարի դաշնակների կողմից տեռորի ենթարկված կրակոտ հայրենասեր Պողոս Նատրյանի կինը՝ Նազելին ինձ հարցրեց.

— Իմ չորս երեխաներից միայն մեկը դպրոցի հասակ ունի։ Կուզեի բոլորին նայող ըլլար, որ ես գործ ընեի հայրենիքիս համար։

Երբ իմացավ, որ փոքրիկներին կարող է տեղավորել մսուրում, մանկապարտեզում, դեմքը փայլեց ուրախությունից,—նրան և նավի վրայի բոլոր մայրերին մտահոգող գլխավոր հարցը լուծված էր։

***

Ամեն խավի, ամեն զբաղմունքի մարդիկ կան այստեղ: Մոտ 200 տնտեսություն գյուղացիներ են, որոնք իրենց ճորտային գոյությունը քարշ են տվել Բեյրութի շրջակայքում, բեգական կալվածքներում, օտար հողի վրա: Այդ մարդիկ անուսում են, մութ, հետամնաց: Դրանցից շատերը մոռացել են մայրենի լեզուն: Առհասարակ քիչ են կրթություն ունեցող մարդիկ ներգաղթողների մեջ: Այս նավի վրա հազիվ երեքից-չորս հոգի կան միջնակարգ կրթությամբ, մնացածը կամ անգրագետ են կամ տարրական կրթությամբ. նրանք գալիս են մի երկրից, ուր կրթությունը բարձր խավերի անհասանելի արտոնությունն է:

Եվ զարմացած հարցնում էին՝ Երևանի բժշկական ինստիտուտն ավարտած աղջիկներին ցույց տալով.

— Իրո՞ք սա օրիորդները կոլեջն ավարտած են: Սուրյո մեջ կոլեջն ավարտած կին չկա... Իսկ ողջ երկրին մեջ, անիկա ալ հեռու, Կիպրոս կղզիին վրա մեկ միջնակարգ դպրոց կա—Մելքոնյան դպրոցը:

Հայրենիք եկող երիտասարդությունը ծարավի է ուսման: Այդ շնորհալի ընդունակ երիտասարդությունն երազել է ուսման մասին, ու նրա երազներն ընկղմվել են կիսագաղութային Լիբանանի և՛ դաժան, և՛ ողորմելի իրականության մեջ: Ահա երկու գեղանի քույրեր—Շաքեն և Սոնան: Որքա՞ն ընդունակ և առաջադեմ աղջիկներ: Բայց ստիպված էին մանկավարժությամբ զբաղվել յոթնամյա կրթությամբ... Մայրենի լեզվով ավելին անհնարին էր ստանալ այնտեղ: Եվ այժմ նրանց միակ իղձն է՝ լրացնել կրթության պակասը մեզ մոտ:

Նույն փափագն ունի սևաչյա, կրակոտ մի երիտասարդ՝ Կարապետ Գալանտերյանը: Նա էլեկտրիկ է: Նա Սևանի կասկադի կառուցված և կառուցվելիք հիդրոկայանները հինգ մատի պես գիտի:

— Հրազդանի ջրերու ուժն իմ երազն է եղած. եկած եմ անոնց ծառայելու, իմ կամքն անոնց ուժին միացնելու,—խոսում էր նա հանդիպման առաջին հուզմունքն անցնելուց հետո: Բայց տեսնելով ընկերոջս կրծքի շքանշանները, թախիծով լցվեցին նրա սև աչքերը և տխուր ավելացրեց.

— Բայց կկարծեմ, որ արժանի չեմ այդ պատվին։ Չէ՞ որ դուք կռվեցիք ու ձեր արյամբ փրկեցիք մեր հայրենիքը. իսկ ե՞ս...

Մենք ծանոթացանք հերկուլեսյան կերպվածքի երեք սփյուռքահայ երիտասարդների,—Բաղրամյանի անվան ֆուտբոլային խմբի մարզիկներն են։ Այս խումբը ողջ Լիբանանում ու Սիրիայում իրեն հավասարը չունի և 73 խաղի մեջ 61 հաղթանակ է տարել, իսկ վերջին երկու տարում—3 գավաթ նվաճել։

Երբ ես հարցրի, թե Երևանում շարունակելո՞ւ եք խաղալ, ֆուտբոլիստ Կարապետ Սաֆարյանը պատասխանեց.

— Իսկական խաղը նոր միայն սկսելու ենք։ Պեյրությին մեջ մենք 6 օր չարաչար կաշխատեինք օտարներու համար և կխաղայինք 7-րդ օրը՝ հոգնած ու հյուծված։ Հիմա մենք մեր ողջ ժամանակը կնվիրենք ֆուտբոլին։

Ի դեպ այդ խմբի ղեկավար, անվանի Հաջի Հայկ Կարմիրյանին ֆրանսիացիք մեծ գումարներ են խոստացել և աշխատել են համոզել Ֆրանսիա տանել։ Հայրենասեր, ազնիվ երիտասարդը պատասխանել է կարճ.

— Ես կգնամ խաղալու իմ հայրենի երկրում... Ես ձեզի համար փառք չե՛մ վաստակի...

Մենք պատահեցինք նաև դաշնակների զոհ Հակոբ Ատաձյանի ջուլհակ եղբայրներին, անվանի գրաշար Հովսեփ Կրեոյանին, բեյրութցի երկաթագործ Եփրեմ Կեճեքուշյանին, խոսեցինք նրանց հետ և բոլորի մեջ մի վառ տենչ տեսանք,—աշխատել Հայրենիքի համար, բարգավաճ դարձնել այն երկիրը, որ երազել են նրանց հարազատները Արաբիայի անապատներում մեռնելիս...

— Բա՛վ է օտարի համար տքնեցանք,—մեր հայրենի տունը պիտի կառուցենք հիմա,—այս էր նրանց բոլորի պատասխանը։

* * *

Բարակ անձրև էր մաղում և մայր մտնող արևը փառահեղ մի ծիածան էր կապել Սև ծովի վրա։ Գնացքը հանդարտ սողում էր ծովեզրով և մտնում «Կանաչ հրվանդանին»։ Նրա երկու կողմից անտառային փարթամ ծաղիկների աշխարհն էր, արմավենու ծառուղիները, թեյի դանգրահեր պլանտացիաները և այդ կանաչ

փարթամության մեջ հեքիաթային ապարանքների նման ճերմակին տվող հանգստյան տները։

Դժվար էր թողնել այդ աննման աշխարհը և այդ ափսոսանքը կար բոլորի աչքերում։ Բայց նրանց հոգում փթթում էր մի այլ, ավելի զորեղ զգացում, որ արտացոլված է իրենց իսկ հնարած այս երեք տողում.

Մնաս բարով, քաղաք Բաթում,
Թեև անուշ, սիրուն ես դուն,
Բայց մենք կերթանք հայրենի տուն...

Դեպի հայրենի տուն, դեպի իրենց նախնիների երազած աշխարհը։ Ով ապրել է այդ մարդկանց անտուն, աստանդական, հալածական ու դառնություններով լի կյանքը, միայն նա կարող է զգալ այդ մարդկանց կարոտի խորությունը, հայրենազուրկ մարդու անբավ կարոտը։ Այդ մարդիկ հայրենիք չունեին, հայրենիք չէին տեսել, բայց հայրենիքի զգացումը, նրա կարոտը ունեին իրենց հոգում՝ մարդկային բնազդով։

***

Ողջ ճանապարհին, և՛ Սուրամի անտառապատ լեռնանցքում, և՛ առաջնորդի ծննդավայր Գորիի բեղուն դաշտերում, և՛ Լոռու ձորը մտնելիս, ոչ մի վայրկյան չպակասեց պանդխտությունից վերադարձող այդ մարդկանց հետաքրքրությունը դեպի սովետական աշխարհի բնությունը, սովետական մարդու ստեղծագործ աշխատանքի պտուղները,—բարեշեն կայարաններ, կանաչապատ լեռները կապտագույն ժապավեններով կտրող ասֆալտապատ ուղիներ, ձորերում դղրդացող հիդրոկայաններ ու շինարարական շռինդ երկաթուղու երկարությամբ։

Գիշերը գնացքը սողում էր Դեբեդի եզերքով, վագոններից լսվում էր ուրախ ժխոր,—նրանք չքնեցին այդ գիշեր, անհամբեր սպասում էին լույսը բացվելուն։ Եվ երբ լույսը բացվեց, Գուգա-

բաց չքնաղ լեռները գծագրվեցին վաղորդյան աղջամուղջի մեջ, ապա նրանց խիստ դեմքերը հետզհետե պարզվեցին և նրանք գուրգուրանքով ժպտացին մեր աշխարհը մտնող այդ հարազատ մարդկանց։

Գնացքը կանգ առավ։ Մարդիկ իջան հայրենի հողը մոտիկից շոշափելու, տեսնելու այն, ինչ մինչ այդ երազ էր։

Եվ սանջակցի մի ալեհեր մարդ, որի դեմքը կնճռոտվել էր վշտից ու զրկանքներից, իր երկու որդիներին հրամայեց.

— Համբուրեցե՛ք, սա Սովետ Հայաստանի հողն է...

Բաթում—Երևան
Գնացքում։

ՄԱՅՐ ՀՈՂԻ ՎՐԱ

Այսօր նոր ժամանած վագոնում ես ծանոթացա Բեյրութից եկած մի շատ համակրելի ընտանիքի։ Ընտանիքի ավագը՝ Ղազարոս Ճերեճյանը երկայնահասակ, ալեխառն, կարճ խուզած մազերով, ամրակազմ մի երկաթագործ է։ Կինը՝ Սրբուհին պանդուխտ կնոջ տառապանքի դրոշմն է կրում իր նիհար դեմքին, ավագ որդին Գրիգորը՝ հաղթանդամ, բաջառողջ մի երիտասարդ է, մասնագիտությամբ մեխանիկ-շոֆեր։ Այնուհետև գալիս է մյուս որդին—Թորոսը, դուստրը—Ազնեսան, կլոր համակրելի դեմքով, խարտյաշ մազերով, մանկական անմեղ ժպիտը դեմքին տասնութամյա մի օրիորդ։ Եթե հիշատակենք նաև 11-ամյա Մայրանուշին ու 5-ամյա շեկլիկ-փափլիկ Եղիսաբեթին, թված կլինենք այդ ընտանիքի բոլոր անձերը։

Այս ընտանիքի պատմությունը հարյուր հազարավոր պանդխտական հայ ընտանիքների պատմությունն է։ Ինչքա՜ն նման են այդ պատմությունները իրար։ Նրանք բոլորն էլ կրել են սուլթանական Թուրքիայի տաժանելի լուծը։ Նրանք բոլորն էլ տեղահան են եղել իրենց բներից, տեսել են իրենց հարազատների արյունը, նրանց սրախողխող մարմինները թողել են անթաղ և զարհուրանքի արյունոտ ուղի են անցել դեպի Արաբական ավազուտները։

Այն մարդիկ, որոնց հետ ես ծանոթացա այսօր, Կիլիկիայի հին բնակիչներից են։

Մեր զրույցի ընթացքում մեր շուրջը հավաքվեցին Կիլիկիայի այդ ավերված բերդաքաղաքի նախկին բնակիչները։

Երբ նրանք խոսում էին Տավրոս լեռների մի ահավոր կիրճում կանգնած իրենց արծվաբնի մասին, երբ հիշում էին ծերպերում անկած իրենց այգիները, ցուլարագեղ հովտում կանաչող իրենց պարտեզները, որ հիմա ավերված են ու ամայացված,—ծուխ էր դուրս գալիս նրանց հոգուց և կսկիծ կար նրանց հայացքների մեջ:

— Ինը հարյուր հոգով 60 հազարի դեմ մե՛նք ինը ամիս պաշտպանեցինք բերդը,—հուզված ասաց այդ կռվին մասնակից ջլուտ ու թուխ մի մարդ՝ Մինաս Օրուջյանը:

Երկաթի ու կապարի հանքեր կան Հաջն քաղաքի ձորում: Կռվով երկաթ ու կապար են դուրս բերել նրանք շախտերից և հայ արհեստավորները զենք են պատրաստել կռվողների համար:

— Կանայք ողամարդու չոր հագած կկռվեին, իսկ երեխաները փամփուշտ կհասցնեին անոնց: Թուրքերը հազարներով «ալա՜հ, ալա՜հ» գոչելով առաջ կնետվեին ու կզարնվեին մեր բերդի ժայռերին, մեր կամքին, մեր զենքին: Այդպես կպաշտպանեինք մենք մեր բույնը, մեր վերջին ամրոցը...

Նրա արծվենի աչքերում արցունքներ երևացին:

Ղազարոս բիձան, որ լուռ ու մտախոհ լսում էր, թառանչ արձակեց և ասաց.

— Մենք աշխատավոր խաղաղ մարդիկ ենք, բայց մենք չենք մոռացել մեր հայրենի բույնը՝ կործանված Հաջն քաղաքը, չենք մոռացել Ադանայի կոտորածը, չենք մոռացել ու չենք էլ մոռանամ լու ավերված Զեյթունը... Եվ երբ հրդեհեցին մեր բույնը, մեր սրտում ծնվեց ու աճեց մեր միակ փափագը,—ամեն լծից, ամեն կոտորածից ազատ մեր Սովետական տունը գնալ: Մեր փափագն էր՝ տեսնել Հայոց պետությունը, չէ՞ որ Կիլիկիա մեր պետության կործանումից հետո ահա հինգ դարի ավելի մենք հայկական պետություն կերազենք: Ու ահավասիկ մեր դեմ— մեր պետության մայրաքաղաքն է, մեր նոր Ադանան՝ մեր հարազատ Երևանը... Կարո՞ղ եք, ընկեր լրագրող, նկարագրել մեր ուրախությունը, կարո՞ղ եք տալ, թե ինչ ալեկոծում կա այժմ իմ հոգում...

Եվ ի՞նչ գրիչ կարող է տալ հայրենիքից զրկված և նոր, իսկական հայրենիքը գտած այդ մարդկանց մեծ ապրումները: Ի՞նչ գրիչ կարող է տալ Միսակ Օրուջյանի ահավոր միշտը, անհատակ վիշտը մի մարդու, որի 360 ազգակիցներից ու հարազատներից մեն-մենակ ինքն է մնացել...

***

Մինչդեռ հասակավոր տղամարդկանց սրտում իրենց քանդված օջախի ծուխն է մխում, մինչդեռ իրենց նոր օջախը շենացնելու հոգսով են համակված, նույն ընտանիքի ջահելները ա՛յլ ապրումներ, ա՛յլ հոգսեր ունեն:

— Վարպետին գործերեն կա՞ն ձեր գրախանութում... Իսկ Գրիգոր Զոհրապի նովելնե՞րը... Հայաստանու գրքեր շա՞տ կան... Ի՞նչ եք ասում... Դուք ինձ գրքեր կճարեք, այնպես չէ՞,—իր ազգի գրականության ծարավի մարդու պապակով հարցեր է տալիս Ղազարոսի մեծ որդի Գրիգորը իմ գրավաճառ ընկերոջը՝ Հովհաննեսին:

— Սիրելիս, այն շենքը, ուր պիտի ապրեք դուք, իմ գրախանութի դիմացն է: Գրքեր, բոլորն էլ հայերեն, որքան ուզեք կտամ ես ձեզ:

Գրիգորը հրճվանքի մեջ է:

— Աշխատանքի մասի՞ն կհարցնեք,—քիչ հետո պատասխանեց նա ընկերոջս,—ես մեխանիկ եմ, բայց եթե տանեն ճանապարհի եզրին քար ջարդելու,—կգնամ սիրով,—չէ՞ որ այդ քարով իմ հայրենիքի ճանապարհները պիտի շինեն... Կհարցնեք թե ինչո՞ւ չեմ հետաքրքրվեր, թե ինչպիսի բնակարան են հատկացրել զի՞ս... այդ հարցը ինձ բնավ չի մտահոգեր, բացօթյա կապրիմ, վրանի մեջ կապրիմ, բայց իմ հայրենիքի հողին վրա, վեհափառ Արարատը միշտ դեմս...

— Իսկ ձե՞ր փափագը, օրիո՛րդ,—հարցրի ես Գրիգորի կրտսեր քրոջը՝ Ագնեսային:

— Իմ առաջին փափագը սովորելն է: Պեյրութի Սահակյան Ազգային Վարժարանին մեջ 6 տարի սովորեցա, 2 տարի ալ իգական սեռի վարժարանին մեջ: Բայց վերջին 2 տարին կորուսի—միջոցներս չէին ներեր ուսումս շարունակել:

— Այստեղ քիչ են դպրոցները, դժվար կլինի տեղավորել բոլորին,—խոսեցի ես:

Բարեսրտորեն ու լայն ժպտաց:

— Սոսկալի են ձեր այդ կատակները,—կասկածներ մի՛ ձգեք սիրտս—ես պիտի սովրիմ ու փոքր քույրերս ալ պիտի սովրին: Ես այն հույսով...

Նրա խոսքը մնաց կիսատ: Ներս մտավ սև աչքերով, ճերմակ մորթով, նրբին կազմվածքով և շատ կիրթ շարժ ու ձևերով մի աղջիկ, և ողջագուրվեց ասածս ընտանիքի անդամների հետ:

— Քա, ասիկա մեր Ագնեսան է, Աղասարյան Ագնեսան,— բացականչեց Ղազարոսի կինը և փարվեց աղջկան:

Ճանաչեցին, ինձ մոռացան և շրջապատեցին նրան:

Ագնեսան 10 տարի առաջ է եկել Բեյրութից: Հորը այնտեղ սպանել են դաշնակցականները, եկել է մոր, քրոջ և եղբոր հետ:

— Որքա՜ն մեծցեր է, որքա՜ն աղվորցեր...

— Մարդը առո՞ղջ է:

— Տաքեն՝ քույրդ աղվո՞ր է:

— Տաքեին է՞լ եք հիշում, նա Բեյրութում բոլորովին երեխա էր: Այժմ փոխադրվել է բժշկական ինստիտուտի երրորդ կուրսը:

— Տաքեն բարձրագույն կրթությո՞ւն...

Բոլորի դեմքերը զարմանք է արտահայտում:

— Մի՛ք զարմանա,—ժպտադեմ խոսում է աղջիկը,—եղբայրս էլ է վերջացրել բարձրագույնը:

— Դուն ա՞լ,—զարմանքով հարցնում է մեկը:

— Ես էլ... ավարտել եմ օտար լեզուների ֆակուլտետը:

Փոքր Ագնեսայի աչքերը փայլում էին հրճվանքից: Նա դիմեց ինձ չարաճճի ժպիտով.

— Երաժշտության փափագ ես ունեմ, կարո՞ղ եմ հուսալ, որ...

Ես ծիծաղեցի:

— Անհոգ եղեք, մեր քաղաքը դպրոցների և ինստիտուտների քաղաք է,—միայն սովորելու ցանկություն լինի.—երաժշտական դպրոցներ նույնպես կան, միք անհանգստանա:

— Գիտե՞ք,—դարձավ ինձ Ղազարոս բիձան,—սա Ագնեսան մեր հարևանի աղջիկն էր: Գրիգորիցս հետո, երբ աղջիկ ունեցա, սա Ագնեսայի անունը դրի աղջկանս: Երկուսն էլ Ագնեսա են,— բայց անիկա ո՜ւր է հասել, իմը ուր է մնացել...

Այսպես, տասը տարի հետո Ագնեսաները հանդիպեցին վերջապես: Այժմ փոքր Ագնեսան համակված է միայն մեկ խանդով— կարել անցնել այն տարածությունը, որ առաջացել է իր և իր ըն-

կերուհու միջև այն պատճառով, որ նրանք ապրում էին տարբեր կարգերում, տարբեր աշխարհներում։

***

Երկաթագործ Ղազարոսը մայրաքաղաք մտավ և տեղավորվեց Կաուչուկի տուֆաշեն շենքերից մեկի լուսավոր սենյակներում։ Տեսնելով պատրաստ բնակարանը, նա զգացվեց։

— Դուք մեր քանդված հայրենիքը քրտինքով ու տանջանքով ծաղկած երկիր դարձրիք, մենք պարտք ենք ձեզ,— ասաց նա հուզված։— Դուք տուն եք շինել մեզ համար, մենք ալ մեր հերթին տներ կշինենք մեր այն եղբայրների համար, որ պիտի գան աշխարհի բոլոր ծայրերեն...

Դեռ կայարանում նա ինձ ասաց.

— Պեյրութին մեջ մենք կմաշվեինք սեփական պետություն ունենալու փափագեն։

Նրա իղձը «սեփական պետության» հողում իր օջախը հիմնելու—կատարվեց, այս գիշեր նա խաղաղ ննջեց Հայաստանի մայրաքաղաքում։ Վերջ տրվեց նրա հոգեմաշ թափառումներին, նրա տանջալի պանդխտությանը, ստորացումներին։ Եվ երբ այս առավոտ նա իր բնակարանի բաց պատուհանից նայեց փարթամ այգիների մեջ թաղված Արարատյան դաշտին ու ոսկեզօծված տեսավ ծեր Մասիսի հավերժական ձյունապատերը,—համակվեց անպատմելի ուրախությամբ ու ամոքվեց անցյալի տառապանքներից դառնացած նրա հոգին...

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՎՐԱ

Լիբանանից եկած հայերից 15 ընտանեություն (71 շունչ) տեղավորվել են Հոկտեմբերյանի շրջանի 3-րդ սովխոզում։

Մենք այցի գնացինք նրանց։ Ընդարձակ, լուսավոր, նոր վերանորոգված ու ճերմակացված սենյակներում են տեղավորված նրանք։ Նրանցից շատերը մշակներ են եղել, ապրել են անշուք հյուղերում, և այժմ շատ գոհ են էլեկտրական լուսավորություն ունեցող իրենց հարմարավետ նոր բնակարաններից։

Ներս մտանք մի սենյակ։ Բնակիչներն իսկույն ոտքի ելան, հերթով ձեռք տվին՝ գլխի արևելյան խոնարհումով, իսկ փոքրահասակները համբուրեցին մեր ձեռքը։ Մի կին, որ պառկած էր, դժվարությամբ բարձրացավ տեղից։

— Ասեղ կերած է,—բացատրեց ամուսինը։

Այսինքն՝ սրսկված է։ Մալարիայի և տիֆի դեմ սրսկել են բոլորին։ Նրանք, ովքեր ճանապարհին հիվանդացել են—բուժվել են այստեղ։ Ահա երկու շաբաթ է մեզ մոտ են այդ մարդիկ և դեռ զարմացած են այն բանից, որ բժշկությունը կարող է ձրի լինել։ Երբ արհկոմի նախագահ Գևորգ Հովսեփյանը նրանց ասաց, որ մեզ մոտ ոչ միայն բուժումն է ձրի, այլև հիվանդացողը շարունակում է ստանալ իր աշխատավարձը և տեղը չի կորցնում, իսկ հղի կանայք 3 ամիս արձակուրդ են ստանում,—նրանց զարմանքն ավելի մեծ եղավ։ Սովետական մարդու համար էլ «տարօրինակ» են Լիբանանի կարգերն, ուր, օրինակ, դամասկոսցի Սարգիս Մարտիրոսյանի հիվանդությունը որոշելու համար վերցնում էին հինգ թուղթ ոսկի...

— Մի անեղ զարկելուն երկու օրվա վարձը չէր բավեր,— գանգատվում է նա:

Նորեկները մեր երկրի կլիմային շուտ հարմարվեցին,—ոչ մի հիվանդ չկա: Մածակներից պաշտպանելու համար սովխոզի դիրեկցիան նրանց բաժանել է 60 մետր մարլա և 61 հատ պոլոգ: Առհասարակ նորեկները շատ գոհ են սովխոզի ղեկավարության ջերմ, հոգատար և ուշադիր վերաբերմունքից:

Նորեկները խեղճ ու կրակ աղքատ մարդիկ են, որ Լիբանանում օրավարձով աշխատելով՝ մի կերպ քարշ են տվել իրենց խղճուկ գոյությունը: Շատերը եկել են առանց անհրաժեշտ կահկարասու, ոմանք նույնիսկ անկողին չունեն: Սովխոզի դիրեկցիան օգնում է այդպիսիներին: Բաժանել են նավթ, օճառ, պահածոներ, սննդամթերք: Երեխաները ամեն օր թարմ կաթ են ստանում և գոհ են իրենց վիճակից: Անգամ ճաշարանի վարիչ Անդրանիկ Մարտիրոսյանը ոգևորված է այն բանով, որ ճաշ է պատրաստել տալիս իր պանդուխտ արյունակիցների համար:

Նրանք բոլորն էլ աշխատանքի մարդիկ են և հետները բերել են իրենց աշխատանքային գործիքները: Կոշտ ձեռքերով, արևառ դեմքով մի մշակ՝ Հովհաննես Բուդուսյանը իր հետ բերել է իր փայտե մատնոցները, որ անց է կացնում ձախ ձեռքին և մանգեղով հունձ անում: Նա չհամբերեց և օրեր առաջ առանց հրավերի հնձի գնաց՝ «Կարոտն առնելու հողին»—ինչպես ինքն է ասում:

Կոշկակար Անդրանիկ Հաջյանը, թուխ աչքերով, ուսանողի նուրբ ձվաձև դեմքով մի երիտասարդ է: Հետը բերել է ընտիր կաշիներ և իր գործիքները: Իր կարած ոտնամաններից ցույց տվեց մեզ.—կարծես նկարիչի գործ լիներ,—նրբին, մեծ ճաշակով:

— Անանկ կոշիկներ կարեմ, որ տերն սքանչանա,—արևմտյան մաքուր գրական լեզվով խոսում է նա:

Ո՛ր սենյակը մտանք—անմիջապես կրակ վառեցին և հյուրասեր տանտիկինները մեզ մատուցեցին մատնոցի չափ փոքր, սիրուն գավաթներ.

— Ղայֆե մը հրամմեցեք...

— Բայց դուք հողագործ մարդիկ, այսքան փոքր բաժակներով ի՞նչ պիտի հասկանաք,—կատակով հարցրի ես:

— Ատիկա հյուրերու համար է,—բացատրեց մեզ տանտերը

խնդալով,—մեզ համար ուրիշները կան: Եվ կինը պահարանից հանեց ու մեզ ցույց տվեց կավե մեծ գավաթը:

— Ահա՛ թե ինչ... Ուրեմն հյուրերին մատուցով, իսկ ձեզ կավե ամաննե՞րով...—կատակեցի ես:

— Մեծը կոպիտ է, հյուրին հարմար չէ,—շառագունելով արդարացավ տանտիրուհին:

Եղանք բոլոր բնակարաններում,—ոչինչ, վատ չեն տեղավորված: Սակայն այս շենքը ժամանակավոր է նրանց համար: Քիչ այն կողմ կառուցված է երկհարկանի մի գեղեցիկ շենք, ուր այժմ գնում են ներսի աշխատանքներ, որ շուտով կավարտվեն: Ա՛յդ շենքն է ներգաղթողների հիմնական տունը:

Ապա գալիս են ավանի ծայրին, ծիրանի ու դեղձի ծառերի միջև, նրանց հովում կառուցվող առանձին-առանձին տները: Դրանց կառուցումը ևս շուտով կավարտվի և շուտով ներգաղթած յուրաքանչյուր ընտանիք կունենա իր սեփական տունը՝ 2.000 ք. մետր հողամասով: Հողամասերի վրա մրգատու ծառեր կան, բաց տեղերը իրենք են լրացնելու խաղողի որթերով և դեղձի տունկերով: Ծառերի տակ բանջարանոցային բույսեր են մշակվում:

Սովխոզի ղեկավարությունը աջակցում է նորեկներին ոչխարներ և կովեր ձեռք բերելու: Մեկ-երկու տարի անց նրանք կունենան իրենց կթանները, բոստանները, պարտեզները:

Թարմ լավաշի բույր էր տարածվել ավանում: Մոտեցանք թոնիրներին, եկվորները լավաշ են թխում այն ալյուրից, որ սովխոզից բաժանել են նրանց, իրենց ստանալիք թխած հացի նորմաների դիմաց: Օրվա հացով ապահովված են բոլորը, բայց հացի պաշար նույնպես պետք է: Եվ մեր ներկայությամբ սովխոզի դիրեկտոր Սիրաք Վարդանյանը նրանց ասաց ջերմությամբ.

— Դուք ուշ եկաք, բայց այստեղի ձեր եղբայրները ձեզ համար նույնպես ցանք կատարեցին: Ահա այն արտը ձերն է, գնացեք հնձեցեք ու բաժանեցեք ձեր միջև,—և նա մատով ցույց տվեց դեղին հասկերի ալեկոծ ծովը:

Նրանք չգիտեին ինչպես արտահայտեին իրենց երախտագիտությունը:

— — — — —

Երկուշաբթի օրը, ամսիս 8-ին Լիբանանից եկած և մասամբ սովխոզում տեղավորված հայերը իրենց կյանքում առաջին անգամ հայրենի դաշտերը աշխատանքի դուրս եկան:

Նրանք չէին խոսում, չէին կատակում, չէին ծիծաղում: Հուզված ու լուռ քայլեցին դեպի Լեոն Թադևոսյանի բրիգադայի այգին: Ճանապարհին նրանք կանգ առան ծառերի շարքերի միջով աղմուկով առաջ գնացող տրակտորի մոտ: Տրակտորին կապված ահագին բաքի (կաթսա) երկու կողմերից ռետինե շլանգներ էին ձգվում, որոնցից դուրս ցայտող թունավոր հեղուկը ամպեր էր կազմում ծառերի վրա ու ողողում նրանց յուրաքանչյուր տերև ու ոստ. լվիճներն էին ոչնչացնում:

— Հարյուր մարդի գործ է կատարում,— բացատրեց տրակտորիստը:

Նորեկները և՛ զարմացած էին, և՛ հիացած, բայց նորից լուռ էին: Մի քանի օր դրանից առաջ սավառնակը պղնձարջասպ էր թափել երկնքից ընդարձակ այգիների վրա: Ամեն 7 րոպեում նա մեկ հեկտար խաղողի այգի էր սրսկում, այսինքն փոխարինում էր 300 մարդու և 300 վերմորել ապարատի:

Սավառնակները վեց անգամ սրսկել են սովխոզի այգիները և ոչնչացրել և՛ չոռ, և՛ լվիճ, և ամեն տեսակի որդ ու վնասակար միջատ:

Լիբանանում նրանք սովոր էին տեսնել արաբական գյուղեր, խղճուկ տնտեսություններ: Խոշոր, առաջավոր տեխնիկայով տնտեսություն նրանք առաջին անգամ էին տեսնում և ես նրանց լուռ ու կենտրոնացած դեմքերին նայելով, զգում էի այդ մարդկանց ներքին, թաքուն ուրախությունն ու հպարտությունը,—«այս ամենը մե՛րն է, հայրենի հողի վրա, մեր եղբայրների աշխատանքով ծնված...»:

Այգիներից դուրս եկանք, մտանք բանջարանոցի դաշտը:

— Այս սածիլների սնունդը գիտե՞ք ինչ է,—աղավնու ծերտը: Այո, այո, մի՛ք զարմանա,—մեր տանիքներում հազարավոր աղավնիներ են պահում, և նրանց ծերտով՝ աշխարհում ամենալավ պարարտանյութով մենք սնում ենք բանջարանոցները,—որպես հետաքրքիր նորություն մեզ բացատրեց տնտեսության գլխ. ագրոնոմ Գևորգ Սահակյանը:

Նորեկներն այդ դաշտն էլ անցան և մտան պտղատու այգին, ուր կանաչ սաղարթների միջից նրանց ժպտացին անթիվ-անհամար ծիրանները, իրենց դեղին, կարմրավուն զվարթ դեմքերով:

Սկսվեց քաղը: Կանայք, երեխաներ, ծերունիներ, ուռի զամբյուղները ձեռքներին, անհուն հրճվանքը սրտներում սկսեցին հավաքել իրենց երազած Արարատյան դաշտի քաղցրահամ պտուղները:

Յոթանասուն տարեկան մի ծերունի, ամրակազմ, բրոնզագույն դեմքով ու խելոք աչքերով մի մարդ՝ Թորոս Խորոզյանը ծունկ չոքեց, ձեռքերը դեպի Արագածի ձյունոտ գագաթը տարածեց ու մրմնջաց.

— Փառք քեզ, փառք քեզ, որ մենք անմուրազ չմնացինք:

Ու վեր կացավ.—նրա աչքերում մոլեռանդ ուխտավորի հուր կար: Պայծառ ծերունական դեմքը շառագունել էր ոգևորությունից և երջանիկ մի ժպիտ էր խաղում խանձված երեսի վրա:

— Գիտե՞ք ինչ օր է սա ինձ համար, երիտասա՛րդ,—դարձավ ինձ նա թուրքերենով,—ես յոթանասուն տարեկան եմ, բայց արդեն իջա հիսունի: Հավատացնում եմ ձեզ, որ մեր երկիրը ետ ստանալու օրը երեսուն տարեկան եմ դառնալու:

Լուռ, ծխում էր հին ծխամորճը:

— Ծիրան անուշ արա, բիձա,—առաջարկեց ագրոնոմը:

— Թող մի նայեմ, կարոտս առնեմ, ուտելը հեչ:

Ու տարված նայում էր այդ ծերունին կանաչ տերևների արանքներից հասուն, ընկնելու պատրաստ խոշոր ծիրաններին, ու լուռ էր և մտախոհ: Ապա նա ձեռքը մեկնեց մի ծիրան պոկեց, կերավ, կորիզը ջարդեց համը տեսավ ու ասաց.

— Ծիրանի կորիզն անգամ դառն էր՞ էդ ղահրումար երկրում—չէր ուտվում: Ի՞նչ անուշ կորիզ ունի... ո՞ր տեսակն է,—դարձավ նա ագրոնոմին:

— Շալախ, այսինքն Շահին լայաղ,—բացատրեց ագրոնոմը: —Աշխարհում դրա հայրենիքը Հայաստանն է,—ավելացրեց նա հպարտությամբ:

— Վա՛հ, այստեղի՞ց է ծագել,—զարմացավ ծերը:

Ապա երբ լիքը գամբյուղը դատարկում էր արկղի մեջ, դարձավ ինձ.

— Հայրս Հայաստա՛ն, Հայաստա՛ն ասելով մեռավ։ Ես էլ հասա յոթանասունին և բոլորովին հույս չունեի Արարատը տեսնել։

— Բայց առանձնապես չի երևում ուրախությունդ,—կատակեցի ես։

— Խորը նայի՛ր՝ կերևա... Ինչպե՞ս կարող է ուրախ չլինել գերությունից ազատված մարդը...

Հունիսի 30, 1946 թ.

ՄՐԳԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ

Հոկտեմբերյանի 4-րդ սովխոզի այգիներից արևմուտք, ուր անցյալ տարի դեռևս անշրդի, ամայի մի վայր էր, այժմ աշնանացան ցորենի ծփացող արտերով ու փարթամ բանջարանոցներով ծածկված մի ծաղկուն անդաստան է։

Դեղնող արտերի մեջ դեռ հեռվից երևում են իրարից պատկառելի հեռավորության վրա գտնվող նորակառույց տները։

Մենք մտանք այդ նորակերտ ավանը և այնտեղ, տների միջև ընկած բանջարանոցներում ու արտերում աշխատող մարդկանց պատահեցինք։

Իրանից ու Սիրիայից ներգաղթած հայեր են։

Այստեղ յուրաքանչյուր ընտանիք ունի առանձին տուն՝ շրջապատված 2.500 ք. մետր մշակված հողամասով։

Տները քարաշեն են, լայն պատուհաններով։ Սովխոզն այդպիսի 109 տուն է կառուցել՝ զարմանալի արագ ու շնորհքով։

Նորեկներն իրենց տնամերձ այդ հողամասերի վրա ցանել են ցորեն, եգիպտացորեն, լոբի, վարունգ, սեխ, ձմերուկ։

Մտանք մի բանջարանոց, ուր տարեց մի կին ջրում էր ցանքը։

— Ինչպե՞ս հերկեցիք այսքան մեծ տարածությունը,—հարցրեց ընկերս։

— Տրակտորն է հերկած... բոլորի հողն ալ մեքենան հերկած է,— պատասխանեց կինը՝ ձեռքով ընդարձակ ավանն իր հողամասերով ցույց տալով։

— Իսկ սե՞րմը...

— Սերմն ալ տված են, ամեն կարգի օգնություն ալ...

Եվ իր առաջ ծփացող արտին նայելով, երազանքով շարունակեց.

— Շուտով կունենանք առաջին բերքը, հայրենի հողեն... Իսկ եկող տարի անասուններ ալ կունենանք...

——————

Մեր տեսած հայերի այդ խումբը տեղավորվել է ու աշխատանք գտել ամենաօրինակելի սովետական տնտեսություններից մեկում։ Չորրորդ սովխոզը իր հմուտ ղեկավար Զոհրաբ Խաչատրյանի և բանվորության ջանքերով ահա 6 տարի է, որ իր ձեռքին է պահում Պրոֆմիությունների Կենտխորհրդի և ՍՍՌՄ Սննդարդյունաբերության մինիստրության փոխանցիկ դրոշը։

Արարատյան դաշտի այդ մասում, ուր առաջ լերկ անապատ էր, աճում-հասունանում է մեր աշխարհահռչակ դեղձն ու «շալախ» ծիրանը։

Ներգաղթող հայերն իրենց ընտանիքներով (շուրջ 120 ընտանիք) աշխատում են տնտեսության այգիներում։

Մտնում ես այդ այգիներն ու մնում սքանչացած,—կարծես հեքիաթներում նկարագրվող «գյուլի-բաղը» լինի։ Շուրջ 600 հեկտար շախմատաձև ծառաշարքերով տարածվում են ծիրանի և դեղձի այգիները։ Մի այդքան էլ խաղողն ու այլ կուլտուրաներն են գրավում։ Եվ դա այդ տափաստանում ամայի հողերի վրա ստեղծված 6 սովխոզներից մեկն է միայն։

Ընկնելով այդպիսի մեծ և առաջավոր տնտեսություն, ներգաղթած հայերը սկզբում շփոթության ու զարմանքի մեջ էին։ Արարատյան դաշտում այս գարնանամտին սառնամանիքներ արին և ծառապտուղը շատ վնասվեց։ Ներգաղթած հայերը զարմանքով դիտում էին 4-րդ սովխոզի աշխատավորների կռիվը բնության կործանող տարերքի դեմ։ Երեք գիշեր մինչև լույս այգիներում ծխատու տուփերը ծուխ էին արձակում և այգիները դեղին ծխի թանձր ամպերի մեջ թաղում։

Պատմում են, որ Իրանից եկած Պապան Իսկենդարյանը զարմացած նայում էր ծուխ ժայթող թիթեղյա տուփերին ու հարցնում.

— Որտեղի՞ց են այդքան ծուխ հավաքել տուփի մեջ...

— Վերջ չունի, ջանըմ, սա ի՞նչ բան է,—արձագանքում էր նրա ընկեր Գալուստը տարակուսած:

Այդ մարդիկ Իրանում խղճուկ, հետամնաց տնտեսություններ էին տեսել՝ ողորմելի տեխնիկայով, և այժմ ահով-ու զարմանքով էին նայում այգիների վերև «խուզող» թռիչքով սավառնող սավառնակներին, որոնք երկնքից պղնձարջասպ ու այլ թունավոր նյութեր էին մաղում այգիների վրա ու ոչնչացնում վնասատուներին:

Եվ այդ մարդիկ, որ երեկ ապշած էին մեր կիրառած տեխնիկայից, այժմ իրենք են գործադրում այդ տեխնիկան:

Ագրոնոմ Հայկ Սիմոնյանի ղեկավարած այգեմասում մենք հարց տվինք նորեկներից մեկին.

— Իսկ եթե եկող ձմեռ նորից սաստիկ ցրտեր լինե՞ն:

— Այդ մասին մենք այժմվանից հոգ կտանենք,—պատասխանեց նա գիտակ մարդու տեսքով:—Եթե ծառը գարնանից լավ սնվի և ուժեղ ըլլա,—չի վնասվի սառնամանիքեն, ինչպես ամրակազմ մարդը մրսելուց չի հիվանդանար:

— Իսկ ձեր ծառերն ամրակա՞զմ են:

— Անշուշտ: Վաղ գարնան ազոտային նյութերով սնուցած ենք, տեսեք, այսքան բերքի բեռի տակ նորեն 80 սանտիմ նոր ոստեր տված է, որ կամրանան մինչև աշուն: Ամրանալե ետք—ալ ցուրտը սարսափելի չէ:

Նորեկները այդ բանը սովորեցին սովխոզի հին բանվորներից: Հները անցյալ տարի ուժեղացրել են ծառերը դեռ վաղ գարնանից, այդ միջոցով, ինչպես և ծխածածկույթներ ստեղծելով, նրանք փրկեցին այգիները: Եվ այժմ արդյունքը մեր աչքի առաջ է,—ծիրանի արտասովոր առատ բերքից ծառերի բոլոր ճյուղերն էլ խոնարհվել են մինչև գետին, թեև նրանց տակ խշմարներ կան դրված:

— Խշմարները չեն դիմանում,—պարծեցավ ագրոնոմ Հայկ Սիմոնյանը:—Եթե բերքը աղետի չենթարկվի, պտուղ հանձնելու պետական պլանը կկատարենք 140—150 տոկոսով:

— — — — —

Այն այգում, ուր մենք եղանք, բերքատվությունը բարձրացնելու համար նոր, հիանալի կարգ է մտցված.—յուրաքանչյուր այգե-

գործ բանվոր կցված է 3—4 հեկտար տարածության։ Նորեկները ճանաչում են «իրենց» ծառերը, խնամում են միայն որոշ տարածությամբ ծառեր և ամեն մեկը պատասխանատու է իրեն կցված ծառերի առողջության ու բերքին։ Այդ ձևով նորեկներն առաջին անգամ մրցության են մտել իրար հետ։ Սովխոզի դիրեկցիան խրախուսում է այդ մրցությունը նաև նյութապես։

Այդ մասին հարցրինք մի նորեկ այգեգործի։

— Գիտեմ, ինչպես չգիտեմ,—պատասխանեց նա։—Գիտեմ, որ պետությանը իր պլանի չափով միրգ հանձնելե հետք, որքան ավելի բերք ավի, մեկ երրորդ մասը ինձի պիտի վճարվի դրամով...

Եվ որովհետև նրանք լավ են մշակել ծառերը և բերքը շատ առատ է այդ սովխոզի այգիներում, ուստի նորեկներն այս ամառն և աշնան առհագին հավելյալ երկամուտներ կստանան սովխոզից և բարեկեցիկ կյանք կստեղծեն։

— Մեր ընկեր Արամ Թովմասյանին օրինակը մեր աչքի առաջն է. պլանեն դուրս 450 կիլոգրամ բալ հանձնեց, որից 150 կիլոգրամը իրեն կպատկանի։ Բալի դիմաց ան դեղձ կինդրե, որոշած են 300 կիլոգրամ դեղձ տալ... Լավ աշխատողը դյուրին կըհարստանա, իսկ մենք լավ աշխատելու համար եկած ենք։

Երբ մենք մեկնում էինք այդ մրգառատ, հիանալի այգիներից, պատահեցինք նորեկներից մեկին, բահը ձեռքին ծառերը ջրելիս։

— Ակոսային ջուր կկիրառենք... այսպես ջուրը նպատակին կըհա—ուղիղ ծառի տակ,—բացատրեց նա իր արվեստը՝ առվի ընթացքը թեքելով։

Իսկ հարևան ծառի վրա փոքրիկ զամբյուղները ձեռներին, ուրախ ճռվողյունով ծիրան էին հավաքում նրա երեխաները...

ՎԱՐՊԵՏ ՍԱՂԱԹԵԼԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Այսօր՝ Գերագույն Սովետի դեպուտատների ընտրության նախօրյակին և այդ առիթով ես ծանոթացա Երևանի Նալբանդյան փողոցի № 41 տան բնակիչ Սաղաթել Դավթյանի համեստ ընտանիքին և տեսա, թե ինչպես է նա օգտվում Ստալինյան Կոնստիտուցիայի՝ սովետական քաղաքացիներին տված բազմաթիվ արտոնություններից երեքից,—աշխատանքի իրավունք, ուսման իրավունք, հանգստի իրավունք։ Իսկ մինչ այդ ասեմ, որ վարպետ Սաղաթելի եղբոր որդին վերջերս է եկել Սիրիայից։ Նա իր կյանքում առաջին անգամ պետք է մասնակցի իր հայրենի երկրի Գերագույն օրգանի ընտրությանը, ուստի մեզ հասկանալի են այն խոր ապրումները, որ նա ունի, որովհետև օտար երկնքի տակ նա իրավազուրկ էր և արհամարհված։

— Ես ա՞լ նույն իրավունքներն ունիմ ինչ դուք, որ քառորդ դարե ի վեր կվերաշինեք—կծաղկեցնեք մեր հայրենիքը,—հարցնում է նա մեզ՝ զգացված ու անկեղծորեն։

Ապա ավելացնում է խորին զարմանքով.

— Իրո՞ք ես ակադեմիկոսներուն, մինիստրներուն չափ իրավունք ունիմ ընտրելու։

Ընտանիքի գլուխ Սաղաթելը 37-ամյա, բարակ, արտահայտիչ դեմքով, եռանդով լի, թուխ աչքերով մի մարդ, ահա 15 տարի է ցեխի վարիչ է «Արարատ» գործարանում։ Երեկ ես նրան տեսա աշխատանքի վայրում,—լուռ, խորին գոհունակությամբ մղիչներն էր ստուգում։ Երկու ամիս է, որ Սաղաթել Դավթյանը խաղաղվել է,—տասն ամսվա անդուլ աշխատանքից հետո նրա ղեկավարած

ցեխը կատարեց տարվա պլանը։ Բայց դրանով չվերջացավ նրա հոգսը. նա նպատակ է դրել մինչև տարվա վերջը պլանից դուրս ևս տասը-տասներկու միլիոնի արտադրանք տալ։ Եվ այժմ նրա ողջ մտքերը այդ գլխավոր հարցի շուրջն է պտտվում։

Նա եկել է Պաղեստինից՝ 22 տարի առաջ և այս 22 տարում երբեք գործազուրկ չի եղել։ Իր նոր, իսկական հայրենիքում աշխատանքը դարձավ նրա համար ամենօրյա պահանջ, հաճույքի և ապրուստի անսպառ աղբյուր։ Երբ նա հասավ Երևան և տակառագործի աշակերտ դարձավ «Արարատ» գործարանում, բռնապետության կրնկի տակ ճմլված մի որբ էր։ Տասնհինգամյա այդ պատանին մի կաթիլ ուրախություն չէր տեսել իր կյանքում։ Իր մանկանը նվիրված մի ոտանավորի մեջ իր թշվառ մանկության մասին նա գրում է.

Հայրենիք խեղճ քու տարիքին
Կարոտել է իր մոր կաթին,
Որբ է եղել, թափառական,
Քաղցած ու մերկ, անօգնական։

Աշխատանքը կոփեց Սաղաթել Դավթյանին. նա աճեց, հասակ առավ, հարստացան նրա մտքերն ու փորձը։ Եվ աշխատանքով նա օջախ շինեց, վերականգնեց Դավթյանների կործանված տունը։

Այժմ Սաղաթելը ունի կին, երեք սիրուն ու խելոք երեխաներ, ունի կուլտուրական լավ բնակարան։ Այսօր ես եղա նրա բնակարանում,—կոկիկ, մաքուր, ճաշակով կահավորված երկու սենյակ, մեկ ապակեպատ—ամառվա համար, խոհանոց, լողարան։ Պատերին ապակիների տակ կախված են Սաղաթելի վրձինին պատկանող նատյուր-մորտներ, ժպտուն պտուղներ, պեսպես ծաղիկներ, գարնանային գեղանկարներ։ Այդ նկարները, այդ տան բնակիչների պես և՛ գեղեցիկ են, և՛ խնդալից։

Սենյակներում նոր, փայլուն մահճակալներ կան դրված, թանկարժեք բուֆետ, պահարան։ Մի սենյակում դրված է գրասեղանը հեռախոսը վրան, իսկ նրա երկու կողքերից վեր են ելնում նոր մարմնագույն գեղեցիկ գրապահարանները, որոնք կարծես հպարտ են իրենց ճոխ պարունակությամբ։ Այդտեղ կգտնեք դուք ռուս կլասիկների գործերը, Մարքսի, Լենինի, Ստալինի ստվար հա-

տորները, հայ գրականության աչքի ընկնող գործերը—սկսած Մովսես Խորենացուց մինչև մեր օրերը:

— Կարդացե՞լ ես,—հարցրի ես, ցույց տալով գեղարվեստական գրականության պահարանը:

— Գրեթե բոլորը,—պատասխանեց նա:—Բայց ես, ափսոս, ուսում չունեմ... Ուսումնականները սրա՛նք են,—ավելացրեց նա իր երեխաներին ցույց տալով:

Այդ երեխաների պարտադիր ուսումն ապահովված է մեր Կոնստիտուցիայով: Մեծ աղջիկը՝ Սիրանը վերջացրել է միջնակարգ դպրոցը և միաժամանակ հիանալի պարուհի է. ահա նրա լուսանկարը Մոսկվայի Ակադեմիական Մեծ Թատրոնի բեմի վրա հեզանազ պարելիս: Նա առաջին անգամ պետք է մասնակցի ընտրություններին և այն միտքը, որ ինքն էլ աճել, Սովետական Միության իրավազոր քաղաքացի է դարձել, նրան անսահման հրճվանք է պատճառում: Այժմ նա հաճախում է կարի տեխնիկում—արհեստ ձեռք բերելու համար: Առհասարակ Սաղաթել Դավթյանը մի լավ սկզբունք ունի,—ուսման հետ միասին իր երեխաներին արհեստ սովորեցնել:

Ահա նրա տասնհինգամյա որդի Վարուժանը որակյալ արհեստավոր է—6-րդ կարգի փականագործ, և մասնակցում է ակադեմիկոս Եղիազարովի գիտական լաբորատորիայի կահավորմանը ու միկրոգէնների մոնտաժին: Ի՞նչ ասես որ չի գալիս այդ փոքրիկ, խելոք վարպետի ձեռքից...

Ընտանիքում միակ «անարհեստը» կրտսեր որդին—12-ամյա Մերուժանն է: Նա էլ դպրոցից բացի հաճախում է ջութակահարի մոտ—այդ էլ նրա արհեստն է:

Այդպես, Սաղաթել Դավթյանի ընտանիքը լավ աշխատել գիտի և լավ սովորել: Բայց նա գիտե նաև օգտվել Ստալինյան Կոնստիտուցիայի տված հանգստի իրավունքով. երեխաներն ամառները գնում են հով ճամբարներ, անց են կացնում բնության գրկում, իսկ Սաղաթելը մերթ բուժվում է Արզնիում, մերթ հանգստանում է Ծաղկաձորում, կամ Կիրովականում:

———

Երջանիկ է վարպետ Սաղաթելը իր հիանալի երեխաներով, իր օջախով, իր աշխատանքով: Եվ իր տրամադրությունը նա հաճախ

արտահայտում է իր հորինած և իր ձայնագրած երգերով: Նրա «Այգեբաց» և «Այգեկութ» երգերից Արարատյան դաշտի բույրն է գալիս և այդ երգերով էլ փակվեց վերջերս Մոսկվայում տեղի ունեցած ինքնագործ խմբակների ստուգատեսը, ուր վարպետ Սաղաթելի խումբը Համամիութենական առաջնություն շահեց:

Նրա ուրախ երգերը երգվում են բանվորական ակումբներում, գյուղերում, ռադիոյով և հրատարակվել են Երևանի Ժողովրդական Ստեղծագործության տան կողմից:

Այդ երգերում զգում ես, որ նա երախտապարտ է այն Մեծ Մարդուն, որը նրան — թշվառ ու տրորված այդ որբին ընտանիքի, ապրուստի տեր դարձրեց և որին տվեց աշխատելու, սովորելու, հանգստանալու, ընտրելու և ընտրվելու անկապտելի իրավունք: Ու այդ մասին նա պատմում է իր մանկանը նվիրված իր անպաճույճ ոտանավորներից մեկում.

Ստալինն է հայրը մեր Մեծ,
Որ մեզ լույսի կատար հանեց,
Տվեց նա մեզ երջանկություն,
Ծովի նման լայն ու անհուն:

1946 թ.

ԱՐՏՈՆՅԱԼ ՄԱՐԴԻԿ

Երեկ գիշեր Երևանի Գնունի փողոցի № 55 տնից ուրախ քեֆի ձայներ էին լսվում։ Պատուհանից ներս նայողը կտեսներ առատ սեղանի շուրջը բոլորած, երջանկությունից փայլող դեմքեր և դաշնամուրի նվագի տակ թեթև կաքավող ջահել զույգեր։ Այդ ընդհանուր ուրախության պատճառը միջահասակ, թխլիկ, գրավիչ սև աչք-ունքով մի աշակերտուհի էր—Ժաննա Ազիզբեկյանը։ Այդ գիշեր լրանում էր նրա 18 տարին։ Որպիսի՜ երջանիկ զուգադիպություն,—նա չափահաս էր դառնում և ընտրական իրավունք ձեռք բերում ճիշտ ընտրության օրը...

— Մամա, եթե մեկ օր էլ ուշ աշխարհ բերեիր ինձ,—չորս տարի ուշ պիտի մասնակցեի ընտրություններին,—ի՜նչ լավ է, որ ժամանակին հասցրիր, մամ ջան,—փարվում է մորը դեռատի աղջիկը։

Ժաննա Ազիզբեկյանի համար այդ գիշեր կարծես ժամանակը քարացել էր և կանգ էր առել երկրի մշտնջենական ընթացքն իր առանցքի շուրջը։

— Ե՞րբ պիտի լուսանա...։

Այս թաղում նա միակն էր, որ ընտրական իրավունք էր ստանում ճիշտ ընտրության օրը,—հետևապես և № 129 օկրուգում ամենաջահել ընտրողն էր,—ամենաջահելներից անգամ գոնե մեկ-երկու օրով փոքր։

Իր այդ բացառիկ վիճակը նրա մեջ այն միտքը ծնեցրեց, որ բոլորից շուտ ինքն իրավունք ունի առաջինը քվեարկելու սիրած թեկնածուների օգտին։

Ասում են, որ նա ծնվել է լուսադեմին, հենց լուսադեմին էլ, երբ վայրկյան առ վայրկյան կլրանա իր ծննդյան 18 տարին, նա ընտրական բյուլետենը կգցի քվեատուփը՝ իր սիրուն երկրի հմուտ ղեկավարի օգտին, ինչպես և աշխարհահռչակ այն նկարչի օգտին, որի կախարդական վրձինը այնպես վարպետորեն տվել է Արևելքը իր հեքիաթային —շողշողուն գույներով։

Պարզկա ցուրտ գիշեր էր։ Նա դուրս եկավ տնից և սառն օդը շոյեց հուզմունքից այրվող նրա այտերը։ Արևելքում աներևույթ մի ձեռք մշտնջենական խավարը անջատում էր լույսից, ամենաթույլ աստղերը դանդաղ մարում էին, իսկ Լուսնթագն ու Արուսյակը վառ շողշողում էին երկնակամարի վրա։

Նա թեթև-թեթև քայլեց դեպի ընտրական տեղամաս, այնպես թեթև, կարծես ամպերի միջով էր ընթանում։ Նրա ջահել սիրտը ալեկոծված էր այն ջերմ զգացմունքից, հաճելի այն մտքից, որ ինքը հասունության վկայական ստացավ այս գիշեր և մտավ իր կյանքի նոր փուլը—ոսկե երիտասարդության փուլը—խոստումնալից ու երջանիկ սպասելիքներով լեցուն։

Երբ նա բյուլետենը ձեռքին կանգ առավ քվեատուփի մոտ և հուզմունքից դողացող մատներով ուզեց առաջինն ինքը գցել արկղը—նրան դեմ հանդիման ելավ այդ թաղի ամենածեր կինը—Մարիամ Գյուլզադյանը և իր 93 տարիների անհասանելի գագաթից ցած նայելով՝ լռելյայն առաջնության իրավունք պահանջեց դեռատի աղջկանից։

Տագնապը պատեց աղջկան։

Ե՞րբ, որտե՞ղից այս սառնամանիքին հայտնվեց այդ զառամյալ պառավը։

Սովետական Կոնստիտուցիան ընտրական գործում ոչ ոքի ոչ մի արտոնություն չի տալիս. ընտրական գործում մեր երկրի կառավարության նախագահը նույն իրավունքն ունի, ինչ 93 տարեկան Մարիամ Գյուլզադյանը։ Այդ բանը Մարիամ տատիկին լավ էր հասկացրել տեղամասի ագիտատոր Օլյա Կուկունյանը։ Սակայն Մարիամ տատիկին առաջնության իրավունք էր տալիս նրա պատկառելի տարիքը, մի արտոնություն, որ օրենքի մեջ չէր գրված, բայց պահպանվում էր ժողովրդի կենցաղում—մեծի իրավունքը...

Եվ Մարիամ տատիկը այդ գիտակցությամբ դեռ օրեր առաջ հայտարարել էր ագիտատորին՝

— Աղջիկ ջան, չլնեմ-չիմանամ, որ ինձանից շատ ընտրող ըլի հա՞...

Ընտրության նախորդ օրը Մարիամ տատիկը հիվանդացավ։

— Քվեատուփը տուն բերենք, տա՛տի,—առաջարկեց ագիտատորը։

— Տուփը ո՞րն է, աղջիկ ջան, էն որ մեջն ենք գցելո՞ւ... չէ՛, բալա ջան, ես կգամ, հալա մութը կլի՝ կգամ...

Երեկոյան Մարիամ տատիկը շուտ պառկեց։ Դեռ տնեցիք չէին քնել. երբ նա հանկարծ արթնացավ, խուճապով նստեց ու հարցրեց.

— Աղջի, շորներդ հագել ե՞ք... լիսացել ա՞... բա խի՞ չեք ինձ իմաց տվել...

— Քնի, տատի, դեռ ժամը 12-ն է։

Հանդարտվեց, քնեց։

Ժամը 5-ին ոտքի վրա էր։ Քիչ անց՝ ավտոմեքենան կանգ առավ Գնունի փողոցի № 63 շենքի առաջ և ագիտատորը մտավ Մարիամ տատիկի բնակարանը։

— Գնա՛նք, մեքենա եմ բերել։

— Ախր ես նեղություն քաշել, աղջիկ ջան... երևի եղացել ենք, հա՞, որ մաշինա ես բերել,—չլնեմ-չիմանամ ինձանից շուտ գցող ըլի հա՞...

— Չէ՛, գնանք, առաջինը դու ես գցելու։

Եվ ահա այժմ քվեատուփի առաջ կողք-կողքի կանգնած են ռայոնի ամենամեծ և ամենափոքր ընտրողները—18 տարեկան Ժաննա Ակիզբեկյանը և 93 տարեկան Մարիամ Գյուլզադյանը։ Նրանցից յուրաքանչյուրն ըստ իր, ամենայն իրավամբ, իրեն իրավունք է համարում առաջինը քվեարկել, առաջինն արտահայտել իր սերն ու նվիրվածությունը ստալինյան բլոկին։ Բայց օրենքում չի ասված, թե ո՞րի իրավունքն է շատ—ամենածեր մարդո՞ւ, թե ամենաջահելի,—մեր Կոնստիտուցիայի առաջ բոլորն էլ հավասար են։ Մարիամ տատիկն իր «ախոյանից» 75 տարով մեծ էր։ Նրա թոռան որդին—Գևորգ Մարկոսյանը—այս աղջկանից մեծ է և զենքը ձեռքին կռվել է հայրենիքի համար։ Եվ գուցե այս բարի տատիկը, որ շուրջ 70 տարի զրկված է եղել ընտրական իրավունքից և որ գիշերը քնել է շորերը հագին ու մուրազ ունի սրտում՝

առաջինն ինքը քվեարկելու, գուցե վերջին անգամ է ընտրելու... Իսկ Ժաննա Ազիզբեկյանը նոր է մտնում կյանք։ Դեռ քանի՜-քանի անգամ պետք է ընտրի...

Եվ Ժաննա Ազիզբեկյանը խորին ափսոսանքով, բայց և թաքուն մի ուրախությամբ, հարգանքով մի քայլ ետ քաշվեց և առաջնությունը զիջեց Մարիամ տատիկին։ Սա իր բարի աչքերի շողող հայացքով շնորհակալություն հայտնեց անծանոթ աղջկան և բյուլետենը արկղը գցելիս հին ձևի օրհնեց— սրտալի ու հանդիսավոր.

— Շնորհավոր ըլի... ընդունակ ըլի... հիմքը պինդ ըլի...

Ցերեկով ես նրան հարցրի.

— Տա՛տի, էդ ինչի՞ «հիմքը պինդ ըլի», քո դեպուտատի՞...

— Չէ՛, բալա ջան, իշխանության հիմքը, էս գյուղալ իշխանության, որ ինձ պես պառավին համ ընտրելու իրավունք ա տվել, համ էլ ավտոյով ա տանում ընտրության տեղը...

***

Ոչ մի օրենքով չնախատեսված, վերև ասածս «արտոնության» իրավունքը հավասարապես պատկանում է մեր երկրի բոլոր ազնիվ, աշխատավոր, նվիրված քաղաքացիներին։ Նրանք՝ բանվոր և գիտնական, հողագործ և ագրոնոմ, ուսուցիչ և դռնապան, բոլորն էլ իրենց մասն ունեն մեր հոյակապ շինարարության մեջ, ուստի և բոլորին էլ հավասարապես թվում է, որ առաջին քվեարկության իրավունքն իրեն է պատկանում։

Երիտասարդ գիտնական Նորիկ Քոչարյանը Արագածի կատարին համաշխարհային նշանակություն ունեցող փորձեր է կատարում,—ահա նրա «արտոնության» ելակետը։ Ակադեմիկոս Մ. Թումանյանն ընտելացնում է մեր երկրի վայրի ցորենները, իսկ պրոֆեսոր Գեղամ Աղաջանյանը իր հայտնագործած զենքերով կենաց ու մահու կռիվ է հայտարարել Արարատյան դաշտի «ճերմակ ոսկու» ոխերիմ թշնամուն—«ղանղուրդանին»։ Նրանց բոլորի կատարած գործն էլ անչափ կարևոր է և յուրաքանչյուրին թվում է, թե առաջինն ինքն իրավունք ունի քվեատուփին մոտենալու։

Բայց ահա «աղամամութին» Աբովյան փողոցի № 74 տան 14-րդ բնակարանից դուրս եկան առողջ, գեղեցիկ, մշտուրախ մի տղամարդ, իր հիվանդ կինը՝ շալի մեջ փաթաթված և 70-ամյա

մայրը։ Ինչքան էլ համեստ են այդ մարդիկ — Ե. Խաչատրյանը, իր կինը՝ Ասյան և մայրը՝ Մարգարիտը, բայց նրանց դեմքին չի կարելի չնշմարել մի ներքին հպարտություն։

— Կռվի ժամանակ ավիոմեխանիկ տղես պողպատե ղշերը ստուգում էր, ռումբերը բարձում ու հանձնում մեծ ախպորը — Երմակին։ Սա էլ՝ «բո՜ռ՜...» ծվատում էր ամպերը ու հասնում Բուդապեշտ — ռումբերը նրա գլխին թափում, հետո գնում էր Բեռլին, նրա գլխին էլ թափում, էնտեղից էլ գնում էր ֆինների երկիրը, մնացածն էլ էնտեղ թափում ու ետ գալիս ախպոր մոտ — թե՝ ստուգիր ու բեռնի ես գնամ դինջանամ։

Այսպիսի հեքիաթային կերպարներով է պատկերում մայրն իր օդաչու որդիներին, — ահա և Խաչատրյան ամուսինների հպարտության և «արտոնության» հիմքը։

Բայց ես տեսա գերազանց հպարտությունն ու անօրինակ հուզմունքը մի կնոջ, որը մինչև գիշերվա ժամը 3-ը սովետական քաղաքացի չէր և մինչ այդ ժամը տառապում էր այն մտքից, թե իրեն իրավունք պիտի տրվի՞ մասնակցելու ընտրությանը։ Դա՝ Ֆրանսիայից ժամանած Մելինե Մանուշյանն է — լեգենդար հերոս, Փարիզի պարտիզանական ինտերնացիոնալ ջոկատի պետ, իր փառավոր մահով հավիտյանս անմահացած Միսակ Մանուշյանի կինն ու ընկերը։

— Հավատացնում եմ ձեզ, որ այդ հարգելի կինը այս գիշեր մի քանի անգամ մտել է ընտրական տեղամաս ու առանց հուզմունքը պահել կարողանալու հարցրել՝ «Իմ մասին որոշում չեկա՞վ...» — պատմեց մեզ ընտրական հանձնաժողովի նախագահ Ա. Մուսյանը։

Բուրժուական կեղծիքի աշխարհից, իր ամուսնու եղեռնական մահվան սարսափը սրտում և վրեժն անթեղած իր հոգու խորքում նա եկել-գտել է հաստատուն հանգրվանն իր կյանքի, եկել է ապրելու իր անմոռաց Միսակի փայփայած երազանքների աշխարհում։ Սակայն նրա սովետական հպատակությունը դեռ չէր ձևակերպված։ Գերագույն լարվածությամբ ու անօրինակ հուզումով նա սպասում էր բաղձալի ժամին։ Եվ ահա ուշ գիշերին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետը նրան սովետական քաղաքացու իրավունք շնորհեց։ Գիշերվա ժամը 3-ին որոշումն ստացվեց ընտրական տեղամասում։ Որպիսի՜ զգայուն, հոգատար վերաբերմունք

դեպի մարդը։ Ուրիշ էլ ո՞ր երկրում, ո՞ր կարգերում այդպիսի ուշադրության կարժանանար վտարանդի ու խոցոտված կինը։ Այդ գիշեր նրա հոգու վերքերը կարծես հրաշքով բուժվեցին։ Որոշումն իմանալուց հետո խաղաղվեց նա, ինչպես ծովը փոթորկից հետո, նիրհեց մի պահ, և լուսադեմից շատ առաջ դիմեց դեպի ընտրական տեղամաս։ Իր կյանքում առաջին անգամ նա պիտի ընտրեր՝ իր հայրենիքում, ազատ ու անկաշկանդ, որպես լիիրավ, իրավազոր քաղաքացի Սովետական մեծ Միության։ Արդյոք բնական չէ՞ր լինի, եթե նա—լեգենդար պարտիզանի կինը, բոցաշունչ հայրենասերը, որը ընդամենը 3 ժամ էր, որ սովետական քաղաքացի էր դարձել,—առաջինն ինքը ցանկանար մոտենալ քվեատուփին և իր հոգու խորքում դա համարեր իր անկապտելի «արտոնությունը...»։

ՁԿՆՈՐՍՆԵՐԻ ՄՈՏ

Ձուկտրեստի կառավարիչ Հ. Վարդանյանը նայեց լճին և դարձավ մեզ.

— Այսօր անհաջող որս կլինի։

— Բայց լիճը խաղաղ է, չեմ կարծում որսը վատ լինի,— կարծիք հայտնեցի ես։

Նա ներողամտորեն ժպտաց։

— Մազերս Սևանի ափին են ճերմակել,—ես սրա բնավորությունը լավ գիտեմ։ Սրա արտաքին հանգստության մեջ նայի. երեկվա ալեկոծումից հետո դրսից խաղաղվել է, բայց ներքուստ դեռ հուզված է։

Ահա ինչ է նշանակում փորձված աչք.—խաղաղ լճի ափին կանգնած տեսնում է նրա ներքին, գաղտնի ալեկոծումը։

Նրա «դիագնոզը» ճիշտ դուրս եկավ,—մենք եղանք ցամաքաբերդցի Մուշեղ Դավթյանի ձկնորսների մոտ և գոհ չմնացինք այդ օրվա նրանց որսից.—ներքին ալեկոծումից ձկները լճի խորքերն էին քաշվել։

Ժայռերի տակ մի արևոտ անկյունում պարան էին քաշում կին ձկնորսները։ Նրանք 7 հոգի էին,—մեծ մասամբ դեռատի աղջիկներ։ Ծանր գործ է ուռկանը ջրից քաշելը, իրենց ասելով՝ «ուժ է պետք, որ դիմանա»։ Բայց Համո Վարդանյանը հեշտացրել է այդ աղջիկների աշխատանքը մի շատ հասարակ միջոցով.— իրարից հեռու երկու ճախարակ է ամրացրել լճի բարձրադիր ափին։ Ճախարակները լծակներ ունեն, աղջիկները հրում են այդ լծակները, ճախարակները հեշտ ու թեթև դառնում են իրենց առանցքի շուր-

ջը և իրենց «մեջքին» փաթաթում ուռկանի պարանը: Ու այդպես՝ Արքիմեդի հնարած լծակները մեկին տաս թեթևացրել են ցամաքաբերդցի ձկնորսուհիների աշխատանքը, այնքան թեթև, որ մենք ինքներս հաճույքով լծվեցինք նրանց և ճախարակի ուժով ուռկանը հեշտությամբ հանեցինք ջրից: Միայն պետք է զարմանալ, թե ինչու տրեստի կառավարչությունը նման ճախարակներ չի դնում ձկնորսական հիմնական կետում—Նորադուզում, Ադիամանում, Ջաղալվում: Այդ կետերում գործում են խոշորագույն—մոտ 700 մետր երկարությամբ ուռկանները, որոնցով ամեն անգամ մի քանի տոննա ձուկ է հանվում: Այդ ուռկանները քաշելու համար և՛ շատ բանվորական ձեռքեր է պետք, և՛ ուժերի մեծ լարում: Ճախարակներ դնելով, տրեստի կառավարչությունը կխնայի բանվորական ուժը և կհեշտացնի գործը:

***

Լճի կնճռոտ մակերեսին տարուբերվում է մի փոքրիկ տակառիկ,—նա է ցույց տալիս, թե ո՛րտեղ է ուռկանի ծայրը: Հանդարտ պտտվում են ճախարակները, տակառիկը մոտենում է: Ահա նա ափ հասավ, երևաց ուռկանի «խազինեն» («գանձարանը»): Դա ուռկանի ծայրի տոպրականման մեծ ցանցն է, ուր հավաքվում են ձկները, ուր ձկնորսների «խազինեն» («գանձը») է կուտակվում: Տիրում է խորհրդավոր լռություն,—բոլորի մտքում էլ նույն հարցն է. «տեսնես ինչքա՞ն ձուկ դուրս կգա»: Ու այդ խորհրդավոր անհայտությունը հուզում է բոլորին.—չէ՞ որ կարող է դուրս գալ ընդամենը 3 կողակ, ինչպես դուրս է եկել այդ գիշեր գցված ուռկանից, կամ՝ 2 տոննա, ինչպես մի քանի օր առաջ Օրդակլու գյուղի մոտ:

«Խազինեն» ափ հասավ և հանկարծ ջուրը չփչփաց, եռաց, փրփրեց բազմաթիվ ձկների թփրտոցից: Ահա այդ թփրտոցն է ձկնորսի բերկրանքը, նրա գերագույն հաճույքը... Մահվան դալարումներով իրար վրայով սողում և շնչահեղձ բերանները բաց և խուփ են անում արծաթակող, շողշողուն խալերով իշխան ձկները, իսկ հաստ կողակները երկնքին էին արել իրենց դեղին փորերն ու տրոփում էին մերձիմահ:

Մեր խմբի հետ մի երեխա կար,—չիկահեր ու սի-

բռնիկ Լարիսան։ Փոքրահասակներին հատուկ բարությամբ, նա ուռկանի միջից բռնում էր լպրծուն, տրտփող ձկները և խոթում ջրի մեջ։ Հետզհետե վերակենդանանում էին նրանք, ուշքի գալիս և պոչի մի հարվածով սուրում լճի խորքը, հավանաբար խուճապից ժամանակ չունենալով օրհնելու իրենց ազատարարին։ Հասակավոր ձկնորսները նայում էին ու ժպտում ներողամտաբար։ Ամեն օր նրանք մահացնում էին այդ արարածներին, բայց այն երեխայի նման բարի սիրտ ունեն ձկների ձագերի նկատմամբ։ Նրանք ուռկանի միջից ընտրեցին «փոքրահասակներին» և նետեցին ջուրը։

— Թող գնան մեծանան...

***

Սևանն ունի իր գաղտնիքները, և ձկնորսի փորձված աչք պիտի ունենալ այդ գաղտնիքների խորքը թափանցելու համար։ Ու ցամաքաբերդցի Մուշեղ Դավթյանը իր քառասնամյա ձկնորսական փորձով կարող է անսխալ որոշել փոթորկի վտանգը պայծառ եղանակին, ու նրա սուր աչքից չի վրիպում լճի խորքում կատարվող ամեն մի շարժում։ Ահա նա իր նավակով սահում է լճի երեսին՝ աչքը նրա կանաչավուն խորքերում։ Ահա պղպջակներ նկատեց նա, որ դուրս են գալիս ջրի խորքից՝ մարգարտի հատիկների շարանի պես։ Նա գիտե, որ այդ պղպջակներն արձակում է ձուկն իր խռիկներից, «շնչառության» ժամանակ։ Խոշոր պղպջակները շատ են, և նրան հուզմունք է պատճառում — խոշոր պղպջակները իշխան ձուկն է արձակում, իսկ մանրը՝ կողակը։ Ուրեմն իշխանի վտառի (երամի) է հանդիպել։ Նա արագ դառնում է հետախուզությունից և հրաման տալիս իր բրիգադին՝ շրջապատել վտառը։ Մեծ փորձ, սուր աչք և արագաշարժություն պիտի ունենալ վտառը ձեռքից բաց չթողնելու համար։ Այդ հատկությունները նա ուն[illegible] է իր երիտասարդ օգնական Հովհաննես Դավթյանին։ Առույգ, առողջ դեմքով, հզոր բազուկներով մի տղա է դա։ Նա արդեն կարողանում է հեռվից զգուշությամբ շրջապատել վտառը։ Նա նույնիսկ ջրի գույնից, հեռվում հատ ու կենտ ձկների դուրս թռչելուց գիտե, թե ո՛ր պահին ո՛ւր է վտառը։

Վտառը շրջապատելը բնություն է ջահել ձկնորսների հա-

մար։ Հաջողության դեպքում բոլորն էլ ապրում են այն գերագույն հաճույքը, որի «համը» միայն որսորդին է հայտնի, և անհանում է փոթորկալի գլխերներին կրած նրանց տանջանքը։ Մի տեսակ փոքր ուռկաններով Սևանի այս ափին մեկ և կեսից մինչև երկու տոննանոց վտառ են հանում, իսկ հարավ-արևելյան ափին, ուր լիճը ծանծաղ է և կերն առատ, հունիսին մեծ ուռկանով մեկ անգամից մինչև 10 տոննա ձուկ հանելու դեպք տեղի ունեցավ։

***

Նրանք իրենց ողջ կյանքն անց են կացնում ջրերի վրա, հարճվում են նրանց պայծառությամբ, և մռայլվում նրանց հետ միասին։ Ձկնորսը ծովի ծանրաչափն է, նրա տրամադրությունը փոխվում է ծովի «տրամադրության» հետ միասին։ Այսօր, օրինակ, ծովը հուզված էր ներքուստ և ձուկ քիչ տվեց։ Ձկնորսները մռայլ էին, մեզ հետ զրուցում էին դժկամորեն։ Միայն մեկը՝ զորացրված կարմրբանակային Ավետիք Բաղդասարյանը, սև բեղիկներով, միջահասակ, խոշոր սև աչքերով և գուրեկան դեմքով մի մարդ, իր ընկերների մռայլ տրամադրությունը ցրում էր իր համով և ուրախ կատակներով։

— Մեր ուտելու բաժինը հո՞ դուրս եկավ,—մխիթարեց նա իր ընկերներին։

Մենք խոսեցինք նրան։ Անհաջող որսը չէր խանգարում, որ նա պարծենա մեր առաջ.

— Ցամաքաբերդցի եմ, բա՞, իսկի լսե՞լ եք Ցամաքաբերդի ձկնորսների մասին։

— Որտե՞ղից պիտի լսեինք։

— Գրականությունից։

Ու շեշտակի նայում է մեզ։

— Հազար տարի առաջ էլ մեր պապերը անվանի ձկնորսներ էին։

— Որտե՞ղից գիտես։

— «Գևորգ Մարզպետունի» վեպից։ Հիշո՞ւմ եք, թե ինչպես է նկարագրում Մուրացանը ցամաքաբերդցի իմ պապերի ձկնորսությունը Աշոտ Երկաթի ու Բեշիրի կռվից առաջ։

Հաճելի է տեսնել ջրերի վրա, աշխարհից կտրված այդ մարդկանց անզուսպ հետաքրքրությունը գրականությամբ։

***

Մենք թիավարում ենք փիրուզյա ջրերի վրա և մեզ հետ եղած երեխան շառագունել է հիացմունքից.—Ի՜նչ հմայիչ է մեր Սևանը... Եղանակի հետ փոփոխվում է նրա գույնը—մերթ ծածկվում է ցոլցոլուն արծաթե հալոցքով, մերթ կանաչագույն—մռայլ, մերթ թանձրանում է կապարի նման ու դառնում ծանր ու անշարժ: Ու կնճռոտվում է Գեղամա լեռներից եկող հովից, ու հևում է իր ներքին, թաքուն ալեկոծությունից:

Հեռվում մի նավակ է սահում.—ծերունի ձկնորսը իշխանի վտառներ է փնտրում՝ միայն իրեն հասկանալի նշանները որոշելով:

ՍԵՎԱՆԻ «ԾՈՎԱՀԵՆՆԵՐԸ»

Բասարգեչարի տափարակում հորդառատ աղբյուրներից ու լեռնային վտակներից մի լիճ է գոյացել—Գիլլի լիճը: Նա շրջապատված է խիտ եղեգների բարձր պարսպով, իսկ ներսում, լճի մակերեսի վրա տարուբերվում են շարժվող եղեգյա կղզյակները: Այդ կղզյակները հյուսված են եղեգների արմատներից, որոնք խճճվելով ու լաստեր կազմելով, հաստ պարանների նման իջել են լճի հատակն ու ամրացել նրա տիղմի մեջ: Եվ ահա կանգնած են անթիվ այդպիսի կղզիներ իրենց արմատե խարիսխների վրա:

Ինչքա՜ն փետրավոր բնակչություն ուներ այդ լիճը: Ամեն աշնան հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի ափերից ստվար երամներով այստեղ են ժամանում գեր սագերը, անճոռնի արագիլները, բադերի բազմաթիվ տեսակները:

Այդ լիճը իր մայր Սևանա լճից բաժանված է մի նեղ ու երկար պարանոցով: Գիլլիի ջրերը կտրել են այդ պարանոցը և հոսում են դեպի մայր լիճը: Առաջացել է հորդառատ ու խիստ կարճ մի գետ—աշխարհի ամենակարճ գետը—50—60 մետր երկարությամբ...

Այժմ Գիլլին որպես հսող լիճ գոյություն չունի: Սովետական էքսկավատորները խորացրել են գետի հունը, լճակը շրջապատող ճահիճներից դրենաժներ ու առուներ են անցկացրել դեպի Սևան: Եվ ահա վերացել է Գիլլի լճակը ու խիստ երկարել է նրանից հոսող գետը. նա այժմ սկիզբ է առնում ոչ թե 50 մետր հեռավորությունից—լճակից, այլ հեռվից, Այծեմնասարի բարձունքներից: Այս գետով ու դրենաժներով քամվում է խոնավ տափարակի ջուրը և

ընդարձակ ճահճուտները վեր են ածվում կանաչ մարգագետիննե-րի, տորֆի հանքերի ու պարարտ սևահողերի։ Ի՞նչ ծով բերք կար այս տարի այդ հողերում, որ աշխարհի ստեղծագործության օրից առաջին անգամ էին խոփ տեսնում...

***

Նստել է անվանի ձկնորս Մելիքը նկարագրածս նեղ պարա-նոցի ուշ աշնան Թավիշ կանաչին, երբեմնի ամենակարճ գետի ա-փին ու մտածում է՝ «Ինչու չեն գալիս ձկները...»։

Կատարվել էր բնության օրենքներին հակառակ, արտասովոր մի բան, ձկան վտառները այլևս գետն ի վեր չէին գնում և քանի օր էր դատարկ էին գետի լայնքով «սարած» ձկնորսական կողով-ներն ու ցանցերը։

Նա գիտի, որ տարվա այս եղանակին—նոյեմբերին Սևանա լճում ինչքան որ «գեղարքունի» տեսակի ձուկ կա ձգտում է դե-պի վեր, դեպի գետերն ու գետակները։ Սևանա լճի մեջ Թափվում են 31 գետ ու վտակ, և տարվա այս պահին գեղարքունի ձկները լցվում են այդ բոլոր գետերն ու գետակները և անզուսպ տենչով ձգտում դեպի լեռնային վճիտ ջրերը—գնում են այդ զուլալ վտակներում սիրաբանելու, ձկնկիթ դնելու, ձագեր հանելու։ Եվ ահա սերունդ տալու անհաղթահարելի բնազդը նրանց անասելի ուժով մղում է դեպի լիճը Թափվող գետակները։

Լեռներից եկող այդ ջրերի բերանին, ձկան «քարավանների» ճամփին ամենուրեք կողովներ ու ցանցեր են դրված։

Եվ ահա սպասում է ձկնորս Մելիքն ու զարմանում, Թե ինչու այս պայծառ աշնանային օրը, երբ լեռնային վտակները փայլ-փլում են արծաթե հոսող հալոցքների նման, ինչու լեռների սի-րահար «գեղարքունին» այլևս չի ձգտում դեպի վեր։

***

Մելիքին մրցակից մյուս անվանի ձկնորս Ռուբեն Եղիազա-րյանն իր որսը կատարում է լճի վրա, 680 մետր երկարությամբ վիԹխարի ուռկանով։ Միջահասակ, գեղջկական կոշտ դեմքով, ձկան հոտ արձակող հագուստով կանգնած է նա իմ առաջ ու գի-տակ մարդու տոնով բացատրում է «ծովի գաղտնիքները»։

— Այդ ինչպե՞ս է, որ դու կարողացել ես ուռկանովդ պլանից ավելի տասը տոննա ձուկ բռնել,—հարցրի ես։—Երևի նշաններից հասկանում ես որտե՛ղ շատ ձուկ կա։

— Չէ՛, հարցը նշանները չեն,—առարկում է նա.—նշանները բոլոր ձկնորսները գիտեն։ Աշխատանքն է առաջ տանում, աշխատա՛նքը... Երբ մարդիկ քնում են տաք անկողնում, ես ծով եմ դուրս գալիս։ Դիրեկտորն ուռկանավարից պահանջում է օրական 3 անգամ ուռկան գցել, ես 4-ից պակաս երբեք չեմ գցել։ Աշխատանքն է ինձ անվանի դարձրել։

— Բայց Մելիքը վատ բան է անում,—խոսքս փոխեցի ես,—կտրում է ձկների ճամփան ու անմուրազ թողնում նրանց,—չի թողնում գնան սերունդ տան։

— Նրանց տված սերունդը հեչ,—կտրուկ վճիռ է տալիս անվանի ձկնորսը։—Նրանց թափած ձվերը կամ գետն է տանում, կամ գորտերն ու ձկներն են ուտում,—այնքա՞ն է փչանում... Ա՜յ, ապահով սերունդը հրե՛ն Գյոդակբուլաղի զավոդն է տալիս, սերունդ տվող զավոդը,—մատը մեկնում է նա լճի հանդիպակած ափը, ուր մի նոր շենքի տանիքը կարմրին է տալիս։

— Գնա տե՛ս, միլիոններով մանր ձկներ են ստանում այնտեղ ու բաց թողնում։ Նրանք արդեն ձվեր չեն, որ գորտերի բաժին դառնան, շնչավոր արարածներ են, իսկ ամեն արարած ապրել է ուզում, փախչում է վտանգից, պաշտպանվելու հնար է գտնում... Հապա ի՞նչ էիր կարծում, այսքան որ բռնենք ու տեղը բան չդնենք—ծովում ձո՞ւկ կմնա։

— Բայց դու սխալ ես, գեղարքունին լճում էլ ձու կդնի, տե՛ս Մելիքի գետով ոչ մի հատ վերև չի գնում,—նորից խոսեցնում եմ ես։

Նա քմծիծաղ է տալիս։

— Մելիքը դեռ երկար պարապ կնստի, քանի իմ բրիգադը նրան օգնություն չի գնացել։

— Ի՞նչ օգնություն, ձուկ չկա, հասկանո՞ւմ ես, ես երկու օր է բաց եմ որսում նրա մոտ, ձուկ չեմ տեսել Գիլլի գետում։

— Ձուկ շատ կա,—միայն ճամփեն է փակ, ավազակներ կան քարավանի ճամփին,—խորհրդավոր վերջացնում է նա և ժպտում այն մտքից, որ ծովային «ավազակների» ու «քարավանի» այդ գաղտնիքը միայն ինքը գիտի։

***

Սեականել էր անվանի ձկնորս Մելիք Մխեյանը,—նրա կողովները շարունակում էին դատարկ մնալ, իսկ իր մրցակցի, գաղալվեցի Ռուբենի ձկնորսական բրիգադայի անունը հասել էր Նորադուզ։

Ռուբենը գուցե չէր էլ կարդացել առաջնորդի հուշակավոր խոսքը նոր, սովետական մարդու մրցումյան մասին, այն մասին, որ մրցող առաջավորը պետք է վեր քաշի, իր հետ տանի ետ մնացող իր մրցակցին։ Բայց նրա մեջ զարթնել ու աննկատելիորեն աճել էր նորը, հանրայինը, ընդհանրական շահի գիտակցությունը։ Նա գիտի, որ Գիլլիի ափին պարապ նստած է իր մրցակից Մելիքը և նրա պարապությունից միայն Մելիքը չի տուժում իր մարդկանցով, այլև երկիրը։

Եվ ահա նա դուրս եկավ լճից, հավաքեց թաց ուռկանն ու գիմեց ձկնորսական կետի պետին՝ Անդրանիկ Հակոբյանին.

— Թող գնամ Գիլլի, Մելիքին օգնության։

— Ի՞նչ պիտի անես։

— Ճանապարհը պիտի մաքրեմ ավազակներից.— կողակը լցվել է գետի բերանն ու կտրել գեղարքունու ճամփեն։

— Ինչի՞ց գիտես,—կասկածանքով հարցրեց պետը։

— Չեմ փորձել, բայց համոզված եմ... Տե՛ս, պարզ հաշիվ է, կողակը հավաքվո՞ւմ է գետաբերաններում, թե չէ։

Անդրանիկը, որպես լճափնյա բնակիչ գիտեր այդ բանը, նա գլխի դրական շարժումով հաստատեց։

— Հավաքվում է, որովհետև նա էլ է մաքուր ջուր ուզում,— շարունակեց ձկնորսը։—Կողակը ուժե՞ղ է գեղարքունուց, թե չէ։

— Ուժեղ է, շատ է ուժեղ։

— Դե պարզ չի՞, ամեն տեսակի անասունների մեջ էլ կռիվ կա սնունդի համար, ապրելու համար,—կողակը հավաքվել է գետի բերանում ու կտրել գեղարքունու առաջը, գնամ բացեմ ճամփեն։

Ու հավանության չսպասելով, թիավարեց դեպի Գիլլի։

***

Նստել էր ձկնորս Մելիքն իր մարդկանցով դատարկ կողովների մոտ ու մտածում էր՝ «Էս ո՞ւր է գալիս Ռուբենը, գալիս է վրես ծիծաղի՞...»։

Մինչ նա անբարյացակամ ու կասկածոտ նայում էր անկոչ հյուրին,—Ռուբենի մարդիկ ուռկանով շրջապատում էին Գիլլիի գետաբերանն, ուր արագահոս լեռնային գիժ ջրերը թափով ալեկոծում, հուզում էին լճի խաղաղ մակերեսը։

Ուռկանը մոտեցավ ափին և անտեսելի խլրտում ընկավ ջրերի մեջ, հազարավոր ձկներ զգացին, որ թակարդն են ընկել և տագնապով սկսեցին փրկության ելք որոնել։ Եվ նրանց խուճապից ալեկոծվեց, բլթբլթաց լճի ջուրը և ուռկանն սկսեց ցնցվել ու դողդողալ մարդկանց ձեռքերում։

— Այդպե՜ս... հանդա՜րտ... քաշ գցի—«խազինեն» հավաքվեն։—Ինքնագոհ ժպիտը դեմքին հրահանգներ էր տալիս ուռկանավարը։

Ափ հանեցին։ Ուռկանի «խազինի» ուղղությամբ ձկների թպրտոցից ջուրը եռաց, փրփրեց։ Ապա ավազի վրա իրար տակ ու վրա սողացող—խլրտացող դեղնափոր ու հաստ կողակների մի կենդանի բլրակ բարձրացավ։

Ձկնորս Մելիքը վազքով հասավ «դեպքի վայրն» ու մնաց ապշած,—150 փութ կողակ էր դուրս եկել ուռկանից։

— Հիմի որ ճամփեն բաց է, դնա քարավանների առաջը կտրի,— հանդարտ հայտարարեց անվանի ուռկանավարը՝ շեկ բեղերով և առողջ դեմքով մարդուն։ Իսկ սա մի պահ կարկամեց, ապա նոր գլխի ընկնելով, թե ինչ է կատարվել,—եր՛սով դարձավ դեպի ձկնորսական խրճիթն ու ձայնեց ընկերներին.

— Կողովները դրե՜ք—ձուկն եկավ...

Ու վազեց դեպի պատվարը։

***

Ու կողակ «ծովահեններից» մաքրված ճանապարհով, իրենց գեղագույն բնազդին հլու, գետն ի վեր խոյացան չալպտուրիկ, սիրուն խալերով ձկների քարավանները։ Եկա՜ն, ահռելի թվով

եկան, այնքան եկան, որ ձկնորս Մելիքը շշկլվել էր շտապելուց։ Նա մերթ կողովներն էր դատարկում ափին ու նորից ամրացնում իրենց տեղերում, մերթ ցանցերն էր հանում, մերթ ձեռքի ուռկանըն էր շպրտում գետն ու ամեն գցելով ահագին քանակությամբ ձուկ հանում ափ։ Իսկ քարավանները իրար հետևից ձգվում էին դեպի վեր և ափից նկատելի էր մաքուր ավազի վրա փայլփլող նրանց չալտիկ կողերը։

Այդ օրը Մելիքը մեկ տոննա 200 կիլո գեղարքունի ձուկ հանեց ափ։ Ու զարմացավ ձկնորս Մելիքը իր կատարած որսից, ու դարձավ նա իր ընկերներին.

— Տեսա՞ք ինչ արավ Եղոյենց Ռուբենը...

***

Երբ մենք վերադառնում էինք Նորակերտ գյուղից, ձկնորս Մելիքին նորից տեսանք Գիլլի գետի ափին նստած, թախծոտ հայացքը կապույտ հեռուներին հառած։

— Ձուկ չի գալիս,—կարճ պատասխանեց մեզ։

Քիչ անց մենք Ձաղալվում էինք։

— Մելիքը քեզ կանչում էր,—դիմեց ընկերս անվանի ուռկանավարին։

— Գիտեմ.... լսել եմ... նորից ավազակները կտրել են քարավանի ճամփեն,—պատասխանեց ձկնորսը մտախոհ։

Ապա դարձավ ընկերներին.

— Լողկեն ջուրը գցեցեք, երթանք քարվանի ճամփեն բացենք...

Նոյեմբեր, 1946 թ.

ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈԹՈՂՅԱՆԻ ՄԵՂՈՒՆԵՐԸ

Երևանից հարավ-արևելք, փարթամ այգիների ու բազմերանգ ծաղիկների մեջ տեղավորված է ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Անասնապահական ինստիտուտի մեղվանոցը։ Ամեն տարի վաղ գարնանից սկսած այստեղ մեղուների հոծ բազմությունների գործունեությունն իր ուզած ուղղությունն է տալիս մեղվաբույծ գիտնական Անդրանիկ Կոթողյանը։ Ահա դիտում է նա մեղուների աշխատանքը վաղ գարնանը։ Ձմռան թմրությունից սթափված, նրանք հմուտ ճարտարապետների նման մոմե տնակներ—(բջիջներ) են կառուցում իրենց ապագա զավակների և պաշարի համար,—բոլորն իրար նման, բոլորն իրար չափ, կարծես մի կաղապարով ձուլված։ Նրանք գարնան առաջին ծաղիկներից նեկտար ու փոշի են կրում և ինչ որ տենդային պատրաստությունների մեջ են։ Ինչո՞ւ են շտապում, ինչու են լարում իրենց վերջին ուժերն այդ աշխատավորները.—չէ՞ որ նրանք բոլորն էլ արդեն ծերացած են և մի քանի շաբաթից հետո բնության անառարկելի կամքով պիտի մահանան։ Այն բնազդը, թե՝ իրենց մահից հետո կկործանվի իրենց կոմունան, անտեր կմնան իրենց նուրբ ճարտարապետական կառուցումները, անխնամ կմնան իրենց «թագուհի-մայրը» ու կամայանա իրենց «քաղաքը»,—կարճ՝ սերունդ տալու հզոր բնազդը նրանց տենդագին գործի է մղում։ Իրենց կառուցած ահա այս փոքրիկ, սիրուն բնակարաններում կմեծանան ընտանիքի զավակները և կգան փոխարինելու իրենց։ Եվ այժմ ծեր խնամակալներն իրենց ապագա քույրերին ու եղբայրներին (որդերին) հոգածու կերակրում են իրենց բերնի խոռոչի գեղձերում արտադրվող կաթով, կերակրում են անմահական ծաղկափոշիով, որ իր մեջ բու-

սական ճարպ ունի և սպիտակուց, նեկտար են ուտեցնում առատությամբ ու միշտ մաքուր պահում նրանց բները: Իսկ եթե դուրսը գարնանային անձրևները չդադարեն և փեթակի ներսում պաշարը վերջանա,—այդ անձնազոհ արարածները առանց տատանվելու կդատարկեն իրենց օրգանիզմում եղած մեղրի պաշարը, կտան այդ մեղրն իրենց մորը, ջահել մեղուներին, իսկ իրենք սովամահությամբ վերջ կտան իրենց կյանքին...

Այդպես, սերունդ տալուց առաջ իրենց կյանքի վերջին օրերն էին ապրում այդ մեղվանոցի աշխատավոր մեղուները, որովհետև նրանք ծնվել էին անցյալ աշնանը հետևապես ծեր էին, շա՜տ ծեր: Եթե ձմռան պարապ, անհոգ կյանքը չլիներ և մեկ էլ սերունդ տալու անհաղթահարելի բնազդը—նրանք հիմա վաղուց մեռած կլինեին, չէ՞ որ իրենց ավագ քույրերն անցյալ տարի աշխատանքի պրոցեսում բոլորն էլ մեռան 1—3 ամսական հասակում...

Եվ այժմ նրանք տենդագին պատրաստություններ են տեսնում իրենց ապագա սերնդի համար, իսկ ընտանիքի մայրը շրջում է մոմե տնակների վրայով և յուրաքանչյուր տնակի հատակին մի ձու դնում:

Նրան ուղեկցում են իր շքախմբի անդամները. թիկնապահները, որոնք ամեն վայրկյան պատրաստ են բզիկ-բզիկ անելու իրենց մոր վրա ձեռք բարձրացնողին, սանիտարները, որոնք մոր ընթացքի ժամանակ նրան մաքրում են, հարդարում, կամ իսկույն դուրս տանում նրա արտաթորությունները: Նրան ուղեկցում են և իր կերակրողները: Մայրը ո՛ր կողմ դարձնում է իր գլուխը, իսկույն կերակրողները համեղ պատառիկներ են մատուցում նրան,—մեղր, ծաղկափոշի և ամենից շատ՝ բերանի գեղձերից արտադրվող կաթնահյութ: Այնքա՜ն հոգատար են, այնքան զգայուն դեպի իրենց մայրը, այնքան շռայլ ու առատաձեռն նրա նկատմամբ: Եթե ընտանիքում թեկուզ մեկ ժամվա պաշար է մնացել, նորից մայրը պետք է կերակրվի առատորեն, ամբողջ օրն անընդհատ, 20—30 աշխատավոր մեղվի չափ: Այդպիսի հոգատարությունը մոր նկատմամբ և նրա այդօրինակ շատակերությունը հասկանալի է.—նա ահռելի քանակությամբ ձվեր է պատրաստում իր մեջ և ողջ գարունն ու ամառը շարունակ օրական միջին հաշվով դնում է 900—1200 ձու: Նա հաճախ այդ թիվը օրական հասցնում է 3.000-ի... Նա ողջ ընտանիքի ստեղծողն է: Ահա ինչու է պետք նրան արտակարգ սնունդն ու խնամքը:

Եվ այդպես, անցնում է մայրն իր շքախմբով բջջից բջիջ ու նրա ճանապարհին կուտակված մեղուները խոնարհվելով ետ-ետ են գնում ու հարգալից ճանապարհ տալիս, իսկ շքախմբի անդամները անընդհատ համեղ պատառիկներ են հասցնում նրան։ Բայց դանդաղ է ձվում մայրը և այդ պատճառով նրա տրամադրությունը ընկած է։ Ցրտի պատճառով մեղուները շրջանակների վրա կույտեր են կազմել, որ տաքանան։ Փեթակի մյուս շրջանակների վրա աշխատավոր չկա, տնակներ կառուցող չկա,—ցուրտ է։ Մայրը ինչպես ձու դնի այդ բաց շրջանակների վրա, ո՞վ կտաքացնի, կխնամի, կկերակրի որդերին։ Ո՛չ, մայրն այդպիսի բան չի անի, նա ձու կդնի միայն ահա այս սահմանափակ տարածության վրա, ուր մեղուները կուտակված են, ուր տաքացնող ու խնամող կա։ Բայց այստեղ էլ գործը դանդաղ է գնում, ցուրտ է, ինքն էլ տրամադիր չէ ձու դնելու, մեղուներն էլ կծիկներ կազմած դանդաղեցնում են նրա առաջընթացը, ձվելը։ Այսպես որ գնա դանդաղ կընթանա ընտանիքի բազմացումը և մեղվաբերքի ժամանակ քիչ աշխատավորներ դուրս կգան դաշտ։ Այդ բանն անհանգստացնում է մեղուներին և նրանք շտապում են, ուժեր են մսխում ընտանիքի ներսում ջերմությունը պահանջվող չափով (35—36 աստիճան) պահպանելու համար։ Ու տարված այդ հոգսով, դանդաղեցնում են շինարարությունը ու դանդաղում է ձու դնելու ընթացքը։

Սովետական երիտասարդ գիտնական Անդրանիկ Կոթողյանը դիտում էր վերև նկարագրածս երևույթները Ակադեմիայի մեղվի ընտանիքներում, գիտեր, որ այդ նույն երևույթն է տեղի ունենում աշխարհիս բոլոր փեթակներում ու խորհում էր մի հիմնական, մի շատ խիզախ պրոբլեմի վրա.—ինչպե՞ս անել, որ վաղ գարնանը մեղուների պառաված սերունդը լրիվ բեռնվածությամբ աշխատի, բջիջներ պատրաստի ձվերի համար, ինչպես անել, որ իր շքախմբով անցնող մայրը գործի (ձու դնի) արագ և առանց խոչընդոտների, ինչպես անել, որ նա ոչ թե 3 շրջանակի վրա ձու դնի, ինչպես լինում է սովորաբար, այլ դնի 4—5 շրջանակի վրա, շա՛տ ձու դնի և շա՛տ ձագեր դուրս գան ու փեթակն արագ ուժեղանա հենց վաղ գարնանից։

Եվ քանի որ վերևի նկարագրությունից երևաց, որ վաղ գարնանը մեղվի ընտանիքի համար հիմնական «աղետը» ջերմության պակասությունն է, ուստի Կոթողյանը եկավ այնպիսի եզրակացու-

թյան, որ արհեստական միջոցներով պետք է ջերմացնել փեթակները: Աշխարհի բոլոր փեթակներում էլ որպես կարգ շրջանակները դրված են իրարից 12—13 միլիմետր հեռավորության վրա: Կոթողյանը գտավ, որ ցածր ջերմաստիճանի պատճառներից մեկն այդ է—միջշրջանակային բաց տարածությունները: Նա այդ տարածությունը կրճատեց և հասցրեց 8 և կես միլիմետրի, այսինքն շրջանակները մոտեցրեց իրար: Դրա հետևանքով մեղուների թիկունքներն իրար մոտեցան և նրանք «մեջք-մեջքի տված» սկսեցին տաքանալ: Այլևս կուտակվելու կարիքը վերացվեց: Այնուհետև Կոթողյանը ցուրտ եղանակին և գիշերները արհեստական ջերմություն տվեց մեղուներին: Հայաստանն իր ռելեֆով և մթնոլորտային պայմաններով անակնկալ աղետներ ունի մեղուների համար: Լեռները ցրտաշունչ են և փոթորիկներով հարուստ: Նախալեռնային գոտին և Արարատյան դաշտը ցամաքային կլիմա ունի, այսինքն ցերեկը տաք, գիշերը՝ խիստ ցուրտ: Գիշերվա և ցերեկվա ջերմաստիճանի տարբերությունը (ամպլիտուդա) խիստ մեծ է (երբեմն մինչև 25 աստիճան): Ահա որտեղից է առաջանում գիշերները մեղվին տաքացնելու անհրաժեշտությունը: Ինչպե՞ս է Կոթողյանը վերացնում ցամաքային կլիմայից բխող այդ «աղետը»: Այսօր մենք ծանոթացանք նրա սրամիտ գյուտին. շրջանակի հաստությամբ, նրա մեծության թիթեղյա ամաններ է պատվիրել նա: 80—100 աստիճան տաք ջուրը լցնում է այդ ամանների մեջ, թաղում հարդե բարձիկի մեջ և դնում փեթակի ներսում—երկու կողքերից: Հարդը կարգավորում է ջերմության համաչափ ծախսումը: Առավոտյան վաղ նա այդ ամանների ծորակներից ջուրը բաց է թողնում ու երեկոյան նորից տաք ջուր լցնում:

Այդ երկու միջոցը գործադրված է: Այժմ եկեք նորից հետևենք «Թագուհու շքախմբին»: Իր տաք բնակարանում «թագուհին» աշխույժ ու զվարթ անցնում է մեղուների արդեն նոսրացած շարքերի միջով և ձու դնում արագ, անարգել, առանց հապաղելու: Նա այլևս աշխատավոր մեղուների կուտակումների չի հանդիպում: Աշխատավորներն այլևս կարիք չունեն փեթակի ջերմությունը բարձրացնելու համար առաջվա չափ էներգիա ծախսելու, այժմ նրանք ցրվել են, պատել նաև հարևան, մինչ այդ դատարկ շրջանակները ու այնտեղ եռանդուն շինարարությամբ են զբաղված: Մայրն այժմ վստահ կերպով ձու է դնում նաև ա՛յդ շրջանակների բջիջներում:

Այդպիսով մեղվի ընտանիքը սկսում է արագ բազմանալ դեռևս վաղ գարնանը։ Կոթողյանի այս միջոցը մեզ հիշեցնում է Տ. Դ. Լիսենկոյի սերմերի յարովիզացիան։ Ինչպես Լիսենկոն ստիպում է սերմերին ժամանակից շուտ ծլել, բազմանալ (բույսի վեգետացիոն շրջանը կարճացնելու նպատակով) և շուտ հասունանալ, այնպես էլ Կոթողյանն ստիպում է մեղուներին սովորականից շուտ բազմանալ և այդպիսով կրճատում է մեղվի ընտանիքի «վեգետացիայի»—հասունացման շրջանը։ Ստացվում է ահա թե ինչ. մեր կոլխոզային մեղվանոցներում մեղվի ընտանիքը ուժեղանում է և հասունանում ձագ տալու համար հունիսի սկզբներին (Արարատյան դաշտում), իսկ Կոթողյանի մեղուներն առաջին ձագերը տվին ապրիլի 20-ին, այսինքն մեկ և կես ամիս սովորականից շուտ։

Այժմ, երբ Հայաստանում դեռևս ոչ մի տեղ ձագ չեն վերցրել, Կոթողյանի մեղվանոցում յուրաքանչյուր ընտանիք արդեն դարձել է 4, իսկ առաջիկա շաբաթների ընթացքում յուրաքանչյուր ընտանիք բազմանալով կդառնա 7—8, և գլխավոր մեղրաբերքի ժամանակ Կոթողյանի մեղուները տասնապատիկ բազմությամբ կգնան բերք բերելու։

Թե ինչպես այդպիսի ահռելի բազմություն ստացվեց, ինչպես մեկ ընտանիքը դարձավ 8, այդ արտասովոր երևույթը հասկանալու համար նորից հետևենք «թագուհու շքախմբին», որովհետև այդ բազմության սաղմը «թագուհին» է։ Մինչև այժմ մեղուները, և մեղվապահ Կոթողյանը մի ձգտում ունեին՝ ստիպել մորը որքան կարելի է շատ ձու դնի։ Մոր ինտենսիվ գործունեությունը բարիք է ընտանիքի համար։ Բայց ահա հասնում է ժամանակը, երբ բնության դիալեկտիկայի անխուսափելի օրենքով այդ բարիքի ներսում արագ զարգանում են չարիքի սաղմերը,—մոր արագ գործունեությունից աճում է կորստյան վտանգն ընտանիքում։ Ի՞նչ է պատահել։ Պատահել է այն, որ մայրը շատ ձու է դրել, շատ ձագեր հանել և քաղաքատնտեսական տերմինով ասած՝ ստացվել է «բանվորական ուժի գերարտադրություն»։ Բանն այն է, որ այժմ փեթակի ներսում որդերին կերակրողները, «դայակները» ավելի շատ են, քան կարող է մայրը ձու դնել։ Նոր ծնված ձագերը մինչև 15 օրական դառնալը աշխատում են փեթակի ներսում. նրանք կերակրում-խնամում են որդերին, աշխատավոր մեղուների

դրսից բերած նեկտարը մեղրի են վերափոխում, մոմ են արտադրում, չեն են գործում փեթակի ներսում, մաքրություն են պահպանում, պահակ են կանգնում փեթակի դռանը, որ ուրիշ մեղուներ չգան իրենց հանրային սեփականությունը կողոպտելու։ Բայց մեծ մասը զբաղվում են որդեր կերակրելով։ Եվ քանի որ ամեն մի մատղաշ մեղու դայակություն է անում 3—4 որդի, ուստի ընտանիքի ներսում աճում է «գործազրկությունը»։ Ինչպե՞ս։ Եթե մայրն, ասենք, օրական դնում է 1.500 ձու, 500 դայակ բավական է այդ ձվերից առաջացած որդերը խնամելու համար։ Բայց բջիջներից ծնվում դուրս են գալիս օրական ոչ թե 500, այլ 1500 ձագ։ Այդ նոր մեղուների մի մասին մնում է՝ կամ «անգործ» մնալ, կամ աշխատել ոչ լրիվ բեռնվածությամբ, այսինքն ոչ թե 3—4 որդ խնամել, այլ՝ 1—2։ Այստեղից Կոթողյանի մոտ առաջանում է հաջորդ պրոբլեմը. ռացիոնալ կերպով, լրիվ բեռնվածությամբ աշխատեցնել բոլոր մեղուներին։ Դրա համար հարկավոր է նոր մայրեր ներգրավել գործունեության ասպարեզ, որպեսզի «անգործների» այդ բազմությանը գործ հասցնեն, այսինքն ձու դնեն։ Եվ որովհետև մեկ ընտանիքում երկու մայր կողք-կողքի չեն կարող ապրել, և բացի դրանից ընտանիքը բազմանդամ է դարձել, Կոթողյանը արհեստականորեն ընտանիքը կիսում է երկու մասի, իսկ հետո՝ 4, 6, 8, 10 մասերի ու այդպիսով 8—9 նոր մայրեր աշխատեցնում մեղուների բազմացման վրա։ Միշտ մեղուներին այդպիսով գործունեության լայն ասպարեզ տալով և աշխատեցնելով լրիվ բեռնըվածությամբ (որդեր կերակրելու վրա), ինչպես և բազմաթիվ նոր մայրեր գործի դնելով, Կոթողյանը հասավ անսպասելի արդյունքների. եթե մեղվի սովորական ընտանիքը գլխավոր մեղվաբերքը դիմավորում է 25—30 հազար աշխատավորներով, Կոթողյանի մեկ ընտանիքը մեղվաբերքը դիմավորում է 300—400 հազար աշխատավոր մեղուներով, որոնք, սակայն, կազմել են 8—10 առանձին-առանձին ընտանիքներ։

Այստեղ մի հետաքրքրական նորություն ևս, որին ուշադրություն չի դարձրել նույնիսկ ինքը՝ Կոթողյանը։ Սովորական պայմաններում մեղվի ընտանիքը աճելով՝ ամառնամուտին հասնում է իր մաքսիմալ զորեղությանը։ Արդեն փեթակում 40—50 հազար մեղու կա, նեղվածք է և մոտ է բաժանումը։ Եվ ինչպես մարդկային հասարակության մեջ ընտանիքների բաժանումը ուղեկցվում

է խռովություններով, վեճերով, ջղային աննորմալ վիճակով, այնպես էլ մեղուների մոտ։ Նրանք, ովքեր պետք է հեռանան փեթակից (մեծահասակները) հավաքվում են մի անկյուն, քչփչում, «բամբասում», դժգոհում և բոլորովին տրամադիր չեն աշխատելու։

— Է՜հ, մեկ է, որ գնալու ենք, ո՞ւմ համար աշխատենք,— այս է ընդհանուր տրամադրությունը։ Եվ նրանք, ովքեր պիտի գնան, մոտ 15 օր մնում են այդպես անգործ, անորոշ ու նյարդային վիճակում։ Նույնիսկ մայրը դադարում է ձվեր դնել, որովհետև պիտի գնա։ Եվ քանի որ գնացողները ընտանիքի հիմնական աշխատողներն են, իսկ մնացողները անփորձ, թույլ ձագերը, ուստի այդ շրջանում դադարում են կառուցումները և դրսի աշխատանքը։

Անդրանիկ Կոթողյանը ժամանակին արհեստական կերպով կիսելով ընտանիքները, հնարավորություն չի տալիս մեղուներին հասնել բաժանման, վեճերի ու «բամբասանքների» այդ «խառը շրջանը», հետևապես նա իր համար անսպասելի կերպով հասել է մի այլ արդյունքի.—վերացրել է մեղուների «խառը շրջանի» պասիվությունն ու դատարկապորտությունը, մի բան, որից տուժում են ոչ միայն մեր, այլև աշխարհի բոլոր մեղվանոցները։ Մեղրաբերքի շրջանում 15 օրվա մեղուների հիմնական մասի անգործությունը հսկայական վնաս է մեր մեղվաբուծության արդյունավետությանը, որից մեզ ազատում է մեղուների արհեստական բաժանումը։ Բայց այստեղ շտապենք ավելացնել, որ արհեստական բաժանումը Կոթողյանի գյուտը չէ. այդ մեթոդը հայտնի է վաղուց։ Սակայն մինչ ուրիշներն այդ մեթոդով միայն ձագեր են ստանում, բազմացնում են միայն մեղվի ընտանիքները, որոնք ապրանքային մեղր բոլորովին չեն տալիս,—հայ երիտասարդ գիտնական Կոթողյանը շնորհիվ արհեստական տաքացման ու մեղուները արագ բազմացնելու իր մեթոդի, տալիս է և՛ շատ ձագեր (նոր ընտանիքներ), և՛ այնքան մեղր, որքան չի ստացել դեռևս ոչ մի մեղվաբույծ Սովետական Միության մեջ և ողջ աշխարհում։ Նա մեղվի մեկ ընտանիքի բերքատվությունը հասցրեց ռեկորդային չափերի—408 կիլոգրամի՝ սովորական 30—32 կիլոգրամի փոխարեն, իսկ մեկ ընտանիքի մոմի արտադրությունը՝ 14 կիլոգրամի՝ սովորական 300 գրամի փոխարեն։ Երբ ես զարմացա այդ թվերի վրա, նա ինքնավստահ տոնով հանդարտ ասաց.

— Դա սահման չէ, կարելի է կես տոննա մեղր ստանալ մեկ ընտանիքից։ Միայն պետք է մեղուներին աշխատեցնել իմանալ։

Նրանց աշխատասիրությունը, նրանց պոտենցիալ հնարավորությունը սահման չունի…

Առատ մեղրաբերք Կոթողյանն ստանում է ոչ թե որպես եզակի երևույթ, այլ մասսայական մասշտաբով։ Իր փորձերի դեռևս երկրորդ տարում նա 10 ընտանիքից միջին հաշվով ստացավ 303 կիլոգրամ մեղր և 11 կգ. մոմ յուրաքանչյուր փեթակից,—ամենաբարձր միջինը աշխարհի բոլոր մեղվանոցների մեջ։ Ակադեմիայի մեղվանոցում նրա դրած 6 տարվա փորձերի արդյունքը հետևյալն է. յուրաքանչյուր փեթակից 6 տարում միջին հաշվով ստացվել է մեղր՝ 106,3 կգ., մոմ՝ 6,3 կգ., մեղուների աճ՝ 566 տոկոսով, մի արդյունք, որ 6—7 անգամով գերազանցում է ռեսպուբլիկայի մեղուների միջին բերքից։ Նրա մեթոդով փորձեր դրվել են մեր ռեսպուբլիկայի շուրջ 200 կոլխոզներում, և ամենուրեք արդյունքը եղել է փայլուն։ Այսպես, Երևանի Կարմիր Բանակի անվան կոլտնտեսության մեղվապահ Պետրոս Կարապետյանը Կոթողյանի մեթոդը կիրառելով, կոլտնտեսության մեղվանոցի յուրաքանչյուր փեթակից ստացավ 240 կիլոգրամ համախառն մեղր, 6 կգ. մոմ և 600 տոկոս աճ։ Ապարանի Գյուլիջա գյուղի կոլխոզում ստացվեց 180-ական կգ. մեղր և 650 տոկոս աճ։ Էջմիածնի Միկոյանի անվան կոլտնտեսությունում յուրաքանչյուր մեղվից ստացվեց 158 կգ., Կոտայքի Հրազդան գյուղի կոլտնտեսությունում 107, Ն. Բայազետ քաղաքի կոլխոզում 106, Մարտունու Վ. Ագիմամանի կոլտնտեսությունում 112, Բասարգեչարի կոլխոզում 116 կիլոգրամ մեղրի միջին բերք այն փեթակներից, որոնց վերաբերմամբ կիրառվել են Ա. Կոթողյանի մեթոդը։

Այսպիսով, ակնբախ է այն հեղաշրջող դերը, որ ունի սովետական գիտնական Ա. Կոթողյանի մեթոդը մեղվաբուծության բնագավառում։ Եվ այժմ մեղվաբուծական գրականության մեջ ու մեղվաբուծության վերաբերյալ Մոսկվայից ստացված հրահանգների մեջ ավելի ու ավելի հաճախ է հիշատակվում Կոթողյանի մեթոդն ու այն ուսումնասիրելու և կիրառելու անհրաժեշտությունը։ Նրա մեթոդի ուսումնասիրությունը պարտադիր է դարձված մեղվաբուծական տեխնիկումների ծրագրերով՝ ողջ Միության մեջ։

«Պրավդայի» գնահատությամբ Անդրանիկ Կոթողյանը «խիզախ ռացիոնալիզատոր է», որն «իսկական նովատորություն է դրսևորել գիտության մեջ»։

Նրա խուզարկու միտքը կանգ չի առնում միայն այն մեթոդի վրա, որի էությունը շարադրեցինք մենք վերևում։ Նա «Արարատ» տրեստի 3-րդ սովխոզում մեղուներին վարժեցրել է պտուղներ կատարել խաղողի վազի ծաղիկների մեջ և այդպիսով խաչաձև փոշոտում կատարել։ Դրանից խաղողի բերքատվությունը բարձրացել է 330—365 տոկոսով։ Նա մեղուներին սովորեցնում է խաղողի տերևից, կանաչ ընկույզից, մասուրից բուժիչ մեղր պատրաստել։ Նա մեղուներին վարժեցնում է մորթվող կենդանիների արյունից մեղր պատրաստել, որը պրոֆ. Գյանջունցի կլինիկայում փրկարար ազդեցություն ունեցավ արյան կարմիր գնդիկները երեք քառորդով կորցրած մերձիմահ մի հիվանդի վրա։

Այս բոլորից հետո թվում է, թե մեզ մոտ Գյուղատնտեսության Մինիստրությունը պետք է մասսայականացներ այդ խիզախ նովատորի մեթոդը և այն մասսայաբար գործադրեր մեր սոցիալիստական մեղվաբուծության մեջ։ Այդպես չէ, դժբախտաբար։ Վերևհիշատակածս փորձերը կոլխոզային մեղվանոցներում դրվել են անջյալներում։ Այս տարի հանրային մեղվաբույծներին ոչ ոք չի հանձնարարել Կոթողյանի մեթոդը, թեև տեղերից (օր. Վոսկեվազից) կոլխոզները մասնագիտական ղեկավարություն և միջոցներ են խնդրում այդ մեթոդը կիրառելու։ Հեռավոր Իվանովոյի մարզի Գավրիլո-Պոսադսկի շրջանում մեղվաբույծների հատուկ հավաքը քննել է, թե ինչպես պիտի կիրառել Կոթողյանի մեթոդը շրջանի մեղվանոցներում։ Այդ շրջանի թերթը հատուկ էջ է հատկացրել Կոթողյանի մեթոդին՝ ուր ահազանգ է տրվում, թե՝ «Մեղվաբույծները անհապաղ պետք է սկսեն ընկ. Կոթողյանի մեթոդի կիրառումը»։ «Պրավդան» գրում է, թե «Կոթողյանի դիտումների արդյունքները չափազանց ուսանելի են», իսկ Ուկրաինայի Գյուղատնտեսական ռեսպուբլիկական թերթը կոչում, անհետաձգելի խնդիր է դնում՝ լայնորեն կիրառել Կոթողյանի մեթոդը հանրային մեղվանոցներում։ Իսկ մեզ մոտ, այս տարի ոչ մի կոլխոզում, ոչ մի սովխոզում չի կիրառվում այդ զարմանալի նորությունը մեղվաբուծության բնագավառում։

Միթե՞ դատապարտելի չէ այդ անտարբերությունը մի այնպիսի նովատորության նկատմամբ, որի հեղաշրջող դերը ընդունված է գիտության կողմից և հաստատված պրակտիկայում։

ՀՍՍՀ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Արարատյան դաշտի գարունը	3
Կեռասենիներ	9
Պատերազմից հետո	14
Սյունյաց աշխարհի աշունը	20
Քարաշեն	29
Նորակերտ	33
Կարտոֆիլի հայրենիքում	42
Հայ ստեղծողները	47
Նորը Սևանի արևելյան ափին	52
Մանր ակնարկներ՝	
ա. **Ջերմաջանք**	60
բ. *Գործարան առանց բանվորի*	61
գ. *Ով է գողանում կոլխոզի ջուրը*	62
Աժդահա Լյուրեն և իր ժառանգները	66
Մուղանի խաշնարածների մոտ	73
Նորից Մուղանի դաշտում	78
Հողի վարպետները	84
Պարզալու	93
Էջմիածնի բամբակի դաշտերում	98
Արտաշատի «ճերմակ ոսկին»	104
Դարպաս	109
Մանիշակագույն բարձունքներում	115
Նորից ծանոթ խնձորենու վրա	127
Հավատ	137
Քաջարան	142
Վերելք	149
Երախտիքի զգացումը	157
Մուտքը հայրենի երկիր	162
Մայր հողի վրա	168
Աշխատանքային առաջին օրը հայրենի հողի վրա	173
Մրգատու այգիներում	179
Վարպետ Սաղաթելի ընտանիքը	183
Արտոնյալ մարդիկ	187
Ջկնորսների մոտ	193
Սևանի «ծովահենները»	198
Անդրանիկ Կոթողյանի մեղուները	204

Պատ. խմբագիր Էդ. ԹՈՓՉՅԱՆ
Կազմը և տիտղոսաթերթը նկարիչ Ն. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ
Տեխ. խմբագիր Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎՖ 04306 Պատվեր № 459, Տիրաժ 4000։
Հեղին. 10 մամուլ, տպ. 13 1/2 մամուլ
Հանձնված է արտադր. 1/X 1947 թ.։
Ստորագրվ. է տպ. 20/XI 1947 թ.։

ՀՍՍՌ Մ. Սովետին կից
Պոլիգր. և Հրատ. Վարչ.
№ 3 տպարան, Ալա-
վերդյան № 65,
Երևան, 47 թ.

Հոկտեմբերյան
Սոցիալիստական
Մեծ ռևոլյուցիայի
30 ամյակին

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220026827

10 гр.

A II/26827